- Маргарян Е.Г. 2021, Эллинизм и его трансформации, Проблемы периодизации, универсализации и преемственности, книга I, Ереван, изд. Института истории АН РА (в печати).
- Дубсон Б.И. 2014, Современный Израиль. Социально-экономические очерки, Москва, «Международные отношения», 376 с.
- Евреи Земли Ноя 2020, Ереван, «ВМВ-Принт», 400 с.
- Ружанский В.Г. 2020, «Устойчивость и национальная безопасность». История формирования израильской стратегической культуры. Регион и мир, т. XI, N 2, Ереван, с. 16-25.
- Федорченко А.В. 2004, Экономика Израиля, Москва, изд. МГИМО, 160 с.
- Maoz Z. 2009, Defending the Holy Land/A Critical Analysis of Israeli Security and Foreign Policy, University of Michigan Press, 744 p.

⁵ Маргарян 2021.

Margaryan Y. (ed.) 2021, On the Borders of World-Systems: Contact Zones in Ancient and Modern Times, Archaeopress Archaeology, Oxford, 148 p.

Ruzhansky VI. 2021, Jewish History within the Framework of Frontier Theory. On the Borders of World-Systems: Contact Zones in Ancient and Modern Times, Oxford, p. 125-140.

**«ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՀՈՒՂԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀՐԵԱՆԵՐԻ ԵՎ
ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Երվանդ Մարգարյան, Վլադիմիր Ռուժանսկի

Ամփոփում

«Հայկականություն-հուդայականություն» գիտական հետազոտությունների սկզբունքորեն նոր ուղղությունը հիմնված է ինքնության և պետականաշինության պահպանման գործում հայ և հրեա ազգերի փորձի համեմատական վերլուծության վրա: Այս հետազոտական ուղղության շրջանակում անհրաժեշտ է ուսումնասիրել Եվրասիայի տարածքներում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը հայ և հրեա ժողովուրդների ստեղծած երկու պետական և ազգային հաստատությունները: Միննույն ժամանակ, ուսումնասիրվում է ինչպես ազգի պահպանման, այնպես էլ պետականաշինության մեջ երկու ժողովուրդների և՛ դրական, և՛ բացասական փորձը: Այս ոլորտում աշխատանքները և՛ տեսական, և՛ կիրառական բնույթ են կրում:

Բանալի բառեր՝ Հայաստան, հայեր, հրեաներ, հրեական, Իսրայել, հայկականություն-հրեականություն, ՄՄԾ:

**АРМЕНО-ИУДАИКА: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ИСТОРИИ ЕВРЕЕВ И
АРМЯН В КОНТЕКСТЕ ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА**

Երվանդ Մարգարյան, Владимир Ружанский

Резюме

Армено-Иудаика – принципиально новое направление в науке, основанное на сравнительном анализе опыта армянской и еврейской наций в деле сохранения национальной идентичности и государственного строи-

тельства. В рамках данного исследовательского направления предполагается изучение различных государственных и национальных институтов, созданных двумя народами на пространствах Евразии в период от древности до современности. При этом исследуется как положительный, так и отрицательный опыт обеих наций в деле сохранения национальной идентичности и в государственном строительстве. Следует отметить, что работа в данном направлении подразделяется на теоретические и прикладные исследования.

Ключевые слова – Армения, армяне, евреи, иудаика, Израиль, Армено-Иудаика, ВШП.

ARMENO-JUDAICA: THE COMPARATIVE ANALYSIS OF THE HISTORY OF THE JEWS AND THE ARMENIANS IN THE CONTEXT OF STATE BUILDING

Ervand Margaryan, Vladimir Ruzhansky

Abstract

This scientific report is devoted to a fundamentally new direction in scientific research: Armeno-Judaica. The essence of Armeno-Judaica lies in a comparative analysis of the experience of the Armenian and Jewish nations in the preservation of national identity and state building. Within the framework of this research direction, it is planned to study various state and national institutions created by two peoples in the spaces of Eurasia in the period from antiquity to the present. At the same time, both the positive and negative experiences of both nations in the preservation of national identity and in state building are examined. Work in this area is divided into theoretical and applied research.

Key words – Armenia, Armenians, Jews, Judaica, Israel, Armeno-Judaica, GSR.

**ՀՀ-ՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Սոնա Մելիքջանյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Չարենցի փ. 15
Էլ. հասցե՝ sona.melikjanyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 28.05.2020, գրախոսվել է 23.10.2020,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-107

Ներածություն

Միգրացիոն գործընթացներն ուղեկցել են հայ հասարակությանն իր պատմության ողջ ընթացքում, իսկ աշխատանքային միգրացիոն հոսքերը ուժգնացան հատկապես հետխորհրդային տարիներին: Միևնույն ժամանակ, չնայած այսօր ամբողջ աշխարհում առկա միգրացիայի ֆեմինիզացման միտումներին (միգրանտների 48.4%-ը կանայք են¹), հայ հասարակության մեջ աշխատանքային միգրացիան հիմնականում համարվում է տղամարդու գործ²: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ կանայք դիմում են աշխատանքային միգրացիայի. նրանք կազմում են Հայաստանի աշխատանքային միգրանտների 10.4%-ը³: Հաշվի առնելով հայ հասարակության մեջ սեռով և ընտանիքում ունեցած կարգավիճակով պայմանավորված առանձնահատկությունները՝ կարևոր է դառնում կանանց աշխատանքային միգրացիայի խնդիրը: Անդրադառնալով միգրացիոն գործընթացի նախնական փուլի՝ աշխատելու նպատակով արտերկիր մեկնելու որոշման կայացման ուսումնասիրությանը՝ այդ հարցում նկատի ենք ունեցել ընտանիքի մասնակցության կարևորությունը: Այդ խնդրի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու կանանց միգրացիայի խթաններն ու խոչընդոտները, երկրի ընտրության վրա ազդող գործոնները, միգրացիայի դիմելու հիմնական նպատակը: Հե-

¹ United Nations 2017.

² Գալստյան 2019:

³ Գալստյան 2019, 55:

տազոտությունները ցույց են տալիս ընտանիքի էական դերը միգրացիայի վերաբերյալ որոշում կայացնելու գործում⁴։ Միգրացիայի որոշման կայացումը առհասարակ և այն հարցը, թե ով պետք է մեկնի, մասնավորապես, դիտարկվում է իբրև ընտանիքի անդամների միջև բանակցությունների արդյունք, որն ընթանում է յուրաքանչյուր անդամին վերագրված դերային պարտավորությունների շրջանակում։ Հայ իրականության մեջ նույնպես ընտանիքն ունի առանցքային նշանակություն ինչպես մեկնելու, այնպես էլ վերադարձի որոշում կայացնելու գործում⁵։ Ֆինչը⁶ և Մեյսոնը⁷ գտնում են, որ ընտանիքում առկա բոլոր դերերն ու դերերին վերագրվող գործառույթները ձևավորվում են, մի կողմից, ընտանիքի անդամների միջև տեղի ունեցող բանակցությունների շնորհիվ ձեռք բերված պայմանավորվածությամբ, մյուս կողմից, հասարակության մեջ առկա և ընտանիքին վերագրվող բարոյական նորմերով, որոնք դառնում են ընտանեկան բանակցությունների ձևավորման հիմք։

Հետազոտության մեթոդաբանությունը

Տվյալների հավաքման հիմնական մեթոդը կենսագրական հարցազրույցներն են հետխորհրդային Հայաստանից աշխատանքային միգրացիայի մեկնած/մեկնող կանանց հետ։ Կենսագրական հարցազրույցն ընտրվել է իբրև մի մեթոդ, քանզի այն, անդրադառնալով անհատի կյանքի պատմությանը, ընտանիքում դերային բաշխվածությունը, կյանքի համար կարևոր նշանակություն ունեցած կամ կյանքի ընթացքը փոխած իրադարձություններին, թույլ է տալիս ոչ միայն դիտարկել միգրացիայի որոշման կայացման գործընթացը, այլ նաև հասկանալ դրա առանձնահատկությունները՝ պայմանավորված կյանքի պատմության յուրահատկություններով։

Հարցազրույցի մասնակիցների միգրացիոն երկրներն են Ռուսաստանը, Թուրքիան, եվրոպական երկրները, Չինաստանը։ Հետազոտությունն իրականացվել է 2019 թ. մայիս-հունիս ամիսներին Երևանում, Շիրակի և Արմավիրի մարզերում՝ ներառելով և՛ գյուղական, և՛ քաղաքային համայնքները։ Հարցազրույցի մասնակիցներից ամենաերիտասարդը 21 տարեկան է, ամենատարեցը՝ 60։ Նրանց մեջ կան կանայք, որոնք մեկ

⁴ Haug 2008, Shmulyar Gréen, Melander 2018.

⁵ Fleischer 2013.

⁶ Finch 1987.

⁷ Mason 1996.

կամ մի քանի անգամ են մեկնել աշխատանքային միգրացիայի կամ պատրաստվում են կրկին մեկնել: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 14 կենսագրական հարցազրույց:

Հարցազրույցների բոլոր մասնակիցների հետ կապը հաստատվել է անձնական ցանցի միջոցով:

Հոդվածում նշված բոլոր հարցվողների անունները փոխված են:

Երկրի ընտրության հարցը

Միգրացիոն գործընթացների մասին առկա գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որևէ երկիր մեկնելու ընտրության վրա մեծ ազդեցություն ունի մարդկային կապիտալը: Մասեյը և ուրիշները⁸ նշում են, որ միգրացիոն հոսքի չափը ուղիղ համեմատական է, ոչ այնքան երկրների միջև վարձատրության տարբերությանը, որքան միգրացիոն ցանցի⁹ առկայությանը, որն աճում է ժամանակի ընթացքում՝ նվազեցնելով միգրացիոն հնարավոր ռիսկերը: Սա նշանակում է, որ միգրանտները հակված են ընտրել այն երկիրը, որտեղ ունեն արդեն իսկ ձևավորված ցանց. վերջինս օտար երկրում հարմարվելու և հնարավոր ռիսկերի նվազեցման երաշխիք է դառնում միգրանտների համար: Հայկական միգրացիային վերաբերող մի շարք հետազոտություններ¹⁰ նույնպես վկայում են ծանոթների/բարեկամների ցանցի առաջնային նշանակության մասին. երկրի ընտրությունը հիմնավորելիս միգրանտները ամենահաճախը նշում են. «Այնտեղ ունեմ բարեկամներ/ընտանիքի անդամներ» (24.6%) կամ «Այնտեղ ունեմ ընկերներ/բարեկամներ» (24.4%)¹¹: Ա. Թադևոսյանը¹² նշում է, որ երկրի ընտրությունը պայմանավորված է արդեն իսկ հիմնավորված միգրացիոն փորձով և ավանդույթով, քանի որ միգրանտի համար ավելի նպատակահարմար է ընտրել արդեն փորձված երկիր՝ փորձված մշակույթով և նորմերով: Այսինքն, մեկ անգամ մեկնելով մի երկիր, միգրանտը հակված է կրկին ընտրել այն, քանի որ այնտեղ ունի արդեն ձևավորված

⁸ Massey, Joaquin Arango, Hugo, Kouaouci, Pellegrino, Edward 1993.

⁹ Միգրացիոն ցանցը ընտանեկան, բարեկամական կամ ընկերական կապերի հիման վրա հաստատված միջանձնային հարաբերություններ են, որոնք միմյանց են կապում միգրանտներին, նախկին միգրանտներին և մեկնելու ու ժամանելու վայրում գտնվող ոչ միգրանտներին (Massey, Arango, Hugo, Kouaouci, Pellegrino, Taylor 2005, 42).

¹⁰ Minasyan, et al. 2008, Գալստյան 2014.

¹¹ Գալստյան 2014, 208:

¹² Tadevosyan 2014.

ցանց և իրեն ծանոթ մշակույթ: Կենսագրական հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս ցանցի առկայության ազդեցությունը երկրի ընտրության հարցում նաև Հայաստանից կանանց աշխատանքային միգրացիայի պարագայում: Արտերկրում բարեկամների կամ պարզապես ծանոթների առկայությունը կարևոր է ինչպես երկրի ընտրության, այնպես էլ առհասարակ մեկնելու որոշում կայացնելու գործում. որոշ դեպքերում ցանցը ոչ միայն որոշիչ է երկրի ընտրության հարցում, այլև հենց ինքն է դառնում աշխատանքային միգրացիայի դրդապատճառ: Ֆինանսական դժվարությունները՝ իբրև վանող գործոն, մի կողմից, և արտերկրում ծանոթի/բարեկամի առկայությունը՝ իբրև ձգող գործոն, մյուս կողմից, դառնում են միգրացիայի դիմելու որոշման կայացման հիմնաքար: Սրա մասին է Թուրքիա աշխատանքային միգրացիայի մեկնած կնոջ պատմությունը, որը, խոսելով մեկնելու որոշում կայացնելու մասին, նշում է. *«Բարեկամուհիս որ ընտրեղ ապրում ա, ինքն ամուսնացած ա վաղուց... բարեկամուհիս ասում ա՝ արի գումար կաշխատես: Ստեղ ես մի քիչ վարկեր ունեմ, գումարը չի հերիքում ընդհանրապես, որ աշխատող չես, մի հոգու աշխատավարձը չի հերիքի» (Մելինե, 57 տարեկան, ամուսնացած, Երևան, մեկնելու երկիր՝ Թուրքիա):*

Ցանցի կարևորությունը մեկնելու որոշում կայացնելու գործում ուրվագծվում է նաև այն դեպքերում, երբ կանայք պատմում են իրենց ընտանիքի՝ միգրացիոն նախկին փորձառության մասին. *«Չէ, մեզնից ո՞վ պոի գնար: Դե Արմենն¹³ ուսուցիչ ոնց կա, տենց աշխատում ա: Համ էլ ո՞վ ունի, դուրսը մարդ չունի, ես, ախպերս կար, գնացի, որ չլիներ չէի գնա» (Անի, 53 տարեկան, ամուսնացած Շիրակի մարզ, գյուղաբնակ, մեկնելու երկիր՝ ՌԴ):*

Այս օրինակում ընտանիքում միգրացիոն նախկին փորձառության բացակայությունը հարցազրույցի մասնակիցը մեկնաբանում է արտերկրում ամուսնու ունեցած ցանցի բացակայությամբ, միևնույն ժամանակ, իր մեկնումը հիմնավորում է Ռուսաստանի Դաշնությունում իր եղբոր բնակությամբ: Աշխատանքային միգրացիայի մեկնող կանանց ցանցը, սակայն, միանման և միատարր չէ. մեկնման երկրի տեսակի փոփոխմանը զուգահեռ փոխվում է նաև ցանցի տեսակը: Թուրքիայի և ՌԴ-ի՝ իբրև մեկնելու երկրների ընտրությունը պայմանավորված է այնտեղ բնակվող բարեկամ-

¹³ Հարցազրույցի մասնակցի ամուսինն է:

ներով/ընտանիքի անդամներով, մինչդեռ եվրոպական երկրների և Չինաստանի ընտրությունը՝ աշխատանքային փորձի փոխանակման տարբեր ծրագրեր իրականացնող կազմակերպություններով և կառույցներով:

«Մեր ինստիտուտը, քանի որ կապեր ունի, ինքը ռուսական ակադեմիայի մասնաճյուղն ա, արտերկիր պրակտիկա ա ուղարկում ու մեզ առաջարկեց, էտ ժամանակ երկրորդ կուրսն էինք ավարտում, առաջարկեց, որ Բուլղարիայում կա այսպիսի աշխատանք, էնտեղ գնում եք, երեք ամսով ա, ամառվա ամիսներին, 100 եվրո վարձավորվում ա, սիմվոլիկ, հա, բայց դուք գնում եք, ճանապարհածախսը իրենք են հոգում, գնում եք աշխատում, գալիս եք» (Վարդուհի, 21 տարեկան, չամուսնացած, Արմավիրի մարզ, քաղաք, մեկնելու երկիր՝ Բուլղարիա):

Ըստ այս օրինակի՝ հարցման մասնակցի միգրացիոն փորձառությունը սկսվել է բուհի առաջարկած աշխատանքային պրակտիկայի հնարավորությունից: Սկզբնական շրջանում, ծանոթի և բարեկամի բացակայության պայմաններում, բուհը եղել է այն ցանցը, որը նպաստել է մեկնելու որոշման կայացմանը: Սա այն դեպքն է, երբ ցանցի առկայությունը դառնում է ոչ միայն երկրի ընտրության, այլև մեկնելու որոշման դրդապատճառ: Մեկ անգամ մեկնելով ցանցի միջոցով՝ հետագայում միգրանտները կարողանում են ընդլայնել իրենց ցանցը՝ ապահովելով միգրացիայի շարունակականությունը:

Ինչո՞ւ մեկնել արտերկիր. միգրացիայի դրդապատճառները

Իրականացված կենսագրական հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ թեպետ մարդն ի սկզբանե մեկնում է աշխատելու համար, սակայն իր միգրացիոն պատմությունը կառուցելիս միշտ չէ, որ աշխատանքն է նշում իբրև հիմնական նպատակ: Վերջինս փոփոխվում է միգրանտի տարիքի և ընտանիքում ունեցած դերի փոփոխմանը զուգընթաց. եթե 40-60 տարեկան, ընտանիքում կնոջ և մայրիկի դեր ունեցող կանանց մեկնումն ունի հստակ ուրվագծվող և միգրանտների կողմից շեշտադրվող գումար վաստակելու նպատակ, ապա ավելի երիտասարդ (20-40 տարեկան), չամուսնացած (ընտանիքում դստեր դերը ստանձնող) կանանց աշխատանքային միգրացիայի հիմնական նպատակը ոչ այնքան գումար աշխատելն է, որքան ճամփորդելը, միջավայր փոխելը: 40-60 տարիքային խմբի ամուսնացած/ամուսնալուծված/այրի կանայք իրենց պատ-

մոթյունները պատմելիս հակված են շեշտելու ընտանիքին օգնելու, ընտանիքի համար զրկանքներ կրելու գաղափարը:

Չնայած այսօր աշխարհում առկա է միգրացիայի ֆեմինիզացումը, սակայն կանայք աշխատանքային միգրացիան դեռևս համարվում է «ոչ ավանդական» վարքագիծ: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ կանայք, իրենց միգրացիոն փորձառության մասին պատմելիս ընդգծում են «նվիրված մայրության» և ընտանիքին օգնելու գաղափարը. օգտագործելով հասարակության մեջ տարածում ունեցող բարոյական դիսկուրսը՝ նրանք հիմնավորում են իրենց «ոչ ավանդական» վարքագիծը¹⁴: Շիրակի մարզի բնակիչը հետևյալ կերպ է մեկնաբանում իր մեկնելու դրդապատճառը. «Որոշեցինք, որ այսպեղ շար դժվար էր: Շար նեղությունից, չկար ոչ մի բան, երեխաների համար գնացել եմ, աշխատել եմ, որ պահեմ, դրա համար: 1,5 տարի որդուս հետ աշխատեցինք, հետ վերադարձանք» (Արփինե, 49 տարեկան, ամուսնացած, Շիրակի մարզ, քաղաք, մեկնելու երկիր՝ ՌԴ):

Հարցազրույցների ընթացքում հանդիպում են դեպքեր, երբ կին միգրանտները, պատմելով իրենց միգրացիոն փորձառության և մեկնելու դրդապատճառի մասին, շեշտում են երեխաներին պահելու, երեխաներին օգնելու գաղափարը: Թեպետ երեխաներն արդեն չափահաս են, սակայն շատ կանայք՝ իբրև ծնող, իրենց վրա կրում են երեխաներին նյութական աջակցություն ցուցաբերելու պարտավորությունը: Այսպիսով, մեկնելու որոշում կայացնելու դրդապատճառի մասին խոսելիս կանայք հաճախ անուղղակիորեն կիրառում են հասարակության կողմից մոր դերին վերագրված «նվիրված մոր» հայեցակարգը:

Միննույն ժամանակ, ընտանիքին օգնելու գաղափարը կարելի է ուրվագծել ոչ միայն 40-60, այլ նաև 20-40 տարիքային խմբի՝ չամուսնացած (կամ մեկնելու պահին չամուսնացած) կանանց միգրացիոն պատմություններում, սակայն եթե ընտանիքին օգնելու միտքն առաջին խմբի պարագայում առանցքային է մեկնելու որոշման համար, ապա երկրորդ խմբի դեպքում այն կրում է ածանցյալ բնույթ, որը դուրս է բերվում բուն միգրացիայի և վերադարձի փուլերի մասին խոսելիս և չի նշվում իբրև մեկնելու որոշման հիմնական գործոն: Ի սկզբանե միգրացիան, լինելով ճամփորդության և միջավայրի փոփոխության միջոց, վերածվում է գումար վաս-

¹⁴ Ishkanian 2002.

տակելու և ընտանիքին օգնելու գործընթացի: Այս տարիքային խմբի կանայք, պատմելով իրենց մեկնելու պատմությունը, հիմնականում չեն նշում աշխատելու բուն նպատակը, այլ կենտրոնանում են արտասահմանում ապրելու և ճամփորդելու հնարավորության վրա, սակայն արտասահմանում անցկացրած ժամանակահատվածի մասին խոսելիս կարելի է նկատել անդրադարձը ֆինանսական որոշ դժվարություններին և ընտանիքին օգնելու գաղափարին. «...ես էլ քանի որ գումարիս մեծ մասը ուղարկում էի Հայաստան, ժամանակ եկավ, որ զգացի՝ չի հերիքում: Հեյրո էր ձև ման եկա, գրա. կես դրույքով գործերը անում էի, գումարը, երևի թե, չասես կրկնապատկվել, բայց մոտ էր էր կրկնապատկվելուն» (Մերի, 31 տարեկան, չամուսնացած, Շիրակի մարզ, քաղաք, մեկնելու երկիր՝ Չինաստան):

Երիտասարդ, չամուսնացած կանայք, որոնք մեկնելու պահին ընտանիքում ունեցել են դստեր կարգավիճակ, չեն կրել ընտանիքի նյութական ապահովվածությունը հոգալու պարտականությունը, որն էլ կարող է բացատրել այն, որ աշխատանքն իրենց կողմից չի նշվում իբրև մեկնելու առաջնային դրդապատճառ նույնիսկ այն պարագայում, երբ բուն միգրացիայի ընթացքում կամ վերադառնալուց հետո խոսում են ընտանիքին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին:

Ընտանիքում այս նույն դերային բաշխվածությունն է պայմանավորում 40-60 տարիքային խմբի ամուսնացած/ամուսնալուծված/այրի կանանց կողմից պարբերաբար կիրառվող՝ «ընտանիքին նվիրված, ընտանիքի համար տանջանքներ կրող մոր» գաղափարը՝ իբրև միգրացիայի որոշում կայացնելու հիմնավորում:

Եզրակացություններ

Այսպիսով, աշխատանքային միգրացիայի մեկնած կանանց պատմությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միգրացիայի որոշում կայացնելու փուլում առանցքային նշանակություն ունի մեկնող կնոջ՝ ընտանիքում զբաղեցրած դերը, որի փոփոխությանը զուգընթաց, փոխվում են նաև մեկնելու հիմնական դրդապատճառը և հիմնավորումը: Վերջինս պայմանավորված է հասարակության մեջ ընդունված «ընտանեկան պարտավորություններով»¹⁵ սահմանված և ընտանիքի անդամներին վերագրված գործառույթներով: Ընտանիքի մասին հոգալու և տան աշխա-

¹⁵ Finch 1987, Mason 1996.

տանքային պարտականությունների կատարումը կարծես թե շեղվում են ընդունված ձևից, երբ կինը մեկնում է արտերկիր աշխատելու: Այս «շեղումը» միգրանտ կանայք հիմնավորում են իբրև «զոհաբերություն» ընտանիքի բարեկեցության ապահովման համար: Միևնույն ժամանակ, դստեր կարգավիճակում գտնվող միգրանտները, չունենալով ընտանիքի մասին հոգ տանելու գործառույթ, ճամփորդությամբ են հիմնավորում իրենց աշխատանքային միգրացիան: Բացառությամբ դիտարկվում է իբրև մեկնելու երկրորդային գործոն: Միգրացիոն փորձառության պատմությունը, սակայն, խոսում է այն մասին, որ, չունենալով ընտանիքի մասին հոգալու պարտավորություն, դուստր միգրանտը, այնուամենայնիվ, արտերկրում կատարած աշխատանքի վարձատրությունից գումար է հատկացնում ընտանիքին: Դրանով հանդերձ՝ աշխատանքային միգրացիան չի ընկալվում իբրև ընտանիքին օգնելու, գումար վաստակելու համար կատարած ուղևորություն:

Մեկնելու որոշման հարցում կարևոր դեր ունի ցանցը, որը հաճախ դառնում է ոչ միայն երկրի ընտրության, այլև բուն միգրացիայի կազմակերպման դրդապատճառ: Կանանց կողմից միգրացիոն երկրի ընտրությունը պայմանավորող ցանցը, սակայն, միատարր չէ. այն ներառում է և՛ ընտանիքի անդամներին, և՛ ծանոթներին/բարեկամներին, և՛ միգրանտին այլ երկրի հետ կապող օղակ հանդիսացող տարատեսակ կազմակերպությունները: Ցանցի տեսակը փոխվում է երկրի տեսակի փոփոխմանը զուգահեռ. եթե ՌԴ և Թուրքիա մեկնող կանանց ցանցը բաղկացած է բարեկամներից և ծանոթներից, ապա եվրոպական երկրներ և Չինաստան մեկնող կանանց ցանցը բաղկացած է տարատեսակ կառույցներից, կազմակերպություններից: Ըստ էության, Ռուսաստանում և Թուրքիայում տարիների ընթացքում ձևավորված ցանցի մեծությունը նպաստում է միգրացիոն հոսքի ընդլայնմանը¹⁶, մինչդեռ եվրոպական երկրներում և Չինաստանում ցանցի փոքրությունը, մի կողմից, և մուտքի հասանելիության խնդիրը՝ մյուս կողմից, առաջ են մղում ցանցի ֆորմալ տեսակները: Միևնույն ժամանակ, կանանց բոլոր միգրացիոն փորձառություններում շեշտվում են ցանցի առկայությունն ու կարևորությունը մեկնելու որոշում կայացնելու գործում: Ցանցը միգրացիոն ռիսկերը նվազեցնող կարևոր գործոն է, որը հաճախ իրականացնում է վերահսկողության և անվտանգու-

¹⁶ Massey et al. 1993.

թյան ապահովման գործառույթները, որոնք Հայաստանում կատարում է միգրանտի ընտանիքը:

Գրականություն

- Գալստյան Մ. 2014, Սոցիալական ցանցերը և Հայաստանից աշխատանքային միգրացիայի ձևավորման առանձնահատկությունները, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, Երևան, էջ 203-213:
- Գալստյան Մ. 2019, Հայ ընտանիքում գործառույթների փոփոխությունների արդի դրսևորումները կանանց աշխատանքային միգրացիայի համատեքստում, Հայ ընտանիքն արդի մարտահրավերների համատեքստում, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 52-65:
- Finch J. 1987, Family Obligations and the Life Course, in the book "Rethinking the Life Cycle", ed. by Bryman A., Bytheway B., Allatt P. and Keil T., British Sociological Association, London, p. 155-169.
- Fleischer A. 2013, The role of the family for return migration, reintegration and re-emigration in Armenia, September, https://www.researchgate.net/publication/256422752_The_role_of_family_for_regration_reintegration_and_re-emigration_in_Armenia (01.11.2020).
- Haug S. 2008, Migration Networks and Migration Decision-Making, *Journal of Ethnic and Migration Studies*, 34:4, p. 585-605.
- Ishkanian A. 2002, Mobile Motherhood: Armenian Women's Labor Migration in the Post-Soviet Period, *Diaspora A Journal of Transnational Studies* 11(3): 383-415 DOI: 10.1353/dsp.2011.0060, https://www.researchgate.net/publication/236764239_Mobile_Motherhood_Armenian_Women's_Labor_Migration_in_the_Post-Soviet_Period (01.11.2020).
- Mason J. 1996, Gender, Care and Sensibility in Family and Kin Relationships, *Sex, Sensibility and the Gendered Body* edited by Holland J. and Adkins L., Macmilan Press, London, p. 15-36.
- Massey D., Joaquin Arango J., Hugo G., Kouaouci A., Pellegrino A., Edward T. 1993, Theories of International Migration: A Review and Appraisal, *Population and Development Review*, vol. 19, No. 3, p. 431-466.
- Massey D., Arango A., Hugo G., Kouaouci A., Pellegrino A., & Taylor, J.E. 2005, *Worlds in motion: Understanding international migration at the end of the millennium*. Oxford: Clarendon Press, 376 p.

- Minasyan A., Poghosyan A., Gevorgyan L., Chobanyan H. 2008, Return Migration To Armenia In 2002-2008: a Study, Yerevan, <https://www.osce.org/files/f/documents/2/e/35806.pdf> (01.11.2020).
- Shmulyar Gréen O., Melander Ch. 2018, Family Obligations across European borders: Negotiating Migration Decisions within the Families of Post-Accession Migrants in Sweden, Palgrave Communications, vol. 4, Issue 1, p. 1-13.
- Tadevosyan A. 2014, Migration and Everyday Life: Movement Through Cultures and Practices, "Gitutyun" Publishing House, National Academy of Sciences of Armenia, Yerevan, 142 p.
- United Nations 2017, International Migration rReport 2017, Department of Economic and Social Affairs, Population Division, New York, https://www.un.org/en/development/desa/population/migration/publications/migrationreport/docs/MigrationReport2017_Highlights.pdf (01.11.2020).

ՀՀ-ՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սոնա Մելիքջանյան

Ամփոփում

Միգրացիոն գործընթացներում կարևոր փուլերից է մեկնելու վերաբերյալ որոշում կայացնելու փուլը, երբ որոշվում է, թե ընտանիքի անդամներից ով, ուր և ինչ պայմաններով է մեկնելու: Միգրացիայի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում մեծ դեր ունի ընտանիքը, որի կառուցվածքը, դերային բաշխվածությունն ու հասարակության սպասումները, պայմանավորված դերային բաշխվածությամբ, իրենց յուրօրինակ ազդեցությունն են ունենում մեկնելուն վերաբերող «բանակցությունների» վրա: 2019 թ. իրականացված կենսագրական հարցազրույցները թույլ են տվել առավել լավ հասկանալ ընտանիքի կառուցվածքը, սեռով և տարիքով պայմանավորված դերային սպասումները, ընտանիքում տարբեր որոշումների կայացման գործում ընտանիքի տարբեր անդամների ներգրավվածությունը:

Բանալի բառեր՝ կանանց աշխատանքային միգրացիա, միգրացիայի ֆեմինիզացում, մեկնելու որոշման կայացում, միգրացիոն ցանց, աշխատանքային միգրացիա, դերային պարտավորություններ, միգրացիոն գործընթաց:

К ВОПРОСУ О ЖЕНСКОЙ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В РА

Сона Меликджанян

Резюме

Одним из важнейших этапов миграционного процесса является этап принятия решения о миграции. В процессе принятия решения о миграции важную роль играют семья, структура семьи, ролевое распределение и ожидания общества в соответствии с ролевым распределением. Биографические интервью, проведенные в 2019 году, позволяют выявить особенности структуры армянской семьи, ролевых ожиданий, обусловленных полом и возрастом, и обсудить влияние последних на принятие решений о миграции.

Ключевые слова – женская трудовая миграция, феминизация миграции, принятие решения о миграции, миграционная сеть, трудовая миграция, ролевые обязанности, миграционный процесс.

ON THE QUESTION OF FEMALE LABOUR MIGRATION IN RA

Sona Melikjanyan

Abstract

Migration decision-making phase is one of the most important stages in migration process. At this stage it is decided who is migrating, where and how. Family is one of the key agents at migration decision-making stage: the structure of the family, the role obligations based on sex and age, as well as expectations of society determine the negotiation process. The paper studies the features of negotiations on migration of Armenian female labour migrants. The analysis is based on the data collected within biographical interviews in 2019. The biographical interview method helps to figure out the structure of family, the features of the roles and the involvement of family members in negotiation process.

Key words – female labour migration, feminization of migration, migration decision-making, migration network, labour migration, role responsibilities, migration process.

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՈՒ
ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Յուրի Սուվարյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
տնտեսագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
Ակադեմիկոս-քարտուղար
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Էլ. հասցե՝ suvryan@sci.am
Հոդվածը ներկայացվել է 14.06.2021, գրախոսվել է 21.06.2021,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-118

Ներածություն

Պետական կառավարման պատմությունը իր առաջացման ժամանակաշրջանից առ այսօր դրսևորել է կայացման ու զարգացման որոշակի միտումներ: Հավաքչական գործունեությունից դեպի արտադրություն, այսինքն՝ նյութական բարիքների և անվտանգության միջոցների ստեղծումն ընթացող մարդկությունն ուներ իր իրավունքները, սեփականությունը և առաջացող երկրների սահմանների անվտանգությունը երաշխավորող լեգիտիմ կառույցի անհրաժեշտությունը, որը հայտնի դարձավ իբրև պետություն՝ իր գործառույթներն իրականացնող կարևոր պետական մարմիններով (թագավոր, նախարարներ, ոստիկանություն, բանակ, անվտանգության ծառայություն և այլն):

Ի սկզբանե պետական իշխանությունը ստանձնեցին առավել հզոր ցեղախմբերի առաջնորդները և, ինչպես ընդունված էր հնադարում, այն փոխանցվում էր ժառանգներին, այդպիսով սկզբնավորվում էր իշխանության ժառանգական փոխանցման ավանդույթը: Այդ ավանդույթը շարունակվեց մինչև հանրային կառավարման համակարգի ամբողջական արմատավորումը (XVIII-XIX դդ.): Ուշագրավ է, որ այն մասնակիորեն, թեև ըստ էության՝ էականորեն, իբրև խորքային պետության դրսևորում, պահպանվել է XX դարում, նաև գործում է XXI դարում: Ժառանգական միապետը իր կարևորագույն խնդիրն է համարում պետական իշխանության և

երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, վերջինիս առումով, և հատկապես միջնադարում, նաև ընդլայնումը, նոր տարածքների նվաճումը: Նոր տարածքները նոր ռեսուրսներ են, հարստացման և երկրի հզորացման միջոց, որը գայթակղիչ է բոլոր ժամանակներում: Եթե միջնադարում տարածքների գրավման գլխավոր միջոցը ուժային կառույցներն էին, ապա այսօր դրանք փոխարինվում կամ լրացվում են այսպես կոչված «փափուկ ուժի» ազդեցությամբ:

Հանրային կառավարման համակարգի պայմաններում, որն այսօր տիրապետող է, պետական իշխանության մարմինները ձևավորվում են քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով, ընտրական տեխնոլոգիաներով, որի շնորհիվ հաղթող քաղաքական ուժը ձևավորում է հանրային կառավարման մարմինները: Եթե ժառանգական միապետության պայմաններում երկրի զարգացման որակի համար կարևորվում էր քաղաքակրթական գործոնը, որը էական է տնտեսական, սոցիալական, մշակութային, անվտանգային զարգացման համար, ապա հանրային կառավարման պայմաններում դրան գումարվում են երկրի շահերի քաղաքագիտական ընկալման, պետականության անհրաժեշտության գիտակցման, պետական կազմակերպվածության բաղադրիչները՝ իբրև հանրային կառավարման համակարգի ամրության կարևորագույն նախադրյալներ, որոնք առարկայանում են քաղաքական ինստիտուտների՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունների, իսկ այնուհետև՝ դրանց ձևավորած հանրային կառավարման մարմինների միջոցով:

Երկիրը շահում է, եթե քաղաքական ինստիտուտները պետականության և ազգային շահերի ընկալման ու իրացման բարձր աստիճանի վրա են և հակառակը, պետությունը թուլանում է, եթե դրանք առավել կարևորում են անձնական-կուսակցական շահերը՝ դրսևորելով քաղաքագիտական ու պետական կազմակերպվածության ոչ պատշաճ մակարդակ:

Պետականության ամրապնդման և երկրի բարգավաճման համար էական է, թե ինչպիսին է ժողովրդի քաղաքակրթական մակարդակը համաշխարհային միջինի համեմատությամբ, քանի որ այն թե՛ սոցիալ-տնտեսական ու մշակութային հետագա զարգացման, թե՛ անվտանգային խնդիրների լուծման առանցքային ռեսուրսն է:

Միաժամանակ, չափազանց կարևոր է նաև ժողովրդի քաղաքակրթական մակարդակի և երկրի քաղաքական ինստիտուտների հասունության աստիճանի հարաբերակցությունը, որը, ինչպես վկայում է իրական կյան-

քը, միշտ չէ, որ համամասնական է, ավելին, երկրորդը էականորեն կարող է զիջել առաջինին, որը բացասական ազդեցություն կունենա պետականության և պետության կարևորագույն խնդիրների լուծման ու գործառույթների իրագործման վրա:

Հայտնի ճշմարտություն է, որ մարդիկ և նրանցից բաղկացած կազմակերպություններն առավելապես առաջնորդվում են սեփական շահերով, որոնք ավելի շատ դրսևորվում են բոլոր մակարդակների կազմակերպական հարաբերություններում ու ներազդում նաև քաղաքական ինստիտուտների վարքագծի վրա: Եվ եթե մարդկանց պետականության ու քաղաքագիտական, այդ թվում՝ ազգային արժեքների գիտակցության ու պաշտպանության աստիճանը բարձր չէ ու զիջում է անհատական շահին, ապա նման իրավիճակն ապացուցում է տվյալ հանրության քաղաքակրթական ու քաղաքագիտական-կազմակերպական մակարդակների միջև առաջացած անջրպետը, որը անհրաժեշտ է հաղթահարել, այլապես այն ողբերգական կարող է լինել այդ հանրության կամ ժողովրդի ճակատագրի համար: Հարկ է նշել, որ հանրային կառավարման վերաբերյալ և արդի տնտեսագիտական ու քաղաքագիտական գրականության¹ մեջ դրա արդյունավետության խնդիրը պատշաճ խորությամբ չի դիտարկվել երկրի քաղաքակրթական աստիճանի և քաղաքագիտական, պետական-կազմակերպական մակարդակի հարաբերակցության տեսանկյունից, և քանի որ այն ունի գիտագործնական կարևոր նշանակություն, ըստ այդմ, հետազոտական առումով, անկասկած, արդիական հիմնախնդիր է: Գործնական-քաղաքական տեսակետից քաղաքակրթական և քաղաքագիտական զարգացման հարաբերակցության խնդիրը էական է թույլ զարգացած կամ անգամ նոր զարգացող պետականությունների համար, քանի որ դրանք աշխարհաքաղաքական դիսկերի ազդեցության առումով ավելի խոցելի են: Այդ տեսակետից Հայաստանի Հանրապետության դրությունն առանձնահատուկ է, որովհետև հայ ժողովուրդը, ցավոք, չորս անգամ՝ 428, 1045, 1375 և 1920 թվականներին, կորցրել է պետականությունը, XIX դարի վերջին, XX դարի ընթացքում պարբերաբար ենթարկվել ցեղասպանության,

¹ Տե՛ս, օրինակ, Փալ 2005, Վեյմեր, Վայնինգ 2010, Դենհարդ 2006, Լինց, Ստեփան 2011, Սուվարյան, Միրզոյան 2013, Սուվարյան, Սարգսյան, Սուվարյան Ա. 2019, Аджемоглу, Робинсон 2016, Ֆերգյուսոն 2020, Шарма 2018, Стиглиц 2020, Мухаев 2009, Пугачев, Соловьев 2005, Соловьев 2008:

հայրենագրկման, վայրագ հարևանների կողմից պղծվել են նրա մշակութային արժեքները, յուրացվել նյութական արժեքները, տարածքները, այսօր էլ փորձում են կեղծել պատմությունը՝ ձգտելով վերացնել հայկական հետքը Հարավային Կովկասից: Ակնհայտ է, որ նշված արհավիրքների հաղթահարման ուղին հայկական պետականության ամրապնդումն է հայ ժողովրդի վաղնջական հողատարածքներում:

Ստորև հանգամանորեն կդիտարկվեն պետականության կառուցման և հանրային կառավարման համակարգում քաղաքակրթական, քաղաքագիտական, քաղաքական ինստիտուտների և պետական-կառավարչական գործոնների նշանակությունն ու դրանց նպատակասլաց օգտագործման գերակայությունները:

Քաղաքակրթական բաղադրիչը հանրային կառավարման համակարգում

Պետության, իսկ այնուհետև հանրային կառավարման գաղափարները մարդկային քաղաքակրթության նվաճումներից են, ճիշտ այնպես, ինչպես հայտնի գիտական գաղափարները, դրանց հիմքի վրա ստեղծված մարդկության ամենօրյա օգտագործման առարկաները (հեռախոս, հեռուստացույց, ռադիոէլեկտրոնային այլ արժեքներ, ավտոմեքենա, ինքնաթիռ և այլն), գեղարվեստական հաճույք պատճառող մշակութային հանրաժանոթ հոգևոր և նյութական արժեքները: Հանրային, այդ թվում՝ պետական կառավարման բովանդակությունը գիտական որոշակի գաղափարների մարմնացումն է հիմնական օրենքի՝ սահմանադրության, այլ ոլորտային օրենքների, կառավարման կազմակերպական կառուցվածքների, անվտանգային ծառայությունների, տարածքային ու ռազմավարական խնդիրների լուծման կառուցակարգերի միջոցով: Գիտական գաղափարների մի զգալի մասը վերաբերում է քաղաքագիտական-կառավարչական ոլորտին, որը նշանակում է, որ ընդհանուր քաղաքակրթական մակարդակը, հատկապես գիտության և մշակույթի ոլորտներում ձեռքբերումների առումով, բավարար չէ արդյունավետ պետական կամ հանրային կառավարման համար: Պատմական փորձը վկայում է, որ նվազագույն քաղաքակրթական մակարդակի պարագայում, սակայն պետականության ու պետական կազմակերպվածության որոշակի ձգտման դեպքում հնարավոր է պետական կառավարում, պետականաստեղծ գործունեություն: Եթե նշված երկու բաղադրիչներն առկա են, հնարավոր է ունենալ զարգացող և արդյունա-

վետ պետականություն, իսկ եթե քաղաքակրթական մակարդակը բարձր չէ, իսկ պետականաստեղծ կազմակերպվածության մակարդակն ակտիվ է ու բավարար, կարող է ստեղծվել պետական միավոր, որն իր արդյունավետությամբ կզիջի նախորդին: Սակայն եթե պետականության ճգնումը և հանրության կազմակերպվածության մակարդակը քաղաքակրթական աստիճանին էականորեն զիջում են, ապա նման ժողովուրդները հաճախ չեն կարողանում կառուցել ամուր և զարգացող պետություն:

Այսպիսով, պետությունը՝ քաղաքակրթական նվաճում է, և, միաժամանակ, պետականության զարգացումը պայմանավորված է երկրի քաղաքակրթական վերելքով՝ գիտության, արտադրության, մշակույթի անընդհատ աճով, ինչպես նաև քաղաքագիտական-կառավարչական հասունության աստիճանով: Վերջինս, ինչպես նշվեց, նույնպես քաղաքակրթության բաղադրիչ է, սակայն ամբողջի մասերը, ինչպես վկայում են պատմական փաստերը, միշտ չէ, որ զարգանում են համաչափ թե՛ բովանդակային, թե՛ տարածաշրջանային, թե՛ քաղաքակրթության գլխավոր հեղինակ մարդկային հանրությունների համադրմամբ:

Մշակույթը կարող է զարգանալ արագ, քան գիտությունը, կամ հակառակը՝ դրանց զարգացումը յուրահատուկ է՝ դրսևորվելով ըստ ժողովուրդների և երկրների: Իբրև օրինակ են մարդկային քաղաքակրթության որոշ ուղենշային հայտնագործությունները, որոնց աշխարհագրությունը և հեղինակների ազգային ու երկրային պատկանելությունը հաստատում են այդ դրույթը²: Հանրային կառավարման արդյունավետության առումով գործնական կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե ինչպիսին է, ըստ առանձին ժողովուրդների քաղաքակրթության աստիճանի և դրա բաղադրիչներից մեկի՝ քաղաքագիտական ու պետական կառավարչական մտքի հարաբերակցությունը: Թեև դժվար է քանակական արտահայտությամբ գնահատել այդ երկու բարդ երևույթները, սակայն դրանք կարող են չափելի և համադրելի դառնալ հարաբերական ցուցանիշներով: Մասնավորապես, քաղաքակրթության աստիճանի գնահատման համար կիրառելի է յուրաքանչյուր ժողովրդի հեղինակած, աշխարհում ընդունված գիտական նվաճումների, արվեստի և գրականության ստեղծագործությունների թիվը, քաղաքագիտական ու պետական կառավարչական մտքի մակարդակը կարող է արտահայտվել տվյալ ժողովրդի

² См'у 100 великих научных открытий 2018, 188:

(երկրի հանրության) պետականության ժամանակահատվածով և հանրային կառավարման արդյունավետության ցուցանիշներով: Մաթեմատիկորեն վերը նշված հարաբերակցությունը կարող է արտահայտվել հետևյալ տեսքով՝

$$\frac{y_i}{x} \geq \frac{x_i}{x}, \text{ կամ } \frac{y_i}{x_i} \geq 1, \text{ որտեղ՝}$$

x -ը քաղաքակրթական նվաճումների հանրագումարային ցուցիչն է,

x_i - նույնը առանձին երկրի կամ ժողովրդի (հանրության) համար,

y_i - առանձին երկրի կամ ժողովրդի (հանրության) քաղաքագիտական, պետական կառավարչական մտքի ընդհանրացված ցուցիչը:

Եթե խախտվում է անհավասարությունը հակառակ ուղղությամբ, կամ կոտորակի մեծությունը փոքր է միավորից, ապա դա հանգեցնում է անարդյունավետ հանրային կառավարման, անգամ պետականության կորստի վտանգի:

Չխորանալով այդ բարդ մաթեմատիկայի մեջ (ի դեպ, այն առանձին հետազոտության թեմա է)՝ նշենք, որ հայ ժողովուրդն իր գոյության ավելի քան 5 հազար տարիների ընթացքում ունեցել է 1500 տարվա պետականություն, որը, ինչպես արդեն նշվել է, կորցրել է 4 անգամ: Մինչդեռ համաշխարհային քաղաքակրթության ասպարեզում ունի զգալի նվաճումներ մաթեմատիկայի, աստղագիտության, ֆիզիկայի, կերպարվեստի, երաժշտության, գրականության, թատրոնի, կինոյի և այլ ոլորտներում, որոնք ընդունվում են աշխարհում իբրև իրողություն*:

Նորբեյյան մրցանակի դափնեկիր Զ. Ստիգլիցի կարծիքով, ժողովրդի հարստությունը հենվում է երկու սյուների վրա. առաջինը աշխատանքի արտադրողականության աճն է, որի գլխավոր աղբյուրը պետության կողմից ֆինանսավորվող հիմնարար հետազոտությունների արդյունքով տեխնիկական առաջադիմությունն է, որի շնորհիվ պետությունը հարստանում է, աճում է կենսամակարդակը, երկրորդը հասարակության բարվոք կա-

* Գիտության առումով իրենց նվաճումներով աշխարհում հայտնի անուններ են Մ. Խորենացին, Ա. Շիրակացին, Մ. Գոշը, Վ. Համբարձումյանը, Ս. Մերգեյանը, Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, Յու. Հովհաննիսյանը, Հ. Օրբելին, Հ. Ադամյանը, Ի. Կնունյանցը, Բ. Մարգարյանը, Ա. Թախտաջյանը, արվեստի և գրականության ոլորտներում վիթխարի ավանդ ունեն Թ. Ռոսլինը, Հ. Այվազովսկին, Մ. Սարյանը, Ա. Խաչատրյանը, Կոմիտասը, Ս. Փարաջանովը, Ռ. Մամուլյանը, Վ. Փափազյանը, Նարեկացին, Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Վ. Սարոյանը: Թվարկումը, անշուշտ, ավարտուն չէ, այն կարելի է շարունակել, ինչն ապացուցում է հայ ժողովրդի էական ներդրումը մարդկային քաղաքակրթության վերելքի տարբեր բնագավառներում:

ռուցվածքն է, որը հնարավորություն է ընձեռում մարդկանց համագործակցելու, առևտուր անելու և ներդրումներ կատարելու, և որը բնութագրվում է օրենքի գերակայությամբ, ժողովրդավարությամբ, անհրաժեշտ իրավական գործընթացներով, զսպումների և հակակշիռների համակարգով³։ Ակնհայտ է, որ քաղաքակրթության երկու հայտնի բաղադրիչները՝ գիտությունը և քաղաքական-կառավարչական համակարգը, կարևոր են հարուստ և ապահով պետության, ուստի և արդյունավետ հանրային կառավարման համար, սակայն երկուսն էլ պետք է լինեն զարգացման և հասունության բարձր աստիճանում, ընդ որում, գիտատեխնիկական առաջադիմության գործնական ապահովումը նույնպես քաղաքական-կառավարչական որոշումների արդյունք կարող է լինել։ Ի դեպ, քաղաքակրթության և դրա մեկ այլ բաղադրիչի՝ տնտեսագիտության ու տնտեսական քաղաքականության հարաբերակցությունը ևս էական է տնտեսության աճի, նորամուծական զարգացման համար։ Երկու արևմտյան հեղինակներ, պատասխանելով Անգլիայում XVIII դ. արդյունաբերական հեղափոխության վերաբերյալ հարցին, տալիս են միմյանցից տարբերվող պատասխաններ։

Ըստ Ա. Թոյնբիի՝ այդ հեղափոխությունը տեղի ունեցավ Անգլիայում այն պատճառով, որ քաղաքականության, կրոնի և կենսակերպի լճացումը արագացրեց արդյունաբերության համակենտրոնացումը, որն էլ խթանեց ձգտումը տեխնիկական հայտնագործությունների նկատմամբ, որին նպաստել են մաթեմատիկայի զարգացումը և ֆիզիկական գիտության նվաճումները⁴։ Ըստ Դ. Աճեմօղլուի և Զ. Ռոբինսոնի՝ արդյունաբերական հեղափոխությունը տեղի ունեցավ Անգլիայում այն պատճառով, որ այնտեղ գործում էին եզակի ինկլյուզիվ (ներառական) տնտեսական ինստիտուտներ, որոնք իրենց հերթին նույնատիպ քաղաքական ինստիտուտների արդյունք էին և ապահովում էին սեփականության իրավունքը, վերջ էին դրել արտաքին առևտրի պետական մենաշնորհին, վերացրել արդյունաբերության զարգացման արգելքները⁵։

Երկու պատասխաններն էլ ըստ էության ճիշտ են, սակայն առանձին վերցրած լիարժեք չեն, բայց միմյանց լրացնում են։ Թոյնբիի պատասխանում կարևորվում են արդյունաբերության համակենտրոնացումը և նորամուծական զարգացման ձգտումը։ Այդ ամենը հնարավոր է համապատաս-

³ Տե՛ս Стиллиц 2020, 14-15:

⁴ Տե՛ս Тойнби 1991, 25:

⁵ Տե՛ս Аджемоглу, Робинсон 2016, 284:

խան քաղաքական ու տնտեսական միջավայրի առկայության պայմաններում, որին վերաբերում է Դ. Աճեմօղլուի և Ջ. Ռոբինսոնի տեսակետը: Իսկ արդյունաբերության համակենտրոնացումը կապիտալի կուտակման հետևանք է, որի հիմքում տնտեսագիտական մտքի՝ դասական մակրոտնտեսագիտության [Ա. Սմիթ (1776 թ.), Ժ.Բ. Սեյ (1803 թ.), Ջ.Ս. Միլլ (1848 թ.)] զարգացումն է⁶: Երկու մոտեցումներում էլ այս կարևոր դրույթն է պակասում: Այսինքն, Անգլիայում տնտեսական ու քաղաքական ինստիտուտների հասունության աստիճանը, համամասնական լինելով քաղաքակրթական մակարդակին, նպաստեց արդյունաբերական հեղափոխությանը՝ տնտեսության նորամուծական զարգացմանը:

Պետականության ու պետական կառավարման անհրաժեշտության գիտակցումը և կազմակերպական գործոնները

Արդի աշխարհում յուրաքանչյուր առաջադեմ երկրում հանրային կառավարման մարմինները ժողովրդավարական սկզբունքներով ձևավորում են քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, որոնք կոչված են իրացնելու ժողովրդի՝ իշխանության իրավունքի իրագործումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման և դրանց գործունեության ապահովման միջոցով: Հանրային կառավարման մարմինների ձևավորման այդ կառուցակարգին հասնելու համար մարդկային հասարակությունը երկար ճանապարհ է անցել:

Անտիկ աշխարհում քաղաքականությունը համարվել է հասարակության խելամիտ կազմակերպման բարոյաէթիկական նախադրյալների ամբողջություն, իսկ դրա էությունը՝ մարդկանց միավորումն է պետության և մարդու բարձր նպատակներին հասնելու համար (Արիստոտել)⁷: Քաղաքագիտությունը, իբրև ուսմունք քաղաքականության մասին, զարգացել է չորս փուլերով⁸.

– սկզբնական փուլ (մ.թ.ա. V դ. – XVII դ.), որի ընթացքում ձևավորվեց քաղաքական փիլիսոփայությունը, իսկ այնուհետև սկզբնավորվեց Վերածննդի դարաշրջանի քաղաքական գիտությունը,

– ռացիոնալացման փուլ (XVII-XIX դդ.), որն ընդգրկում է նոր ժամանակների քաղաքական մտածողների տեսությունները,

⁶ Մանրամասն տե՛ս Самуэльсон, Хордхаяс 2000, 638-642:

⁷ Տե՛ս Мухаев 2009, 38-39:

⁸ Տե՛ս Мухаев 2009, 60-61:

– դասական փուլ (XIX դ. առաջին քառորդը – XX դ. սկիզբը), երբ ձևավորվում է քաղաքագիտությունը՝ իբրև ակադեմիական դասընթաց ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում,

– ժամանակակից փուլ (XX-XXI դդ.)՝ ժամանակակից քաղաքագիտական հիմնական դպրոցների և ուղղությունների ձևավորման ժամանակաշրջան:

Քաղաքագիտության հիմնադիրն է համարվում իտալացի փիլիսոփա, դիվանագետ, գրող Ն. Մաքիավելին, որը քաղաքագիտության առարկան համարել է իշխանությունն իր բոլոր դրսևորումներով⁹: Իր հայտնի՝ «Իշխանը» աշխատությունում Ն. Մաքիավելին նկարագրում է պետության տեսակները, դրա կառավարման և իշխանությունը պահպանելու մեթոդները, ռազմական գործը վարելու սկզբունքները, հասարակություն-պետություն նպատակասլաց հարաբերությունները¹⁰:

Ուշագրավ է, որ հայ մտածողներն ստեղծել են պատմության, գրականության, մշակույթի հայտնի՝ մտավոր և նյութական կոթողներ, նաև փիլիսոփայական, սահմանադրական (իրավագիտական) արժեքավոր աշխատություններ, բայց զուտ քաղաքագիտական միտքը մինչև XIX դ. վերջը (առաջին քաղաքական կուսակցությունների ստեղծումը) թվում է աղքատ, իսկ այնուհետև զարգացման թափ է ստանում ՀՀ Երրորդ հանրապետության հռչակումից հետո:

Հայաստանյան հասարակական-քաղաքական կազմակերպությունները սկսել են ձևավորվել XIX դարավերջին, երբ չկար հայկական անկախ պետություն, և հայ ժողովուրդն իր պապենական տարածքներով գտնվում էր ռուսական և օսմանյան կայսրությունների կազմում: Առաջին կուսակցություններից է Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), որը հիմնադրվել է 1890 թ., և որի նպատակը ի սկզբանե ազգային-ազատագրական շարժումը կազմակերպելը և Հայկական հարցի լուծումն էր: Նույն նպատակով էր ստեղծվել նաև Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ) 1887 թ.: Հաջորդ քաղաքական ուժը Ռամկավար ազատական կուսակցությունն է (ՌԱԿ), որը հիմնադրվել է 1921 թ., նույնպես Հայկական հարցի լուծման նպատակադրմամբ: Այդ կուսակցություններից առաջին երկուսը, հատկապես ՀՅԴ-ն, մասնակցել են Հայաստանի Առա-

⁹ Ст'ю Мухаев 2009, 69-70:

¹⁰ Макиавелли 2010, 6-87.

ջին հանրապետության (1918-1920 թթ.) ստեղծմանն ու պետականաշինության կարևոր գործին¹¹: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո (1920-1991 թթ.) իշխել է մեկ կուսակցություն՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը ԽՄԿԿ-ի մի բաժանմունք էր, իսկ վերը նշված հայ ավանդական կուսակցություններն սկսեցին գործել արտասահմանում, զբաղվել ավելի շատ հայապահպանական և մշակութային խնդիրներով: 1991 թ. հետո՝ Հայաստանի Երրորդ հանրապետության ստեղծումից հետո, երկրում օրենսդրորեն հաստատվեց բազմակուսակցական, ժողովրդավարական հանրային կառավարման համակարգ, իսկ իշխանության մարմինները ձևավորվում են քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից¹²: 1991 թ. հետո ընդունված ՀՀ Սահմանադրության (1995 թ.) ու դրա բարեփոխումների և համապատասխան ազատական իրավական դաշտի ստեղծման շնորհիվ ազգային ավանդական կուսակցությունների համար հնարավորություն ընձեռվեց գործելու հայրենիքում, բացի այդ, ստեղծվեցին հասարակական-քաղաքական նոր կազմավորումներ, որոնց թիվը 01.01.2020 թ. դրությամբ հասնում էր 109-ի: Աստիճանաբար ձևավորվում է նաև փորձագիտական ինստիտուտը: Սակայն հանրային կառավարման ոչ պատշաճ որակը և հատկապես 2018 թ. ապրիլից հետո տեղի ունեցած քաղաքական զարգացումները ապացուցում են, որ քաղաքացիական հասարակության քաղաքագիտական հասունության աստիճանը, պետականության անհրաժեշտության գիտակցումը և պետական կազմակերպվածությունը համահունչ չեն աշխարհաքաղաքական արդի մարտահրավերներին: Կարելի է ենթադրել, որ այդ երևույթը դարեր շարունակ պետականություն չունենալու, պետական կառավարման փորձի պակասի, քաղաքագիտական ու փորձագիտական մտքի հասունացած չլինելու կամ կայացման ընթացքում գտնվելու արդյունք է: Սակայն, ցավոք, հայոց պետականության պատմական ընթացքի վերլուծությունը հուշում է, որ, դրանցից բացի, կան այլ պատճառներ ևս,

¹¹ Մանրամասն տե՛ս Սուվարյան, Սարգսյան, Հայրապետյան, Ասատրյան, Քոչարյան 2018, 20-36:

¹² ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման ընթացքը, զանգվածային լրատվամիջոցների դերակատարությունը հանրային կառավարման համակարգում և դրանց զարգացման հիմնախնդիրները լուսաբանվել են Սուվարյան Յու.Մ., Սարգսյան Վ. Ա., Ասատրյան Ս.Ա., Քոչարյան Մ.Ռ. Հանրային կառավարման ենթահամակարգերը և արդյունավետությունը (Ե., 2021) աշխատությունում:

որոնք ժամանակի ընթացքում չեն հաղթահարվում, այլ շարունակվում են: Այդ պատճառներից են¹³.

– ներքին անկայունությունը՝ իշխանության թևերի միջև, նաև եկեղեցու հետ անհամաձայնությունը, անմիաբանությունը,

– առաջնորդի անարդյունավետությունը, հաճախ անհրաժեշտ հասկանիշներ չունենալը,

– հասարակության ցածր քաղաքական մշակույթը՝ համընդհանուր ընդունված արժեքների, կողմնորոշումների, զարգացման գերակայությունների գրեթե բացակայությունը,

– աննպաստ հանրային միջավայրը, այսինքն՝ հասարակության անդամների, պետական պաշտոնյաների անտարբեր վերաբերմունքը հայրենաավեր իրադարձություններին,

– քաղաքական համակարգի կազմալուծումը՝ անհրաժեշտության պարագայում քաղաքական ուժերի միասնականության և համախմբվածության կարևորությունը չգիտակցելու հետևանքով. անցյալում այդ երևույթը դրսևորվում էր թագավորական իշխանության և ֆեոդալների, ինչպես նաև միմյանց միջև ներքին պայքարի տեսքով, ցավալի փաստ է կենտրոնախույս ուժերի մշտական առկայությունը,

– արտաքին պետությունների նենգ քաղաքականությունը, որի հանդեպ թույլ է մեր դիմադրողականության ներուժը՝ վերը նշված պատճառներով:

Նշվածներին հաճախ գումարվում են առանց աշխարհաքաղաքական դիսկերը ճշգրիտ հաշվառելու, առանց կանխատեսումային հաշվարկների կառավարչական որոշումների ընդունումը, որը աղետաբեր հետևանքներ է ունենում երկրի ու ժողովրդի համար: Ցավալիորեն, մեր պատմությունը հարուստ է նման օրինակներով:

Նշվածը փաստում է, որ էական բարելավման կարիք ունի հանրային կառավարման արդյունավետությունը, որի կարևորագույն գործոններից են.

– պետական կազմակերպվածության և կարգապահության մակարդակի բարձրացումը օրենքի գերակայության և վերապահված լիազորությունների պարտադիր կատարման պայմաններում,

– գիտական սկզբունքների ներդրումը հանրային կառավարման համակարգում, հատկապես կարևորագույն նշանակության ռազմավարական

¹³ Տե՛ս մանրամասն Սուվարյան, Սարգսյան, Սուվարյան Ա. 2019, 149-171:

որոշումների կայացման գործընթացում, որին կարելի է հասնել կառավարչական կադրերի ճիշտ ընտրության, փորձագետների ներգրավման դեպքում,

– երկրում քաղաքագիտական, դիվանագիտական, միջազգային իրավագիտության մասնագիտություններով կադրերի պատրաստմանը և այդ ուղղություններով գիտական հետազոտությունների իրականացմանը, հասարակության քաղաքական մշակույթի ու մտածողության մակարդակի բարձրացմանը էական նշանակություն տալը,

– իշխանության թևերի միջև լիազորությունների բաշխումը և անհրաժեշտ հակակշիռների ու զսպումների սահմանադրորեն ամրագրումը խիստ հստակեցնելը, որը մասամբ ստվերվել է սահմանադրական վերջին (2015 թ.) բարեփոխումների ընթացքում,

– հանրային կառավարման կիսանախագահական համակարգին վերադառնալը, քանի որ քաղաքացիական հասարակության հասունության ներկա մակարդակի համար ժամանակավրեպ էր անցումը խորհրդարանական կառավարման սկզբունքներին:

Շարադրվածի համատեքստում դիտարկենք լուծման ենթակա մի հիմնախնդիր ևս: Քաղաքագիտության մեջ XIX դ. վերջերին և XX դ. ընթացքում ձևավորվել է, այսպես կոչված, քաղաքական վերնախավի ժամանակակից դասական ժողովրդավարական տեսությունը, ըստ որի, աշխարհը պետք է կառավարի ընտրյալ փոքրամասնությունը՝ վերնախավը, մարդիկ, որոնք օժտված են հատուկ հատկանիշներով (բնական օժտվածություն, կրթությամբ և դաստիարակությամբ ստացված)¹⁴: Ընդ որում, վերնախավային լինելը կամ վերնախավ ունենալը, ըստ այդ տեսության, հասարակության արդյունավետ գործունեության պայման է և հիմնվում է կառավարչական ու կատարողական աշխատանքների միջև բնական բաժանման վրա, իսկ վերնախավի ձևավորումը հասարակության բնական ընտրության հետևանք է, երբ առանձնացվում են առավել արժանիները: Ընտրության կառուցակարգերը տարբեր են, դրանցից են որակյալ համալսարանական կրթությունը, աշխատանքը, այդ թվում՝ հասարակական-քաղաքական, ընտրությունները, սոցիոլոգիական հարցումները, մամուլի արձագանքները և այլն¹⁵: Ի դեպ, սովորաբար վերնախավից առանձ-

¹⁴ Ст'ю Пугачев, Соловьев 2005, 132-152:

¹⁵ Пугачев, Соловьев 2005, 139-149.

նանում են առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) անհատները, որոնք իրականացնում են օրինակի (էտալոնային) իշխանությունը (առաջնորդումը)¹⁶: Ինչպես ընդգծում են ժամանակակից հետազոտողները, արդի ժողովրդավարական պետության խնդիրը ոչ թե պայքարն է վերնախավության դեմ, այլ հասարակության համար օգտակար, արդյունավետ վերնախավի ձևավորումը, դրա՝ ժամանակին որակական նորացումը, օլիգարխացման ու փակ տիրապետող և արտոնյալ խավ դառնալու միտումների կանխումը¹⁷:

Խորքային պետություն. էությունը, անհրաժեշտությունը և դրսևորման ձևերը

Հրապարակախոսական և հանրագիտարանային գրականության («Ռեզնում», «Վիքիպեդիա» հանրագիտարան և այլն) էջերում հաճախ է հանդիպում «խորքային պետություն» արտահայտությունը՝ մի շարք էլիտար ընտանիքների (օրինակ՝ «Ջեներալ մոթորս», «Ջեներալ էլեկտրիկ» սեփականատերերի), որևէ կուսակցության, կրոնական (Իրանի Իսլամական Հանրապետություն) կամ պետական քաղաքական գործչի, բանակի (Թուրքիա, Եգիպտոս) և այլ դրսևորումներով: Ուշագրավ է, որ գիտական գրականության մեջ խորքային պետության գաղափարը չի լուսաբանվում: Առաջին հայացքից երևոյթի ընկալումը բացասական է, քանի որ, մանավանդ մեր օրերում, գոյություն ունեն ժողովրդավարական սկզբունքներով ընտրված պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, և թվում է, թե ինչ անհրաժեշտությամբ է թելադրվում խորքային պետության գաղափարը: Սակայն իրական կյանքը տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունները, տնտեսական սուր մրցակցությունը, պայքարը ազդեցության գոտիների համար հանգեցնում են այն եզրակացության, որ, ինչպես նկատել են պետության ծագման «հասարակական դաշինքի» տեսաբանները (Թ. Հոբս¹⁸, Զ. Լոկկ¹⁹), «Բոլորը բոլորի դեմ պատերազմի» վտանգը բնութագրական է մարդկանց, եթե չկա պետական իշխանություն, ապա ներկայումս, մեր համոզմամբ, նույն երևույթը վերաբերում է նաև միջպետական հարաբերություններին: Եվ թեև այդ վտանգի գիտակցումով ստեղծվել են վերպետական կառույցներ (Ազգերի լիգա, այնու-

¹⁶ Տե՛ս Мескон, Альберт, Хедоури 2000, 468, 475:

¹⁷ Տե՛ս Пугачев, Соловьев 2005, 147:

¹⁸ Տե՛ս Гоббс 1991.

¹⁹ Локк 1988.

հետև՝ ՄԱԿ, դաշնակցային զանազան ռազմաքաղաքական միավորումներ), այնուամենայնիվ, յուրաքանչյուր պետություն օբյեկտիվ անհրաժեշտությամբ ինքը պարտավոր է ամրապնդել իր ներքին և արտաքին անվտանգությունը: Այդ նկատառումներով ստեղծվում են բանակը, ազգային անվտանգության և ներքին գործերի կառույցները: Ուսումնասիրություններից պարզվում է, որ այդ համակարգի կարևոր օղակներից է նաև խորքային պետությունը: Այն հատկապես անհրաժեշտ է փափուկ ուժի ներգործությամբ իրականացվող գունավոր հեղափոխությունների պայմաններում, երբ պետությանը վտանգ է սպառնում արտաքին ուժերի ազդեցությամբ գործող ներքին քաղաքական ինստիտուտներին, հոգուտ այլ երկրների, շահերի գործունեության հետևանքով, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ ժողովրդավարության կարևորագույն կանոններից մեկի՝ օրենքի գերակայության պայմաններում: Մանավանդ, արևմտյան փորձագետների վերլուծությամբ, քաղաքացիական հասարակությունը հետընթաց է ապրում ոչ այնքան տեխնոլոգիաների (հեռուստացույց, համացանց, ֆեյսբուք, և այլն), որքան պետական չափազանց լայն ոտնձգությունների պատճառով²⁰: Ավելին, «քաղաքացիական հասարակությունը կարծես կորպորատիվ շահերի ու ամենակուլ պետության միջև ընկած անտեր գոտի լինի», իսկ «ժողովրդավարության և կապիտալիզմի համար այդքան կարևոր իրավունքի գերակայությունն սպառնում է վերածվել իրավաբանների գերակայության»²¹: Նույնիսկ միտում է նկատվում, որ ԱՄՆ-ն կարող է վերածվել մի երկրի, որտեղ էկոնոմիկան և ժողովրդավարությունը բնակչության մեկ տոկոսի համար են և այդ մեկ տոկոսի ցանկությամբ²²: Մարդկանց անհավասարության նման իրավիճակը վտանգավոր է ոչ միայն տվյալ երկրի, այլ նաև մյուսների համար, քանի որ հարուստ վերնախավը ձգտում է իր քաղաքական ու տնտեսական ազդեցությունը տարածել նաև տարբեր տարածաշրջանների վրա՝ «փափուկ ուժի» ազդեցությամբ շարունակելով գաղութացման միջնադարյան ավանդույթները, որոնք լավ նկարագրված են Յու.Ն. Հարարիի աշխատությունում²³: Ժառանգական միա-

²⁰ Տե՛ս Ֆերգյուսոն 2020, 130-161:

²¹ Տե՛ս Ֆերգյուսոն 2020, 180:

²² Տե՛ս Стиглиц 2020, 7 (ի դեպ, այս երևույթը մարդկանց անհավասարության, ժողովրդավարության ձևախեղման, խորքային պետության գոյության և աշխարհի տարբեր տարածաշրջաններում փոքրաթիվ խմբերի ազդեցության տարածման ձգտման մասին վկայող փաստ է):

²³ Տե՛ս Հարարի 2020, 512:

պետության պայմաններում խորքային պետության անհրաժեշտությունը նվազագույն էր, քանի որ միապետը և նրա ընտանիքը տնօրինում էին երկիրը, նրա հարստությունը և շահագրգռված էին ընդլայնելու ու զարգացնելու առկա ունեցվածքը: Հանրային կառավարման արդի պայմաններում ժառանգականության երևույթը բացառված է, քաղաքական ինստիտուտները հարաբերաբար ժամանակավոր կառավարիչներ են ու երկրի ճակատագրի հետ նրանց կապը նվիրվածությունն է ազգային արժեքներին և հայրենասիրությունը: Համընդհանրացման արդի պայմաններում վերջիններս ժառանգական սեփականության համեմատությամբ հարափոփոխ են, շահագրգիռ ներազդեցության ենթակա: Հենց այս հանգամանքն է խորքային պետությունը դարձնում անհրաժեշտ, քանի որ անվտանգային ուժային կառույցները մեծ մասամբ ընտրված պետական մարմինների ենթակայության ներքո են, հատկապես եթե սահմանադրորեն ճիշտ չեն կառուցված իշխանության թևերի միջև հակակշիռները, իսկ այդ երևույթը բնորոշ է երիտասարդ և թույլ զարգացած երկրներին*:

Այսպիսով, «խորքային պետության» երևույթը կոչված է ամբողջացնելու երկրի պետականությունը, թույլ չտալու գործող քաղաքական ինստիտուտներին շեղվելու ազգային արժեքներից, պետության և երկրի զարգացման ազգաշահ տեսլականից: Իր բնույթով այն ազգային անվտանգության ոչ բացահայտ,

* Համընդհանրացման պայմաններում հանրային կառավարման մարմինների ժողովրդավարական սկզբունքներով ձևավորումը պարունակում է դժվար կառավարվող դիսկեր՝ հետևյալ պատճառներով.

– սովորական քաղաքացու համար այսօր չափազանց բարդ է կողմնորոշվելը թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության դժվար ընկալելի բարդագույն խնդիրների առաջարկվող լուծումներում, որոնք ներկայացնում են քաղաքական ուժերը,

– հասարակությունը բևեռացված է ըստ ինտելեկտուալ մակարդակի, և հաճախ մեծամասնություն են կազմում անձինք, որոնց համար գրեթե անհնար է ըմբռնել աշխարհաքաղաքական հիմնախնդիրները և շատ հաճելի անձնական շահերին վերաբերող ամբոխավարական խաբուսիկ խոստումները, ինչը մեծացնում է պոպուլիստների իշխանությանը տիրանալու հնարավորությունները,

– քաղաքացիական հասարակության համընդհանրացման գաղափարներով զինված կառույցները ազգային արժեքների և շահերի փոխարեն կարող են ընտրության և հետագա գործընթացներում առավելապես կարևորել համընդհանրական արժեքները:

Ուշագրավ է, որ ժողովրդավարության հնարավոր թերությունները մատնանշել է դեռևս Պլատոնը՝ ընդգծելով, որ դրա պայմաններում հավասարեցվում են «հավասարներն ու անհավասարները», ինչի հետևանքով իշխում է ամբոխավարությունը, աղավաղվում են բարոյական չափանիշները (տե՛ս Платон 1971, 150, 374, 380):

բայց կայուն ու կարևոր բաղադրիչներից է: Հարկ է ընդգծել նաև, որ իշխանության ձևավորման, պետական քաղաքականության բովանդակության առումներով խորքային պետությունը կարող է նշանակել սողացող վերադարձ դեպի մինչև XVIII դար գոյատևած ազնվականական պետության հայեցակարգ, որից հարկ է խուսափել օրենսդրական կարգավորումներով:

Անդրադառնալով խորքային պետության դրսևորման ձևերին, որոնք, ինչպես արդեն նշվել է, բազմազան են, նկատելի է, որ դրանց թվում թե՛ եվրոպական, թե՛ ասիական որոշ երկրներում նախընտրել են ավանդական ժառանգական միապետների ինստիտուտը (Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Ճապոնիա և այլն): Այդ ուղիով, հավանաբար, կգնա նաև Ռուսաստանը (տե՛ս Χαλδεϊ 2020):

Այս տարբերակներից են մտավոր (նաև փորձագիտական) կամ գործարար էլիտան, կրոնական գաղափարախոսությունը՝ առաջնորդի գլխավորությամբ, զանազան քաղաքական կազմակերպությունները (կուսակցությունները), բանակի սպայակազմը և այլն: Հայաստանում պատմականորեն կայացած կառույցը, որն առաջին հերթին կարող է հավակնել այդ դերին, Հայ առաքելական եկեղեցին է, որը դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում ապահովել է հայոց ինքնության պահպանությունը, անգամ իր քրիստոնեական գաղափարախոսությունից, բացի ունենալով իրավական հիմք՝ «Կանոնագիրք Հայոց»-ը:

Հաջորդիվ ժողովրդի առջև պետականության ամրապնդման պարտավորություններ պետք է ունենան նաև մտավորական և հասուն գործարար վերնախավը, բանակի և ազգային անվտանգության ծառայության բարձրաստիճան սպայակազմը: Ի դեպ, նշված լիազորությունները ոչ մի երկրում ամրագրված չեն օրենսդրական փաստաթղթերում: Դրանք ձևավորվում, կայանում և հանրության կողմից ընդունվում են տարիների ընթացքում, դառնում ավանդույթ: Էականն այն է, որ վերը թվարկված սուբյեկտները գիտակցեն իրենց առաքելությունը և իրենց գործելակերպով ստանան հանրության վստահությունն ու դառնան ամուր պատվար հայկական պետականության ամրապնդման ու զարգացման համար:

Եզրակացություններ

Հանրային կառավարման արդյունավետության ու պետականության անվտանգության համար չափազանց կարևոր են երկրում մարդկային քա-

ղաքակրթության մակարդակը՝ իբրև առանցքային ռեսուրս սոցիալ-տնտեսական և մշակութային հետագա զարգացման, անվտանգային խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև քաղաքագիտական ու պետական կառավարչական մտքի բարձր աստիճանը՝ առկա ռեսուրսների և աշխարհաքաղաքական ռիսկերի հաշվառմամբ ճշգրիտ կանխատեսումային հաշվարկների և հիմնավոր ու նպատակասլաց կառավարչական որոշումների ընդունման համար:

Պատմատրամաբանական վերլուծությունը փաստում է, որ եթե երկրորդը էականորեն զիջում է առաջինին, որը նկատվում է նոր զարգացող կամ դեռևս թույլ երկրներում, ապա դա բացասական ազդեցություն կունենա պետականության ու պետության կարևորագույն խնդիրների լուծման ընթացքի և արդյունքների վրա: Դիտարկելով նման իրավիճակ առաջացնող պատճառները, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության համար, կարևորվում է հանրային կառավարման գիտական մակարդակի բարձրացումը, որին կարելի է հասնել կառավարչական կադրերի ճիշտ ընտրության, ռազմավարական որոշումների ընդունման հիմքում գիտական հետազոտությունների արդյունքների, ոլորտային փորձագետների եզրակացությունների հաշվառման պարագայում: Կարևորագույն խնդիր են իշխանության թևերի միջև լիազորությունների հավասարակշռված բաշխումն ու օրենքի գերակայությամբ դրանց պարտադիր կատարումը, անհրաժեշտ հակակշիռների ու զսպումների սահմանադրորեն ամրագրումը:

Քաղաքացիական հասարակության հասունության ներկա մակարդակի պայմաններում ժամանակավրեպ էր անցումը խորհրդարանական կառավարման սկզբունքներին: Ուստի անհրաժեշտ է վերադառնալ հանրային կառավարման կիսանախագահական համակարգին:

Հետազոտելով, այսպես կոչված, խորքային պետության երևույթը, այն դիտելով իբրև պետականության անվտանգության երաշխիք՝ առաջարկվել է համընդհանրացման և աշխարհաքաղաքական ռիսկերի չեզոքացման նպատակով դրա հնարավոր կիրառության եղանակների համալիր:

Գրականություն

Դենհարդ Ռ.Բ. 2006, Հանրային կազմակերպության տեսություններ, Երևան, «Անտարես», 300 էջ:

- Լինց Ի., Ստեփան Ա. 2011, Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները, Երևան, «Կովկասի ինստիտուտ», 619 էջ:
- Հարարի Յու.Ն. 2020, Sapiens: Մարդկության համառոտ պատմություն, Երևան, «Նյու Մեք», 512 էջ:
- Սուվարյան Յու.Մ., Միրզոյան Վ. 2013, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Երևան, «Գիտություն», 368 էջ:
- Սուվարյան Յու.Մ., Սարգսյան Վ.Ա., Հայրապետյան Ռ.Ա., Ասատրյանց Ս.Ա., Քոչարյան Մ.Ռ. 2018, Հանրային կառավարումը Հայաստանի Հանրապետությունում. զարգացման ընթացքը և բարեփոխման գերակայությունները, Երևան, «Տնտեսագետ», 256 էջ:
- Սուվարյան Յու.Մ., Սարգսյան Վ.Ա. Սուվարյան Ա.Ս. 2019, Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրները, Երևան, «Գիտություն», 239 էջ:
- Սուվարյան Յու.Մ., Սարգսյան Վ.Ա., Ասատրյանց Ս.Ա., Քոչարյան Մ.Ռ. 2021, Հանրային կառավարման ենթահամակարգերը և արդյունավետությունը, Երևան, «Լիմուշ», 227 էջ:
- Վեյմեր Դ.Լ., Վայնինգ Է.Ռ. 2010, Քաղաքականության վերլուծություն. հասկացություններ և պրակտիկա, Երևան, «Պետական ծառայություն», 576 էջ:
- Փալ Լ.Ա. 2005, Քաղաքականության վերլուծության շուրջ. հանրային կառավարման հիմնախնդիրներն անհանգիստ ժամանակներում, Երևան, «Պետական ծառայություն», 490 էջ:
- Ֆերգյուսոն Ն. 2020, Մեծ անկում. Ինչպես են քայքայվում ինստիտուտներն ու կործանվում տնտեսությունները, Երևան, «Նյու Մեք», 200 էջ:
- Аджемоглу Д., Робинсон Дм.А. 2016, Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты, Москва, изд. АСТ, 693 с.
- Гоббс Т. 1991, Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского, Сочинения в двух томах, т. 2, Москва, «Мысль», 182 с.
- Локк Дж. 1988, Два трактата о государственном правлении, Сочинения в трех томах, т. 3, Москва, «Мысль», 208 с.
- Макиавелли Н. 2010, Государь, история Флоренции, Москва, «Эксмо», 432 с.
- Мескон М., Альберт М., Хедоури Ф. 2000, Основы менеджмента, Москва, «Дело», 704 с.
- Мухаев Р.Т. 2009, Политология, Москва, «Проспект», 640 с.

- Платон 1971, Государство, Сочинения в 3-х томах, т. 3, ч. 1, Москва, «Мысль», 688 с.
- Пугачев В.П., Соловьев А.И. 2005, Введение в политологию, Москва, «Аспект Пресс», 477 с.
- Самуэльсон П.А., Нордхаус В.Д. 2000, Экономика, Москва, Лаборатория базовых знаний, 800 с.
- Соловьев А.И. 2008, Политология: политическая теория, политические технологии, Москва, «Аспект Пресс», 575 с.
- Стиглиц Дж. 2020, Люди, власть и прибыль: прогрессивный капитализм в эпоху массового недовольства, Москва, «Альпина Паблишер», 430 с.
- 100 великих научных открытий 2018, Харьков, «Книжный клуб», 188 с.
- Тойнби А.Дж. 1991, Постигание истории, Москва, «Прогресс», 736 с.
- Халдей А., Глубинное государство в России-утопия или реальность? «Регнум» (21.05.2020).
- Шарма Р. 2018, Взлеты и падения государств. Силы перемен в посткризисном мире, Москва, изд. АСТ, 415 с.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Յուրի Սուվարյան

Ամփոփում

Տրամաբանորեն և պատմական փորձի հաստատմամբ յուրաքանչյուր երկրի (ժողովրդի) պետականության անվտանգությունը և հանրային կառավարման արդյունավետությունը պայմանավորված են քաղաքագիտական-պետական կառավարչական մտքի զարգացման աստիճանի և քաղաքակրթական նվաճված մակարդակի հարաբերակցությամբ: Եթե առաջինը զիջում է երկրորդին, ապա այդ գործոնի ազդեցությամբ էականորեն նվազում է հանրային կառավարման արդյունավետությունը, վտանգվում են պետականությունը և ժողովրդի ճակատագիրը, իր հայրենիքում անվտանգ ապրելու հնարավորությունը: Ուստի հարկ է կարևորել հանրային կառավարման արդյունավետության բարձրացման գերակայությունները, մասնավորապես՝ ներդնել գիտական սկզբունքներ պետական ու տեղական ինքնակառավարման համակարգում, զարգացնել հասարակության քաղաքական մշակույթը և վերլուծական մտածողության մակարդակը, էական նշանակություն տալ երկրում

քաղաքագիտական, դիվանագիտական, միջազգային իրավագիտության մասնագիտություններով կադրերի պատրաստմանը և այդ ուղղություններով գիտական հետազոտությունների իրականացմանը՝ նպատակ ունենալով օգտագործել ստացված արդյունքները ռազմավարական կառավարչական որոշումներ ընդունելիս, իշխանության թևերի միջև խիստ հստակեցնել լիազորությունների բաշխումը և անհրաժեշտ զսպումների ու հակակշիռների կառուցակարգի սահմանադրորեն ամրագրումը:

Այսպես կոչված՝ խորքային պետությունը համընդհանրացման պայմաններում պետականության անվտանգության և արդյունավետ կառավարման երաշխիք է, քաղաքացիական հասարակության գործունեությունն ուղղորդող և հակակշռող գործոն: Հայաստանի Հանրապետությունում այդ դերակատարությանը կարող են հավակնել Հայ առաքելական եկեղեցին, մտավորական և հասուն գործարար վերնախավը, բանակի և ազգային անվտանգության ծառայության բարձրաստիճան սպայակազմը, որոնք իրենց հայրենանվեր առաքելությունը պետք է ստանձնեն իբրև ավանդույթ:

Բանալի բառեր՝ պետական կառավարչական գործունեություն, հանրային կառավարում, պետականություն, անվտանգություն, խորքային պետություն, ժողովրդավարություն, քաղաքական մշակույթ:

ПРОБЛЕМЫ ЦИВИЛИЗАЦИОННОЙ И ПОЛИТОЛОГИЧЕСКОЙ ОРГАНИЗАЦИИ ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

Юрий Суварян

Резюме

Логически и в силу исторического опыта эффективность общественного управления и безопасность государственности каждой страны (народа) обусловлены соотношением степени развития политологической-государственной управленческой мысли и достигнутого уровня цивилизации. Если первое уступает второму, то под воздействием этого фактора существенно снижается эффективность общественного управления, подвергаются опасности государственность и судьба народа, а также возможность жить в безопасности в своей стране.

Поэтому необходимо придавать важное значение приоритетам повышения эффективности общественного управления, в частности, вне-

дрить научные принципы в систему государственного управления и местного самоуправления, развить политическую культуру общества и уровень аналитического мышления, существенным образом улучшить принципы подготовки специалистов по политологии, дипломатии, международной юриспруденции, организовать научно-исследовательские работы по этим направлениям с целью использования полученных результатов при принятии стратегических управленческих решений, строго разграничить полномочия между ветвями власти и конституционно закрепить механизм сдерживания и противовесов.

В условиях глобализации так называемое глубинное государство является гарантом безопасности государственности и эффективного управления, корректирующим и уравнивающим фактором деятельности гражданского общества. В Республике Армения эту роль могут взять на себя Армянская Апостольская церковь, интеллигенция и бизнес - элита, высший офицерский состав армии и службы национальной безопасности.

Ключевые слова – государственная управленческая деятельность, общественное управление, государственность, безопасность, глубинное государство, демократия, политическая культура.

CIVILIZATION AND POLITOLOGICAL PROBLEMS OF THE ORGANIZATION OF PUBLIC ADMINISTRATION

Yuri Suvaryan

Abstract

Logically, according to historical experience, the security of the statehood of each country (nation), the efficiency of public administration are conditioned by the degree of development of the political-state administrative thought and by the level of civilization achieved. If the former is inferior to the latter, then under the influence of that factor the efficiency of public administration is significantly reduced. The statehood, the fate of the people, the possibility of living safely in its homeland are endangered. Therefore, it is necessary to prioritize the increase of public administration efficiency, in particular, to introduce scientific principles in the system of state and local self-government, to develop the political culture of the society and the level of ana-

lytical thinking, to attach essential importance to the training of personnel in the fields of political science, diplomacy, international law, to conduct scientific research in those areas with the aim of using the results obtained in making strategic management decisions to clarify the distribution of powers between the branches of government, and to enshrine in the necessary restraint and counterbalance structure.

The so-called deep state is a guarantee of state security, effective management in the conditions of generalization, a counterbalancing factor directing the activities of the civil society. In the Republic of Armenia such a role can claim the Armenian Apostolic Church, the intellectual-mature business elite, the high-ranking officers of the army and the National Security Service.

Key words – state governance, public administration, statehood, security, deep state, democracy, political culture.

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՅՄԱՆ ՇՐՋԱՆԱՅՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Վոլոդյա Մանասյան

Աշխարհագրական գիտությունների թեկնածու
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128
Էլ. հասցե՝ manasjanvolodya@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 07.02.2020, գրախոսվել է 05.02.2021,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-140

Ներածություն

Շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ գյուղատնտեսական արտադրության տարածքային կազմակերպումը գրեթե անիրագործելի է առանց գիտականորեն հիմնավորված շրջանացման, որի էությունը աշխատանքի տարածքաճյուղային բաժանման արդյունք հանդիսացող և պարզորոշ սահմանազատված գոյություն ունեցող որոշակի գյուղատնտեսական գոտիների տարածական համակցությունների առանձնացումն է:

Շրջանացումը գյուղատնտեսական արտադրության տարածքային կազմակերպման և տնտեսական նախագծման մի մեթոդ է, որի նշանակությունն աճում է ագրարային հատվածի զարգացման և նրա դժվարալույծ բնույթ ստանալուն համապատասխան: ՀՀ ագրարային հատվածի տարածքային կառավարման գոյություն ունեցող գործառույթների մշակումն ու իրականացումն ապահովող այդ մեթոդի կիրառումը միայն գյուղատնտեսական գոտիներով և մարզերով է սահմանափակվում: Ավելի փոքր տարածքային միավորները դուրս են մնում այդ ոլորտից: Մինչդեռ լեռնային փոքր տարածքի վրա ռելիեֆային ու ագրոկլիմայական պայմանները այնքան բազմազան են ու հաճախ այնպես բարդացված, որ շատ անգամ դժվարին խնդիր է դառնում գյուղատնտեսական այս կամ այն ենթաճյուղը կազմակերպելու համար հողատարածություն հատկացնելը: Այնինչ, մեր հանրապետության լեռնային տարածքի պայմաններում դրանց սոցիալ-տնտեսական զարգացման նախնական ծրագրերի գոտիական մասի ուսումնասիրության խորացումն կարող է հիմնավորել այդ ծրագրերի օբյեկտիվությունը, բարելավել դրանց դրույթները՝ բարձրացնել ագրարային

հատվածի տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման գիտական անհրաժեշտությունը: Ուստի սույն հոդվածի հիմնական նպատակն է ՀՀ-ի գյուղատնտեսական շրջանացման հիմնախնդրի այդ հայեցակետի վրա ուշադրության հրավիրումը և դրա նշանակության բացահայտումը գյուղատնտեսական արտադրության տարածքային (գոտիական) մասնագիտացման համար:

Շրջանացման արդյունքները և վերլուծությունը

Տարածքի շրջանացման տնտեսագիտության տեսության հիմնական դրույթներն են համարվում գիտական հետազոտությամբ ստացված արդյունքները, վիճակագրական տվյալները և վերջինիս մեթոդները օգտագործելու անհրաժեշտությունը՝ պատմական զարգացման տեսանկյունից:

Հայաստանում գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման նպատակներով տարածքի շրջանացման առավել հիմնավորված փորձ է արվել XIX դարի 80-ական թթ. վերջին, երբ Անդրկովկասում իր հետազոտական աշխատանքները սկսեց Տիխենկի հայտնի գիտարշավը: Սակայն այդ հարցը հատուկ ուշադրության է արժանացել ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլում՝ երկրի ամբողջ տնտեսության և, հատկապես, ագրարային հատվածի վերականգնման ու վերակառուցման առնչությամբ տարածքի մասնագիտացման՝ «մասերի բաժանելու» չափանիշներ-հատկանիշների ընտրություն կատարելու առումով:

Ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլում ամենից առաջ հողժողկոմատի, այնուհետև գյուղատնտեսության նախարարության կողմից չորս անգամ կազմակերպվել են գիտարշավներ՝ հանրապետության տարածքը գյուղատնտեսական շրջանացման ենթարկելու: Նշենք, որ առավել շատ գիտական նյութ հավաքվել և ուսումնասիրվել է 1926 թ. Ս. Չելենցկի ղեկավարած հետազոտական գիտարշավների ընթացքում. լրացվել է 1400 հարցաթերթ և որպես մանրամասն ուսումնասիրության օբյեկտներ տարբեր գյուղատնտեսական գոտիներում ընտրվել է 300 գյուղական համայնք և 2800 գյուղական տնտեսություն: Երթուղիները կազմված են եղել այնպես, որ դրանց մեծ տարողությամբ ցանցի մեջ ներառվեն հանրապետության բոլոր շրջաններից որքան կարելի է թվով շատ բնորոշ

գյուղական համայնքներ, իսկ դրանց մեջ գյուղական տնտեսություններ՝ իրենց սոցիալական և ազգային շերտավորմամբ¹:

Նշենք, որ Ս. Չելենցևի ղեկավարությամբ աշխատող գիտական արշավախմբերն ուսումնասիրել են նաև Հայաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղական համայնքների էթնիկական մասնագիտացման բնորոշ առանձնահատկությունները՝ բնակչության ձևավորված տնտեսավարման ավանդույթների հաշվառմամբ: Ուստի, համեմատած իրենց բնակչության փոքրաթվությանը, հետազոտության նյութ են դարձել նաև ազգային փոքրամասնություններով բնակեցված հանրապետության մի շարք գյուղական համայնքներ²: ՀԽՍՀ-ի տարածքը բաժանել են չորս ուղղաձիգ գոտու (դաշտային՝ «բամբակա-խաղողագործական», նախալեռնային՝ «աշնանացան հացաբույսերի», լեռնային՝ «գարնանացան հացաբույսերի» և ալպյան՝ «արոտատեղային»)³: Գ. Աթաբեկյանը մեր հանրապետության դաշտային՝ բամբակա-խաղողագործական գոտուց բացի, նախալեռնային, լեռնային և ալպյան գոտիներում կիրառելիք տնտեսության ձևերի համար առաջարկել էր ուրվագծային-նախնական սխեմա. նախալեռնային գոտու համար՝ հողագործական-այգեգործական-անասնապահական, իսկ լեռնային-ալպյան գոտու միացյալ տնտեսության համար՝ անասնապահական-հողագործական տնտեսության ձևերը⁴: Ընդ որում, լեռնային-ալպյան գոտին տնտեսության մեկ ընդհանրական ձև ունենալով և փոխադարձաբար միմյանց լրացնելով՝ խթան է հանդիսանալու տնտեսությունների կոոպերացման համար: Կոոպերացված գյուղացին իր հիմնական զբաղվածությունը ապահովելով անասնաբուծության ճյուղում, առավելագույն հնարավորություն է ստանալու իր կաթնամթերքների մի մասը կոոպերատիվ վաճառահանման միջոցով ապրանքայնացնել և առավելագույն շահույթ ստանալ: Դրանք, ըստ էության, հանրապետության տարածքի «շերտավորման» հետ նույնականացվող առանձին ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների մասնավոր (ճյուղային) շրջանացման հողօգտագործման ընդունված բաժանումն էին, որոնց սահմանները հետագա ուսումնասիրություններով պետք է ճշգրտվեին ու լրացվեին:

¹ Աթանասյան 1927, 22:

² Աթանասյան 1927, N 8, 17:

³ Աթանասյան 1927, N 6, 23:

⁴ Աթաբեկյան 1927, N 3, 14:

Սակայն հետագայում (1929 թ.) անտեսվում է շրջանացման գոտիականության սկզբունքը և դրա փոխարեն գործածության մեջ է մտնում ՀԽՍՀ-ի փոքր տարածքում գյուղատնտեսության տարբեր ենթաճյուղերի զարգացմանը չնպաստող, բնական պայմաններն ու ագրոարտադրական ռեսուրսային ներուժը գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար բարենպաստ պայմաններ չընձեռող և միանգամայն անընդունելի զոնայական (հորիզոնական) շրջանցման սխեման: Ընդ որում, առանց փորձության, ձեռք բերված անհրաժեշտ տվյալների հիմնավորման միմյանց հաջորդափոխում են հորիզոնական (զոնայական) շրջանացման սխեմաների զանազան տարբերակները, որոնք հիմնականում տարբերվում էին միայն գյուղատնտեսական շրջանների քանակով (5, 6, 7 և 9-ը):

1950-ական թվականների կեսերին ՀԽՍՀ-ի գյուղատնտեսության նախարարության կողմից մի հանձնաժողով էր կազմվել, որի վրա պարտավորություն էր դրվել՝ ամփոփել ՀԽՍՀ-ի գոտիականությանը (զոնայականությանը) վերաբերող առկա բոլոր տվյալները, օգտագործել գոյություն ունեցող փորձը և կազմել հանրապետության գյուղատնտեսական մասնագիտացման գոտիների սխեմա:

Այդ հանձնաժողովի կողմից կազմված «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գոտիները» վերնագիրը կրող շրջանացման սխեմայի (1956 թ.) հիմնական խնդիրներից էր գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման օրինաչափությունների բացահայտումը, առանձին ենթաճյուղերի փոխգործողության տարածքային առանձնահատկությունների հետազոտումը և շրջան ձևավորող բնական ու տնտեսական գործընթացների բնորոշ առանձնահատկությունների ի հայտ բերումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության մակերևույթի խիստ մասնատվածության, բարձրությունների զգալի տարբերությունների և մեծ թեքությունների հետևանքով առաջացած բնատնտեսական համալիրների բազմազանությունը հնարավորություն չի ընձեռում ամբողջ տարածքը բաժանել միասնական մասնագիտացման գոտիների, հեղինակները շրջանացումը ճիշտ սահմանելու նպատակով անհրաժեշտ են համարել գոտիական սկզբունքը կիրառել տվյալ գոտուն հատուկ ագրոկլիմայական և սոցիալ-տնտեսական պայմաններով աչքի ընկնող նույնականացվող տարածական համակցությունների նկատմամբ: Դրա հիման վրա այդ՝ հանրապետության տարածքում իրար մեջ բաժանված մասնավոր (ճյուղային) շրջանացման սխեման կարելի է նույնականացնել որևէ տարածքում

ծգվող միասնական մասնագիտական ուղղվածություն ունեցող գոտու՝ «շերտավորման» հետ: Ենթադրվում էր, որ հանրապետության տարածքում բնական պայմաններով և ագրոարտադրական ռեսուրսային ներուժով նույնականացվող գյուղատնտեսական գոտիների ամբողջությունը իրենից ներկայացնում է միմյանց հետ որոշակի կապեր ունեցող տարածական համակցությունների համակարգ: Սակայն այդ ենթադրությունը մակաձական հետազոտության արդյունք էր և գյուղատնտեսական շրջանացման ոչ բոլոր սխեմաների համար է պահպանում իր օրինաչափությունը: Հնարավոր է համարվում գյուղատնտեսական գոտիների ստեղծումը, այդ դեպքում աննշան են կապերը առանձին համակարգային նախագծերի միջև:

Շրջանացման չափանիշների միարժեքության պահանջները համարվում են սկզբունքային և մեծ մասամբ պաշտպանվում են հետազոտողների կողմից: Այստեղից հետևում է, որ շրջանացման տվյալ համակարգի գյուղատնտեսական գոտիները համադրելի հատկանիշներից կախված կարող են և՛ տիպերով, և՛ աստիճանակարգերով նույնականացվել: Ցանկացած դեպքում դրանք համադրելիություն են թույլ տալիս որևէ հարաբերությունների մեջ, թեկուզև նկարագրության հաջորդականության տեսակետից:

Հիմնավորումը, որ, օրինակ, անհատական (տիպաբանական) շրջանացումը իր արդյունքներով անհամեմատելի գյուղատնտեսական գոտիներ ունի (քանի որ դրանցից յուրաքանչյուրը «անհատական է և անկրկնելի, հետևաբար, այս կամ այն տեսակային հասկացության մեջ չի մտնում»⁵), մեր կարծիքով չափազանց խիստ է: Չէ՞ որ անկրկնելիությունը անհամադրելիություն չէ:

Անկասկած, մասնավոր (ճյուղային) շրջանացումը հատուկ տարածական համակցությունների առանձնացմամբ կարելի է նույնականացնել գյուղատնտեսական գոտիների «շերտավորման» հետ: Այդ դեպքում գյուղատնտեսական գոտիների տրոհումն ուղղաձիգ ենթագոտիների՝ բազմապատիկ կանոնավոր ստորակարգությունն է, իսկ մասնավոր՝ ճյուղային գոտիների՝ շերտավորման ստորակարգությունն է: Այդ սկզբունքի հիման վրա, օրինակ, Արարատյան գյուղատնտեսական գոտին ցածրադիր՝ ոռոգվող, նախալեռնային, լեռնատափաստանային և բարձր լեռնային ենթագոտիների էր բաժանվել⁶:

⁵ Арманд 1964, 23.

⁶ Աղաջանյան, Խրիմյան, Քոչարյան, Բաղդասարյան 1956, 9:

Վերոհիշյալ շրջանացմամբ գյուղատնտեսական գոտիներն առանձնացնելիս վարչական շրջանները, ըստ իրենց տարածքի, ամբողջությամբ այս կամ այն շրջանացման գոտու մեջ էին ներառվել, ընդ որում՝ դրանց մասնագիտացման ուղղությունները ճշգրտված էին գոտիները ենթագոտիների ստորաբաժանելու միջոցով: Դա արվել էր գործնական նպատակներով, հաշվի առնելով նպատակահարմարությունները՝ նյութերից օգտվելու և վարչական շրջաններում միջոցառումներ անցկացնելու տեսակետից: Ուստի, ելնելով Հայաստանի տարածքի ագրոկլիմայական և սոցիալ-տնտեսական պայմաններից, 1956 թվականի շրջանացման սխեմային համապատասխան առանձնացվել էր 9 գյուղատնտեսական գոտի՝ Հյուսիսարևելյան, Լոռի-Փամբակ, Շիրակ, Սևանի ավազան, Զանգեզուր, Կենտրոնական, Ապարան-Ախտա, Դարալագյազ և Արարատյան⁷:

Փաստորեն, տարածքային շրջանացումը կատարվել էր բնական և ագրոարտադրական համալիրների բոլոր տարրերի հաշվառման հիման վրա, և գյուղատնտեսական գոտիներից յուրաքանչյուրը, շնորհիվ նախընտրելի մասնագիտացման ուղղությունների, էականորեն տարբերվում է մյուսներից: Սակայն մեր հանրապետության լեռնային տարածքի բարդ ռելիեֆը, կլիման և ուղղաձիգ լանդշաֆտների հաջորդաբար, գոտիների տարապատկերի համասեռությունն ու հերթափոխի օրինաչափությունները բազմատարրություն ստեղծելով հանդերձ, որոշակիորեն դժվարացնում են տարածքի որոշակի մասի համեմատաբար ընդարձակ նույնականացվող գյուղատնտեսական մասնագիտացման գոտիների ձևավորման գործընթացը: Արտադրական մասնագիտացման նույնականացումը գյուղատնտեսական գոտու այն հատկանիշներից է, որոնց հետագա զարգացմանը պետք է նախորդի ռեսուրսների ու աշխատանքի տնտեսման ու ամբողջությամբ վերցրած հանրապետության տնտեսական զարգացման շահերի հաշվառման վրա կառուցված լուրջ գիտական հիմնավորումը: Ուստի հանրապետության գյուղատնտեսական գոտիները ճիշտ ուրվագծելու նպատակով անհրաժեշտ է շրջանացման գոտիականության սկզբունքը կիրառել ուրույն ագրոկլիմայական պայմաններով և տնտեսավարման ավանդույթներով աչքի ընկնող առանձին տարածական համակցությունների նկատմամբ⁸: Այդպիսի սկզբունքով առաջնորդվելու դեպքում առան-

⁷ Աղաջանյան, Խրիմյան, Քոչարյան, Բաղդասարյան 1956, 9:

⁸ Մանասյան 2015, 57:

ծին գյուղատնտեսական գոտիներ ներկայացնող տարածական համակցությունների ամբողջությունն ուղղաձիգ ենթագոտիների է բաժանվում, իսկ դրանք էլ իրենց հերթին միկրոգոտիների են ստորաբաժանվում:

Բացի դրանից, գյուղատնտեսական շրջանացումը պետք է ոչ միայն գնահատելով հիմնավորի տվյալ տարածքի արտադրական մասնագիտացման ձեռք բերած մակարդակը, այլև բացահայտի գյուղատնտեսական գոտիներից յուրաքանչյուրի հեռանկարային նախընտրելի մասնագիտացման ուղղություններն ու հնարավորությունները:

Ուշագրավ են նաև 1980-ական թվականների վերջերին Ռ. Էդիլյանի ղեկավարած հետազոտական աշխատանքներում արված եզրակացությունները, որտեղ բնատարածքային համալիր տարրերը, համարելով բուսաբուծության և անասնաբուծության ենթաճյուղերի ընտրության և տեղաբաշխման, դրանց բերքատվության ու մթերատվության, արտադրանքի որակի ու արտադրական ծախսերի, ինչպես նաև հողերի բերրիության մակարդակի վրա էական ազդեցություն ունեցող օբյեկտիվ գործոններ, առանձնացրել էին բնագյուղատնտեսական 5 մարզ՝ բնահողային 21 շրջանով⁹:

Տնտեսության ագրարային հատվածի զարգացման շուկայական բարեփոխումների փուլում տարբեր սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների թելադրանքով նկատելիորեն խախտվել է գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման ավանդականորեն ձևավորված սխեմայի դասավորության ու տարածական համակցությունների փոխհարաբերության ամբողջությունը, ըստ այդմ զգալիորեն նվազել է ագրոարտադրական ռեսուրսային ներուժի կազմակերպված օգտագործման արդյունավետությունը, նվազել են միավոր հողատարածությունից ստացվող համախառն արտադրանքը և աշխատանքի արտադրողականությունը: Այդ ամենը, անշուշտ, իր բացասական ազդեցությունն է թողնում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման վրա: Ուստի բնական է, որ անցյալ դարի 90-ական թթ. ագրարային հատվածի արտադրության միջոցների մասնավորեցման ոչ ճիշտ մեթոդաբանության արդյունք հանդիսացող գյուղացիական տնտեսությունների և տնտեսավարման ուրիշ փոքր ձևերի գերակշռության պայմաններում գյուղատնտեսական արտադրությունը մեզանում կրում է ավելի սպառողական, քան ապրանքային բնույթ: Ըստ Յու. Սուվարյանի՝ ցածր է տնտեսությունների ապրան-

⁹ Էդիլյան, Մելքոնյան, Մկրտչյան, Զոհրաբյան, Մկրտչյան 1988, 37:

քայնության միջին կշռվածության մակարդակը՝ շուրջ 57%, որի 30%-ն է դրամային արտահայտությամբ, մնացածը ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված միջոցներն են¹⁰: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով գյուղատնտեսական շրջանացման աշխատանքների անցյալի փորձը և տվյալ սոցիալ-տնտեսական հմակարգին բնորոշ աշխատանքի տարածքային բաժանման առանձնահատկությունների ու արտադրության հիմնավորված տեղաբաշխման անհրաժեշտ դարձող օրինաչափ գործընթացը, «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարություն» փաստաթղթում ներկայացված են գյուղատնտեսական գոտիների նախընտրելի մասնագիտացման ուղղությունները և գլխավոր (հիմնական) ենթաճյուղերը (տե՛ս աղ. 1):

Հանրապետության վարչատարածքային բաժանման առանձին միավորներում և նույնիսկ ամբողջական գյուղատնտեսական գոտիներում արտադրության անհրաժեշտ դարձող մասնագիտացման խորացման օրինաչափ գործընթացը կանխորոշվում է ոչ թե միայն բնական պայմանների և ագրոարտադրական ռեսուրսային ներուժի ընձեռած հնարավորություններով ու բնակչության տնտեսավարման ավանդույթներով, այլ հիմնականում այն պահանջներով, որոնք շուկան է ներկայացնում: Գյուղատնտեսական ապրանքարտադրողը հաճախ ստիպված շուկա է մատակարարում ոչ այն, ինչին լավագույնս անհրաժեշտ նախադրյալներ հողն է ստեղծում, այլ ինչպիսին կլինեն նրա արտադրությունը վարձահատույց ավելի բարձր ռենտա ապահովելով: Անգամ անձնական սպառումը երկրորդ պլան է մղվել, քանի որ «շուկայական պահանջարկը թելադրող է» տնտեսավարողի համար: Առավել ևս ապրանքային բուսաբուծության և անասնաբուծության ենթաճյուղերը շատ դեպքերում միջնորդային ու ներճյուղային կապերով են կանխորոշվում: Եթե միջնորդային կապերը գյուղատնտեսական գոտիների միջև աշխատանքի տարածքաճյուղային բաժանման, դրանց հանրապետական մասշտաբի արգասիք են, ապա ներճյուղային կապերը գյուղատնտեսական գոտու ամբողջական զարգացման արդյունք են:

¹⁰ Սովարյան 2019, 94:

Աղյուսակ 1

«Հ գյուղատնտեսական գոտիների նախընտրելի մասնագիտացման ուղղությունները և գլխավոր (հիմնական) ենթաճյուղերը (համախառն արտադրանքի կառուցվածքով)»¹¹

Գյուղատնտեսական գոտիները	Մինչև ագրարային բարեփոխումները	Այժմեական վիճակը	Հեռանկարային մասնագիտացումը
1. Արարատյան դաշտ (Արարատ, Արմավիր, Մասիս, Արտաշատ, Էջմիածին)	Խաղողագործություն, պտղաբուծություն, բանջարաբուծություն, կաթնատու տավարաբուծություն, թռչնաբուծություն, խոզաբուծություն, եթերայուղային արտադրություն	Բանջարաբուծություն, խաղողագործություն, մսակաթնատու տավարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, պտղաբուծություն, վաղահաս կարտոֆիլագործություն	Խաղողագործություն, բանջարաբուծություն, կաթնատու տավարաբուծություն, վաղահաս կարտոֆիլագործություն
2. Նախալեռնային (Աշտարակ, Նաիրի, Բաղրամյան, Թային՝ ստորին մասը, Արովյան)	Բանջարաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն, կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն	Կաթնամսատու տավարաբուծություն, կարտոֆիլագործություն, պտղաբուծություն, հացահատիկային տնտեսություն	Կաթնամսատու տավարաբուծություն, պտղաբուծություն, կարտոֆիլագործություն, ոչխարաբուծություն, կերարտադրություն
3. Ապարան-Հրազդան (Կենտրոնական) (Հրազդան, Ապարան, Արագած)	Կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլագործություն	Կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլագործություն, ծխախոտագործություն	Կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլագործություն, կերարտադրություն
4. Սևանի ավազան (Վարդենիս, Գավառ, Սևան, Ճամբարակ, Մարտունի)	Մսակաթնատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, ծխախոտագործություն, կարտոֆիլագործություն	Կարտոֆիլագործություն, կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, բանջարաբուծություն	Մսակաթնատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլագործություն, կերարտադրություն
5. Հյուսիսարևելյան (Տավուշ, Իջևան, Նոյեմբերյան, Թումանյան)	Ծխախոտագործություն, պտղաբուծություն, կաթնամսատու տավարաբուծություն, խաղողագործություն, խոզաբուծություն	Մսակաթնատու տավարաբուծություն, կարտոֆիլագործություն, հացահատիկային տնտեսություն, խոզաբուծություն, ոչխարաբուծություն, խաղողագործություն	Մսակաթնատու տավարաբուծություն, պտղաբուծություն, խաղողագործություն, խոզաբուծություն, կերարտադրություն, ծխախոտագործություն
6. Լոռի-Փամբակ (Տաշիր, Ստեփանավան, Սպիտակ, Գուգարք)	Կաթնատու և տոհմային տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կարտոֆիլագործություն	Կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կարտոֆիլագործություն, հացահատիկային տնտեսություն, կերարտադրություն	Կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կարտոֆիլագործություն, հացահատիկային տնտեսություն, կերարտադրություն, ճակնդեղագործություն, պտղաբուծություն
7. Ծիրակ (Ախուրյան, Արթիկ, Անի, Ամասիա, Աշոցք)	Մսակաթնատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, ճակնդեղագործություն, հացահատիկային տնտեսություն	Կաթնամսատու տավարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլագործություն, բանջարաբուծություն, ոչխարաբուծություն	Մսակաթնատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, հացահատիկային տնտեսություն, կարտոֆիլագործություն, կերարտադրություն, բանջարաբուծություն, ճակնդեղագործություն

¹¹ ՀՀ պաշտոնական տեղեկագիր 2010, 84-85:

8. Վայք (Եղեգնաձոր, Վայք)	Տավարաբուծություն, ոչխարաբուծություն, ծխախոտագործություն, խաղողագործություն, պտղաբուծություն	Մսակաթնատու տավարաբուծություն, պտղաբուծություն	Մսակաթնատու տավարաբուծություն, պտղաբուծություն, ոչխարաբուծություն, այծաբուծություն
9. Զանգեզուր (Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի)	Մսակաթնատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, ծխախոտագործություն, պտղաբուծություն, խաղողագործություն	Կաթնամսատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կարտոֆիլագործություն, հացահատիկային տնտեսություն	Մսակաթնատու տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կերարտադրություն, հացահատիկային տնտեսություն, մերձարևադարձային պտղաբուծություն

Այնպիսի արտաքին գործոններից, ինչպիսին շուկան է, բուսաբուծության և անասնաբուծության կախվածության երևան գալը ոչ միայն ճյուղերի տեխնոլոգիական և արտադրության կազմակերպման բնույթի փոփոխության, այլև գյուղատնտեսական ապրանքարտադրողի վիճակի, հատկապես ավանդականությամբ (նաև ազգային) հասած մասնագիտացման ուղղությունների հասարակական նշանակության միջոցով է դրսևորվում^{*}։ Շուկայի հետ մեկտեղ տնտեսության համար նշանակություն ձեռք բերեցին նաև ուրիշ արտաքին պայմաններ, որոնք հայտնվեցին ապրանքային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց։ Մենք նկատի ունենք շուկայի տարածքային ընդարձակումը պայմանավորող ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը։ Անկասկած, գյուղատնտեսական գոտին պետք է ունենա շատ թե քիչ միասնական տրանսպորտային կողմնորոշում և ամբողջական տրանսպորտային ցանց, որը կարող է սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային ու նախալեռնային գոտիների և զարգացած տնտեսական կենտրոնների կապն ապահովել։ Ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների անգամ ոչ էական թվացող լրացումը և փոփոխությունը կարող են որոշակի ազդեցություն թողնել գյուղատնտեսական գոտու կազմի, սահմանների և մասնագիտացման ուղղությունների վրա։ Ուստի և՛ շրջանացում իրականացնելիս, և՛ արտադրության հիմնավորված տեղաբաշխում ու գոտիական մասնագիտացում նախագծելիս ուշագրավ են այս հարցերը։ Փաստորեն, շուկայական

^{*} Ի դեպ, ազգային փոքրամասնություններով բնակեցված հանրապետության գյուղական համայնքների ագրարային հատվածի տնտեսավարման տարբեր ձևերի գործունեության մեջ զգալի տարբերություններ գոյություն ունեն՝ արտահայտվելով մասնագիտացման ուղղությունների, ապրանքայնության մակարդակի, չափերի և այլնի յուրահատկություններում։ Դրանք, իրենց հերթին, մասնավոր՝ ճյուղային շրջանացման մեխանիզմների մեջ տարբերակումը և նրանց ագրոարտադրական ռեսուրսային ներուժի յուրացման մեջ հատուկ գործիքակազմերի կիրառումն են պայմանավորում։

պահանջարկի ներգործությամբ, դեռևս XIX դարի 80-ականների վերջերից սկսած, Հայաստանի ագրարային հատվածի աստիճանաբար ձևավորվող հիմնավորված տեղաբաշխումը և գոտիական մասնագիտացումը բավական ուրույն ուրվագիծ ունեն: Այսպես, Արարատյան գյուղատնտեսական գոտում պտղաբուծությունը և արդյունաբերական խաղողագործությունը, նախալեռնայինում՝ պտղաբուծությունը, շերամապահությունը ու ծխախոտագործությունը, Լոռի-Փամբակում՝ կաթնամսատու տավարաբուծությունն էր զարգանում, իսկ հանրապետության մյուս գյուղատնտեսական գոտիներում, հատկապես սահմանամերձ լեռնային բարձր լեռնային ու տարածաշրջաններում, որոնք թույլ տրանսպորտային կապեր ունեին խոշոր տնտեսական կենտրոնների հետ, շարունակվում էր բազմաճյուղ բնամթերային գյուղատնտեսությունը պահպանվել: Այսպիսով, հետադարձ քննարկելով Հայաստանի ագրարային հատվածի զարգացումը, կարելի է եզրակացնել, որ տնտեսական պայմանները ագրարային հատվածի տեղաբաշխման ու մասնագիտացման, գյուղատնտեսական շրջանացման հիմնական տեղաշարժերի առաջ մղող գործոններն են համարվել, այդ թվում՝ պլանային տնտեսության պայմաններում:

Հայրենական ագրարային հատվածի զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ նրա շրջանացման հիմքում են կոնկրետ տարածքին համապատասխանող ռելիեֆի ու կլիմայական պայմանների առանձնահատկությունները և ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների տարապատկերի համասեռության ու հեթափոխի օրինաչափությունները, որոնք տարածքի կազմակերպման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքի կիրառմամբ կանխորոշում են գյուղատնտեսական գոտիների և նրանց նախընտրելի մասնագիտացման ուղղությունների զարգացման միտումները: Հետևաբար, XXI դարում ագրարային հատվածի զարգացումը նորարարական-ներդրումային բնույթ է կրելու և տարածքի կազմակերպման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքին ու կլիմայի փոփոխությանը ներդաշնակ գյուղատնտեսության բարձրարտադրողական վարման համակարգ է ապահովելու¹²: Թեև «գոտիական հայկական գյուղատնտեսության» մասին հարցադրումն ավելի քան հարյուրամյա պատմություն ունի մասնագիտական գրականության հետ, այնուամենայնիվ, նրա գիտատեսական քննարկումը որոշ տեսակետից վիճաբանական է: Տարըմբոնում

¹² Ավետիսյան, Մանասյան 2017, 119:

է նկատվում, օրինակ, «գյուղատնտեսական գոտի» հասկացության բովանդակության հարցում: Որոշ հեղինակներ գյուղատնտեսական շրջանացումը դիտարկում են միայն տեխնիկական տեսակետից՝ տարածությունը բաժանելով մասերի՝ անկախ տնտեսական հարաբերություններից: Նրանց համար գյուղատնտեսական գոտին երկրի տարածքի առանձնացված ինչ-որ մասն է՝ առանց վարչատարածքային միավորների սահմանների հաշվառման: Տնտեսագետները տարածքի բաժանումը գյուղատնտեսական գոտիների հակված են առանձնացված տարածքի սահմանագծերը ըստ տնտեսական հատկանիշների ամբողջության անցկացնելու, քանի որ գյուղատնտեսական ապրանքարտադրողի տնտեսական գործունեության նպատակը առավելագույն շահույթի (ռենտայի) ստացումն է համարվում:

Տնտեսության ագրարային հատվածի աշխատանքի տարածքաճյուղային բաժանման կատարելագործման գիտական փնտրտուքում ներկայումս տարածքի կազմակերպման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքի կիրառման մոտեցում է նկատվում: Ըստ Ա. Ժուլենկոյի՝ ծագել է «ագրոէկոլոգիական շրջանացում» հասկացությունը, որի դեպքում «...ագրոէկոլոգիական միատարր... հողերի...գործոնների համալիր գնահատման... տարածքին համապատասխանող մշակաբույսերի ու տեսակների որոշակի խմբերի աճեցման հարմարվողականության և եկամտաբերության առանձնացման հիման վրա ընդհատության ու անընդհատության և համակարգային մոտեցման միասնություն է ապահովվում»¹³: Այս գիտական դրույթում գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման խորացման մեջ տարածքային և մարդկային գործոնների անհրաժեշտ դարձող օրինաչափ փոխադարձ կապն է արտացոլվել:

Եզրակացություններ

Շրջանացման մեթոդաբանության միջոցով ՀՀ լեռնային տարածքը գոտիական մասնագիտացման նպատակով կազմակերպելու համար գյուղատնտեսական արտադրության տարածքային տարբերակված ուսումնասիրությունը տեսական և գործնական նշանակություն ունի: Ագրարային հատվածի հիմնավորված տեղաբաշխման միջոցով գոտիական տարբերակվածության բացահայտումը թույլ է տալիս տվյալ գործընթացը ցանկալի ուղղությամբ կարգավորելու համար կանոնավորիչ մեխանիզմներ

¹³ Жученко 2004, 205.

մշակել: Դրա հիման վրա պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են հանրապետության ամբողջ տնտեսության կենսագործունեության և գործառության առաջնահերթությունը պայմանավորող ագրոպարենային համակարգի և հատկապես նրա հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության զարգացման ռազմավարության մշակման դեպքում համապատասխան որոշում ընդունել:

Հայաստանի ագրարային հատվածի զարգացման ընթացքում գիտնականները բնորոշել են աշխատանքի տարածքաճյուղային բաժանման հիման վրա գյուղատնտեսական մշակաբույսերի, պտուղների ու հատապտուղների և խաղողի որոշ տեսակների, ինչպես նաև կենդանիների գենետիկական ցեղերի շրջանացման մեթոդաբանության միջոցով գյուղատնտեսական գոտիներին հարմարեցնելու անհրաժեշտությունը: Դա նոր կամ կատարելագործված տեխնոլոգիաների և շուկայի հետ կապված գյուղատնտեսական գոտիներում ճյուղի տեղաբաշխման և մասնագիտացման մեջ որոշակի տեղաշարժեր առաջ բերեց, ինչը հետագայում գործնականորեն պայմանավորեց այդ գյուղատնտեսական գոտիների կարգավորման և կառավարման տարածքային ձևերի կազմավորումը, որը արդիական է համարվում նաև «շուկայական» տնտեսության պայմաններում:

ՀՀ-ի ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլում գյուղատնտեսական մասնագիտացմանը համապատասխանորեն մեծ ուշադրություն էր դարձվում լեռնային տարածքի կազմակերպման հարցերին: 1956 թ. «Հայկական ՍՍՌ-ի գյուղատնտեսական գոտիները» շրջանացման սխեման է մտնում շրջանառության մեջ, որում հիմնական գծերով սահմանվեցին բուսաբուծության և անասնաբուծության ենթաճյուղերի տեղաբաշխման ու գոտիական մասնագիտացման և ագրոարտադրական ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործման միջոցներն ու հնարավորությունները: Ընդ որում, գյուղատնտեսական գոտիներն առանձնացնելիս վարչական շրջանները ըստ իրենց տարածքի լրիվ չափով ընդգրկվել էին այս կամ այն գյուղատնտեսական գոտու մեջ, դրանց գյուղատնտեսական մասնագիտացումը ճշգրտված էր գոտիների, ենթագոտիների և միկրոգոտիների բաժանելու միջոցով:

Ագրարային հատվածի զարգացման շուկայական բարեփոխումների փուլում հողի «առք ու վաճառքի» հնարավորության հետ նրա նկատմամբ մասնավոր սեփականությունը պաշտամունքի իրողություն դարձնելը սկսեց խոչընդոտել գյուղատնտեսության տեղաբաշխմանը և գոտիական

մասնագիտացմանը, որը մի շարք դեպքերում ագրոարտադրական շրջանառությունից հողերի դուրսբերմամբ և պետության կողմից մեծ չափերի հասնող հարկերի թերազանմամբ ուղեկցվող գյուղատնտեսական արտադրության այդ հիմնական միջոցի խոշոր հողային մասնավոր տիրույթների՝ լատիֆունդացման հանգեցրեց հանրապետությունում:

Շուկայական տնտեսության պայմաններում հանրապետության գյուղատնտեսական արտադրության տարածքային (գոտիական) տարբերակված գործընթացի դրսևորումը բացասաբար է անդրադառնում բնակչության մի մասի եկամուտների ու կենսամակարդակի և ճյուղի տնտեսական զարգացման տեմպերի վրա: Հատկապես դա վերաբերում է կիսաբնամթերային ուղղվածության և հիմնական պարենամթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման հնարավորություն չունեցող սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային գոտիներում տեղակայված գյուղական բնակավայրերին, որոնք անկումային տարածքների են վերածվել և ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովվածության տեսանկյունից չեն կարող հետագայում հաջողությամբ դիմակայել շուկայական մրցակցությանը առանց հատուկ մշակված ծրագրերին պետության ակտիվ մասնակցության:

Հանրապետության գյուղատնտեսական արտադրության էկոլոգիացման համար նախ և առաջ անհրաժեշտ է ագրոկլիմայական պայմանների համապատասխանությամբ ճյուղի հիմնավորված տեղաբաշխման կառուցվածքը կանորոշել և տնտեսական նախադրյալ ստեղծել գյուղատնտեսական գոտիների կազմակերպման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքին ու երկրագործության հողապաշտպան համակարգերին անցնելու համար: Դա հատկապես կարևոր է համեմատական առավելություններ ունեցող պտղաբուծության ու խաղողագործության և ոչխարաբուծության ու մեղվաբուծության ենթաճյուղերի մասնագիտացման խորացման համար, որոնց էկոլոգիապես մաքուր արտադրանքը ներքին շուկայում կարող է բավարարել միայն սահմանափակ քանակությամբ պահանջարկ¹⁷: Մինչդեռ արտահանման շուկաների համար այդ ենթաճյուղերը կարող են հնարավորություն ընձեռել մի շարք արտադրություններում եկամտաբեր հիմքեր ստեղծելու համար (չոր մրգեղեն, կոնյակ, ոչխարի ու գառան միս, ալպիական մեղր և այլն), որոնց նկատմամբ մեծ է պահան-

¹⁷ Մանասյան 2018, 179, 180:

ջարկը ԵԱՏՄ-ի, Արևմտյան Եվրոպայի, Իրանի և Միջին Արևելքի երկրներին շուկաներում: Այս տեսակետից առաջնահերթ խնդիր է համարվում էկոլոգիապես մաքուր արտադրանքի ստացման համապատասխան ծրագրի մշակումը և որպես ագրարային հատվածի զարգացման միջնաժամկետ ռազմավարություն այն գործողության մեջ դնելը:

Գրականություն

- Աթանասյան Ա. 1927, Հայաստանի ուղղահայաց գոտիները, Գյուղատնտեսական կյանք, N 6, էջ 20-25:
- Աթանասյան Ա. 1927, Հայաստանի գյուղատնտեսության ուսումնասիրության նյութերից, Գյուղատնտեսական կյանք, N 8, էջ 17-22:
- Աթաբեկյան Գ. 1927, Գյուղացիական տնտեսությունների ձևի ընտրության խնդիրը նախալեռնային, լեռնային և ալպյան գոտիներում, Գյուղատնտեսական կյանք, N 3, էջ 12-20:
- Աղաջանյան Գ., Խրիմյան Ս., Քոչարյան Ա., Բաղդասարյան Ա. 1956, Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գոտիները, Երևան, Հայկ. ՍՍՌ գյուղմին հրատ., 78 էջ:
- Ավետիսյան Ս., Մանասյան Վ. 2017, Կլիմայի փոփոխության ազդեցությունը ՀՀ գյուղատնտեսության հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման և գոտիական մասնագիտացման վրա, Գրիգորյան Մ., Պոտոսյան Ա. (խմբ.), ՀՀ-ի և Մերձավոր արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, Երևան, «Մեկնարկ», էջ 117-123:
- Էդիլյան Ռ., Մելքոնյան Կ., Մկրտչյան Գ., Զոհրաբյան Լ., Մկրտչյան Ռ. 1988, ՀՍՍՀ հողային ծածկոցի բնագյուղատնտեսական շրջանացումը՝ կապված հողօգտագործման խնդիրների հետ, Ագրոարդ, գիտություն և արտադրություն, N 12, էջ 35-51:
- Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն 2010, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 60 (794), էջ 66-143:
- Մանասյան Վ. 2018, Աշխատանքի տարածքաճյուղային բաժանման առանձնահատկությունները ՀՀ պտղաբուծության ենթաճյուղում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3 (654), Երևան, էջ 174-187:
- Սուվարյան Յու. 2019, Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (651), Երևան, էջ 87-104:

Арманд Д. 1964, Логичность географических классификаций и схем районирования, отв. ред. Г. Рихтер, Развитие и преобразование географической среды, Москва, «Наука», с. 33-53.

Жученко А. 2004, Ресурсный потенциал производства зерна в России, Москва, «Агрорус», 1108 с.

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վոլոդյա Մանասյան

Ամփոփում

Հայաստանի ագրարային հատվածում տնտեսության տարածքային կազմավորումներն անհրաժեշտ է քննարկել շրջանացման հայեցակետային դրույթների հիման վրա: Այդ նպատակով կարևորում են «մասնագիտացում», «տարածքային կառավարում», «հարմարվողական-լանդշաֆտային մոտեցում», «ուղղաձիգ լանդշաֆտային գոտիներ» հասկացությունների վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումների քննարկման և դրանց գնահատման անհրաժեշտությունը: Առավել ևս աշխատանքի տարածքաճյուղային բաժանման հիման վրա անհրաժեշտություն են դառնում այս կամ այն գյուղատնտեսական գոտու արտադրության առավել հիմնավորված տեղաբաշխումը և մասնագիտացման օրինաչափ խորացումը: Այս համատեքստում ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլում բնագյուղատնտեսական շրջանացման տարբեր սխեմաներով հանրապետության ամբողջ տարածքի ագրոարտադրական գնահատականն է դրվել, այդ դեպքում որպես գյուղատնտեսական գոտի առաջացնող համակարգային նախագծման միավոր է ընդունվել ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների տարրապատկերի համասեռությունը և հերթափոխի օրինաչափությունները: Սակայն ագրարային գործունեության մեջ չափից ավելի պետական միջամտության պատճառով խախտվեց հանրապետության գյուղատնտեսական գոտիներին համապատասխանող ճյուղերի ու ենթաճյուղերի հիմնավորված տեղաբաշխման սկզբունքը: Շուկայական տնտեսության պայմաններում դրան սկսեց խոչընդոտել հողի նկատմամբ մասնավոր սեփականության բացարձականացումը: Նման իրավիճակի փոփոխության համար անհրաժեշտ է համապատասխան տարածքային ագրարային ինստիտուցիոնալ քաղաքականություն մշակել:

Բանալի բառեր՝ ագրարային հատված, հիմնավորված տեղաբաշխում, գոտիական մասնագիտացում, շրջանացում, տարածքային կառավարում, հարմարողական-լանդշաֆտային մոտեցում, տարբերակված հողային ռենտա, ագրարային հատված:

МЕТОДОЛОГИЯ РАЙОНИРОВАНИЯ ПОЯСНОЙ СПЕЦИАЛИЗАЦИИ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО ПРОИЗВОДСТВА РА

Володя Манасян

Резюме

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2009 թ. լույս տեսավ Աննա Ասատրյանի ««Ձեմիրեն». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը» մենագրությունը²², որը նվիրված էր Տ. Չուխաճյանի և Տիգրան Գալեմճյանի հեղինակած հայոց անդրանիկ հեքիաթ-օպերայի՝

²¹ Տեր-Ղազարյան 1976, 26:

²² Ասատրյան 2009:

«Զեմիրեի» գիտական ուսումնասիրությանը: Նոտային օրինակներով հագեցած մենագրության մեջ Ա. Ասատրյանը չուխաճյանագիտության մեջ առաջին անգամ ներկայացրել էր «Զեմիրեի» ստեղծման պատմությունն ու համառոտ ուրվագծել օպերայի բեմական ճակատագիրը, լուսաբանել օպերայի թատերատետրի հեղինակ Տ. Գալեմճյանի կյանքն ու գործունեությունը: «Զեմիրեի» հեղինակային ձեռագրերի մանրախույզ ուսումնասիրության հիման վրա նա բացահայտել էր օպերայի դրամատուրգիական և երաժշտական-ոճական առանձնահատկությունները, գիտական շրջանառության մեջ դրել օպերայի լիբրետոյի ռուսերեն տեքստը:

«Լրաբերի» 2010 թ. 12-րդ միացյալ համարում տպագրվեց մենագրության մասին արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Գայանե Մարգարյանի գրախոսությունը²³:

Չուխաճյանի ստեղծագործության ուսումնասիրության հանրագումարը դարձավ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պետական պատվերի շրջանակներում 2011-ին՝ Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանին ընդառաջ հրատարակված Ա. Ասատրյանի «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը» մենագրությունը²⁴, որը կարևոր հանգրվան դարձավ հայ երաժշտական թատրոնի համընդհանուր պատմության ստեղծման ճանապարհին: Աշխատության մեջ համալիր ուսումնասիրվել և արժեքավորվել է Տ. Չուխաճյանի երաժշտական թատրոնը: Մենագրության մասին արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուֆսյանի գրախոսականը²⁵ տպագրվեց «Լրաբերի» 2011 թ. 4-րդ համարում:

Եզրակացություններ

«Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականը կարևոր ներդրում ունի ակադեմիական երաժշտագիտության՝ մասնավորապես չուխաճյանագիտության ձևավորման, կայացման ու զարգացման գործում: «Լրաբերը», սերտ համագործակցելով երաժշտագիտության գլխավոր կենտրոնի՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ, կանգնեց ակադեմիական չուխաճյանագիտության ակունքներում: Գիտական պարբերականը մի կողմից՝ հրապարակել է Չուխաճյանի ժառանգության, մասնավորապես օպերային արվեստի՝ «Արշակ Բ», «Արիֆի խորամանկութ-

²³ Маргарян 2010, 497-501.

²⁴ Ասատրյան 2011:

²⁵ Рухкян 2011, 297-300.

յունը», «Քյոսե քեչյա» և «Ձեմիրե» օպերաների ուսումնասիրությունների հիմնական արդյունքները, մյուս կողմից՝ գրախոսությունների միջոցով ընթերցողին ծանոթացրել ակադեմիական չուխաճյանագիտության նորույթներին:

Գիտական պարբերականն ամբիոն է տրամադրել ինչպես երաժշտագետներ Զառա Տեր-Ղազարյանին, Մարգարիտա Ռուֆսյանին և Աննա Ասատրյանին, այնպես էլ թատրոնի պատմաբան Գառնիկ Ստեփանյանին և գրականագետ Սամվել Իսկանդարյանին:

Վստահ ենք, որ ապագայում ևս «Լրաբերը», շարունակելով սերտ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետների հետ, կշարունակի իր «չուխաճյանականը»:

Գրականություն

Ասատրյան Ա. 2006, «Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան, Երևան, «Ոսկան Երևանցի», 268 էջ:

Ասատրյան Ա. 2009, «Ձեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, Երևան, «Ոսկան Երևանցի», 176 էջ:

Ասատրյան Ա. 2008, Տիգրան Չուխաճյանի «Արիֆի խորամանկությունը» կոմիկական օպերայի երաժշտական լեզվի որոշ առանձնահատկությունների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 196-208:

Ասատրյան Ա. 2011, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, «Գիտություն», 480 էջ:

Ասատրյան Ա. 2004, Տիգրան Չուխաճյանի «Քյոսե քեչյա» օպերան, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 133-148:

Գյոդակյան Գ. 1971, Տիգրան Չուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Երևան, «Հայաստան», 48 էջ:

Իսկանդարյան Ս. 1986, Ե՛րբ և որտե՛ղ է գրվել «Արշակ Բ» օպերան, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 38-41:

Մուրադյան Մ. 1970, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարակգրում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 605 էջ:

Ստեփանյան Գ. 1972, «Արշակ Բ» օպերայի ստեղծագործական պատմության մի քանի հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների, N 8, Երևան, էջ 12-23:

Ստեփանյան Գ. 1957, Տիգրան Չուխաճյանի մի անհայտ օպերայի մասին, Սովետական արվեստ, N 2, էջ 49-50:

- Տեր-Ղազարյան Ջ. 1976, Տ. Չուխաճյանի «Ձեմիրեն» օպերան, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, Երևան, էջ 22-26:
- Геодакян Г. 1971, Тигран Чухаджян и его опера «Аршак Второй», Ереван, «Айастан», 48 с.
- Маргарян Г. 2010, Աննա Ասատրյան, «Ձեմիրեն». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, 2009, 174 էջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1-2, Երևան, էջ 497-501:
- Рухкян М. 2007, Оптимизм науки, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 265-269:
- Рухкян М. 2011, Աննա Ասատրյան, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, 480 էջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 297-300:
- Тигранов Г. 1956, Армянский музыкальный театр, т. 1, Ереван, Арм. Гос. Издат., с. 131-174.
- Tuglaci P. 1986, Turkish Bands of Past and Present, Istanbul, "Cem Yayınevi", 248 p.

**ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԼՐԱԲԵՐԻ» ԷՋԵՐՈՒՄ.
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՉՈՒՆԱՃՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

Աննա Ասատրյան

Ամփոփում

«Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականը կարևոր ներդրում ունի ակադեմիական երաժշտագիտության՝ մասնավորապես չուխաճյանագիտության ձևավորման, կայացման ու զարգացման գործում: «Լրաբերը», սերտ համագործակցելով երաժշտագիտության գլխավոր կենտրոնի՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ՝ կանգնեց ակադեմիական չուխաճյանագիտության ակունքներում: Գիտական պարբերականը մի կողմից՝ հրապարակել է Չուխաճյանի ժառանգության, մասնավորապես օպերային արվեստի՝ «Արշակ Բ», «Արիֆի խորամանկությունը», «Քյոսե քեյա» և «Ձեմիրեն» օպերաների ուսումնասիրությունների հիմնական արդյունքները, մյուս կողմից՝ գրախոսությունների միջոցով ընթերցողին ծանոթացրել ակադեմիական չուխաճյանագիտության նորոյթներին:

Գիտական պարբերականը ամբիոն է տրամադրել ինչպես երաժշտա-

գետներ Զառա Տեր-Ղազարյանին, Մարգարիտա Ռուֆսյանին և Աննա Ասատրյանին, այնպես էլ թատրոնի պատմաբան Գառնիկ Ստեփանյանին և գրականագետ Սամվել Իսկանդարյանին:

Պրոպագանդելով հայ մշակույթը և ընթերցող լսարանին հաղորդելով երաժշտագիտության բնագավառի նվաճումները՝ որ ապագայում ևս «Լրաբերը», շարունակելով սերտ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետների հետ, կշարունակի իր «չուփածյանականը»:

Բանալի բառեր՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», ակադեմիական չուփածյանագիտություն, Զառա Տեր-Ղազարյան, Մարգարիտա Ռուֆսյան, Աննա Ասատրյան, Գառնիկ Ստեփանյան, Սամվել Իսկանդարյան:

ВОПРОСЫ МУЗЫКОВЕДЕНИЯ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «ВЕСТНИК»: ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ АКАДЕМИЧЕСКОГО ЧУХАДЖЯНОВЕДЕНИЯ

Анна Асатрян

Резюме

Журнал «Вестник общественных наук» внес весомый вклад в академическое музыковедение, в частности, в формирование, становление и развитие чухаджяноведения. «Вестник», в тесном сотрудничестве с главным центром музыковедения – с Институтом искусств НАН РА, стоял у истоков академического чухаджяноведения.

На страницах «Вестника» были опубликованы результаты исследований творческого, в частности, оперного наследия Чухаджяна, в том числе опер «Аршак Второй», «Ариф», «Кесе кехва» и «Земирэ». С другой стороны – с помощью рецензий журнал знакомил своих читателей с новинками академического чухаджяноведения.

Пропагандируя армянскую культуру и приобщая читательскую аудиторию к достижениям в сфере музыковедения, «Вестник» предоставил трибуну как музыковедам – Заре Тер-Казарян, Маргарите Рухкян и Анне Асатрян, так и театроведу Гарнику Степаняну и литературоведу Самвелу Искандаряну.

Ключевые слова – «Вестник общественных наук», академическое чухаджяноведение, Зара Тер-Казарян, Маргарита Рухкян, Анна Асатрян, Гарник Степанян, Самвел Искандарян.

**ISSUES OF MUSICOLOGY ON THE PAGES OF THE "HERALD":
FORMATION AND DEVELOPMENT OF ACADEMIC TCHOUHADJIAN STUDIES**

Anna Asatryan

Abstract

The "Lraber hasarakakan gitutyunneri [Journal of Social Sciences]" scholarly periodical has significantly contributed to the academic musicology, in particular, to the emergence, formation and progress of Tchouhadjian Studies. In close collaboration with the main center of musicology – NAS RA Institute of Arts, the "Lraber" became one of the pioneers of academic Tchouhadjian Studies. The scholarly periodical published the major outcomes of researches on Tchouhadjian's legacy – his operas "Arshak II", "Arif's Deception", "Qyose Qehya" and "Zemireh", on the one hand, and reviews – to familiarize the reader with the novelties in academic Tchouhadjian Studies.

While promoting Armenian culture and introducing the readership to the achievements in the field of musicology, the scholarly periodical provided space to the musicologists Zara Ter-Ghazaryan, Margarita Rukhkyan and Anna Asatryan, the theater historian Garnik Stepanyan and literary critic Samvel Iskandaryan.

We are confident that the "Lraber", by continuing close collaboration with the musicologists of NAS RA Institute of Arts, will proceed with its "Tchouhadjianiana".

Key words – "Herald of Social Sciences", Academic Tchouhadjian Studies, Zara Ter-Ghazaryan, Margarita Rukhkyan, Anna Asatryan, Garnik Stepanyan, Samvel Iskandaryan.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԶԱՐԴԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ (XVIII-XX ԴԴ.)

Աստղիկ Իսրայելյան

Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
ՀՀ, Երևան, Հանրապետության հրապարակ, 4
Էլ. հասցե՝ astghikisraelian@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 04.11.2020, գրախոսվել է 27.04.2021,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-266

Ներածություն

Զարդերն էական դեր են կատարում մշակույթի, հատկապես դեկորատիվ արվեստի ուսումնասիրության համար, ցույց են տալիս ազգային գեղագիտական ընկալումները, զգացողությունը, ճաշակն ու ոճը: Դրանց նախշերի և մասերի չափերի հարաբերությունները համեմատելի են ճարտարապետական շինությունների համամասնությունների հետ, որոնց ցանկացած խախտում ակներև է ու անցանկալի, քանի որ գեղեցիկի չափանիշն առաջին հերթին հենց այդ չափերի ներդաշնակությունն է:

Գրավոր աղբյուրներից բացի, զարդերի կարևորության ծանրակշիռ վկայություններ են քարե կուռքերի վրա քանդակված և նույնիսկ XIX-XX դդ. կավե աղամանների վրա պատկերված գլխի ու կրծքի զարդերը:

Հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված ոսկերչական գործիքներն ու արտադրանքը ցույց են տալիս, որ Հայաստանի տարածքում բրոնզի դարաշրջանում ոսկերչությունն արդեն զարգացած էր, և կիրառվում էին հայտնի գրեթե բոլոր պատրաստման եղանակները¹: Հնագույն ժամանակներից ի վեր կանայք և տղամարդիկ օգտագործում էին վարսակալներ, հերազարդեր, ականջօղեր, մանյակներ, մատանիներ, ճարմանդներ, զարդասեղներ, կախիկներ, կոճակներ, շղթաներ և այլն: Բացի զարդերի գործնական և գեղագիտական արժեքից, առանձին ուսումնասիրության արժանի նյութ են դրանց տարաբնույթ կիրառություններն ու խորհրդանշական իմաստները:

¹ Դևեջյան 1966, 100:

Զարդեր կրելու սովորույթներն ու ավանդույթները

Դարերի ընթացքում զարդեր էին կրում բոլոր խավերի ու տարիքի մարդիկ՝ քրմերը, ցեղապետները, թագավորները, թագուհիները, պալատականները, ազնվականները, զինվորականները, եկեղեցականները, մեծահասակներն ու երեխաները, չամուսնացածներն ու ամուսնացածները: Բայց հասարակության ամեն մի խումբ որոշակի տեսակի զարդեր կրելու իրավունք ուներ, որը ժառանգաբար անցնում էր հորից որդի²: Զարդերը տարբերվում են ըստ կրողների սեռի և տարիքի պատկանելության:

Ուշագրավ է, որ միջնադարում բոլորը չէ, որ խրախուսել են զարդ կրելը, ինչպես Հովհան Մանդակունի կաթողիկոսը (478-490): Նա գրում է. «Եթե գովելի չէ տան մեջ զարդարվելը, ապա որքա՛ն առավել՝ ի տես բոլորի պճնվելը»³: Բայց փաստ է, որ երբեք զարդեր կրելու սովորույթը չի ընդհատվել: V դ. պատմիչ Ղազար Փարպեցին արժեքավոր մետաղների ու քարերի մասին գրում է. «...ամեն ինչով լի դաշտերը... հմտորեն խուզարկող աշխատավորներին ցույց են տալիս երկրի տակ ծածկված գանձերը... ոսկին ու պղինձը, երկաթն ու պատվական քարերը, որոնք ընկնելով արհեստավորների ձեռքը, թագավորներին զուգում են գեղեցկատեսիլ զարդերով ու բանվածքներով, ինչպիսին են խույրերի, թագերի ու հանդերձների վրա ընդելուզված ոսկեհուռ պաճուճանքները»⁴: Ազաթանգեղոսը արժևորում է զարդերը. «Իսկ հոգևոր արժեքների վեհությունը, որ աստվածասերների համար մեծություն է, նման է թանկագին մարգարիտի... կամ Հնդկաց աշխարհից բերված թանկագին քարերի /նման/, որոնք վայելուչ զարդով, խույրով ու պսակով զարդարում են թագավորին.. Իսկ սրանց լույսի ճաճանչը... ոչ միայն թագավորի գլուխն է զարդարում... այլև...ամենքին է գոհացնում, մխիթարում, բժշկում, թագավորներին շքեղացնում է փողփողուն վերջավորությամբ արտախույր պսակի նման, աղքատներին ճոխացնում է, թոթափում, բարձրացնում աղբակույտից և հավասարեցնում իշխաններին, ինչպես նաև երկիրը լցնում է օրհնությամբ, իսկ տարին բոլոր՝ քաղցրությամբ»⁵: XIII դ. Հեթում թագավորը (1213-1270), խոսելով Հնդկաստանի և Կիլիկյան Հայաստանի առևտրական կապերի և

² Հացունի 1923, 122-141:

³ Մանդակունի 2008, Դ, 28, 1175, Թ, 32, 1199: Աշխարհաբար թարգմանությունը՝ Մարթա Արաբյանի www.gratun.org/source.php?sid=2536

⁴ Փարպեցի 1982, 23:

⁵ Ազաթանգեղոս 1977, 25:

Հնդկաստանից ոսկի ու թանկարժեք քարեր բերելու մասին, նկարագրում է Ցեյլոնի թանկարժեք քարերը⁶: Չինաստանից նույնպես քարեր էին բերում Կիլիկիա և այնտեղից Ղրիմ, Հարավային Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա էին արտահանում Կիլիկիայի արհեստավորների սարքած ոսկյա և արծաթյա առարկաները⁷:

Ամենուրեք զարդեր կրելու սովորույթը կապված էր անձի դերի հետ տվյալ հասարակությունում: Այս առումով բնութագրական է Մարկո Պոլոյի հետևյալ նկարագիրը. «...Մալաբարի... բնակիչները միշտ մերկ են ման գալիս... և թագավորն է մյուս բոլորի նման... Բայց նրա բարձր դիրքը դրսևորվում է տարբեր զարդերով, օրինակ, վզնոցով՝ ընդելուզված թանկարժեք քարերով՝ զմրուխտներով և սուտակներով, որոնք մեծ գումար արժեն: Նրա վզի շուրջը փաթաթված է գեղեցիկ մետաքսե քուղ, որն իջնում է մինչև կուրծքը, ունի 104 խոշոր մարգարիտ և սուտակ... Արիան ամեն ձեռքին մի ոսկե ապարանջան ունի՝ զարդարված մարգարտով և թանկարժեք ակներով, ոտքերին՝ երեք մասերում ոսկե ժապավեններ՝ զարդարված ճիշտ նույն ձևով և վերջապես ոտքերի ու ձեռքերի մատներին մատանիներ՝ չափազանց թանկ արժողությամբ»⁸:

Նյութերի նշանակությունը

Առանձնահատուկ գաղափարական արժեք ունեն այն նյութերը, որոնցից պատրաստվում են զարդերը. օրինակ՝ «...Հայ միջնադարը քաջ ծանոթ էր անտիկ աշխարհում մշակված մետաղների հիերարխիային, ուր յոթ մետաղները համապատասխանում էին յոթ մոլորակներին և շաբաթվա յոթ օրերին: Եվ եթե այլմիական ձեռագրերում ոսկին գաղտնագրվում է որպես արև և կիրակի, արծաթը՝ լուսին և երկուշաբթի... ապա ըստ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», ոսկու հանքերը բացառապես պատկանում էին արքային, իսկ արծաթի հանքերը՝ թագուհուն... Այսպիսով, ոսկին ու արծաթը համադրվելով տիեզերական (արև, լուսին), հասարակական (թագավոր, թագուհի) և ժամանակային (կիրակի, երկուշաբթի) հիերարխիաների ամենավերին սանդղակների հետ, ցուցադրում են այն կարգավորող-կազմակերպիչ ներուժը, որ դեռ կրում էին միջին դարերում...

⁶ Абрамян 1958, 171.

⁷ Տեր-Ղևոնդյան 1963, 83:

⁸ Поло 1873, 208.

ոսկե և արծաթե իրերի «զարդ» անվանումն իր հիմքում ունի «արդ» արմատը, որի նախնական իմաստն է «ձև, կարգավորություն, սարք»⁹:

Հայկական զարդերը պատրաստելիս դարերի ընթացքում քարերից օգտագործել են գազաթ, սարդիոն, փիրուզ, լեռնային բյուրեղ, օնիքս, նեֆրիտ, ագաթ, քաղկեդոն, սարդեր, ամետիստ, վանակատ, նոնաքար, լազուրիտ, ծիածանաքար, սուտակ, զմրուխտ, շափյուղ, ալմաստ, ադամանդ, ինչպես նաև մարգարիտ, սաթ, մարջան, փղոսկր, սադափ, փայտի ընտիր տեսակներ և այլն¹⁰: Հայերի հավատալիքներում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերին, սաթին, մարգարտին, սադափին, մարջանին և սուրբ ծառերի փայտերին տրվել են տարբեր հիվանդություններ բուժելու, մխիթարելու, սթափեցնելու, հանգստացնելու, երջանկություն, հաջողություն բերելու, չարից պաշտպանելու և այլ բարեբեր հատկություններ¹¹: Գույները ևս կարևոր էին և, քարերից բացի, զարդերում օգտագործվում էին գունավոր արհեստական ակերն ու ուլունքները¹²:

Զարդերի տեսակները և կրելու ձևերը

XVIII-XX դդ. զարդերը հայկական ազգային հագուստի անբաժան մասն են եղել՝ օգտագործվելով որպես վզնոց, կրծքազարդ, մատանի, ապարանջան, քթի օղ, ականջի օղ և կարվելով կամ ամրացվելով գլխի հարդարանքին, թևքերին, զգեստի քղանցքների ճեղքերին և այլն: Ինչպես հագուստը, այնպես էլ զարդերն էին ոճով տարբերվում առանձին տարածաշրջաններում:

Կանայք զարդեր էին կրում հատուկ առիթներով և առօրյայում՝ նույնիսկ աշխատելիս. «Քաղհան անողի երգում» կարդում ենք՝ «Ճիտս են գցել իմ վզնոցը/Թող կտրի սրտիս խոցը./Էրնեկ կտամ էն օրին./Եարս մտնու իմ ծոցը»¹³: Հատուկ առիթների դեպքում զարդերի թիվը բազմապատկվում էր: Այսպես՝ «Սիվրիհիսարցի կինը կը սիրէ... հրապուրիչ երեւնալը... Աղջիկները... եթե հարսանիքի, նշանտուքի, բաղնիքի... պիտի երթան... կը հագուին անելի զարդարուն եւ շքեղ... վզերէն սկսեալ մինչեւ լանջքին վրայ կը կախեն մարգարիտներու եւ... ոսկիներու շարքեր, ականջնին կը կախեն օղեր որոց շղթաները... ուսերէն վար իջնելով կը գգունեն

⁹ Պետրոսյան, Քալանթարյան, Առաքելյան, Ավետիսյան 2007, 61:

¹⁰ Զարդերում օգտագործվող Հայաստանի քարերի մասին տե՛ս Сейранян 1987:

¹¹ Իսրայելյան 1979, 80-88, Исраелян 1981, 83-102:

¹² Իսրայելյան 2017, 125-142:

¹³ Լալայեան 1904, 69:

լանջքին ոսկիներու եւ մարգարիտներու շարքերն. իսկ թելի զարդերն են... ոսկի *ճեպէ* (ապարանջանի տեսակ մը), արծաթ ապարանջան, եւ *հալալ*¹⁴... մատերն ալ կ'անցընեն ոսկիէ կամ արծաթէ մատանիներ»¹⁵:

XIX դ. Կիլիկիայում աղջիկների ֆեսի գագաթին արծաթե *թաս* էր ամրանում: Կանայք ոսկեդրամներ, մարջաններով արծաթե ծոպեր էին կրում, քունքազարդեր, մազերի ծայրին՝ արծաթե ուլունքներ, թևերին՝ ոսկե կամ արծաթե ապարանջաններ, գլխազարդերից ծնոտի տակով անցնող արծաթե շղթա՝ ներքևից շարված ոսկիներով, իսկ գոտու առջևի մասում «մաշալահ»¹⁶ կոչված արծաթե եռանկյունի՝ շուրջը ոսկե դրամներով, օղեր, հմայիլ, արծաթե կամ ոսկե դրամներով մանյակ, ուլունքներ և այլն¹⁷: *Մաշալահը* և *հմայիլը* հմայական պահպանակներ են:

Ըստ Ա. Ալպոյաճյանի, Եվդոկիայում, բացի այս զարդերից, ընդունված էին «...մարգարիտե կաժ, ոսկի ժամացոյց և շղթայ, գիլ կոչուած ոսկեայ զարդ մը որ վիզէն կը ձգուի և կուրծին վրայ կը տարածուի, և ադամանդեայ ...նորածե զարդեր... Սովորական մանեակներէն զատ, կիները կը կրէին... անելի թանկարժէք զարդեր ալ, որոնք մինչեւ մէջքները եւ նոյնիսկ անելի վար կ'իջնէին: Անոնք մարգարտէ, ոսկեդրամներէ եւ ոսկիի զանակներէ կամ... այնպիսի թերթիկներէ շինուած են, որ լոյսը կը ցոլացնեն զանազան ուղղութիւններով... եթէ էսնաֆի»¹⁸ կիները ուրիշ զարդեղէններու մեծ մասը չունենային, անպատճառ ոսկի շարոցը կ'ունենային... հարուստ կիները շատ կը սիրէն, հանդիսաւոր օրերու, թանկարժէք ադամանդեայ զարդեղէններ կրել, որոնք անելի մահիկի, ծաղիկի և այլն ձեւով շինուած են և մազերուն մէջ կը դրուին... կնոջ մը ամէնէն անբաժանելի առարկաներէն մէկը ձեռքի հայելին է, զոր ոչ միայն տան մէջ կը գործածէ, այլ և երբ բաղնիք կ'երթայ կամ նոյնիսկ պտոյտի»: Ալպոյաճյանը նշում է նաև. «Միակ պճեղի (ոտքի) ապարանջանը, զոր Վան Լէննէփ Թոգատի մէջ տեսած է, արծաթէ շղթայ մըն էր, որ մանուկի մը պճեղին շուրջը անցուած էր և որմէ 9 կամ 10 զանգակիկներ կախուած էին... մանուկներուն ոտքը կ'անցնէին երբ ոտքի ելլելու վրայ էին կամ նոր կը

¹⁴ Հալալ՝ ձեռքի ապարանջան սուտ քարով (թանկագին քարի տեսք ունեցող հասարակ քարով) շինված: Մալխասեանց 1944, 10:

¹⁵ Ն.Տ.Ն. 1899, 744-745:

¹⁶ Նշանակում է՝ *Ասործո կամքով*:

¹⁷ Ս.Դ. 1899, 137-138:

¹⁸ Էսնաֆ՝ արիեստավոր: Հմմտ. Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, 29:

քալին: Զանգակիկներու հնչինին հետեւելով, զբաղած մայրը կամ քոյրը, մանուկին ուր գտնուիլը կը գիտնայ, հետեւաբար անդադար անոր վրայ հսկելու հոգէն կ'ազատի: Վան Լէննէփ կը խորհէր որ այլ ժողովուրդներ կրնային օրինակել այս սովորութիւնը»¹⁹:

Ջավախքում աղջիկները ծամերի ծայրերին գույնզգույն ուլունքներ էին ամրացնում: Գլուխը ծածկում էին կարմիր, երկար թելափնջով գլխարկով, որին կարված մարգարտաշարերի ծայրերին ոսկեդրամներ կային, մեջտեղում՝ խոշոր ոսկեդրամ: Մեծահասակներն այս դրամը չէին դնում: Ճակատի երկայնքով կարվում էր կտուցը²⁰: Աղջիկները և մատաղահաս կանայք վզին կրում էին մի կամ մի քանի շարք ոսկիներ, ականջօղեր, ոսկե ապարանջաններ, մատանիներ: Աղքատները կեղծ մարգարիտներ և ոսկեգույն մետաղէ փուլեր էին օգտագործում²¹:

Բուլանըխի կանայք կրում էին գագաթին արծաթե թասով գլխարկ, ոսկեդրամներով ճակատազարդ, քունքակախիկներ, սրտանոցի երկու կողմերից կախվող արծաթե շմշաներ²², գոտի, ուլունքներ, արծաթյա մահիկով վզնոց, թևերին՝ *բազպան* և «քամակին՝ *մառթալ* (վահան)՝ փոքրիկ բարձիկներ վրանին արծաթ դրամներ կարված», դաստակներին *ապարանջան*, քթին՝ ոսկե կամ արծաթե քթօղ, ականջներին՝ *գինդեր*. «և սոցանով չբավականանալով՝ մեծ մասը ճակատի մեջտեղը լեղակագույն թանաքով *կտիսեն* (կիտված): Բոլոր հասակի կանայք ոտքերին մանր ուլունքների շարան էին կապում»²³: Ալաշկերտցի²⁴ և համշենցի կանայք նույնպես ոտքերին ուլունքներ էին կրում²⁵:

Զարդերի դերը նշանադրության և պսակադրության ծեսերում

Ինչպէս հնում, այնպէս էլ XVIII-XX դդ. որոշակիորեն իմաստավորված էր թե ո՛վ, ինչպէ՛ս և ե՛րբ էր կրում, ստանում կամ նվիրում զար-

¹⁹ Ալպոյաճեան 1952, 1475, Van Lennep 1870, 236-240:

²⁰ Կտուց՝ կանանց գլխի զարդ մի քունքից մինչև մյուս քունքը. մարգարիտներով ու ոսկու ձողիկներով կարած ժապավեն, որի ներքևից խիտ առ խիտ, շարված են մանր ոսկի տաճկական դրամներ: Մալխասեանց 1944, 498:

²¹ Լալայեան 1896, 228-229:

²² Հայաստանի պատմության թանգարանում պահվող այս զարդերը, որ ձեռք են բերվել Բիթլիսի և Վանի նահանգներից գաղթած բնակիչներից, կոչվում են «շամշիկ»:

²³ Բենսէ 1899, 46:

²⁴ Լալայան 1931, 178:

²⁵ Բաբգէն վարդապետ 1899, 654:

դերը: Այդ ամենի հիմքում ընկած են հաճույքի, հրճվանքի, հոգեկան բավարարության զգացողությունները: Եվ հենց դա է պատճառը, որ զարդարվելը պարտադիր է տոների ու հատկապես ամուսնական ծիսական բոլոր արարողություններում, որտեղ դրանք և՛ գաղափարական իմաստ են կրում, և՛ նյութական արժեք ունեն:

Մալաթիայի հարսները, ըստ Ալպոյաճյանի՝ «...նշանտուքի եւ խնամիտեսի երթալու ատեն ընծայ տարուած զարդոսկիները... լաթի մը վրայ կարուած ճակատէն կ'երկարէին... մինչեւ ականջները եւ վար կ'իջնէին կզակին երկարութեամբ, որոնք հարսին անհատական ստացուացքն էին եւ էին անձեռնմխելի»: Եթե աղջիկը նշանադրության ժամանակ իր ստացած զարդերը չկրեր, կանարգեր նվիրատուներին, կամ դա կ'նշանակեր, որ չի հավանել իր նշանածին ու չի կամենում ամուսնանալ նրա հետ: Այստեղ աղջկա մոր տնից ստացվող օժիտի մեջ պարտադիր էին զույգ ոսկե կամ արծաթե ապարանջանները, մանյակը, իսկ կեսրոջ տնից՝ «20-60 հատ էճնաս ոսկի... ՀԻԼԱԼՊԱՇԸ ըսուած եռանկիւնածեւ եւ շղթայակիր զարդ, 1 զույգ ոսկի կամ արծաթ օղ...»²⁶: Որպես ամուսնության խորհրդանիշ՝ նշանի մատանին կապվում էր *բախտավորության* գաղափարի հետ²⁷, ինչպես Հնդակաստանում՝ ապարանջանները²⁸:

Զարդերի մատուցման ձևն արդեն իսկ ցույց է տալիս սրանց արժևորումը: Վահան վարդապետը նշում է՝ «Նշանտուքի արարողութիւնն ըստ հին Մաշտոցի ժամուն մէջ կը կատարուի... Գիտելի է, զի նշանն է սկզբին պսակի՝ զի զոր օրինակ ծառն նախ ծաղկի եւ ապա պտղաբերէ, նոյնպէս փեսայն ու հարսն նախկին նշանն են եւ ապա պտղաբերին պսական... եւ նստուցանեն... հանդէպ միմյանց... եւ զիցեն ի վերայ սկտեղ առաջի փեսային զնշանսն, այսինքն են մատանի, ապարանջան, զինդ եւ կարմիր շար եւ քող: Մատանի եղեալ ի չորրորդ մատն (որ ունի զերակ սրտին), ցուցանէ թէ հարսն սրտիւ հաւանեցաւ փեսային, ապարանջանն ի ձեռն՝ ցուցանէ թէ ձեռքն կապեցաւ ի հնազանդութիւն առն, զինդն ցուցանէ թէ ականջօքն լուաւ եւ մտօքն հաւանեցաւ, կարմիր շարն եւ քողն նշանակ են, թէ ճշմարտապէս հարսնացաւ մանկան, որում նշանեցաւ, եւ առնու քահանայն զօրինութեան բաժակն ի ձեռն եւ օրինէ...»²⁹:

²⁶ Ալպոյաճեան 1961, 1100, 1112, 1118:

²⁷ Շագոյան 2011, 71, 80, 98-99:

²⁸ Гусева 1982, 176.

²⁹ Տէր-Մինասեան 1893, ԿԷ:

Նոր նախիջևանում տղայի ծնողները և մտերիմները գնում էին աղջկա տուն «նշանտօք» և մատանի դնում աղջկա մատը: Աղջկա տնից փոխադարձ մատանի էին ուղարկում փեսային՝ նույն օրը խնամիների ձեռքով կամ նշանադրությունից հետո՝ մեծ տոներից մեկի ժամանակ³⁰: Այժմ մատանին աղջկա տանը զոքանչն է դնում փեսայի մատը³¹:

Վասպուրականում որպես *նշանօրհներ* փեսացուի ծխատեր քահանան կրոնական առաջնորդին էր տալիս փեսացուի ծնողներից ստացած արծաթե տուփի մեջ դրված մատանին: Առաջնորդն օրհնում էր, հանձնում հարսնացուի քահանային, որն այն տալիս էր հարսնացուի ծնողներին³²: Վարանդայում Ծաղկազարդին տղայի մայրը կամ ազգականուհին եկեղեցում Ծաղկազարդի ծառի մոմերից մի խաչածն մոմ էր վառում և, արծաթե մատանին վրան անցկացնելով, լուռ դնում էր աղջկա ձեռքը³³, իսկ նշանադրության օրը տղայի տանը մի խնձոր էին բերում, մեջն արծաթե կամ ոսկե մատանի ու մի քանի աբասի խրած: Քահանան վերցնում էր, շնորհավորում, մի աբասի էլ ինքն էր մեջը խրում և տալիս մյուս ներկաներին, որոնք նույնպես շնորհավորում և դրամներ էին խրում խնձորի մեջ, հետո այն, մյուս նվերների հետ, աղջկա տուն էին տանում: Երբ նշանված տղան գաղտնի գնում էր աղջկա տուն, կրկին մատանի էր նվիրում նրան: Նշանադրությունից հետո էլ տղայի բարեկամները գնում էին շնորհավորելու աղջկա ծնողներին և տարբեր ընծաներ ու հատկապես մատանիներ էին նվիրում հարսնացուին³⁴: Վայոց Ձորում նշանադրության օրհնված մատանին զցում էին գինու բաժակի մեջ և մատուցում աղջկան. նա գինին խմում էր ու մատանին դնում աջ ձեռքի միջնամատին, հավատալով, որ այդ մատի երակները միացած են սրտի երակներին, հետևապես՝ սրտանց կսիրեր ամուսնուն³⁵, ինչպես չորրորդ մատի մասին նշում է Վահան Վարդապետը: Եվդոկիայում տղան, որպես *նշան*, իր հարսանացուին նվիրում էր ոսկե ժամացույց, շղթա, ոսկե ապարանջան կամ ադամանդե օղեր: Մյուսները մեկական ոսկի էին նվիրում: Նշանի մատանիները հարսնացուի և փեսացուի մատներն էր դնում քահանան աղջկա տանը³⁶: Ռոդոսթոյի

³⁰ Շահագիզ 1901, 81-82:

³¹ ԴԱՆ, Ղափան 1985, 3:

³² Լալայեան 1910, 147-148:

³³ Լալայեան 1897, 114-115:

³⁴ Լալայեան 1897, 121-122, 124:

³⁵ Լալայեան 1906, 147:

³⁶ Ալպոյաճեան 1952, 1501-1503:

հայերը... երբ հարսանիքի օրերը մոտենում էին, փեսացուի կողմից հարսին էին տանում ապարանջան, օղեր, մատանի և այլն³⁷: Ջավախքում նշանված աղջկա և տղայի ընտանիքները տոներին միմյանց «փայ» էին ուղարկում: Աղջկա տարբեր նվերներից էր թել պանիրը՝ հյուսված և ծայրին մի ոսկի կապված՝ «որ հարսի մազերն երկար լինի և մինչև սպիտակելը ամուսնու հետ միասին ոսկի օրեր անցնեն»³⁸: Քեսապում, երբ հարսը մտնում էր տղայի տուն, կեսուրն ու ազգական կանայք նրան նվիրում էին սանրեր, ծամկալներ, ոսկե, արծաթե ապարանջաններ, վզնոցներ, օղեր, ճարմանդներ, ճակատակալներ և այլն³⁹:

Ինչպես նշում է Ա. Ալպոյաճյանը, օժիտի զարդերն ի ցույց էին դրվում թե՛ պսակադրության ծեսի ժամանակ, թե՛ դրանից առաջ. «Ամուսնանալու տարիքի հասած աղջիկներ, մասնաւոր պարագաներու մէջ, կը կրէին բոլոր... գոհարեղէնները, զոր իբր դրամօժիտ պիտի տանէին իրենց հետ...»⁴⁰ ...Երբ... փեսացուին մայրը, մօրաքոյրերն ու հօրաքոյրերը պաշտօնական այցելութեան կ'երթային իրենց ընտրած աղջկան տունը... Աղջիկը իր ամէնէն գեղեցիկ հագուստները հագած և զարդարուած բոլոր այն գոհարեղէններով և զարդերով, որ իր ամուսնական օժիտը պիտի կազմէին, կը ներկայանար և այցելու կիներուն ձեռքերը կը համբուրէր, յետոյ սիկար, անուշեղէնով օղի և սուրճ կը հրամցնէր...»⁴¹:

Բուլանըխում օժիտի զարդերից էին վզնոց-կրծքազարդը, գլխի թասը, քունքազարդերը՝ ոսկիներով, շամշիկները, զույգ ապարանջանը, գոտին⁴²: Այստեղ, երբ աղջկան *ուզեխ* դրական պատասխան էին ստանում, նրան նվիրում էին մատանի, գլխի թաս, շամշիկներ, զույգ ապարանջան, այլ զարդեր, և դա կոչվում էր *նշան* (հարսի)⁴³:

Հարսանեկան ծեսից հետո հարսը կրկին զարդեր էր ստանում: Օրինակ՝ «Պսակի յոթ օրից հետո նորահարսն առաջին անգամ ավլում է սենյակը և այդ միջոցին մի դրամ կամ զարդ դնում են դռան ետևը, որպեսզի

³⁷ Քիրազեան 1899, 165:

³⁸ Լալայեան 1896, 244:

³⁹ Չոլաքեան 2016, 227:

⁴⁰ Ալպոյաճեան 1952, 1475:

⁴¹ Ալպոյաճեան 1952, 1499-1500:

⁴² Բենսէ 1899, 101: Օժիտի զարդերի մասին տե՛ս նաև Շահագիզ 1901, 90:

⁴³ Բենսէ 1899, 93: Ապարանջաններն ամենուրեք կրում էին երկու ձեռքին:

նա վերցնի»⁴⁴: Պսակվելուց հետո տոներին հայրական տուն դարձ գնալիս «կեսրանքը նոր հանդերձներ են կարում, իսկ հարանքը՝ զարդ ընծայում»⁴⁵:

Զարդերի ձևերն ու նախշերը

Արևմտյան Հայաստանում տարածված էին զույգ *շամշիկները*, որոնք հիշատակում է Բենսեն: Սրանք կոչվում են նաև «սրտի կաքավ», քանի որ կրծքին էին կրում, իսկ «կաքավ»՝ քանի որ խորհրդանշում էին այդ թռչունը: *Կաքավներն* ունեն շրջանաձև գլուխ, նշաձև մարմին և կախիկներ՝ *նորեր* կամ իրական կաքավների պատկերներով սկավառակներ: Սրանց կապակցությամբ տեղին է հիշատակել Հովհաննես Թումանյանի «Կաքավի գովքը»՝ գրված 1907 թ. «Վանեցոց երգ կաքավու»⁴⁶ ժողովրդական երգի հիման վրա, որը նաև Կոմիտասի ամենատարածված երգերից է: Այս զարդն իր գեղեցկությամբ և ոգեղինությամբ ներդաշնակ է երգին ու, հատկապես, վերջին տան բովանդակությանը՝ «Երբ կրկանգնես մամռոտ քարին, // Սաղմոս կասես ծաղիկներին, // Սարեր ձորեր զվարթ կանես, // Դարդի ծովեն սիրտս կըհանես. // Սիրունիկ, սիրունիկ, // Նախշուն կաքավիկ»⁴⁷:

Ժողովրդական պատկերացումներում կաքավի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքն արտահայտվում էր նաև հարսանեկան ծեսում, երբ փեսացուի ընկերները «նուրձ» էին սարքում, այն է՝ կլոր տախտակին 4-5 փայտե *կաքավներ* էին տեղադրում, զարդարում խնձորով, նռով և այլն⁴⁸:

Նախկինում գլխազարդերի գործածությունը կախված էր մազերի սանրվածքից, գլխի հարդարման ձևից և գլխարկից: Օրինակ՝ Սյունիք-Արցախի գլխի զարդերից էին ճակատազարդ-դրամաշարը, արծաթյա գնդիկներով քունքազարդը և կեռազարդերը (շղթաներով միացած, զուգաթելով կամ սևադազարդ մասերով), որոնք քունքերի մոտից, գլխի հետևով ձգվում էին դեպի գագաթը և խաչաձևվելով ամրացվում գլխաշորին⁴⁹: Վասպուրականի աղջիկները ծամերին արծաթե *ծամքաղ* էին

⁴⁴ Լալայեան 1916, 173:

⁴⁵ Լալայեան 1910, 162:

⁴⁶ Ռամկական երգեր, Վանեցոց երգ կաքավու 1850, 230:

⁴⁷ Թումանյան 1969, 182, 430: Կաքավի մասին նաև ավանդություններ կան, հմմտ. Ղանալանյան 1969, 135:

⁴⁸ Բենսէ 1899, 109:

⁴⁹ Ավագյան 1983, 73:

անցկացնում՝ երկտակ շղթա՝ արծաթե գնդիկներով, մեջտեղում՝ մեծ կապույտ ուլունքով, որը հուռուք է չար աչքի դեմ: Աղջիկների կարմիր ֆեսին ամրացվում էին արծաթե դրամներով, նշաձև զարդերով և մարջաններով շղթաներ: Քունքերից կախվում էին *երեսնոց* կոչվող քունքազարդերը՝ փիրուզներով, թանկագին քարերով կամ ապակե ուլունքներով, իսկ *շավան* անցկացնում էին ծնոտի տակով և ամրացնում քունքերի մոտ: Շավան արծաթե շղթա է, արծաթաթելով պատրաստված զարդերով և մարջաններով, ծայրերին՝ արծաթե գնդասեղներ կան՝ մարջաններով, իսկ մեջտեղում՝ արծաթե սրտաձև ճարմանդ: Գնդասեղները ամրացնում էին քունքերին, իսկ ճարմանդը՝ կոկորդի մոտ: Կանաչ գլխարկի վրայից կապում էին կարմիր *ճակդի կապ*՝ եզրի երկայնքով շարված կապույտ ուլունքներով: Ճակատի կապի վրա ամրացվում էր մախչան⁵⁰:

Գամիրքում չափահաս աղջիկները հյուսքերով *խսիր* էին սարքում, որի լայնությամբ զարդոսկիներով կամ արծաթե դրամներով կարմիր ժապավեն էին ամրացնում: Շարոցը հարսները ճակատին էին կրում⁵¹: Մուշ-Տարոնում աղջիկները հյուսերի ծայրերն ամրացնում էին ծամթելով՝ մահիկներով արծաթե շղթաներով: Տոն օրերին նրանք ֆես էին կրում, վրան՝ արծաթե գագաթ, շուրջը՝ կարծ շղթաներով մահիկներ⁵²: *Ափսե, գագաթ* կամ *թասակ/թաս* կոչվող արծաթե զարդերի մասին Վ. Թեմուրճյանը նշում է, որ Գամիրքում հարսները դրանք գործածում էին մինչև համաշխարհային առաջին պատերազմը: *Գագաթն* ուներ արծաթե կախիկ շղթաներ կամ ուլունքաշար, կարմիր ժապավեններ՝ զարդոսկիներով, որոնք կոչվում էին *շփիկ*... Արաբկիրում հարսները կրում էին *ոսկե գլխարկ*, եզրերին՝ զարդոսկիներ, կողերին՝ *շփիկներ*...⁵³»: Գլխի թասակները բուսանախշեր ունեն, թևավոր հրեշտակներ, սրբեր, կենտրոնում՝ կիսագնդաձև վարդակներ: Կախիկները նշաձև են, շրջանաձև *նորեր* են, ոճավորված շերեփուկներ և թռչնակներ: Թասակները երբեմն երիզված են մանր, կապույտ ուլունքներով: Սրանք լայնորեն տարածված էին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և պատմական Փոքր Հայքի տարածքում: Երվանդ Տեր-Մկրտչյանն ուշագրավ փաստ է ներկայացնում Վանի թասակ-

⁵⁰ Լալայեան 1910, 137-140: Մաղչա՝ մախչե - ճակատի զարդ:

⁵¹ Թեմուրճյան 1970, 101:

⁵² Լալայեան 1916, 153:

⁵³ Թեմուրճյան 1970, 102-103: Շփիկ - կանանց գլխի զարդ՝ բաղկացած ոսկիներ շարած թելերից, որ երեսն ի վայր կախում են աջ և ձախ կողմից, հմմտ. Մալխասեանց 1944, 540:

ների մասին՝ կապված ամուսնության արարողակարգի հետ. պսակի չորրորդ օրը քահանան գալիս էր տուն՝ *ուռց կտրելու* ծեսը կատարելու, որի վերջում գավաթով գինու կեսը նա խմեցնում էր փեսային, կեսը՝ հարսին՝ որպես միության և սիրո նշան: Իսկ նախկինում քահանան գինին խմեցնում էր նաև գլխազարդ թասով. «Շատ հին ատեններ, ըստ ավանդության, այս խորհրդավոր գինին քահանան կխմեցներ ամուսնացող զույգին այն արծաթյա թասով, որ հարսնացուն իր աղջիկության շրջանին գլխուն վրա կկրեր իբրև զարդ և իբրև նշան կուսության: Այս թասին վրա փորագրված կըլլային արևի, լուսնի և աստղերու պատկերներ, վերջերս՝ նաև խաչի պատկերներ:

Թասը աղջկան գլխեն վար կառնվեր և այդ թասով գինի կմատուցվեր նորապսակ ամուլին: Երբեմն այդ թասը եկեղեցիին կնվիրվեր և երբեմն ալ նորեն հարսին կվերադարձվեր: Հարսը թասը նորեն իր գլխու վրա կկրեր և ամուսնության յոթ տարիներ անցնելէ հետո, տան մեջ եղող ուրիշ աղջկան մը կփոխանցեր»⁵⁴: Զարդերի նվիրաբերությունը սրբատեղիներին ընդունված երևույթ էր. օրինակ՝ Վանում սուրբ աղբյուրին ուխտ եկող կանայք մոմ էին վառում, իրենց գլխի հարդարանքի զարդասեղը խրում էին աղբյուրի ակի մեջ և հետո ջուրը կրծքին քսում, որպեսզի կաթն ավելանար⁵⁵:

Զարդերի շարքը կարելի է դասել կանանց ու տղամարդկանց հագուստի կոճակները, որոնք գեղեցկությամբ չէին զիջում դրանց: Նույնիսկ հարսանեկան երգերում չեն մոռացվել կոճակները: Ակնում փեսային հագցնելիս երգում էին. «Ահա բարձր լեռներն ի վար, //Մեզի բարակ արև մըն է ծաթեր //Ամենուն երդիկն ի վար, //Մեզի դուռն ի ներս է ճառագեր, //Ամենդ ի վար եկեք, //Թագավորին կապան կապեցեք, //Լուսնկան աստառ արեք, //Արեգակն երես ձևեցեք, //Ան մոյ ու խոշոր աստղեր, //Թևերուն տյուկմե⁵⁶ կապեցեք»⁵⁷:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին տարբեր պատճառներով զարդերի շատ տեսակներ, ինչպես և ավանդական կոճակները, դուրս եկան գործածությունից՝ գլխի թասակները, կեռերը, ճակատազարդերը, ծամերի զարդերը, քունքակախիկները, կրծքազարդ շամշիկները, քթի օղերը և

⁵⁴ Տեր-Մկրտչյան 1970, 184:

⁵⁵ Լալայեան 1916, 198:

⁵⁶ *düyme*-թուրքերեն՝ կոճակ:

⁵⁷ Թեմուրճյան 1970, 120:

ոտքերի ապարանջանները (որոնք այնպես են մոռացվել, որ մեր օրերում հազվադեպ և որպես ներմուծված նորաձևություն են հանդես գալիս) և այլն:

Նախշերի ու ձևերի գաղափարական իմաստները

Զարդերի խորհրդանշական իմաստները կապվում են տարբեր հավատալիքների հետ կամ սկիզբ են առնում այդ հավատալիքներից:

Այսպես՝ արևի պաշտամունքի հետ են կապվում հատկապես գլխի սկավառակներն ու թասակները և դրանց վրա պատկերվող շրջանաձև նախշերը: Լուսնի գերբնական հատկանիշներին է առնչվում *նոր* կոչվող, *նորալուսինը* խորհրդանշող զարդը՝ տարածված թե՛ ժամանակի, թե՛ նյութի բազմազանության իմաստով. անագից, բրոնզից, ոսկուց, արծաթից պատրաստված բրոնզեդարյան նորեր են հայտնաբերվել հնագիտական պեղումների միջոցով, դրանք պատկերվել են քարե հին կուռքերի վրա, XVI-XX դդ. գորգերի, ասեղնագործությունների նախշերում, XIX-XX դդ. կավե աղամանների վրա և այլն: XVIII-XX դդ. կանայք *նորերով* պաշտպանվում էին չար ոգիներից, անզավակությունից, դրանք կարում էին երեխաների գլխարկներին, աղջիկների մազերի մեջ էին հյուսում, որպեսզի չարքերին վանելով, առողջություն և երջանկություն ապահովվեին: *Նորերը*, ինչպես նշվեց, ամրացվում էին արծաթե թասակների շուրջը, կախվում քունքազարդերից, ճակատազարդերից, կրծքազարդերից, վզնոցներից և այլն⁵⁸: Հավատալիքներում լուսնի հետ են կապվում դրամները, որոնց գերբնական հատկությունները ևս գալիս են լուսնի պաշտամունքից⁵⁹: XVI-XX դդ. հայկական զարդերում տարածված էին ոսկե, արծաթե, այլ մետաղներից ու համաձուլվածքներից պատրաստված եվրոպական, ռուսական, պարսկական, օսմանյան դրամները, կեղծ դրամներն ու ժետոնները: Կան դրամներով ճակատազարդեր, վզնոցներ, կրծքազարդեր, ապարանջաններ, ճարմանդներ, քթի օղեր և այլն: Կանայք նաև առանձին ոսկեդրամ էին կախում պարանոցից: Հաճախ էին դրամն ու զարդը համադրվում: Դրամը որպես լուսին է հանդես գալիս ավանդական աղոթքի հետևյալ տողերում. «Լուսնկայ, լուս վերն կայ./Ծովին վրայ փարայ մը կայ»⁶⁰:

⁵⁸ Израелян 2006, 77.

⁵⁹ Израелян 1987, 121.

⁶⁰ Աճառեան 1902, 162:

Տուն կառուցելիս դրամը դրվում էր հիմքում կամ պատի մեջ, որպեսզի տունն ամուր լիներ, հարուստ, առատ, և շատ երեխաներ ծնվեին այնտեղ: Քահանայի կամ կախարդի հատուկ արարողություններով ու աղոթքներով կտրած դրամը, որ «նոր» էր կոչվում, օգտագործվում էր չար ոգիներից, չար աչքից, վատ երազներից, վախից, հիվանդություններից պաշտպանվելու նպատակով⁶¹: Սրանով է բացատրվում դրամներով զարդերին և ուղղակի դրամներին առանձնահատուկ դեր հատկացնելը նշանադրության և հարսանիքի ժամանակ: Դրամը և զարդն այս դեպքերում կարող էին փոխարինել միմյանց. օրինակ՝ աղջկան նշանելիս նրան ոսկե մատանի կամ ոսկե դրամ էին տալիս: Այսպես՝ Խարբերդում պատրաստվում էին ոսկե դրամներով կրծքազարդեր, ճակատի զարդեր, օղեր և այլն⁶²: Նշանադրության ծեսի ժամանակ Կեսարիայում յուրաքանչյուրը տալիս էր *հարսնապրեսի նվերը*, կամ *երես պեսնուկը*, որոնք զարդոսկիներից էին բաղկացած... նշանդրեքի հետևյալ օրից տղան ու աղջիկը զարդարվում էին ստացված նվերներով: «Հարսնացուն... զարդոսկիները դասավորում էր կարմիր ֆեսի առջևի կողմում կամ զարդարում էր *արախշին* (թասակ) և որպես մանյակ կախում էր կրծքից, կամ որպես շարոց ծամերի խսիրի վրա և կամ ծամերի ծայրերին, երբեմն նաև վզին ու ծամերին միաժամանակ: Իսկ փեսացուն իր միջնամատին կրում էր ակով մատանին: Այդ զարդերի քանակը կարող էր բազմանալ մինչև ամուսնության օրը... տոների առթիվ տրված նվերներով»⁶³: Եվդոկիայում, ինչպես նշում է Ալպոյաճյանը, կանանց սովորական զարդը խոշոր ոսկեդրամներն էին, որ թելով ճակատի վրա էին կրում: «Այս զարդը հարսի մը դրամօժիտին մաս կը կազմէր կամ յաճախ ամբողջ դրամօժիտը, որ պահելու ամէնէն ապահով եղանակը վրան պահելը նկատուած էր: Ծայրայեղ անձկութեան և կարօտութեան ատեն միայն այս զարդոսկիները կը ծախուէին: Այսպէս, օրինակի համար Վան Լէննէփ կ'ըսէ թէ Թոգատի բոլոր բողոքական կիները իրենց ոսկեղէն զարդերը իրենց ամուսիններուն տուին երբ խղճի ազատութեան համար հալածանքի ենթարկուեցան, և իրենց ընտանիքներուն պէտքերը անոնցմով հոգացին մինչեւ որ այրերը կրցան նորէն գործ գտնել, կամ այդ ոսկեդրամները իբրեւ դրամագլուխ գործածեցին: Կիները ինքնաբերաբար ըրին ասիկա, առանց արտաքին թելադրութեան, որով-

⁶¹ Իսրայելյան 1998, 11-13:

⁶² Վահէ Հայկ 1959, 669:

⁶³ Թեմուրճյան 1970, 116-117:

հետեւ քաղաքային օրէնքը թոյլ չի տար որ ամուսին մը իր կնոջմէն դրամ առնէ:

Այս ոսկեդրամներէ բաղկացեալ զարդերը կը կոչուէին *շարոց* և յաճախ 15-20 զարդոսկիներէ կը բաղկանային, մեջտեղը ունենալով խոշոր հատ մը»⁶⁴: Համշենահայ կանանց փոքր, թասակաձև գլխանոցներն ամբողջովին զարդարվում էին արծաթե կամ ոսկե դրամներով⁶⁵:

Զարդերի տեսակների մասին տեղեկություններ կան բանահյուսական նյութերում. բնորոշ օրինակներից է Ալաշկերտի այն ժողովրդական երգը, որտեղ ջուրն ընկած ծամթելը ջրից հանելու համար աղջիկը լողվորին հերթով առաջարկում է տալ իր գլխի արծաթե թասակը, երեսնոցները, կրծքազարդը, քթի օղը, որն արտահայտված է *խըզեմ*⁶⁶ բառով⁶⁷:

Ընդունված է կարծել, թե ինչպես մյուս զարդերը, այնպես էլ քթի գինդերը ուշադրություն են գրավում՝ նայողի հայացքն իրենց վրա կենտրոնացնելով, և կրողին պաշտպանում են բացասական ազդեցությունից⁶⁸: Հենց սա է պատճառը, որ երբեմն նաև տղա երեխաների քթին էին օղ հագցնում. «Բաղեշի Խուլթիկ գյուղում կնունքից առաջ կամ հետո ծակում էին նորածին աղջիկների ականջները, նաև քիթը, եթե տղա երեխային շատ սիրեին՝ նաև տղայի քիթը՝ տարբեր ոսկերիչներից արծաթ հավաքելով քթագինդ էին պատրաստել տալիս՝ «նորածինը անվտանգ և անփորձանք պահելու համար»⁶⁹:

XIX դ. որպես զարդ ի հայտ է գալիս հայելին: Հայաստանի պատմության թանգարանում պահվում է կափարիչով կլոր հայելիով, սանրիկով ու կեռիկավոր եռանկյունիով, շղթայով վզնոց-կրծքազարդը (Վան, XIX դ., N 6963): Բազմանշանակ հմայակների շարքին է դասվում հայելին: Հավատալիքներում այն գործում է նույնիսկ տարածության մեջ. երբ տնից մի մարդ հեռավոր վայր է գնում, հետևից հայելու վրա ջուր են լցնում, որպեսզի անփորձանք գնա ու վերադառնա⁷⁰: Իսկ երբ չար ոգին հայելու

⁶⁴ Ալպոյաճեան 1952, 1474-1475:

⁶⁵ Թողլաքյան 1976, 154-155:

⁶⁶ Քթի օղ (ոսկի կամ արծաթ): «Խզեմ» խազամ. արաբերեն *xuzāma* մեխակ բառից է»: Մալխասեանց 1944, 226:

⁶⁷ Նժդեհեանց 1899, 190:

⁶⁸ Տեղեկության համար շնորհակալություն ենք հայտնում արվեստաբան Անի Ավագյանին:

⁶⁹ Նահապետյան 2007, 225:

⁷⁰ Անդրէասեան 1899, 697:

մեջ տեսնում է իր պատկերը, անմիջապես վախեցած փախչում է⁷¹: Այդպիսով՝ հայելին դառնում է չարխափան իր: Այն բարեբեր հմայակի դեր է կատարում նշանադրության և պսակադրության ծեսերի ժամանակ: Երբ աղջիկը հարս էր գնում, նրա գոտու մեջ հայելի էին դնում, ապակին՝ դեպի դուրս, որպեսզի նա ամուսնու աչքին գեղեցիկ երևար⁷²: Բացի այդ, «Նոր հարսին հետ եթե կին մը մեկ ձեռքը գաթա ու մյուս ձեռքը հայելի մը բռնելով խաղա՝ առատություն և խաղաղություն կ'ըլլա»⁷³: Հայելին ու սանրը աղջկա օժիտի մասերից էին⁷⁴: Սանրը ևս օգնում է ազատվել դևերից: Իրանական հեքիաթներում փերին, դևը, ջինն ունեն կախարդական սանր և այն տալիս են հերոսին, որը, հայտնվելով ծանր վիճակում, սանրի միջոցով կանչում է իրեն օգնող գերբնական արարածներին⁷⁵: Հայկական հեքիաթներում չար հակառակորդից պաշտպանվելու համար հերոսը սանրը նետում է նրա ճանապարհին, և այն դառնում է անտառ⁷⁶: Իսկ «Սասնա ծռեր» էպոսում Սասունցի Դավիթն Աստծուց հմայիլ սանր էր ստացել⁷⁷:

Լայն կիրառում ունեին ոճավորված վիշապներով վզնոցները, որոնք տարածված էին Կարինում, Կարսում, Ախալցխայում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում, Բայազետում, Դիարբեքիրում, Սասունում, Մուշում, Վանում, Շատախում, Արճեշում, Թիմարում, Զիլանում, Երևանում, Թիֆլիսում և այլուր: Սրանց ձևը հարատևել է դարեդար. Զիվիեի պեղումներից գտնված ուրարտական, Ք.ա. VII դ. և XVIII-XX դդ. հայտնի վզնոցների վիշապները չեն տարբերվում միմյանցից (և վկայում են ուրարտական մշակույթի շարունակականության մասին)⁷⁸:

Վիշապի խորհրդանիշը բազմապիսի գեղարվեստական ոճավորումներով է պատկերվում հայկական դեկորատիվ և կիրառական արվեստում: Վիշապը դրական սկզբի մարմնավորումն է՝ կապված ջրի պաշտամունքի, բերքի պտղաբերության, հարստության գաղափարների հետ⁷⁹: Զրի մյուս խորհրդանիշի՝ ձկան հետ վիշապի կապն ուղղակիորեն ար-

⁷¹ Լիսիցյան 1969, 284:

⁷² Պալեան 1899, 522:

⁷³ Արսլան 1899, 487:

⁷⁴ Լալայեան 1900, 259-260, Լալայեան 1902, 239:

⁷⁵ Էբրահիմի 2014, 115-116:

⁷⁶ ՀժՀ 2012, հ. XVII, N 30, 234: ՀժՀ 1962, հ. III, N 2, 58:

⁷⁷ Սասնա ծռեր 1944, 26:

⁷⁸ Ghirshman 1964, 114-115.

⁷⁹ Иванов 1980, 394.

տահայտվում է վզնոցների այն տարբերակներում, որոնք վիշապիկների տակից ամրացված ձկնաձև կախիկներ ունեն: Ձուկը խորհրդանշում է պտղաբերություն, բազմացում⁸⁰ և հարստություն: Բազմացում, աճ, առատություն են խորհրդանշում նաև շերեփուկն ու գորտը, կենաց ծառը, նուշը, եռանկյունին, շեղանկյունին, հատիկները, որոնք տարածված են զարդերում: Գլխի հարդարանքի գորտաձև զարդերը՝ լուսնաձև կախիկներով և գոտու գորտաձև ճարմանդները՝ լուսնաձև, ընդելուզված քարերով, ցույց են տալիս գորտի ու լուսնի ընդհանուր՝ վերակենդանացման, հարության, աճի ու բազմացման, չարը վանելու և բարիք բերելու գաղափարները⁸¹:

Որպես զարդերի մասեր ամենուրեք տարածված են բոժոժները: Սրանք գալիս են բրոնզեդարյան այն բոժոժներից, որոնց մեջ գնդիկներ էին դրվում, որպեսզի զնգալով փախցնեին չար ուժերը: Մանկական ոտքի բոժոժավոր ապարանջանների գործառույթներից մեկն էլ երեխաներին չար ուժերից հմայությամբ պաշտպանելն էր⁸²:

Ինչպես զարդերի ձևերից, այնպես էլ նախշերից յուրաքանչյուրի նշանակությունն առանձին քննարկման առարկա կարող է լինել: Սակայն դրանցից մեկին՝ *գրին* արժե հատուկ անդրադառնալ, քանի որ հազվադեպ է հանդիպում: Նշենք՝ *արաբերեն գրությունները* տարբեր ժամանակաշրջաններում օգտագործվել են որպես նախշ: Բ. Առաքելյանն օրինակ է բերում Անբերդում գտնված հավանգը, որի վրա փորագրված մեկ ու կես բառի վեց անգամ կրկնվող արաբերեն արձանագրությունը, զուրկ որևէ իմաստից, քանդակված է արաբերեն չիմացող վարպետի ձեռքով իբրև զարդ⁸³: Հայաստանի պատմության թանգարանի զարդերի ժողովածուում նույնանման նմուշ է արձաթե գլխազարդ թասակը (N 6498): Նրա կրկնվող տասը շրջանակներում գրված է արաբերեն *բասմալա* բառը, այսինքն՝ «bismi-i-Lahi-r-rahmani-r-rahimi», որը «հանուն գթառատ և բարեգութ աստծո» արտահայտության միայն առաջին՝ «բիսմի-ի-Լահի» մասն է՝ զգալիորեն աղավաղված, այսինքն՝ կատարված է առանց գիրը ճանաչելու ընդօրինակությամբ⁸⁴:

⁸⁰ Капанцян 1952, 9.

⁸¹ Իսրայելյան 2010, 259:

⁸² Իսրայելյան 2012, 113:

⁸³ Առաքելյան 1958, 160:

⁸⁴ Արաբերենից թարգմանել է արևելագետ Արշալույս Փափազյանը:

Եզրակացություններ

Զարդերը ժողովրդի սովորույթների, ավանդույթների, տոների ու ծեսերի մասն են կազմում՝ ամբողջացնելով կանանց արտաքին կերպարարանքը և ներքին զգացողություններն ու հոգեբանությունը: Զարդերում առկա են ժողովրդական հավատալիքների բարեքեր երևույթների խորհրդանշանները՝ արտահայտված նրանց ձևերով, նյութերով և նախշերով: Զարդերի իմաստն ավելի խորն է, քան կարող է թվալ առաջին հայացքից, երբ գեղարվեստական կողմն է առաջնայինը թվում: Բայց քննելով այն իմաստները, որ արտահայտում են զարդերը, տեսնում ենք, որ դրանք ընդհանրություններ ունեն այն առարկաների ու դրանց խորհրդանշական ու գաղափարական իմաստների հետ, որոնք պաշտպանում են բացասական երևույթներից (ինչպես մարդկային չարությունը, հիվանդությունները, չար ոգիները, բնության արհավիրքները և այլն) և բարիք են բերում (ինչպես պտղաբերությունը, բազմացումը, առատությունը, երջանկությունը, բուժումը և այլն): Հետևաբար, զարդերն ու բարեքեր հմայակները հաճախ ընդհանուր ծագում ունեն: Եվ սրա շնորհիվ է, որ զարդ կրելով, մարդ հոգեբանորեն ավելի պաշտպանված, ինքնավստահ, ապահով և հանգիստ է զգում, իսկ ամենօրյա զարդ կրելու սովորույթն ընդգծում է այս հանգամանքը:

Գրականություն

- Ագաթանգեղոս 1977, Պատմություն հայոց (աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթություններով Արամ Տեր-Ղևոնդյանի), Երևան, «Սովետական գրող», 192 էջ:
- Ալպոյաճեան Ա. 1952, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Հրատարակութիւն Նիւ-Եորքի Եւդոկիոյ կրթասիրաց միութեան, Գահիրէ, 1751+105 էջ:
- Ալպոյաճեան Ա. 1961, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Հրատարակութիւն Մալաթիոյ Կրթասիրաց ընկերութեան, Պէյրութ, 1536 էջ:
- Աճառեան Հ. և Ա. 1902, Հաւաքածոյ պօլսահայ ռամկական անգիր գրականութեան, Ազգագրական հանդէս, IX, Թիֆլիս, էջ 162-163:
- Անդրէասեան Ս. 1899, Ազգագրական, Բիւրակն, թիւ 44, 3 նոյեմբերի, էջ 695-698:
- Առաքելյան Բ. 1958, Քաղաքները և արհեստները Հայաստանում (IX-XIII դդ.), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 376 էջ+LXXVI:

- Ավագյան Ն. 1983, Հայկական ժողովրդական տարազը (պատ. խմբ. Վ.Հ. Բդոյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 109 էջ:
- Արսլան Ի.Խ. 1899, Նախապաշարումներ, ամսագրություններ եւ սովորություններ Մունճուսուն գիւղի, Բիւրակն, թիւ 31-32, 18 օգոստոսի, Կ. Պոլիս, էջ 487-490:
- Բաբգէն վարդապետ 1899, Ճանիկի վիճակին մէջ գտնուող համշէնցիներու գաւառաբարբառը, Բիւրակն, թիւ 41, 13 հոկտեմբերի, Կ. Պոլիս, էջ 654-656:
- Բենսէ 1899, Բուլանըլի կամ Հարք գաւառ, Ջգեստ և զարդ, Ազգագրական հանդէս, Ե, Թիֆլիս, էջ 45-49:
- Բենսէ 1899, Բուլանըլի կամ Հարք գաւառ, Ընտանեկան բարք, Ազգագրական հանդէս, Ե, Թիֆլիս, էջ 90-123:
- ԴԱՆ, Իսրայելյան Ա. 1985, Դաշտային ազգագրական նյութեր, Ղափան:
- Դեւեյան Ա. 1966, Տաշիր-Ձորագետի բրոնզեդարյան մի քանի ոսկե և արծաթե իրեր, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, Երևան, էջ 100-110:
- Էբրահիմի Մասումեհ 2014, Դեւերն ու դիվական աշխարհը իրանական ժողովրդական հավատալիքներում, Ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Է00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, էջ 115-116:
- Թեմուրճյան Վ. 1970, Գամիրքի հայերը (պատասխանատու խմբ. Մ.Ս. Հասրաթյան), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 142 էջ:
- Թողլաքյան Բ.Գ. (Սոչի) 1976, Համշենահայերի տարազը XIX դարի վերջերին, Պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 145-156:
- Թումանյան Հ. 1969, Երկերի ժողովածու չորս հատորով (խմբ. Էդ. Ջրբաշյան և Ա. Ինճիկյան), հ. 2, Երևան, «Հայաստան», 647 էջ:
- Իսրայելյան Ա. 1979, «Բուժիչ» ուլունք-պահպանակներ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 80-88:
- Իսրայելյան Ա. 1998, Դրամը որպես զարդ, Դրամաշրջանառությունը Հայաստանում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ կենտրոնական բանկ, Ձեկուցումների թեզիսներ, Երևան, էջ 11-13:
- Իսրայելյան Ա. 2010, Գորտի հմայական գործառույթները հավատալիքներում, Հայ ժողովրդական մշակույթ, XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, «Գիտություն», էջ 247-260:
- Իսրայելյան Ա. 2012, XVIII-XX դդ. Հայկական հմայական պահպանակները, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 200 էջ+24 էջ ներդիր:

- Իսրայելյան Ա. 2017, Գույնի մոզական ուժը հայ ժողովրդական հավատալիքներում, Պատմա-բանասիրական հանդես, N 2, Երևան, 125-142:
- Լալայեան Ե. 1896, Ջաւախք, Ազգագրական հանդես, Ա գիրք, Շուշի, էջ 227-231:
- Լալայեան Ե. 1897, Վարանդա, Ազգագրական հանդես, Բ, Թիֆլիս, էջ 113-144:
- Լալայեան Ե. 1900, Գանձակի գաւառ, Ազգագրական հանդես Ե, Թիֆլիս, էջ 242-269:
- Լալայեան Ե. 1902, Բորչալուի գաւառ, Ազգագրական հանդես IX, Թիֆլիս, էջ 212-245:
- Լալայեան Ե. 1904, Բորչալուի գաւառ, Ազգագրական հանդես, XI, Թիֆլիս, էջ 69-75:
- Լալայեան Ե. 1906, Վայոց ձոր, Ազգագրական հանդես, XIII, Թիֆլիս, էջ 139-166:
- Լալայեան Ե. 1910, Վասպուրական, Ազգագրական հանդես, XX, Թիֆլիս, էջ 116-196:
- Լալայեան Ե. 1916, Վասպուրական, Ազգագրական հանդես, XXVI, Թիֆլիս, էջ 195-210:
- Լալայեան Ե. 1916, Մուշ-Տարօն, Ազգագրական հանդես, XXVI, Թիֆլիս, էջ 148-153:
- Լալայան Ե. 1931, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, ՀՍԽՀ Լուսժողկոմատ, Պետհրատ, 239 էջ:
- Լիսիցյան Ստ. 1969, Զանգեզուրի հայերը (խմբագրությամբ Ս.Տ. Երեմյանի, Սրբուհի Լիսիցյանի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, հ. 2, Երևան, ՀՀԳԱԱ հրատ., 431 էջ:
- Հացունի Վ. 1923, Պատմութիւնն ինն հայ տարագին, Վենետիկ, Սբ. Ղազար, 470 էջ:
- ՀԺՀ, Հայ ժողովրդական հեքիաթներ 1962, հ. III, Այրարատ, N 2, Օձ-Մայիլ, հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Ա.Մ. Նազինյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 672 էջ:
- ՀԺՀ, Հայ ժողովրդական հեքիաթներ 2012, հ. XVII, Մոկս, N 30, Ծովու ախչիկ, հատորը կազմեց, առաջաբանը գրեց և տպագրության պատրաստեց Թամար Հայրապետյանը, Երևան, «Գիտություն», 840 էջ:
- Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում (խմբ. Էմ.Ա. Պիվազյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:
- Մալխասեանց Ս. 1944-1945, Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, հ. 2, Երեւան, ՀՍՍՌ պետական հրատ., 512 էջ:

- Յովհան Մանդակունի 2008, Ճառք, Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար, Անթրիկաս-Լիբանան, Դ, 28, էջ 1175, Թ, 32, էջ 1199: Աշխարհաբար թարգմանությունը Մարթա Արաբյանի www.gratun.org/source.php?sid=2536 (04.04.2020):
- Նահապետյան Ռ. 2007, Նորաձնի մկրտությունը որպես նրա հասարակական ճանաչման փուլ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Երևան, «Գիտություն», էջ 224-231:
- Նժդեհեանց Գրիգոր 1899, Ալաշկերտի բանաւոր գրականութիւն, Ազգագրական հանդէս, Ե, Թիֆլիս, էջ 185-199:
- Ն.Տ.Ն. 1899, Սիմրիհիսարցի կինը, Բիւրակն, թիւ 47-48, 24 նոյեմբեր, Կ. Պոլիս, էջ 741-745:
- Շագոյան Գ. 2011, «Յոթ օր յոթ գիշեր» հայոց հարսանիքի համայնապատկեր, (պատ. խմբ.՝ Հ. Խառատյան), Երևան, «Գիտություն», 616 էջ+32 էջ գունավոր նկարներ:
- Շահագիզ Ե. 1901, Նոր-Նախիջևանը և նոր-նախիջևանցիք, Ազգագրական հանդէս, VII-VIII, Թիֆլիս, էջ 76-102:
- Չոլաքեան Յակոբ 2016, Քեսապ (Պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Ատենախօսութիւն, Է. 00.04 «Ազգագրութիւն» մասնագիտութեամբ պատմական գիտութիւններու դոկտորի գիտական աստիճանի համար, Երեւան, 343 էջ:
- Պալեան Յ. 1899, Պառաւաշունչ Բաբերդի. Նախապաշարումներ, Բիւրակն, թիւ 33, 25 օգոստոսի, Կ. Պոլիս, էջ 520-523:
- Պետրոսյան Հ., Քալանթարյան Ա., Առաքելյան Բ., Ավետիսյան Պ. 2007, Ոսկին հայ միջնադարյան աշխարհընկալման համակարգում, Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ - մ.թ. XIV դ.), Երևան, «Գիտություն», էջ 59-69:
- Ռամկական երգեր 1850, Վանեցոց երգ կաքաւու, Բազմավէպ, թիւ 15, օգոստոսի 1, Վենետիկ, Սբ. Ղազար, էջ 230:
- Սասնա ծռեր 1944, հ. Բ, I մաս, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան աշխատասիրությամբ պրոֆեսոր Կարապետ Մելիք-Ոհանջանյանի, Յերևան, Պետական հրատ., 405 էջ:
- Ս. Դ. 1899, Կանացի զարդարանքը Կիլիկիոյ մէջ, Բիւրակն, N 9-10, 25 փետրվարի, Կ. Պոլիս, էջ 137-138:
- Վահէ Հայկ 1959, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Յուշամատեն պատմական, մշակութային եւ ազգագրական, Նիւ Եորք, 1500 էջ:

- Տեր-Ղևոնդյան Հ. 1963, Կիլիկյան հայկական արձաթագործության պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, N 4, Երևան, էջ 75-84:
- Տեր-Մինասեան Վ. վրդ. 1893, Անգիր դպրութիւն եւ առակք, հատոր Ա, տպագ. Գ. Պաղտատլեան, Կ. Պոլիս, 288 էջ:
- Տեր-Մկրտչյան Ե. 1970, Վանեցոց հարսանիքը (պատասխանատու խմբագիր՝ Դ.Ս. Վարդումյան), Հայ ազգագրություն և բանահյուսություն, 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 143-204 էջ:
- Ղազար Փարպեցի 1982, Հայոց պատմություն Թուրք Վահան Մամիկոնյանին: Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 540 էջ:
- Քիրազեան Ա. 1899, Ռոդոսթոյի հարսանեկան սովորոյթները, Բիւրակն, թիւ 11, 4 մարտի, Կ. Պոլիս, էջ 165-166:
- Абрамян Р.А. 1958, Из истории армяно-индийских связей, Историко-филологический журнал, N 2, Ереван, с. 162-172.
- Гусева Н.Р. 1982, Художественные ремесла Индии, Главная редакция восточной литературы, Москва, «Наука», 239 с.
- Иванов В.В. 1980, Дракон, Мифы народов мира, Москва, «Советская энциклопедия», с. 394-395.
- Исраелян А. 1981, Армянские бусы-обереги XIX - нач. XX вв., Труды государственного исторического музея Армении, N VII, Ереван, «Айастан», с. 83-102.
- Исраелян А.Р. 1987, Монеты в армянских народных верованиях в XVIII-XX вв. Проблемы развития культуры народов и изучения культуры по музейным коллекциям. Всесоюзная научная конференция «Этнографическая наука и пропаганда этнографических знаний», посвященная 70-летию Великого Октября. Тезисы докладов, Омск, изд. ОмГУ, с. 121-122.
- Исраелян А. 2006, Лунницы, Армянский гуманитарный вестник, N 1, Москва-Ереван-Степанакерт, «Наири», с. 77-89.
- Капанцян Гр. 1952, О каменных стелах на горах Армении, Ереван, изд. Академии наук, 51 с.
- Марко Поло 1873, Путешествие в 1286 году по Татарии и другим странам Востока Марко Поло, Венецианского дворянина, прозванного миллионером, СПб., Типография П.П. Меркульева, 250 с.
- Сейранян В.Б. 1987, Армянские самоцветы, спец. ред - В.Р. Исраелян, Ереван, «Айастан», 80 с.
- Ghirshman R. 1964, Iran Protoiranien, Meder, Achämeniden, München, C.H. Beck, 445 S.

Van Lennep H. 1870, Travels in Little – Known Parts of Asia Minor, vol. I, London, John Murrey Albemarle Street, 343 p.

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԶԱՐԴԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ (XVIII-XX ԴԴ.)

Աստղիկ Իսրայելյան

Ամփոփում

Զարդերը, բացի գեղագիտական արժեքից, ունեն նաև այլ նշանակություն՝ բազմապիսի տեղեկություններ են հաղորդում մարդկանց բարքերի, սովորույթների, փոխհարաբերությունների, հավատալիքների մասին և այլն: Դարեր շարունակ զարդեր են կրել թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ: Դրանց գործածության քանակը և ձևերը տարբեր են եղել՝ կախված ժամանակից, կրողի կարգավիճակից, հասարակական դիրքից, տարիքից, սեռից, իրավիճակից: Դարերի ընթացքում փոփոխությունների են ենթարկվել և՛ զարդեր կրելու ձևերը, և՛ զարդերի տեսակները: Ուշագրավ են զարդեր նվիրելու (օրինակ՝ հարսանեկան ծիսաշարում), նվիրաբերելու (օրինակ՝ եկեղեցուն, սուրբ աղբյուրին), դրանք ստանալու, ընդունելու հանգամանքներն ու ձևերը:

XVIII-XX դդ. զարդերի ուսումնասիրությամբ ի հայտ են գալիս դրանց վերագրվող այն հատկանիշները, որոնք առնչվում են հնագույն հավատալիքներին: Զարդերի ձևերն ու նախշերը խորհրդանշում են արևը, լուսինը, ջուրը (ալիքաձև նախշով), բույսերը (կոկոն, նուշ, ծաղիկ, ճյուղ), կենդանիների որոշակի տեսակներ (օձ, ձուկ, գորտ, շերեփուկ, թռչուն), վիշապներ և այլն: Այս տեսանկյունից կարևոր են մետաղներին վերագրվող գերբնական զորությունը, թանկարժեք, կիսաթանկարժեք քարերի ու խեցիների երջանկաբեր և բուժիչ հատկությունները, ապակե, հախճապակե ակերի և ուլունքների գույների, ինչպես նաև սուրբ ծառերի փայտերից պատրաստված ուլունքների, մետաղե դրամների և բոժոժների չարխափան և բարեբեր հատկությունները: Ուշագրավ են որպես նախշ դրվագված գրերը: Զարդերի մասին բանահյուսական նյութերում առկա տեղեկություններն օգնում են առավել խորությամբ հասկանալու դրանց վերագրվող հատկանիշների բնույթը, լրացնելու և ամբողջացնելու զարդերի նշանակությունը տարբեր տեսանկյուններից:

Բանալի բառեր՝ զարդ, ծես, նվեր, նախշեր, մետաղներ, քարեր, հավատալիքներ:

ФУНКЦИИ УКРАШЕНИЙ АРМЯНСКИХ ЖЕНЩИН (XVIII-XX ВВ.)

Астхик Израелян

Резюме

Украшения являются носителями важной информации о мировосприятии народа, его верованиях, нравах, обычаях, социокультурных взаимоотношениях.

С древнейших времен украшения носили как женщины, так и мужчины, причем количество украшений было обусловлено социальным положением, возрастом, родом и т.д. На протяжении веков менялись виды и формы украшений и способы их ношения. Особое значение придавалось тому, как и когда они преподносились в дар, кто и как их принимал (например, во время свадебных церемоний) или какими ритуалами сопровождалась их подношения (церкви, священному роднику).

Исследование ювелирных изделий XVIII-XX вв. способствует выявлению приписываемых им магических свойств, связанных с древнейшими верованиями.

Узоры и формы украшений символизируют солнце, луну, воду, растения (бутон, миндаль, цветок, ветка), животных (змея, рыба, лягушка, птица, пчела), драконов и пр. С этой точки зрения важное значение придавалось также сверхъестественным свойствам металлов, драгоценных, полудрагоценных камней, ракушек, которые приносили счастье и исцеление больным. Особое значение имел также цвет камней, стеклянных, фаянсовых бус, где преобладали красный, синий, зеленый и белый. Носили также деревянные бусы, изготовленные из древесины священных деревьев, монеты, стилизованные бубенчики, каждый из которых имел апотропеическое значение. Немалый интерес представляют редкие надписи, отчеканенные вместо узоров. Украшения, упомянутые в армянском фольклоре, помогают глубже понять приписываемые им свойства и дополняют представления об их роли в армянской культуре.

Ключевые слова – украшение, ритуал, подарок, узор, металл, камень, верования.

THE FUNCTIONS OF ARMENIAN FEMALE ADORNMENTS (XVIII-XX CC.)

Astghik Israelian

Abstract

Adornments as cherished keepsakes vary with their roles and significant meanings behind them. They have existed throughout history from ancient times to the present in particular ways to represent their positive and beneficial aspects as well as aesthetic value and beauty, belief and affiliation, custom and tradition to define social status within a community. Due to the provision of great amount of information about the adornments by early male and female wearers we come to know the wide spectrum of their performance indicating function and quantity, type and purpose, gender and age, time and circumstances. Articles of adornment progressed through ages in forms and in ways of wearing. One of the prized and popular purposes for jewelry is to signify valued relationships and bonding experiences to bring good luck to the person who possesses them. The symbolism often makes jewelry more meaningful and important carrying a positive connotation integrated into the design. They often serve as gifts. The form of donation (e.g. during the wedding rituals), oblation (e.g. to the church or a holy spring), getting and receiving adornments are very striking.

On a larger scale studies on decorations of XVIII-XX cc. shed light on several benefits and several ideas of a strong positive message. The forms and the patterns of the decorations include symbols, often combination of symbols, associated with the sun, the moon, water (wavy lines), plants (bud, almond, flower, branches etc.), animals (snake, fish, frog, bee etc.), dragons and so on. From this point of view supernatural might of the metals, the precious stones and shells bring happiness and healing. The colours of artificial beads, wooden beads, made of the sacred trees wood and coins having apotropaic properties were considered to have a specific function as well. The rare inscriptions used as patterns are fairly notable too.

There are fascinating materials in the Armenian folklore that add depth and a range of concepts to the context of the adornments which facilitate to recognize the character of the decorations profoundly and think about their prominent role within the Armenian culture.

Key words – adornment, ritual, present, patterns, metals, stones, beliefs.

Ս. ԴԱՎԻԹ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Կարեն Հովհաննիսյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ karenhovhovan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 12.05.2020, գրախոսվել է 12.05.2020,

ընդունվել է տպագրության 28.06.2021

DOI: 10.53548/03208117-2021.2-291

Ներածություն

Բազմապիսի և բազմանուն ժողովրդական սրբավայրերի մեջ հանդիպում են այնպիսիք, որոնց վերաբերյալ դժվար է պարզել, թե դրանք հատկապես ո՞ր սրբին են նվիրված: Երբեմն ոչ գրավոր, ոչ բանավոր տվյալները բավարար չեն լինում հստակեցնելու համար այն հարցը, թե ո՞վ է այն սուրբը, ո՞ւմ անունն է կրում տվյալ սրբավայրը, տոնելի՞ է արդյոք Հայ Առաքելական Եկեղեցու սրբերի մեջ, հայտնի՞ է արդյոք նրա վարքը և այլն:

Այդպիսի սրբավայրերի մի խումբ են ներկայացնում Ս. Դավիթ անունը կրող ժողովրդական սրբավայրերը: Դրանց մասին տեղեկությունները քաղել ենք ինչպես գրավոր աղբյուրներից, այնպես էլ դաշտային ազգագրական նյութերից:

Արևմտյան Հայաստանում գտնվող Ս. Դավիթ սրբավայրերը

Արևմտյան Հայաստանի տարածքում ժամանակին եղած Ս. Դավիթ սրբավայրերի մասին չհաջողվեց բավականաչափ տեղեկություններ գտնել, բացառությամբ Ապրանից Ս. Դավիթ վանքի:

Ս. Դավիթ մատուռ եղել է Տայքում, Խոտորչի շրջանում, Միջին թաղ գյուղի մոտ¹, որի մասին այլ տեղեկություն չհաջողվեց գտնել:

Մեկ այլ Ս. Դավիթ մատուռ կար Շիրակի գավառում, Ներքին Գետիկ (Գեղիքլեր) գյուղի մոտ, բլրի վրա²: Հնում այն եղել է վանական համալիր,

¹ Հակոբյան և այլք 1986, 44:

² Կարս քաղաքից 35 կմ արևելք՝ Անի մայրաքաղաքից հյուսիս, Ախուրյան գետի աջակողմյան վտակներից մեկի ափին գտնվող հայաբնակ Ներքին Գետիկ գյուղը, հմմտ. Եսայան 2014, 32-33:

որն ավերվել է թուրքերի կողմից, և XIX դ. վերջին մնացել էր միայն այս մատուռը: Ոմանց ասելով՝ այստեղ էր գտնվում Արտաշես Ա-ի սահմանաքարերից մեկը՝ ագուցված պատի մեջ: Պատերի ներսի կողմում եղել են արձանագրություններ³:

Եվս մեկ Ս. Դավիթ, այս անգամ՝ վանք, հայտնի էր Քղիի շրջանում: Ըստ ականատեսների՝ այստեղ եղած 7-8 հաստաբուն կաղնիները չէին կտրում՝ չնայած դրանք ամբողջովին փտած էին: Եղել է առաջնորդարան⁴:

Արևմտյան Հայաստանի ամենահայտնի Ս. Դավիթ սրբավայրը գտնվում էր Դերսիմում, պատմական Դերջան գավառի տարածքում: Այն հայտնի էր մի քանի անուններով՝ Ս. Դավթի վանք, Ապրանից Ս. Գրիգորի վանք, Ծակքարի վանք⁵: Դեռևս 1902 թ. այս վանքը շեն էր, ուներ սեփական արտեր, պարտեզ և մեծ այգի: Ավելի վաղ նաև սեփական անտառ է ունեցել, որ վաճառվել էր⁶: Սակայն արդեն մեկ տարի հետո՝ 1903 թ., նշվում է, որ, թեև մի ժամանակ այն եղել էր վարդապետական նստավայր և հանդիսանում էր դերջանցիների պարծանքը, այդուհանդերձ, արդեն լքված էր միաբանության կողմից⁷:

Հյոբեկ լեռան վրա կար երկու վանք. գագաթին էր գտնվում Ս. Դավթ վանքը, իսկ լանջին՝ Ս. Հովհաննեսը: 1903 թ. Կ. Տէր-Խաչատուրյանի այցելության ժամանակ Ս. Հովհաննեսում ապրում էր միայն վանահայրը, իսկ Ս. Դավթը լքված էր: Ս. Դավթ մատուռն ուներ մեկ խորան, իսկ մատուռի հարավային կողմում գտնվում էր Ս. Դավթի գերեզմանը: Մոտը կար չորս խաչքար. մեկը՝ թուրքերեն, երեքը՝ հայերեն արձանագրություններով: Խաչքարերից մեկը կանգնեցնել էր տվել Եփրեմ վարդապետը 1877 թվականին⁸: Այստեղ էին գտնվում նաև յուրահատուկ արվեստով պատրաստված, հայտնի՝ 5-6 մ բարձրությամբ հսկա խաչքարերը, որոնցից երկուսը կանգուն են առ այսօր⁹:

Առավել մանրամասն այս վանքի մասին պատմում է Գ. Հալաջյանը: Դավթի սարի (լեռն անվանվում էր Ս. Դավթ սրբավայրի անունով) և Միանձում լեռան միջև՝ մի լայն սարահարթում էր գտնվում քարաշեն և

³ Հակոբյան և այլք 1986, 44:

⁴ Հակոբյան և այլք 1986, 44, Բաղայան 2016, XXIX:

⁵ Ոսկեան 1951, 159:

⁶ Պալեան 1902, 1:

⁷ Հայկ-Արամ 1903, 1:

⁸ Տէր-Խաչատուրեան 1903, 1:

⁹ Բաղայան 2015, XIII:

պարսպապատ Դավթա վանքը, որից մնացել էին կիսակործան խորանի կառույցը, վեմ քարերի փորագրությունները և վանականների ու ուխտավորների կացարանների փլատակները: Վանքն ուներ մի մեծ գերեզմանատուն, որի տապանաքարերից մի քանիսն արձանագիր էին:

Ամեն տարի աշնանը՝ կալերի ավարտումից հետո, Դերսիմի բոլոր կողմերից եկած հայ և քուրդ ուխտավորները տոնում էին վանքի օրը: Եթե ուխտին ներկա էր որևէ հայ քահանա, ապա քուրդ ռեյպերը, սեփղը և/կամ փիրը մատաղի աղի օրհնությունը զիջում էին հայ քահանային¹⁰:

Հետաքրքրական է, որ այս Ս. Դավիթ սրբավայրերից ոչ մեկի դեպքում նշված չէ, թե ով էր այդ Ս. Դավիթը, որի պատվին անվանվել են մատուռները և նույնիսկ վանքերը: Ապրանից վանքի դեպքում մատուռի հարավային պատի մոտ կար սրբի գերեզմանը, բայց ո՞վ էր այդ սուրբը, նույնպես ոչ մի տեղեկություն չի հայտնվում:

Սակայն Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանի՝ 1691 թ. կազմած քարտեզում նշված է, որ այս սրբավայրը նվիրված էր Դավիթ Դվնեցուն՝ Ս. Դավիթ Դվնեցու գերեզման¹¹: Ըստ պատմական աղբյուրների՝ Դավիթ Դվնեցին թաղված էր Դվինում, այստեղից էլ նրա անունը¹²: Հավանաբար, ժամանակին Ապրանից վանքում էր գտնվում Ս. Դավիթ Դվնեցու մասունքը:

ՀՀ տարածքում գտնվող Ս. Դավիթ սրբավայրերը

Արագածոտնի Փարպի գյուղի տարածքում՝ ճանապարհի ձախ կողմում է գտնվում Ս. Արդար Դավիթ մատուռը: Այն ուշմիջնադարյան կառույց է, որի շուրջ արդեն սկսել է ձևավորվել նոր գերեզմանոց: Մատուռը կարևոր ուխտատեղի չէ, թեև մարդիկ այցելում են այնտեղ. ուխտավորները հիմնականում փարպեցիներ են:

Ըստ գյուղում հայտնի ավանդության՝ այս Դավիթը զորեղ մի մարդ է եղել, որը, կռվելով թուրքերի դեմ, չի թողել նրանց գյուղ ներխուժել: Դավիթը զոհվել է, այդ տեղում կառուցել են այս մատուռը և անվանել նրա պատվին¹³:

Այս տարածաշրջանում դեռևս XX դ. սկզբին տարածված էր Արդար Դավթի մասին ավանդագրույցը: Մինչ օրս Էջմիածին-Օշական ճանապարհ-

¹⁰ Հալաջյան 1973, 23:

¹¹ Սևահյան 2000, 110, քարտեզ XIII:

¹² Ս. Դավիթ Դվնեցուն նվիրված է ևս մեկ սրբավայր, որի մասին կխոսվի ստորև:

¹³ Հովհաննիսյան 2011, ԴԱՆ:

հի աջ մասում՝ Արմավիրի մարզի Դաշտ գյուղի հյուսիսում, բլրի վրա է գտնվում «Արդար Դավիթ» աշտարակը¹⁴։ Ներկայացնենք ավանդությունն ըստ Պ. Պռոշյանի, քանի որ այն առավել ամբողջական է և ժողովրդական պատումին մոտ։

Օշականից ոչ հեռու՝ դեպի Էջմիածին, ձորակի մեջ, քանդված տները կոչվում են *Արդար Դավթի խարաբեք*¹⁵։ Այդ տները շինել է *Դավիթ* անունով ճգնավորը։ Նա շատ եկեղեցասեր, աղոթասեր, խիստ ճգնավոր է լինում՝ միայն աղոթք էր անում ու ծոմ պահում։ Այս տները միտումով էր այսքան հեռու սարքել, որ ամեն օր՝ առավոտյան և երեկոյան, ցրտին ու շոգին, անձրևին ու կարկուտին ոտքով աղոթելով գնա Էջմիածին ու վերադառնա։ Կաթողիկոսը խղճացել, նրան առաջարկել է մնալ Էջմիածնում՝ որպես միաբան, բայց նա չի համաձայնել։ Միաբանները խնդրել են՝ գոնե հետները ճաշի, կրկին մերժել է՝ թե ինքը շաբաթը մի կտոր ցամաք հաց է ուտում, ամբողջ տարին ծոմ է պահում։ Այս մարդու սրբության պատճառով ժողովուրդը նրա անունը դրել էր *Արդար Դավիթ*։

Ինչ-որ մի ժամանակ Էջմիածնի ուսումնարանի աշակերտներից ամեն շաբաթ մեկը կորչում էր։ Միաբանները ուր փնտրում են, չեն կարողանում գտնել կորած աշակերտներին։ Կաթողիկոսը դիմում է *Դավթին*՝ թե արդար մարդ ես, մի ճար արա՝ գտնենք։ *Դավիթը* խորհուրդ է տալիս հսկում, պատարագ անել, գուցե և Աստված օգնի՝ գտնեն։ Կաթողիկոսը հրամայում է ամբողջ շաբաթ հսկում անել, ինքն էլ ծնկաչոք ամեն օր աղոթում էր։ Եվ Աստված լսում է միաբանների աղոթքը։ Մի օր Էջմիածնի վանքում միաբաններն Արդար Դավթի մեջքին կացրած մի թուղթ են տեսնում, որի վրա գրված է լինում. «Ի սե՛ր Աստծու, ինձ ազատեք էս տեղից։ Արդար Դավիթն ինձ խաբելով բերեց իր տունը։ Վաղն ինձ մորթելու է, որ ուտի. իմ բոլոր ընկերներին սա է կերել»։ Արդար Դավթին բռնում են և հենց իր

¹⁴ Մկրտչյան 2017, 112։ Թեև հուշարձանն ավելի մոտ է Դաշտ գյուղին, այն հաճախ նշվում է որպես Այգեշատի տարածքի հուշարձան. տե՛ս Մկրտչյան 2017, 113։ Այգեշատ (Հաջի Դարա) է նշված նաև Թ. Թորամանյանի մոտ՝ Թորամանյան 2013, 261-262։ Հմմտ. նաև՝ Արդար Դավիթ – բլուր (1025,4 մ) Արմավիրի մարզում, Վաղարշապատի տարածաշրջանում, Այգեշատ գյուղի արլ. եզրին, Համառոտ տեղեկատու-բառարան 2007, 17։

¹⁵ Այս աշտարակը՝ որպես երբեմնի կրոնական նշանակություն ունեցող կառույց, դիտարկում է Թ. Թորամանյանը (Թորամանյան 2013, 262)։

տան մեջ վառում: Դավիթը հինգ աշակերտ է կերել. ամեն մեկի ոսկորները հատ-հատ դարսել է իրար վրա ու գրել կերած աշակերտի անունը¹⁶:

Ա. Ղանալանյանի բերած ավանդագրույցում Արդար Դավթին ոչ թե այրում են, այլ քարկոծում, իսկ նրա բնակավայրը ներկայացվում է որպես քարանձավ: Ավանդությունը վերջանում է բացատրությամբ. կեղծ արդար-ներին անվանում են «Արդար Դավթ»¹⁷:

Այս ավանդագրույցի առավել հին տարբերակը պատմում է Մ. Թադիադյանը: Նրա տարբերակում Դավթին բռնում են, նետում էջմիածնի պարսպի հյուսիսային կողմի բուրգի մեջ, որտեղ նա սովամահ է լինում: Ոմանք այդ բուրգն անվանում են նրա անունով. «Արդար Դավթի բուրգ»: Թադիադյանն ունի նաև կարևոր մի հավելում. «ըստ պատմելոյ հինաւորց եպիսկոպոսաց մերոց՝ էր այր սոսկավիթխարի, անձնեայ և ուժեղ քան զամենայն մարդիկ իրումն ժամանակի»¹⁸:

Ինչպես տեսնում ենք, թեև Փարպիի Ս. Արդար Դավթ մատուռը նույն անունն ունի, ինչ այս Արդար Դավթը, սակայն դժվար է ընկալել, որ նման մարդու պատվին կարելի էր մատուռ կառուցել: Մյուս կողմից, սակայն, Թադիադյանի հավելումը, որ Արդար Դավթը հսկա էր¹⁹ և իր ժամանակի բոլոր մարդկանցից ուժեղ, որոշ առումով արդեն մոտենում է Փարպիի ավանդությանը, որտեղ Արդար Դավթը թուրքերի դեմ մարտնչող հզոր հերոս էր: Ինչևէ, այս Արդար Դավթները երկու տարբեր անձեր էին:

Հայաստանի Հանրապետության առավել հայտնի երկու Ս. Դավթ սրբավայրերից մեկը գտնվում է Արարատի մարզի Գետազատ գյուղում, մյուսը՝ Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղում:

Նոր Արմավիրի Ս. Դավթ սրբավայրի մասին Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը տեղեկացնում է. «...Երկարածիգ առապարն Արմաւիր քաղաքի՝ որոյ ի բարձրութեանն գտանին տակաւին հիմունք շինուածոյ մնացեալ ի հին շինութեանցն Արմաւիրայ, ուրանօր ի միջին տեղւոջ գոյ ուխտատեղի յանուն Սուրբ Դաւթայ, ուր գնան մերձակայ բնակիչք յովստ յառաջակայ կիւրակէի սրբոյ Զատկին: Այս տեղի որպէս նկատի

¹⁶ Պոռշեան 1878, 169-172:

¹⁷ Ղանալանյան 1969, 34-35:

¹⁸ Թադիադեանց 1847, 191-194:

¹⁹ Այդ տարածքները, որտեղ գտնվում էր Արդար Դավթի տունը, ժողովուրդն անվանում է Օղուզի (հսկա) տներ (Ղափանցյան 1914, 93, Թորամանյան 2013, 161-162): Այսինքն՝ Արդար Դավթը նույնպես օղուզ էր:

լեալ է յառաջագոյն ի հեթանոսութեան յանուն կոռց, այլ ի քրիստոնէութեան վարդապետք առ ի չկարող լինելոյ արգելով զժողովուրդն ի նախնի սովորութեանց անտի հեթանոսութեան, անուանադրեալ են զտեղին յանուն այնր սրբոյ, այլ թէ որ Դավիթ իցէ՝ չգիտեն: Եւ զի զտեղին սոսկ հասարակ քարամբք հիւսեալ են և ունի փոքր տեղի դրան կարի խոնարհ, ընդ որ ի ծունկս մտանեն ի ներքս և ի միջին տեղւոջ ամրացեալ կայ սիւնաձև վէմ մի իբրև երկու կանգուն»²⁰:

Այս հիշատակության մեջ կարևոր է երկու տվյալ. *նախ*՝ բնակիչները չգիտեն, թե ո՞վ է այդ Դավիթը և ինչի՞ համար է սրբացվել, *երկրորդ*՝ ուխտի օրը Ջատկի հաջորդ շաբաթն է:

XX դ. ընթացքում, ինչպես և մեր օրերում, Նոր Արմավիրի Ս. Դավթի ուխտը շարունակում է մնալ Ջատկին հաջորդող կիրակի օրը (այստեղ՝ Կանաչ-Կարմիր կիրակի):

1970-80-ական թթ. մեծ շուքով էր տոնվում Ս. Դավթի ուխտը. երգելով ու պարելով՝ տարբեր տեղերից գալիս էին լարախաղացներ, ձեռնածուներ: Բազմաթիվ մանրավաճառներ տոնավաճառ էին կազմակերպում: Մատաղացու կենդանիների (գառ, աքլոր, աղավնի) շուրջ շուրջպար էին բռնում: Մինչև մատաղի եփվելը քիչ հեռվում կազմակերպում էին «ծուն նշանակետ ունենալու» մրցույթ: Հաղթողներն իրենց հետ դուլներով ձու էին տուն տանում: Հատուկ այդ օրը սրբավայր էին այցելում *Դավիթ* անունով մարդիկ՝ սրբի օրհնությունը ստանալու համար: Սրբավայրը, ի թիվս այլ հիվանդությունների, նաև կապույտ հազ էր բուժում՝ հիվանդ երեխային 3-7 անգամ անցկացնում էին մատուռի լուսամուտի միջով: Մատուռի մոտի ծառին կանայք իրենց զգեստներից լաթեր էին կապում: Հայրենական պատերազմի ժամանակ կանայք այդ ծառի ճյուղերին կապում էին իրենց կտրած ծամերը՝ ուխտելով, որ իրենց հարազատները անփորձանք վերադառնան պատերազմի դաշտից: Հիվանդները վզից հանում էին երկաթյա մանյակը, որ կրում էին տվյալ խաչի (սրբի) սիրուն ամբողջ տարին և կախում սուրբ ծառից կամ դնում մատուռի մոտ գտնվող շիրմաքարի առաջ: Ամուլ կանայք ծառի ճյուղերից «ճոճք» էին կապում և կախում սուրբ ծառից, մեջը տիկնիկ էին դնում՝ երեխա ունենալու հույսով: Այդ օրը տեղի

²⁰ Շահխաթունեանց 2014, 230:

էին ունենում աղջկատեսներ, երբեմն նշանադրություններ, հին վեճերը լուծվում էին²¹:

Բացի կապույտ հագից, այս մատուռը այլ բժշկող գործառույթներ էլ ունի: Կակազող երեխայի բերանը դնում են մատուռի դռան բանալին և պտտում՝ կակազությունն անցնում է: Նաև վախեցած երեխաներին փոքրիկ լուսամուտից ներս են անցկացնում՝ վախն անցնում է: Երբ գյուղում շատ երիտասարդներ են իրար հետևից մահացել, այստեղ հանրային մատաղ են արել, և այդ արհավիրքը դադարել է: Ուխտավորները յոթ անգամ պտտվում են մատուռի շուրջը և երազանք են պահում, որ կատարվի, իրենց հետ շրջեցնում են նաև մատաղի կենդանուն²²:

Ս. Դավիթ ուխտ են գնում հավասարապես հայերը և ասորիները: Հին ավանդույթի համաձայն՝ ուխտագնացությունից երկու օր առաջ լողանալ չի կարելի՝ լողանում են ուխտի օրը, որ մաքուր դիմավորեն: Ուխտագնացության օրը նաև պարտադիր լվացք են անում: Այս սուրբը նաև սիրահարների հովանավոր է և զավակատու: Մի երիտասարդ կին երազում տեսել է իրեն մատուռում, և այնտեղ մի ծայն ասել է, որ նա տղա է ունենալու, անունն էլ պետք է Դավիթ դնի՝ սրբի պատվին: Սրբավայրը բուժում է նաև գորտնուկներ. մատուռը ավելուց հետո ավելը քսում են գորտնուկներին՝ անցնում է²³:

Մի ավանդության համաձայն՝ մատուռից քիչ հեռու գտնվող տապանաքարի տակ թաղված է մատուռի մասին հոգ տանող առաջին կրոնավոր-սպասավորը²⁴: Ըստ մեկ այլ ավանդության՝ այդ տապանաքարը Ս. Դավթի քրոջ գերեզմանն է: Տապանաքարի վրա բազմաթիվ «մուրազի» քարեր են կպցրած, և այդ ծեսը այնքան վաղեմի է և հաճախ է կրկնվում, որ քարի վրա խոր փոսեր և ակոսներ են գոյացել: Տապանաքարից քիչ այն կողմ մնացել է սուրբ ծառի բնի փոքր մասը, որն ամբողջությամբ պատված է լաթերով:

Ըստ ավանդության՝ Դավիթ անունով մեկը կառուցել է այս մատուռը՝ Արմավիրի երկրաշարժից (խոսքը, գուցե, Ակոռիի՝ 1840 թ. երկրաշարժի

²¹ Դավիթովա 2007-2008, ԴԱՆ: Նյութը տրամադրել է Արաքսյա Ավչիևան, որի համար շնորհակալություն եմ հայտնում:

²² Սիմոնյան, Հովհաննիսյան 2017, ԴԱՆ:

²³ Նյութը տրամադրելու համար շնորհակալություն եմ հայտնում Արաքսյա Ավչիևային. Ավչիևա 2020, ԴԱՆ:

²⁴ Դավիթովա 2007-2008, ԴԱՆ:

մասին է) փվելուց հետո: Ոմանք էլ պատմում են, որ այս Ս. Դավիթը երաժիշտ է եղել՝ հավանաբար ակնարկելով աստվածաշնչյան Դավիթ մարգարեին²⁵:

Գետազատի Ս. Դավիթ սրբավայրը գտնվում է գյուղից դուրս՝ Դվինի հնավայրի ուղղությամբ, *Թագավորի պալատ* կոչվող բլրի տակ. ժողովուրդը այսպես անվանում է Դվինի միջնաբերդը: Մինչև 2015 թ. սրբավայրը բաղկացած էր երկու մատուռից: Աջակողմյան մատուռը հինն է, դրանից ձախ՝ մոտ 10 մետր հեռավորության վրա 70-ական թթ. կառուցվել է տնականման փոքրիկ մատուռ: 2015 թ. մեր այցելությունից հետո հին սրբավայրի հիմքի վրա կառուցել են Ս. Դավիթ եկեղեցին, որն օծվել է և այժմ ունի հոգևոր հովիվ: Ուխտի օրը այստեղ մատուցվում են պատարագներ: Սրբավայրում կատարվում են անհատական մատաղներ՝ հիմնականում աքաղաղ, և հանրային մատաղ՝ գառներ: Ուխտագնացությանը մասնակցում են ոչ միայն շրջակա գյուղերի և Հայաստանի Հանրապետության այլ վայրերից ժամանած հայերը, այլև շրջակա գյուղերում բնակվող ասորիներն ու եզդիները: Ինչպես պատմեցին ուխտագնացության մասնակիցները, 50-ական թթ. Ս. Դավիթը առավելապես ասորական սրբավայր էր, ասորիներն էին այն կառուցել և պահպանում, ուխտի էին գնում, հայերը այն հիմնական ուխտատեղի են դարձրել անկախությունից հետո²⁶:

Ս. Դավթի դիմաց՝ բարձր բլուրներից մեկի վրա է գտնվում Ս. Վարդան զորավարի սրբավայրը, որը հիմնականում այցելում են երիտասարդները: Ս. Դավթի, Ս. Վարդանի և Թուխ Մանուկի ուխտագնացությունները կատարվում են միևնույն՝ Զատկի հաջորդ կիրակի օրը, որն այստեղ կոչվում է *Կարմիր կիրակի*: Ուխտագնացության գլխավոր նպատակը Ս. Դավթին է, իսկ մյուս սրբավայրերին դիմում են ըստ կարիքի ու ցանկության: Ս. Դավիթ գնում են նաև Զատկին հետևող մյուս կիրակիներին և այլ տոներին, ինչպես և տարվա ցանկացած ժամանակ՝ անհատական ուխտերով:

Ըստ ավանդության՝ Ս. Դավիթը եղել է զորավար, որ գյուղից փախցրել է «ջիուդի» աղջկան՝ փրկելով թուրքերից: Մեկ այլ ավանդության համաձայն՝ քրիստոնյա Դավիթը փախել է Դվինի բերդից և նահատակվել այս վայրում, նրան սրբացրել են և իր պատվին կառուցել սրբավայրը: Ըստ

²⁵ Սիմոնյան, Հովհաննիսյան 2017, ԴԱՆ, Արմավիր, Նոր Արմավիր:

²⁶ Սիմոնյան, Հովհաննիսյան 2017, ԴԱՆ, Արարատ, Գետազատ-Մրգանուշ:

երրորդ ավանդության՝ Ս. Դավիթ մատուռը կառուցվել է քրիստոնեություն ընդունած և քարոզած պարսիկ զինվորի նահատակման վայրում²⁷:

Հատկապես երրորդ ավանդությունը հնարավորություն է ընձեռում փորձել ճշգրտելու, թե ով կարող էր լինել այս Ս. Դավիթը: Եվ ահա որոշ պրպտումներից հետո պարզեցինք, որ ըստ տեղացիների՝ «գյուղի դպրոցի ուսուցիչները» գտել են Ս. Դավիթ Դվնեցու վկայաբանությունը²⁸, որն էլ հակիրճ ներկայացնում է գյուղի ժողովուրդը: Սակայն ժողովուրդը շարունակում է ավելացնել որոշ տարրեր, հավելել նոր դրվագներ, և ավանդությունը միտում ունի ճոխանալու, ի հայտ են գալիս նոր տարբերակներ:

Ելնելով այն հանգամանքից, որ Ս. Դավիթ Դվնեցին թաղված է եղել Դվին քաղաքում, եկեղեցին օծելիս այն անվանել են Ս. Դավիթ Դվնեցի, թեև ժողովուրդը մինչև վերջերս սրբավայրն անվանում էր պարզապես Ս. Դավիթ: Ինչպես տեսանք վերևում, Դվինից շատ հեռու՝ Դերջան գավառում ևս կար սրբավայր, որ գոնե XVII դ. հայտնի էր Ս. Դավիթ Դվնեցու անունով, որը, սակայն, մոռացվել է արդեն XX դ. սկզբներին:

Ս. Դավիթ անունով մատուռ է եղել Սյունիքում²⁹: Խոսքը ներկայիս Քաջարան քաղաքի տարածքում եղած սրբավայրի մասին է, որն այժմ գոյություն չունի: Այն գտնվել է Գանձասար լեռան վրա՝ Բաղակա վանք գյուղի տարածքում, որին ադրբեջանցիները կոչել են Փիրդովուդան: Չբեր կանայք գալիս էին սրբի ոտքը՝ զավակ խնդրելու³⁰:

Իջևանի տարածաշրջանի Խաշթառակ գյուղում կա Ս. Դավիթ Մարգարե անունով եկեղեցի: Կառուցվել է ծագումով խաշթառակցի, ռուսաստանաբնակ Արտակ Քամալյանի միջոցներով: Այն օծվել է 2013 թ. և, ի պատիվ նրա զոհված եղբոր՝ Դավիթ Քամալյանի, անվանվել Ս. Դավիթ մարգարե³¹:

Բլրի բարձունքին, որտեղ կառուցվել է եկեղեցին, ժամանակին սուրբ ծառ է եղել, որի շուրջը եղել են նաև հին խաչքարեր՝ Խաշթառակի հայտնի «Խաչի Յալում» սրբավայրը: Խորհրդային կարգերի ժամանակ այդ վայրում կառուցում են Հայրենական պատերազմում զոհվածներին

²⁷ Սիմոնյան, Հովհաննիսյան, Շամամյան 2015, ԴԱՆ:

²⁸ Ս. Դավիթ Դվնեցու մասին մանրամասն՝ աղբյուրներով հանդերձ, տե՛ս Հովհաննիսյան 2018, 68-89:

²⁹ Հակոբյան և այլք 1986, 44:

³⁰ Խանգադյան 1981, 45:

³¹ Սարգսյան 2019, <https://www.aravot.am/2013/05/09/241735/>

նվիրված հուշարձանը, որի համար կտրում են սուրբ ծառը և մեքենաներով հարթեցնում տարածքը: Գյուղացիները մի քանի խաչքարերի բեկորներ տանում են մի քիչ հյուսիս գտնվող բլրի գագաթը և այնտեղ սկսում մոմավառություն ու մատաղ անել, ուստի սրբավայրը նորից կենդանանում է: Եվ այս սրբավայրի տեղում կառուցվում է նոր եկեղեցին³²:

Եզրակացություններ

Պատմական Հայաստանի տարածքում առկա մեկ տասնյակ *Ս. Դավիթ* անունը կրող սրբավայրերից միայն երկուսի դեպքում է հայտնի, թե ով է այդ սուրբ Դավիթը: Գետազատի եկեղեցին կոչվում է Ս. Դավիթ Դվնեցու, իսկ Խաչթառակինը՝ Ս. Դավիթ մարգարեի անունով: Ապրակունիսի Ս. Դավիթ մատուռը (Ապրանից վանք) և դրան կից գերեզմանը գոնե XVII դ. կոչվում էին Ս. Դավիթ Դվնեցու անունով: Մնացած սրբավայրերի դեպքում հայտնի չէ, թե ո՞վ է այդ Դավիթը և ինչո՞ւ է սրբացվել:

Ս. Դավիթ սրբավայրերի մեջ որոշակիորեն առանձնանում է Փարպիի Ս. Արդար Դավիթ մատուռը: Ըստ այս տարածքներում գոյություն ունեցող երբեմնի ավանդության՝ այդ Դավիթը մարդակեր էր, և դժվար թե իր պատվին սրբավայր լիներ: Բայց Փարպիում պատմվում է մեկ այլ ավանդություն, ըստ որի՝ Արդար Դավիթը հսկա զինվոր էր:

ՀՀ-ում ներկայումս ամենասիրված ուխտավայրերից են Գետազատի և Նոր Արմավիրի Ս. Դավիթ սրբավայրերը՝ հայտնի մարդաշատ ուխտագնացություններով, որոնք կատարվում են Զատիկին հաջորդող կիրակի օրը:

Նոր Արմավիրի և Գետազատի Ս. Դավիթ սրբավայրերն իրար է կապում մի կարևոր հանգամանք՝ երկուսն էլ սիրված ուխտավայրեր են հայերի և շրջակա ասորի բնակիչների համար:

Գրականություն

Ավչիկա Ա. 2020, ԴԱՆ, Արմավիր, Արտագերս-Նոր Արմավիր:

Բադալյան Գ. 2015, Արևմտյան Հայաստանի պատմա-ժողովրդական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին, մաս III, «Վէմ» համահայկական հանդես, N 4, էջ I-XLIII:

³² Տեղեկությունը տրամադրելու համար շնորհակալություն եմ հայտնում խաչթառակցի Սասուն Դանիելյանին:

- Բադալյան Գ. 2016, Արևմտյան Հայաստանի պատմա-ժողովրդական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին, մաս IV, «Վէմ» համահայկական հանդես, N 1, էջ I-LI:
- Դավիդովա Գ. 2007-2008, ԴԱՆ, Արմավիր:
- Եսայան Զ. 2014, Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ, Երևան, ԵՊՀ հրատ., 140 էջ:
- Ճանապարհորդություն Մեսրոպյայ Դ. Թաղիադեանց Վ.Ա. սարկաազի սրբոյ Էջմիածնի 'ի Հայս 1847, հ. առաջին, Կալկաթա, Արարատեան ընկերութեան տպ., 382 էջ:
- Թորամանյան Թ. 2013, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների ժողովածու երկու հատորով, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 864 էջ:
- Խանզադյան Ս. 1981, Հայրենապատում, գ. Բ, Երևան, «Հայաստան», 608 էջ:
- Հալաջյան Գ. 1973, Դերսիմի հայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյույություն, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 302 էջ:
- Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ. 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:
- Հայաստանի Հանրապետության Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան (Համառոտ տեղեկատու բառարան) 2007, Երևան, Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՊՈԱԿ, 136 էջ:
- Հայկ-Արամ 1903, Դերջան, «Արեւելք» օրաթերթ, Կ. Պոլիս, 6/19. փետրուար, էջ 1:
- Հովհաննիսյան Կ. 2011, ԴԱՆ, Արագածոտն, Փարպի:
- Հովհաննիսյան Կ. 2018, Ս. Յիզուբուզիտ, Ս. Դավիթ Դվնեցի և Թուխ Մանուկ, «Էջմիածին», Ժ, էջ 68-89:
- Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 557 էջ:
- Ղափանցյան Գ. 1914, Հնութեան մի քանի յիշատակարաններ, «Արարատ», Ա, էջ 93-95:
- Մկրտչյան Լ. 2017, «Արդար Դավիթ». առասպել և իրականություն, «Էջմիածին», Է, էջ 111-116:
- Շահխաթունեանց Յովհաննէս եպս. 2014, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 560 էջ:
- Ոսկեան Հ. Համազասպ 1951, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 234 էջ:

Պալեան Տրդատ եպս. 1902, Մեր վանօրայք, Բիզանդիոն, Կ. Պոլիս, 1/14, հոկտեմբեր, էջ 1:

Պոռեան Պ. 1878, Կոռածաղիկ, Թիֆլիս, Հ. Էնֆիաճեանցի և ընկ. տպ., 350 էջ:

Սարգսյան Ռ. 2019, «Սուրբ Դավիթ մարգարեն»՝ Խաչթառակի բարձունքում, «Առավոտ», մայիսի 9: <https://www.aravot.am/2013/05/09/241735/> (10.03.2020):

Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ. 2017, ԴԱՆ, Արմավիր, Նոր Արմավիր:

Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ. 2017, ԴԱՆ, Արարատ, Գետազատ-Մրգանուշ:

Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Շամամյան Ն. 2015, ԴԱՆ, Արարատ, Գետազատ:

Տէր-Խաչատուրեան Կ. 1903, Երզնկայէն Դերջան, «Արեւելք» օրաթերթ, Կ. Պոլիս, 9/22 սեպտեմբեր, էջ 1:

Ulughogian G. 2000, Un'antica mappa dell'Armenia: Monasteri e santuari dal I al XVII secolo, Longo editore Ravenna, 200 p.

Ս. ԴԱՎԻԹ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Կարեն Հովհաննիսյան

Ամփոփում

Պատմական Հայաստանի *Ս. Դավիթ* անունը կրող ժողովրդական սրբավայրերը քանակով հասնում են շուրջ մեկ տասնյակի: Շատ դեպքերում հնարավոր չէ պարզել, թե ով է այդ Ս. Դավիթը, որի պատվին անվանվել է տվյալ սրբավայրը:

Արևմտյան Հայաստանում ամենահայտնի Ս. Դավիթ սրբավայրը (Ապրանից վանք, XVII դ. նաև՝ Ս. Դավիթ Դվնեցու գերեզման) գտնվում էր Դերջան պատմական գավառում, որի տարածքում էին 5-6 մ բարձրության երկու հսկա խաչքարերը:

Ներկայիս ՀՀ տարածքում առավելապես հռչակված են երկու *Ս. Դավիթ* սրբավայրեր: Դրանցից մեկը գտնվում է Արարատի մարզի Գետազատ գյուղի տարածքում և նվիրված է Ս. Դավիթ Դվնեցուն: Սա այն հազվագյուտ դեպքերից է, երբ հստակ հայտնի է, թե ով է Ս. Դավիթը: Երկրորդը Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղի տարածքում է և որպես ուխտավայր հիշատակվում է XIX դ. սկզբներից: Սրանք կարևոր և սիրելի ուխտավայրեր են ինչպես հայերի, այնպես էլ ասորիների համար: Այս երկու սրբավայրերի ուխ-

տազնացության օրն է Զատիկի հաջորդ կիրակին: Այսօր էլ բազմամարդ ուխտազնացությունների ընթացքում կատարվում են զանազան ծեսեր՝ որոշ նպատակներով:

Առանձին տեղ է գրավում Փարպիի Արդար Դավիթ մատուռը: Նշենք, որ այս պարագայում պարզորոշ չէ՝ արդյո՞ք այն կրում է ավանդազրույցներից հայտնի մարդակերի անունը: Համենայն դեպս, Փարպիում այլ ավանդություն են պատմում, համաձայն որի՝ այս Արդար Դավիթը քաջ ռազմիկ էր:

Բանալի բառեր՝ Ս. Դավիթ, Արդար Դավիթ, սրբավայր, ուխտազնացություն, ավանդություն, վանք, ասորիներ:

СВЯТИЛИЩА СВ. ДАВИДА НА ТЕРРИТОРИИ ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ

Карен Оганнисян

Резюме

В Западной Армении самое известное святилище, названное именем Св. Давида – это Априаниц ванк, в XVII в. почитаемое как могила Св. Давида Двнеци, и находившееся в историческом районе Дербиджан, на территории которого были установлены два (5-6 м) хачкара.

На территории современной РА имеются два святилища Св. Давида. Одно из них – в селе Гетазат Араратской области (святилище Св. Давида Двнеци). Это один из тех редких случаев, когда доподлинно известна личность этого святого. Второе святилище расположено в селе Нор Армавир Армавирской области и упоминается с начала XIX в. Оба святилища – излюбленные места паломничества как для армян, так и ассирийцев. Паломничество совершается в первое воскресенье после Пасхи и сопровождается обрядами, преследующими конкретные цели.

В ряду этих святилищ особняком стоит часовня Ардар (Праведный) Давид в с. Парпи. Согласно одной из легенд, часовня, якобы, названа именем людоеда. Однако жители села Парпи рассказывают другую легенду, называющую Ардар Давида отважным воином.

Ключевые слова – Св. Давид, Ардар Давид, святилище, паломничество, легенда, монастырь, ассирийцы.

SANCTUARIES BEARING THE NAME OF ST. DAVID ON THE TERRITORY OF HISTORICAL ARMENIA

Karen Hovhannisyan

Abstract

A group of sanctuaries are known thus far bearing the name of St. David. There are about ten sanctuaries of the kind but often it is impossible to clear up who that St. David was, to whom the given sanctuary is devoted.

The most prominent sanctuary of Western Armenia devoted to St. David (the monastery Apranits, XVII century, known as St. David of Dvin) was in the historical region Derjan, on the territory of which two well-known huge (5-6 m of height) khachkars were erected.

Within the boundaries of the contemporary RA there are two most popular sanctuaries named St. David. One of them is situated in the vicinity of the village Getazat of Ararat region and is devoted to St. David of Dvin. This is one of the rare cases when it is certain who the saint of the sanctuary is. The second one is in the village Nor Armavir (Armavir region). That is a prominent pilgrimage site and is mentioned since the beginning of the XIX century. The both over mentioned sanctuaries are significant and beloved pilgrimage sites both for Armenians and for Assyrians of Armenia. The pilgrimage holiday for the both is the Sunday following Easter. In our days these sanctuaries maintain their mass pilgrimage in the frame of which versatile rites having special purposes are executed.

A different case is the chapel Ardar (Righteous) David of the village Parpi, in the case of which it is not quite clear if it bears the name of the ogre described in legends. Nevertheless, in Parpi a different legend is told about the brave warrior Righteous David.

Key words – St. David, Ardar David, sanctuary, pilgrimage, legend, monastery, Assyrians.

«ԺԵՆԳՅԱԼՈՎ ՀԱՅԸ» 2020 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ¹

Ռուզաննա Ծատուրյան

Գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ ruzanna.tsaturyan@iae.am

Ռոման Հովսեփյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ roman.hovsepyan@iae.am
Հոդվածը ներկայացվել է 17.02.2021, գրախոսվել է 14.03.2021,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-305

Ներածություն

Ժենգյալով հացը վայրի և մշակովի ուտելի բույսերով պատրաստված միջուկով թխվածք է, որը տարածված է Արցախում, Սյունիքում²՝ առավելապես Գորիսի և Կապանի շրջաններում, և Վայոց ձորում: Ժենգյալով հացի միջուկի համար օգտագործում են վայրի և մշակովի ուտելի տարբեր բույսեր, որոնց տեսականին փոփոխվում է ըստ սեզոնայնության և առկայության³:

Ժենգյալով հացն ընկալվում է որպես արցախյան ինքնության բաղադրիչ և դեռևս մինչպատերազմյան տարիներից օգտագործվում է Արցախում և Արցախից դուրս կազմակերպվող տարատեսակ միջոցառում-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-053 ծածկագրով գիտական նախագծի շրջանակում:

² Ուշագրավ է, որ Ժենգյալով հացը, լինելով նաև Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համար տիպական, մեծ հանրայնություն վայելող և սիրված ուտեստ պատերազմի օրերին չհիշատակվեց որպես այդպիսին, սակայն դրա մասին սկսեցին խոսել պատերազմի ավարտից հետո (տե՛ս հոդվածի վերջում գտնվող Ինտերնետային աղբյուրների (I) ցանկի I 93, 102, 107 հղումները):

³ Ժենգյալով հացի միջուկում օգտագործվող բույսերի մասին տե՛ս Ծատուրյան 2009, 36-38, Цатрян, Меликян 2010, 34-38, Ծատուրյան 2014, 34-38:

ներում և նախաձեռնություններում՝ ներկայացվելով որպես արցախյան ինքնության, մշակույթի և ավանդական խոհանոցի խորհրդանիշներից մեկը (11-4 և այլն): Այն խորհրդանշական դեր ունեցավ նաև 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի ընթացքում, երբ ադրբեջանական զինված ուժերը հարձակում գործեցին Արցախի Հանրապետության ողջ տարածքում: Ռազմական գործողությունների հետևանքով Հայաստանի Հանրապետություն տեղափոխվեցին Արցախի խաղաղ բնակիչները՝ հիմնականում կանայք, երեխաներ և տարեցներ: ՀՀ միգրացիոն ծառայության տվյալներով՝ պատերազմի ընթացքում Հայաստան են տեղափոխվել շուրջ 90,000 արցախցիներ⁴: Նրանք հանգրվանել են Երևանում, Սյունիքում և ՀՀ այլ մարզերի գյուղերում ու քաղաքներում: Տեղահանվածների՝ ՀՀ-ում տեղաբաշխման, կացարանով, սննդով, հագուստով ապահովելու գործընթացը պաշտոնապես կանոնակարգվում էր ՀՀ կառավարության կողմից: Աղետի ու ճգնաժամի, մարդկանց զանգվածային տեղահանությունների այս իրավիճակում Հայաստանում տարբեր հանրային և անհատական նախաձեռնություններ առաջացան, որոնց նպատակն էր տեղահանված արցախցիներին կացարանով ապահովումը, կենցաղի կարգավորումը և եկամտի աղբյուրների ստեղծումը, ինչպես նաև ապրումակցումը և հոգատարությունը (110): Արցախցիների համար եկամտի հնարավորություն էր ստեղծվում հիմնականում Արցախից տեղափոխված կանանց «մշակութային, կենցաղային»՝ խոհարարական, ստեղծագործական, արհեստագործական հմտությունները կիրառելու կամ բարեգործական տարբեր առաջարկների վերածելու «համերաշխության նախաձեռնությունների»⁵ շնորհիվ:

Զուգահեռաբար սկսեցին կազմակերպվել Արցախի, արցախցիների, հայկական բանակի և զինվորների աջակցությանն ուղղված տարատեսակ ձեռնարկատիրական միջոցառումներ, որոնց շարքում առանձնացան Ժենգյալով հացի արտադրության և իրացման հարցերը: Ժենգյալով հացի արտադրությամբ ձեռնարկատիրական նախաձեռնությունները պարտադիր իրագործվում էին, իսկ որոշ դեպքերում համակարգվում էին Արցախից տեղահանվածների մասնակցությամբ:

Արցախյան խոհանոցի ուտեստները հաճախ դառնում էին այս նախաձեռնությունների առանցքը: Ընդ որում, հետաքրքրական է արցախյան

⁴ Արցախից տեղահանված և Հայաստան ժամանած անձանց տվյալների հավաքում, 2020.12.18, migration.am/news/412

⁵ Evangelinidis 2016, 3.

խոհանոցի ուտեստների ընտրությունը՝ ժենգյալով հաց, թթվեցրած բանջարեղեն, փախլավա, կուրկուտ՝ ցորենով և մսով շիլա, թխվածքներ, գաթա, բուսական թեյեր, մրգեր, գինիներ (աղ.), որոնց մի մասն արդեն ճանաչելի և պահանջված էին Հայաստանում, իսկ որոշներն էլ՝ նորությամբ պայմանավորված՝ նոր պահանջարկ էին առաջացնում:

Ուտեստին և փախստականներին, տեղահանվածներին, հակամարտությունից տուժածներին առնչվող հետազոտությունները արդիական են, քանի որ 2020 թ. կեսերի տվյալներով աշխարհում մոտ 80 մլն մարդ բռնի տեղահանված է⁶: Ուտեստը բռնի տեղահանվածների, փախստականների համար կատարում է կարևորագույն դեր ինչպես տնտեսական, այնպես էլ հոգեկան, զգայական իմաստով՝ կառուցում և վերաստեղծում, վերահաստատում է նրանց ինքնությունը, ինչպես նաև հիշեցնում է ժամանակները, երբ նրանք դեռ ամբողջապես ապահով էին ու տանն էին⁷:

Հետազոտության առարկան և մեթոդները

Ուսումնասիրվել է 2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքում Հայաստանում, մասնավորապես, Երևանում և առցանց միջավայրում «ժենգյալով հացի» հանրայնացման և սոցիալական, տնտեսական նախաձեռնություններում ներառման երևույթը:

Հոդվածի համար հիմք են դարձել անմիջական ազգագրական դիտարկումները՝ առաջարկվող ծառայություններից օգտվելու, առաջարկի ընթացքին հետևելու միջոցով և դաշտային հետազոտությունները (հարցումներ, հարցազրույցներ), առցանց մեդիա հարթակներում, մասնավորապես, Facebook սոցիալական ցանցում գրանցված ժենգյալով հացին առնչվող նյութերը, հրապարակումները (աղ.), որը հնարավորություն է տվել ներկայացնելու երևույթի ընդգրկումը, զարգացումները և նախնական վերլուծությունը: Աղյուսակում և օգտագործված 107 աղբյուրների մանրամասն ցանկում ներկայացված են ժենգյալով հացին առնչվող 40 հանրային նախաձեռնությունները, դրանց հեղինակները/իրականացնողները,

⁶ Mid-Year Trends 2020, UNHCR; 80 million forcibly displaced people worldwide, UNHCR's Refugee Population Statistics Database, 2020.

⁷ Anderson 2005, 186-208, Holtzman 2006, 361-378, Harbottle 1997, 175-186, 2004, 1-196, Searles 2002, 55-78, Lupton 1994, 668, Avakian 2005, 257-280, Sutton 2001, 1-211, Tsaturyan 2017, 30-40, Ծատուրյան 2014, 20-30:

ինչպես նաև նպատակն ու մասնակիցների շրջանակը, ինչը հնարավորություն է տալիս գրանցված դաշտային նյութերի նախնական համակարգման՝ հետագա համալրման և վերլուծությունների համար:

Նյութերը գրանցվել են 2020 թ. սեպտեմբեր – 2021 թ. հունվար ամիսների ընթացքում: Նյութերի գրանցման, հարցազրույցներ անցկացնելու համար սահմանափակող դեր են ունեցել պատերազմից տուժածների վիճակի զգայունությունը, ճշգրտող հարցերից խուսափելը, լարվածություն ու անվստահություն չառաջացնելու մոտեցումները, Ժենգյալով հացի մասին Ֆեյսբուքում կատարված որոշ գրառումների՝ հետագայում հեռացվելու հանգամանքը, ինչպես նաև COVID 19-ով պայմանավորված սահմանափակումներին հետևելը:

Ստացված արդյունքները և դրանց քննարկումը

Իրադարձությունների բնույթը և նպատակը

Պատերազմի ընթացքում ձևավորվեցին Ժենգյալով հացին վերաբերող տնտեսական, սոցիալական և մշակութային նախաձեռնություններ: Տնտեսական նախաձեռնությունները ներկայացված էին Ժենգյալով հացի արտադրությամբ և վաճառքով: Մեր դիտարկումները և գրանցած ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ այդ նախաձեռնությունների սկզբնական պատճառը, շարժառիթը և նպատակը սոցիալական էին՝ զբաղմունք ապահովել տեղահանված արցախցի կանանց համար⁸, որոշակի ֆինանսական եկամուտ ապահովել Ժենգյալով հացի արտադրությունում ներառված տեղահանված արցախցիների համար և/կամ եկամուտ ստանալ և դա ուղղորդել արցախցիներին (կամ բանակին) աջակցելու տարատեսակ նախաձեռնություններին (146, 111): Պատերազմի օրերին Ժենգյալով հացի արտադրության և իրացման դիտարկված նախաձեռնությունները բնույթով ավելի մոտ էին սոցիալական ձեռնարկատիրությանը, որն օգտագործում է ձեռնարկատիրական, բիզնեսավարման լուծումները՝ սոցիալական խնդիրների լուծման նպատակով⁹ և միավորում է առևտրա-

⁸ Օրինակ՝ «Արցախի ներուժն օգտագործելով ի շահ Արցախի՝ մի քանի հարց է լուծվում՝ կանանց զբաղվածություն, աշխատանքը՝ որպես վերականգնողական միջոց և ֆինանսական կայունություն» (152):

⁹ Սոցիալական ձեռնարկատիրությունը երկույթ է, երբ «քաղաքացիները մոբիլիզացնում են իրենց մասնավոր կամ հանրային, կորպորատիվ ռեսուրսները՝ հանրային արժեք ստեղծելու համար», Chandra, Paras 2020, 1-22:

յին և հումանիտար մոտեցումները¹⁰ ուղղորդվելով տուժածներին օգնելու ցանկությամբ, ի տարբերություն բիզնես նախաձեռնությունների՝ առաջին պլան չմղելով շահույթը, օգուտը կամ ռիսկերը:

Ժենգյալով հացի նախաձեռնությունների ժամկետները

Արցախյան պատերազմի օրերին ժենգյալով հացի նախաձեռնությունները երևան եկան հոկտեմբերի առաջին տասնօրյակում՝ պատերազմի սկսվելուց մոտ երկու շաբաթ հետո, և աստիճանաբար մարեցին պատերազմի ավարտից և արցախցիների մեծ մասի հայրենիք վերադառնալուց հետո՝ հիմնականում մինչև 2021 թ. հունվար ամիսը (աղ.): Մեղիա նյութերի վերլուծությամբ Հայաստանում հոկտեմբերի 10-ին արդեն հանրայնացվում էր Դիլիջանի Հովեր հյուրանոց-ռեստորանի՝ ժենգյալով հաց թխելու *Zhengyal forever!* (I12) նախաձեռնությունը, իսկ դրա հաջորդ օրը տեղի ունեցավ Նոր Հաճընի մշակույթի տանը քաղաքի երիտասարդական թիմի կողմից կազմակերպված «Ողջ հասույթը զինվորին» ժենգյալով հացի փառատոնը (I14), որոնց ընթացքում թխված և վաճառվող ժենգյալով հացը մեծ հանրայնություն էր վայելում: Այս նախաձեռնությունները առաջիններից էին, որոնց հետևեցին ուրիշները ու դրանց մասին տեղեկատվության տարածումը: Իսկ հունվարին ժենգյալով հացի արտադրությամբ և վաճառքով զբաղվող ընդամենը մի քանի սննդի կետեր էին մնացել (աղ.):

Ժենգյալով հացի նախաձեռնությունների տեղը և տարածքը

Սոցիալական ձեռնարկատիրական նախաձեռնությունները՝ ժենգյալով հացի արտադրությունը կամ վաճառքը, հաճախ առաքումով, իրականացնում էին.

- բացօթյա վայրերում,
- տեղահանված արցախցիների հանգրվանած վայրերում,
- հանրային սննդի ցանցերում և մթերային խանութներում,
- բարեգործական տոնավաճառներում (աղ.):

Ժենգյալով հացի բացօթյա թխման ու վաճառքի կետեր բացվեցին Երևանի կենտրոնական փողոցներում՝ Աբովյան փողոց, Հյուսիսային պողոտա, Իսահակյան փողոց, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի գյուղատնտեսական շուկայի մոտակայքը: Այս տարածքները ծածկով

¹⁰ Battilana, Lee 2014, 397-441.

բացօթյա տաղավարներ էին՝ ներսում հարմարեցված լայն, հարթ մետաղական տաքացվող մակերեսներով՝ վառարաններով¹¹ և սեղանի մասով առանձնացված էին գնորդներից (նկ. 1): Վաճառքի համար հաճախ օգտագործվում էին համացանցային հարթակները, հիմնականում Facebook սոցիալական ցանցը, ինչպես նաև սննդի կետերի, ռեստորանների և խանութների կայքերը (աղ.):

Ժենգյալով հացը որպես Արցախի խորհրդանիշ ներկայացնելը. արցախյան ավանդական ուտեստ և ինքնության բաղադրիչ

Ժենգյալով հացը որպես արցախյան ինքնության բաղադրիչ է ընկալվում Արցախում և Արցախից դուրս՝ կապված Արցախի պատմությունը, մշակույթը և լանդշաֆտը որպես ինքնություն ներկայացնելու հետ: Պատերազմական շրջանում Ժենգյալով հացի արտադրության ու վաճառքի իրական և առցանց տարածքները վաճառքի և խոհարարական-արտադրական միջավայրերից դարձել էին գաղափարական միջավայրեր՝ ներկայացնելով արցախյան ինքնության բաղադրիչ-ձևավորումներ, ինչպես, օրինակ, Արցախի և Հայաստանի դրոշները, քարտեզը, «Մենք ենք, մեր սարերը» (պապիկ-տատիկի) արձանը, Արցախը ներկայացնող պատկերները, լուսանկարները՝ նախաձեռնության շնորհիվ ստացած շահույթից վիրավորված զինվորներին կամ փախստական ընտանիքներին օգնության դրվագներով, Արցախի հետ կապված ապրանքների ցուցադրություն և վաճառք (պահածոներ, մթերք, նկարազարդ պայուսակներ և այլն), ինչպես նաև պատերազմի պաշտոնական կարգախոսներից #Artsakh, #Հաղթելուենք, #RecognizeArtsakh, #withArtsakh, #womenforArtsakh, #withoursoldiers, #Հաղթական Ժենգյալ և այլ հեշթեգեր, որոնք կարծես ամբողջացնում ու հիմնավորում էին վաճառքի իրական և վիրտուալ տարածքների նշանակությունն ու նպատակը (նկ. 1, 2, աղ.): Ժենգյալով հացը որպես արցախյան ավանդական ուտեստ, արցախյան մշակույթի բաղադրիչ և արցախցիների ինքնության մաս ներկայացնելը և Արցախի, արցախցիների և բանակի աջակցությանն ուղղված գաղափարախոսությունը ակտիվ շրջանառվում էր նաև համացանցում: Վիրտուալ տարածքները և Ժենգ-

¹¹ Արցախում Ժենգյալով հացը սովորաբար տնային պայմաններում թխում են ուռուցիկ կլորավուն մետաղյա սկավառակի՝ սաջի վրա: Մեղիա նյութերում ներկայացվում էին պատմություններ, երբ Արցախից տեղահանված կանայք իրենց հետ բերել էին նաև այս սաջերը՝ Հայաստանում Ժենգյալով հաց թխելու մտադրությամբ (156):

յալով հացի մասին լրագրողական նյութերը, այնուամենայնիվ, ավելի մեծաքանակ և հարուստ էին արցախյան ինքնության բաղադրիչ-ձևավորումներով, որովհետև չունեին տարածքի ֆիզիկական սահմանափակության խնդիր և ունեին տեքստային ու պատկերային (հեշթեգեր, էմոջիներ, նկարներ, վիդեոներ) դրսևորման հնարավորություն:

Հատկանշական են հասարակության և սպառողների կողմից վերոհիշյալ ներկայացման անվերապահ ընդունելությունը և աջակցությունը, որ դրսևորվում էին ժենգյալով հաց գնելու ցանկություն ունեցող մարդկանց ակտիվությամբ ու քանակով, գնումների ընթացքում նվիրաբերություններով, արտադրող արցախցիների նկատմամբ ցուցաբերած ապրումակցությամբ և սատարմամբ (I21, 24, 31 և այլն, տե՛ս նաև աղ.): Նշված գաղափարախոսությունը ակտիվ զարգացում ունեցավ նաև մեդիանյութերում, որոնք լրիվ համահունչ էին ժենգյալով հացի արտադրությամբ և վաճառքով զբաղվող նախաձեռնությունների գաղափարախոսությանը: Այսպես՝ Facebook-ում արված և այլ համացանցային գրառումներում ու պատկերային նյութերում, ինչպես նաև լրագրողական հաղորդումներում պատերազմի օրերին ժենգյալով հացը ներկայացնում էին որպես «Արցախի ամենահայտնի ուտեստ» (I26,69), «Արցախի ամենահամեղ այցեքարտ» (I14), «Արցախի համը» (I100), «ավանդական դարաբաղյան ուտեստ» (I29), «Արցախի խորհրդանիշ» (I24, 96, 33), «Արցախի խոհանոցի բրենդ» (I16) և այլն (աղ., նկ. 2): Պատերազմի օրերին ժենգյալով հացի հետ հիշատակվող արցախյան այլ ուտեստների շարքում առաջատարը փախլավան էր [19 տեղ նշվել է այլ ուտեստ, որոնցից 14-ի դեպքում փախլավան է նշվում (աղ. 1)]:

Վերոհիշյալ համատեքստում ժենգյալով հացի գնումը հավասարեցվել էր Արցախին, արցախցուն և բանակին/զինվորին օգնությանը: Նախաձեռնության կազմակերպիչները իրենց գրառումներում և լրագրողներն իրենց հաղորդումներում պատերազմի օրերին հատուկ նշում էին, որ շահույթը ամբողջությամբ կամ մասամբ ուղղվելու է «Հայաստան» համահայկական հիմնադրամ, բանակ կամ զինվորներին և արցախցիներին (40-ից 28-ը): Հայրենասիրական բնույթի, մասնավորապես, Համահայկական հիմնադրամին կամ բանակին օգնելու մասին գրառումները նոյեմբերի 10-ից՝ պատերազմի ավարտից հետո դադարեցին (աղ.): Նույն կերպ լրագրողական նյութերից անհետացան սատարելու մասին նշումները, ֆեյսբուքյան համապատասխան գրառումները սկսեցին պակաս հավանություններ և սատարող մեկնաբանություններ ստանալ (աղ.):

Ժենգյալով հացի նախաձեռնությունների մասնակիցները և իրականացնողները

Ժենգյալով հացի ապրանքայնացման նախաձեռնությունները իրականացնում էին տարբեր հասարակական կամ բիզնես կազմակերպություններ՝ հանրային սննդի, բարեգործական կազմակերպություններ, խանութներ, ռեստորաններ, հյուրատներ, անհատական սոցիալական և բիզնես նախաձեռնություններ (աղ.)։ Բոլոր նախաձեռնություններում ժենգյալով հաց թխողները բացառապես կանայք էին։ Պատերազմի օրերին կատարված ինտերնետային, ներառյալ ֆեյսբուքյան և լրագրողական նյութերում գրեթե պարտադիր նշում էին, որ այն պատրաստել են արցախցի կանայք (40-ից 31-ը, աղ.)։

Ընդհանրապես¹² և մասնավորապես Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում կանայք բռնի տեղահանվածների ամենամեծ ու ամենախոցելի խումբն են, որոնք ուղեկցում են երեխաներին և ծերերին, բախվում են միջավայրի, իրադարձությունների կտրուկ փոփոխությանը, եկամուտ և կացարան գտնելու խնդիրներին, կենցաղային հոգսերը արտասովոր, ճգնաժամային վիճակներում լուծելու մարտահրավերներին։ Տեղահանված կանանցից շատերը, բացի բուն տեղահանության հուզական վիճակից, նաև ունենալով պատերազմական գործողություններին մասնակցող ընտանիքի անդամ տղամարդիկ՝ ամուսիններ, որդիներ, եղբայրներ, հայրեր և այլն, իրենց մտահոգությունները, անհանգստությունները, վախերն ու ապրումները ստիպված են լինում զուգակցել տեղահանության հետևանքով առաջացած կոնկրետ իրավիճակների և խնդիրների հաղթահարմանը՝ դրանով կրելով բազմաբաղադրիչ հոգեկան և տնտեսական պարտավորություններ և բեռ։ Այս բոլոր պարտականություններով և ապրումներով հանդերձ, լինելով տնտեսապես առավել խոցելի և սթրեսային վիճակում¹³, կանայք «ճկունության անտեսանելի ուժ են» և կարողանում են հարկադրված հարմարվել նոր սոցիալական և բնական միջավայրին՝ հենվելով ավանդական գիտելիքի վրա և կատարելագործելով հմտությունները՝ դժվարություններին ժամանակ¹⁴։

¹² Brickell, Speer 2020, 131.

¹³ Ghimire 2011, 30-43.

¹⁴ Alam, Rahman 2017, 698.



Նկ. 1. Ժենգյալով հացի պատրաստման և վաճառքի կրպակ Հյուսիսային պողոտայի և Աբովյան փողոցի հատման մասում (31.10.2020, 14.11.2020, աղ., N 5)



Նկ. 2. Ժենգյալով հացը Արցախի, արցախցիների և արցախյան ինքնությանը, իսկ դրա իրացումը արցախցուն աջակցելուն առնչվող վաճառքի պատկերային գովազդի օրինակներ (171 - 12.11.2020, 143 - 28.10.2020)

Պատերազմի առօրեականության երկարատև փորձով պայմանավորված՝ Արցախի կանայք հանրային դերեր վերցնելու, պարբերաբար պաշտպանության խնդիրներով բացակայող տղամարդկանց դերերը լրացնելուն պատրաստակամ կերպար և հմտություններ ունեին, որը նրանց ավելի ճկուն դարձրեց նաև 2020 թ. պատերազմի ժամանակ:

Աղյուսակ

Ժենգյալով հացի նախաձեռնությունները և դրանց բովանդակությունը 2020 թ.
Արցախյան պատերազմի օրերին

Նախաձեռնության անուն կամ կազմակերպիչ *	Հիշատակումներ				
	Այլ ուսեռներ**	Պատրաստողները՝ արցախցի կանայք	Օգնություն Արցախին, արցախցիներին, զինվորներին, բանակին ևն	Պատերազմ	Հասարակական սատարում
1. Ժենգյալով հաց FB (I6-7,33)		+	+	+	+
2. Haterk Food FB (I8-9)	մղ, գն	+	+	+	
3. Հովեր հյուրանոց և ռեստորան (I12,13,17-19,22,23,29,34)	փ, մղ,թթ, ջմ,	+	+	+	+
4. Նոր Հաճրնի երիտասարդական թիմ (I14-16)		+	+	+	+
5. Հյուսիսային պողոտայի (կամ Աբովյան-Արամ փողոցների խաչմերուկի) կետ (I21,24,25,27,30,42), Հայաստանցի մի քանի երիտասարդներ	փ, գթ, թկ, իլ, չր	+	+	+	+
6. Կ/թ «Մոսկվայի» դիմացի կետ (I40,94)	փ	+	+	+	+
7. Սարյան փ. x Մաշտոցի պ. այգում (I77)	փ, գթ, թթ	+	+	+	+
8. Կասկադի կետ, «Ապագան հիմա է» (I90,99)	թթ,փ,գթ, կտ	+	+	+	+
9. Մաչանենց մշակութային կենտրոն (I67)	թկ, կճ	+	+	+	+
10. Ստեփանակերտի շուկա (I20)			+	+	
11. Fauna Family Restaurant, FB (I26)	կտ, փ	+			
12. «Հերոսապատումներ Ժենգյալով հացի շուրջ» (I28)		+			
13. Ժենգյալով հաց, FB (I32)		+	+	+	+
14. Ժենգյալով, FB (I38,66,73)		+	+	+	+
15. Էստոնիայում հայկական համայնք, FB (I35)	փ, գթ, ղփ, քբ, գն		+	+	
16. Վարդենի, FB (I39,72)	փ, գթ	+	+		
17. Մարտունեցի կանայք Բյուրեղավանում (I44)		+	+	+	
18. Երևան, FB (I45)			+	+	
19. Արցախի Բարիքներ /Artsakhi Bariqner, FB (I47,96)	փ, գթ, թթ, գն ևն	+	+	+	+
20. GetAp Resort Arzni, FB (I50)	փ, թթ, կտ	+			
21. Ժենգյալով հաց Աբովյանում, FB (I49)	փ, գթ				
22. Մեր Տունը Ռեստորան - Mer Toune Restaurant, FB (I51)		+	+	+	+
23. Salad is սոցիալական ձեռնարկություն, FB (I36,37,42,43, 52,53,57)	թթ ևն	+	+	+	+
24. Sarin's Արցախյան կոլորիտով կտորե պայուսակների արտադրություն (I54)			+	+	+
25. «ԴԵՊԻ ԼՈՒՅՍ» կրոնական կազմակերպություն, FB (I55-56)		+	+		+
26. «Արցախը Երևանում» անունով արցախյան ապրանքների տոնավաճառ (I76), Ոստան ռեստորան, FB (74,78,81,86,97)	փ, գթ, քգ, թ	+	+		+
27. Telcell, Արցախցիներից՝ արցախցիներին, FB (I58)		+	+		
28. Մանան Դաֆին, FB (I69)	փ, գթ	+	+	+	+
29. Դադիվանքի անուշներ, FB (I70,71)	փ, գթ, քղ	+	+	+	+
30. Boqonik bakery, FB (I76)		+			
31. Armenian Cooking, Արմինե Թոր (I80)			+	+	
32. Koriz (գլուխթեթք անմիջապես գլուղացուց), FB (I82)		+			

33. Dalma Garden Mall, «Արցախի գույները» տոնավաճառ, FB (I85,91)	փ	+			
34. Future is Now (a Yerevan-based humanitarian NGO) Machar 44 բարեգործական ռեստորանում, FB (I87,88)	փ, գթ, թթ	+	+		
35. Pier 28 ռեստորան, FB (I59-65,89,92,98)	թթ, մղ, գն, փ, թկ, կտ, գվ	+	+	+	+
36. Anna Isakhanyan, I am Arm Vegetarian~, FB (I95)					
37. Taste of Artsakh, FB (I68,100,105,106)		+		+	+
38. Ստեփանակերտի շուկա (I101)		+		+	
39. Ժենգյալով հաց, FB (I104)					
40. Ուրիշ Ժենգյալ / Oureesh zhengyal, FB (I84,103)		+	+	+	+

Հայալուսներ. * FB – Facebook, ** փ – փախլավա, թթ – թթուներ, քղ – քաղցրավենիք, գթ – գաթա, մղ – մեղր, գն – գինի, թկ – թերթերուկ, հլ – հալվա, չր – չրեր, թյ – թեյեր, կտ – կտրկուտ, ղփ – ղափամա, կճ – կճախաշ, քգ – քյալագոշ, քբ – քյաբաբ, գվ – գլիտվեյն:

Արցախցի կանանց տարատեսակ գործունեություններում ներկայացվածության առումով նկատելի էին տարիքով պայմանավորված որոշ տարբերություններ: Երիտասարդներն ավելի շատ զբաղվում էին հանրայնացման, գովազդի, առաքման գործերով, իսկ տարիքով կանայք, որպես ավանդույթներին տիրապետողներ և հետևողներ, ներգրավված էին «ճիշտ» կամ «իսկական» ժենգյալով հաց պատրաստելու գործում (աղ.): Միաժամանակ՝ ավագ սերնդի կանանց համար հասարակայնորեն ավելի ընդունելի էին հանրային դիսկերից ազատված գործունեության մեջ ընդգրկված լինելը, հանրային ակտիվ հաղորդակցություն ենթադրող դերեր ստանձնելը:

Ժենգյալով հացի միջուկը

Ժենգյալով հացի միջուկը Արցախում պատրաստվում է մինչև 32 վայրի և մշակովի բուսատեսակներից¹⁵ վայրի. թրթնջուկ (*Rumex acetosa*), ըվիլուկ (ավելուկ, *Rumex crispus*), պոլապորտ (կավաժիպակ, *Anchusa azurea*), սիմսիմոկ (անմոռուկ, *Myosotis arvensis*), ճրճոռոկ (աստղիկ, *Stellaria media*), կոնանջուկ (ծվծվուկ, *Silene alba*), ծրտըպաշար (հովվամաղախ, *Capsella bursa-pastoris*), կնձմնձուկ (կերբելուկ, *Anthriscus cerefolium*), սիբեղն (սիբեխ, *Falcaria vulgaris*), խազազ (սոխ տարորինակ, *Allium paradoxum*), շիրիշ (շրեշ, *Eremurus spectabilis*), պուտուտկուն (խաշխաշ, *Papaver somniferum*), մնեշակ (մանուշակ, *Viola odorata*), պենջար (եղինջ, *Urtica dioica*), շընպենջար (եղինջ խայթող, *Urtica urens*), փուրփուտ (փիփերթ, *Malva neglecta*), թալ (թելուկ, *Chenopodium album*, *Atrip-*

¹⁵ Ծատուրյան 2014, 6-7.

lex patula), սինձ (*Tragopogon orientalis*), մշակովի. սոխան (սոխ, *Allium cepa*), սխտոր (*Allium sativum*), թարխուն (*Artemisa dracunculus*), սամեթ (սամիթ, *Anethum graveolens*), կինձ (զինձ, *Coriandrum sativum*), նանա (*Mentha piperita*), մարոլ (հազար, *Lactuca sativa*), պեխկ, ռեդիսկա (բողկ, *Raphanus sativus*), շաղգամ (*Brassica rapa*), պեխկուկ (աղբուկ, *Sisymbrium loeselii*), սպանաղ (սպանախ, *Spinacia oleraceae*), ճակնդեղ (*Beta vulgaris*), կարտոշկա (կարտոֆիլ, *Solanum tuberosum*), լոբի (*Phaseolus vulgaris*):

Ժենգյալով հացի արտադրության և վաճառքի սույն հոդվածում քննարկվող նախաձեռնություններում հաճախ շեշտադրվում է միջուկի համար օգտագործվող բույսերի քանակությունը (նշվող քանակությունները տարբեր են՝ 7-ից 20 և անգամ 27, 40) և վայրի բույսերի «արցախյան ծագումը» և կամ «միայն Արցախում աճելու հանգամանքը» (աղ.): Երբեմն օգտագործում էին նաև այդ բույսերի բարբառային անունները՝ վերջիններիս արցախյան լինելը ընդգծելու համար: Երևանի կենտրոնում գործող Ժենգյալով հացի պատրաստման ու վաճառքի կետերում մեր ազգագրական հետազոտությունների ժամանակ պատրաստող կանաչք նշում էին, որ միջուկի համար օգտագործում են.

1. Հյուսիսային պողոտայի կետում (աղ., N 5, 31.10, 14.11, 20.12.2020)՝ սոխ՝ կանաչ և գլուխ, բազուկ, ճակնդեղ, սպանախ, եղինջ, համեմ, սամիթ, մաղադանոս, նանա, թրթնջուկ, կյարմանձուկ¹⁶:

2. «Մոսկվա» կինոթատրոնի դիմացի կետում (աղ., N 6, 14.11.2020)՝ բազուկ, համեմ, սամիթ, մաղադանոս, սոխ, թթվաշ, կյարմանձուկ:

3. Աբովյան փողոցի Ոստան ռեստորանի կետում (աղ., N 26, 14.11.2020) նշեցին, որ օգտագործում են 12, ապա 20 տեսակ կանաչի և թվարկեցին՝ ավելուկ, պենջըր, կընձմընձուկ, ճըռճըռուկ, ճուղուպուտ, ճնճուկ, սամիթ, սոխ, սպանախ, կինձ, թրթնջուկ, եղինջ, բազուկի տերև, ավելուկ, սըմսըմոկ, տըտպաշար, պըռավի պորտ, մոխրաթալ, թալ:

Մոսկովյան փողոցի Pier 28 ռեստորանի կետում (աղ., N 35, 20.12.2020)՝ համեմ, սոխ, սամիթ, տնձմերուկ, ճոճուկ, եղինջ և բազուկի ճավ (տերևներ): Ժենգյալով հացը պատրաստվում է որոշակի բույսերով, որոնցից վայրիները ունեն որոշակի աճման արեալներ և սեզոնայնություն¹⁷: Այդ պատճառով Ժենգյալով հացի դասական տարբերակի պատրաս-

¹⁶ Նշվեց՝ քիչ: «Մեր կանաչիները չեն, բայց էլի համով ա», - անկեղծացավ Ժենգյալով հաց պատրաստող արցախցի կանանցից մեկը:

¹⁷ Ծառյան 2009, 36-38, Цатрян, Меликян 2010, 34-38, Ծառյան 2014, 34-38:

տումը, ավանդույթներով պայմանավորված սահմանափակումներից բացի, ունի նաև որոշակի տարածաշրջանային սահմանափակումներ և սեզոնայնություն: 2020 թ. արցախյան պատերազմի օրերին՝ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ժենգյալով հացում օգտագործվող վայրի և որոշ մշակովի բույսեր այլևս չէին աճում անգամ Արցախում: Բացի այդ, եթե նույնիսկ համապատասխան սեզոն լիներ, այդ վայրի բույսերից շատերը Հայաստանի Հանրապետության տարածքում, մասնավորապես Երևանում հայտնի չէին: Ըստ մեր ազգագրական դիտարկումների և համետեսարձանագրումների՝ բացակայում էին ժենգյալով հացի միջուկի բաղադրիչ կազմող վայրի բույսերը: Պատերազմի օրերին այս խնդիրները լուծվեցին ավանդական բաղադրատոմսի փոփոխությամբ. ժենգյալով հացը պատրաստում էին այդ սեզոնին առկա մշակովի կանաչիներով՝ բազուկի, սպանախի տերևներ, սամիթ, համեն և այլն, իսկ թթվաշությունն ապահովում էին նաև կիտրոնաթթվով: Ընդ որում, բաղադրատոմսի փոփոխությունը որոշ դեպքերում նոր նախաձեռնության առիթ էր դառնում, ինչպես, օրինակ՝ բազուկի տերևների օգտագործումից հետո ցողունների թթվի առաջարկը (աղ., N 3, N 20 ևն):

Եզրակացություններ

2020 թ. արցախյան պատերազմի ընթացքում Արցախին և արցախահայությանը աջակցելուն միտված տարատեսակ սոցիալական միջոցառումների շրջանակներում արցախյան ուտեստներից ժենգյալով հացի հետ կապված ձևավորվեցին աջակցության նախաձեռնություններ: Ըստ նախնական դիտարկումների՝ ճգնաժամի պահերին ինքնության «խոհանոցային» այս «կանաչ» բաղադրիչի ընտրությունը կարող էր պայմանավորված լինել «ժենգյալով հացի»՝ որպես արցախյան խոհանոցի խորհրդանիշի («Արցախի խոհանոցի բրենդ»)՝ կայունացած հանրային ընկալմամբ, ինչպես նաև դրա պատրաստման ոչ աշխատատար լինելով, բաղադրիչների զգալի մասի մատչելիությամբ, բաղադրատոմսի ճկուն փոփոխության հնարավորությամբ, արդեն իսկ Արցախում մինչպատերազմական շրջանում հանրային տարածքներում՝ շուկաներում, զբոսաշրջային վայրերում պատրաստելու փորձի առկայությամբ:

Ժենգյալով հացի հետ կապված հանրային այս նախաձեռնություններում դրսևորվեց նաև տեղահանության, ուտեստի և կանանց ճկունու-

թյան ռազմավարությունը՝ ցույց տալով ճգնաժամային իրողություններում մշակութային մոդելների բազմազան հնարավորությունները:

Գրականություն

- Ծատրյան Մ.Ս. 2009, Սննդի մեջ օգտագործվող որոշ բույսերի տարածվածությունը ԼՂՀ տարածքում, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, N 2 (20), էջ 36-38:
- Ծատրյան Մ.Ս. 2014, Բուսական միջուկով հացի մեջ օգտագործվող վայրի բույսերի տարածվածությունը ԼՂՀ-ում, նրանց կենսաբանական առանձնահատկությունները և մշակության մեջ ներդնելու հնարավորությունները, Զ.01.02. «Բուսաբուծություն» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, 29 էջ:
- Ծատրյան Ռ. 2014, Ճամփորդող ինքնություն. ուտեստը ուղեբեռներում, Հաբիթուս. մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ, հ. 1, Մարության Հ., Պետրոսյան Է., Պետրոսյան Հ., Հովսեփյան Ռ., Մելքումյան Հ. (խմբ.), Երևան, «Գիտություն», էջ 20-30:
- Цатрян М., Меликян А. 2010, Характеристика некоторых дикорастущих растений, распространенных на территории Карабаха (Арцаха) и их применение в кулинарии, Известия государственного аграрного университета Армении, N 2, Ереван, с. 34-38.
- Alam K., Rahman M.H. 2017, The Role of Women in Disaster Resilience, Handbook of Disaster Risk Reduction & Management, p. 697-719.
- Anderson E. 2005, Foods and Borders: Ethnicities, Cuisines, and Boundary Crossings, Everyone Eats: Understanding Food and Culture, New York, NYU Press, p. 186-208.
- Avakian A.V. 2005, Shish Kebab Armenians: Food and the Construction and Maintenance of Ethnic and Gender Identities Among Armenian American Feminists, Avakian A.V., Haber B. (auth.), From Betty Crocker to Feminist Food Studies: Critical Perspectives on Women and food, Amherst, University of Massachusetts Press, p. 257-280.
- Battilana J., Lee M. 2014, Advancing Research on Hybrid Organizing – Insights from the Study of Social Enterprises, Academy of Management Annals, N 8(1), p. 397-441.

- Brickell K., Speer J. 2020, Gendered and Feminist Approaches to Displacement, Adey P. et al. (eds), *The Handbook of Displacement*, Palgrave Macmillan, Cham. https://doi.org/10.1007/978-3-030-47178-1_10. (15.02.2020).
- Chandra Y., Paras A. 2020, Social Entrepreneurship in the Context of Disaster Recovery: Organizing for Public Value Creation, *Public Management Review*, DOI: 10.1080/14719037.2020.1775282, p. 1-22.
- Evangelinidis A. 2016, The Greek State's Response to the Refugee Crisis and the Solidarity, *Contemporary Southeastern Europe*, N 3 (1), p. 32-36.
- Ghimire A. 2011, Rethinking "Women" in Forced Displacement, *Refugee Watch: A South Asian Journal on Forced Migration*, N 37, p. 30-43.
- Harbottle L. 1997, Taste and Embodiment: The Food Preferences of Iranians in Britain, Macbeth H. (ed.), *Food Preferences and Taste: Continuity and Change*, Oxford, Berghahn Books, p. 175-186.
- Harbottle L. 2004, Food for Health, Food for Wealth: Ethnic and Gender Identities in British Iranian Communities, *Anthropology of Food & Nutrition*, Oxford, Berghahn Books, 196 p.
- Holtzman J.D. 2006, Food and Memory, *Annual Review of Anthropology*, N 35 (1), p. 361-378.
- Lupton D. 1994, Food, Memory, and Meaning: The Symbolic and Social Nature of Food, *Sociological Review*, N 42 (4), p. 664-685.
- Searles E. 2002, Food and the Making of Modern Inuit Identities, *Food and Foodways*, N 10, p. 55-78.
- Sutton D.E. 2001, *Remembrance of Repasts: An Anthropology of Food and Memory*, Oxford, UK, Berg, 211 p.
- Tsaturyan R. 2017, Remembering the Tastes: Sassounian Foodways at Nekin Bazmaberd, Haven't we Shared Enough Bread and Salt together? Kars, Kars Urban and Cultural Research Center, p. 30-40.
- UNHCR, Mid-Year Trends 2020, unhcr.org/statistics/unhcrstats/5fc504d44/mid-year-trends-2020.html (15.02.2020).
- UNHCR's Refugee Population Statistics Database, 2020, unhcr.org/refugee-statistics/ (15.02.2020).

Օգտագործված Facebook-յան հրապարակումների և լրագրողական նյութերի ինտերնետային աղբյուրների (I) ցանկ (ըստ հրապարակման ժամանակագրության, վերջին բեռնման օրը՝ 15.02.2020)

1. 2018.03.31, Հայաստանը միայն Ազնավոր ու Ցեղասպանություն չէ, կամ ֆրանսիական խոհարարն ու ժենգլավով հացը, Լատուրա Սարգսյան, Sputnik, [sputnkne.ws/skms](https://sputnik.am/skms)

2. 2018.06.26, «Ժենգյալով հացի փառատոն». Արցախի նոր այցեքարտը, Ասատուր Եսայանց, Sputnik, sptnkne.ws/s8Nw
3. 2018.11.26, Խոշոր նախագիծ. հայ խոհարարները զբաղվում են տոլմայի և ժենգյալով հացի հանրահռչակմամբ, Անի Լիպարիտյան, Sputnik, sptnkne.ws/pj7U
4. 2018.12.13, Արցախում թխված մոտ 3 մետր երկարությամբ ժենգյալով հացը գրանցվել է «Դյուցազնագրքում», artsakhpress.am/arm/news/97910/arcakhum---t khvats---mot---3-metr---erkarutyamb---zhengyalov-hacy---grancvel-e-dyucznagrqum -lusankarner.html
5. 2019.04.13, Պատմության մեջ առաջին անգամ Արցախում աշխարհի ամենամեծ ժենգյալով հացը կթխեն, sptnkne.ws/nAup
6. 2020.09.27a, Ժենգյալով հաց, facebook.com/jengyalovhac1/,
7. 2020.09.27a1, Պատերազմական վիճակին առաջին արձագանքը՝ 27.09-ին («#ՀԱՂԹԵԼՈՒԵՆՔ AM  Փառք ու պատիվ հայ զինվորին»), Ժենգյալով հաց, facebook.com/jengyalovhac1/posts/697186114479930
8. 2020.09.27b, Հաթերք Ֆուդ, facebook.com/HaterkFood/,
9. 2020.09.27b1, Պատերազմական վիճակին առաջին արձագանքը՝ 27.09-ին («Ի հեճուկս թշնամու/Մենք կանգնելու ենք/Կովելու ենք /Հաթերքու ենք/ԶԵՆԲՎ, ԿԱՄՔՈՎ, ՄՇԱԿՈՒՅԹՈՎ/Աստված պահապան ՀԱՅ ԱԶԳԻՆ»), Հաթերք Ֆուդ, facebook.com/HaterkFood/posts/2503539083271249
10. 2020.10, Հաղթանակի համար (forvictory.am)
11. 2020.10.01, Բոլորն էլ մեր էրեխեքն են, միասին հաղթելու ենք. Ժենգյալով հաց՝ հատուկ զինվորների համար, Ժիրայր Ոսկանյան, Առաջին լրատվական, 1in.am/2831500.html
12. 2020.10.10a1, Zhengyal forever! Facebook event, Հովեր հյուրանոց և ռեստորան, facebook.com/events/671700553455419
13. 2020.10.10a, Հովեր հյուրանոց և ռեստորան, facebook.com/HOVER-boutique-hotel-res taurant-2697314956961732
14. 2020.10.11a1, Ժենգյալով հացի փառատոն. «Ողջ հասույթը զինվորին», Սառա Հարությունյան, Առավոտ – Լուրեր Հայաստանից, aravot.am/2020/10/11/1142525/
15. 2020.10.11a, Նոր Հաճնի երիտասարդական թիմ Facebook post, facebook.com/norhachn youthteam/posts/206392567573443
16. 2020.10.14, Ժենգյալով հացի փառատոնը Նոր Հաճն քաղաքում, Արմինե Օլեյան, Ռաֆիկ Սողոմոնյան, «Ազդարար», ԱՐ հեռուստաընկերություն, fb.watch/2tIVKIE0NO/, youtube.com/watch?v=XPwsm-p7KkQ
17. 2020.10.16a, Ժենգյալով հաց՝ արցախցիներից. արցախատավուշյան բիզնես նախագիծ, Սերա Դուկայան, Նարեկ Ալեքսանյան, Հետք, hetq.am/hy/article/123173,
18. 2020.10.16b, Ժենգյալով հացի եկամուտը՝ աշխատավարձ արցախցի կանանց համար, Ա1+, youtu.be/w3j2pjelr3c
19. 2020.10.17a, «Մեզ էստեղ լավ են նայում, բայց մենք ուզում ենք հետ գնանք մեր տունը՝ Արցախ». Արցախցի կանայք Դիլիջանում ժենգյալով հաց են պատրաստում և վաճառում, Սաթենիկ Հովսեփյան, Առավոտ, aravot.am/2020/10/17/1144516/
20. 2020.10.17b, «Պակասել չկա, տղերք». տիկին Լեսմոնյան օդային տազնապի ձայնի տակ ժենգյալով հաց է թխում, Sputnik/Ashot Gevorgyan, armeniasputnik.am/video/20201017/24953679/pakasel-chka-txerq-lesmonya-zengalyan-hac.html
21. 2020.10.19a1, Արցախյան ոգին ու համնուհոտը՝ Երևանի կենտրոնում, Sputnik, sptnkne.ws/FnkA

22. 2020.10.19b1, Արցախցի կանայք Դիլիջանում ժենգյալով հաց են թխում, Հերմինե Բաղդասարյան, Լուրեր, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 1lurer.am/hy/2020/10/19/Արցախցի-կանայք-Դիլիջանում-ժենգյալով-հաց-են-թխում/340161
23. 2020.10.19b2, Ժենգյալով հացի բույրը՝ Դիլիջանում. «Էմին դյոնումը ժենգյալ ուտվան ընք Դեդո-Բաբոյին կողքին», armday.am/post/147920/zhengjalov-hatsi-bo-jry-dilijano-m-emin-djono-my-zhengjal-o-tlan-ynq-dedo-babojin-koghqin-
24. 2020.10.19a2, Ժենգյալով հացի հերթ Հյուսիսային պողոտայում. Ստեփանակերտցի կանայք որոշել են օգնել բանակին, Ասատուր Եսայանց, Sputnik, sptkne.ws/FnkB
25. 2020.10.19a3, Ղարաբաղյան խոհանոցի այցեքարտը՝ Երևանի սրտում. Ժենգյալով հացի վաճառքից ստացված եկամուտը փոխանցվում է հիմնադրամին, news.am/arm/news/608805.html
26. 2020.10.20a, “Fauna Family” նեստորան post, facebook.com/faunafamilyrestaurant/posts/179117247137061
27. 2020.10.20b, Ժենգյալով հաց՝ Երևանի սրտում. Արցախցի տիկին Արմինեն գինվորների համար գումար է աշխատում, Իրավաբան.net, iravaban.net/297017.html
28. 2020.10.20c, «Հերոսապատումներ ժենգյալով հացի շուրջ», Հասմիկ Մաթևոսյան, Հյուսիսի Արցախ-Հայաստան համակեցության ճամբարային ջոկատ, hasmikmat369.wordpress.com/2020/10/20/ուրբաթ-պարապմունք՝-հերոսապատումներ/, hasmikmat369.wordpress.com/2020/10/23/հերոսապատումներ-ժենգյալով-հացի-շուր/
29. 2020.10.21, «Լոխ լավ ա», կամ ինչպես են արցախցի կանայք ամրացնում թիկունքը տաք ժենգյալով հացով, Նանա Մարտիրոսյան, Sputnik, sptkne.ws/Fump
30. 2020.10.22a, Արցախցի կանայք Երևանում ժենգյալով հաց են թխում և վաճառքից գոյացող հասույթը փոխանցում հիմնադրամին, Ռոբերտ Զարգարյան, Ազատություն ռադիոկայան, facebook.com/azatutyun/videos/377202030308866
31. 2020.10.22b, Արցախի մասնիկը՝ Երևանի կենտրոնում. ինչպե՞ս են արցախցի կանայք ժենգյալով հաց թխում Երևանում, Նովոստի-արմենիա, newsarmenia.am/am/news/nagorno_karabakh/Arcakhi-masnikey-Yerevan-kentronum-/
32. 2020.10.22c, Ժենգյալով հաց, facebook.com/ժենգյալով-հաց-103025944939572/
33. 2020.10.23a, Ժենգյալով հաց, facebook.com/jengyalovhaci/posts/716855762512965
34. 2020.10.23b, Կատակներով ու ինքնագրերով. ինչպես են արցախցի կանայք իսկական ժենգյալով հաց թխում Դիլիջանում, Aram Nersesyan, Nana Martirosyan, Sputnik, armeniasputnik.am/video/20201023/25027541/zengyalov-hacarcax-dilijan-kin.html
35. 2020.10.24a, Nelli Babayan, Facebook user post, facebook.com/photo?fbid=3641736732527751&set=a.718148481553272
36. 2020.10.24b, Salad is, facebook.com/saladisarmenia/
37. 2020.10.24b1, Salad is, facebook.com/saladisarmenia/posts/369393534483148
38. 2020.10.25a, Ժենգյալով, facebook.com/jengyalov/
39. 2020.10.25b, Վարդենի, facebook.com/dizayn.flowers/posts/634551193890493
40. 2020.10.26a, Ժենգյալով հաց Արուլյան փողոցում, facebook.com/profile.php?id=100057040749028
41. 2020.10.26b, Արցախյան կողորիտ՝ Երևանում. Հայտնի ժենգյալով հացն ու փախլական՝ Երևանի հենց սրտում, Մարինա Սայան, Առավոտ Լուսո, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 1tv.am/hy/video/Արցախյան-կողորիտ-Երևանում/164315
42. 2020.10.26c, Salad is, facebook.com/saladisarmenia/posts/371483690940799
43. 2020.10.28a, Salad is, facebook.com/saladisarmenia/posts/373438530745315

44. 2020.10.28b, Ժենգյալով հաց՝ Արցախից եկած կանանց ձեռքով, Աելիտա Մխչյան, free-news.am/post/3aa2c04d6c1d56338ed64940414cc892
45. 2020.10.29a, Երևան, facebook.com/permalink.php?story_fbid=116786643553828&id=108351281064031
46. 2020.10.29b, Պատերազմ, թթու և ժենգյալով հաց. իրենց տները քաճ արցախցիների կյանքի մասին, Արմինե Մարտիրոսյան, JAMnews, jam-news.net/am/ղարաբաղցիներ-տեղափոխում-հայաստան-օգ/
47. 2020.10.30a, Արցախի բարիքներ, facebook.com/artsaxibariqner/
48. 2020.10.30b, Արցախյան ժենգյալով հաց, facebook.com/Արցախյան-ժենգյալով-հաց-108480641062316/
49. 2020.10.30c, Ժենգյալով հաց Արմյանում, facebook.com/Ժենգյալով-հաց-Արմյանում-103654544884989/
50. 2020.10.30d, «ԳետԱփ» հանգստի գոտի, facebook.com/getapresortarzni/posts/818919258935641
51. 2020.10.30e, Մեր Տունը Ռեստորան - Mer Toune Restaurant, facebook.com/watch/?v=362109338458008
52. 2020.10.31, «Ե՛կ ժենգյալով հաց օտինք», որ սահմանում զինվորը չմտածի ընտանիքի մասին, թիկունքում ընտանիքը՝ զինվորի մասին, aysor.am/am/news/2020/10/31/ժենգյալ-արցախ/1764867
53. 2020.11.01, Salad is, facebook.com/saladisarmenia/posts/377042633718238
54. 2020.11.02, «Վախտեն ընք ասալ՝ "Make ժենգյալով հաց, not war", որովհետև հալ յամ տինը իլալ չի, վեր մըզնիետ կովան խեր տեսած ինի», facebook.com/101293474689818/posts/208105360675295/
55. 2020.11.03a1, Nare Gevorgyan, Facebook user post, facebook.com/permalink.php?story_fbid=3415047055241321&id=100002081794105
56. 2020.11.03a2, «Չեմ հասցրել անգամ նորմալ շորեր հետս բերել, բայց այն երկաթը, որի վրա ժենգյալ եմ պատրաստում հետս բերել եմ...», Դեպի լույս facebook.com/ElpisPistisAgapi/posts/1768701599951479
57. 2020.11.03b, Salad is, facebook.com/saladisarmenia/posts/378789520210216
58. 2020.11.05, Telcell, Արցախցիներից՝ արցախցիներին, facebook.com/telcell.am/posts/3723860130978696
59. 2020.11.06a1, «Ամենահամովը քամած մածունովն է». Նարինե Աբգարյանը ժենգյալով հաց էր վաճառում Երևանում, sptnkne.ws/EWRe
60. 2020.11.06a2, «Պիտի հաղթենք մեր նվիրվածությամբ եւ համառությամբ». Նարինե Աբգարյանը Երեւանում իր գրքերն ու ժենգյալով հաց է վաճառում, bravo.am/news/74919
61. 2020.11.06a3, Գրող Նարինե Աբգարյանը Երևանյան արճարաններից մեկում արցախցի կանանց թխած ժենգյալով հացն էր վաճառում, Անի Սարգսյան, hetq.am/hy/article/124028
62. 2020.11.06a4, Ժենգյալով հաց՝ Նարինե Աբգարյանից, CIVILNET, youtube.com/watch?v=WP5YoFV9uRs,
63. 2020.11.06a5, Ժենգյալով հացն արցախցի կանանցից, վաճառքը՝ Նարինե Աբգարյանից, Հովհաննես Վարդանյան, 1lurer.am/hy/2020/11/06/Ժենգյալով-հացն-արցախցի-կանանցից-վաճառքը-Նարինե-Աբգարյանից/354428
64. 2020.11.06a6, Հանրային հեռուստաընկերություն, Լուրեր. Հատուկ թողարկում 21:00| Ժենգյալով հացի մասին՝ 45:00-ից,youtu.be/3-dQzJyZUIg

65. 2020.11.06a7, Մոսկվայից՝ Մոսկովյան. Նարինե Արզարյանն օգնում է արցախցի կանանց. լուսանկարներ, armeniasputnik.am/photo/20201106/25214677/moskvayic-moskovyan-narine-abg-aryann-ognume-arcaxci-kananc.html
66. 2020.11.06b1, Հարսանեկան լավագույն ֆոտոշարքերը միայն ժենգյալով հացով են լինում:🍷, ժենգյալով, facebook.com/jengyalov/posts/120748809829744
67. 2020.11.07, Արցախցիները՝ Էջմիածնում, Հայկուշ Ասլանյան, Լուրեր, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 1lurer.am/hy/2020/11/07/Արցախցիները-Էջմիածնում/355016
68. 2020.11.08, Ամենահամեղ ժենգյալով հացը՝ պատրաստված Արցախցիների ձեռքերով, facebook.com/TasteofArtsakh/
69. 2020.11.09, Մանան Դաֆին Facebook user post, facebook.com/permalink.php?stor_y_fb主id=3652251044832204&id=100001420337499
70. 2020.11.12a, Դադիվանքի անուշներ, facebook.com/Dadivanqdelights/
71. 2020.11.12a1, Դադիվանքի անուշներ, facebook.com/Dadivanqdelights/posts/103527941577092
72. 2020.11.12b, Վարդենի, facebook.com/dizayn.flowers/posts/648169499195329
73. 2020.11.13a, բանաստեղծություն ժենգյալով հացի մասին, ժենգյալով, facebook.com/jengyalov/posts/129038582334100
74. 2020.11.13b, Ուստան ռեստորան, facebook.com/vostan.mbg/posts/1244956652549826
75. 2020.11.13b1, "Արցախը Երևանում" Արցախյան ապրանքների տոնավաճառ, Face book event, Vostan Restaurant, facebook.com/events/272201244207046/
76. 2020.11.14, Boqonik bakery, facebook.com/Boqonikbakery/posts/757394698149276
77. 2020.11.15, Արցախի փախլավա, գաթա, թթու ու ժենգյալով հաց. արցախցի կանայք Երևանում աշխատում են ի նպաստ իրենց երկրի, 168.am/2020/11/15/1406743.html
78. 2020.11.16a, Ուստան ռեստորան, facebook.com/vostan.mbg/photos/a.1247533112292180/1247533195625505/
79. 2020.11.16b, ժենգյալով Հաց Zhengyalov Hac, facebook.com/ժենգյալով-Հաց-Zhengyalov-Hac-294497294479215/
80. 2020.11.19a, Armenian Cooking Facebook public group post, facebook.com/groups/397722193766371/permalink/1491877187684194/
81. 2020.11.19b, Ուստան ռեստորան, facebook.com/vostan.mbg/posts/1250222352023256
82. 2020.11.23a, Koriz facebook.com/korizapplication/posts/160043689146483
83. 2020.11.23b, Շուշվա ժենգյալով հաց, facebook.com/Շուշվա-ժենգյալով-հաց-104478564831740/
84. 2020.11.23c, Ուրիշ ժենգյալ / Oureesh zhengyal, facebook.com/oureesh/
85. 2020.11.24, Dalma Garden Mall, facebook.com/DalmaGardenMallOfficial/posts/3424952924268002
86. 2020.11.25, Ուստան ռեստորան, facebook.com/vostan.mbg/posts/1254673744911450
87. 2020.11.26a, Future is Now, facebook.com/FUTUREisNOWngo
88. 2020.11.26a1, Future is Now, facebook.com/FUTUREisNOWngo/posts/136522251590274
89. 2020.11.28, Pier 28, facebook.com/pier28evn/posts/158455885998901
90. 2020.11.29, Արցախի համն ու հոտը՝ ժենգյալով հացը՝ Երևանի սրտում, Նադյա Բաբայան, Լուրեր, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 1lurer.am/hy/2020/11/29/Արցախի-համն-ու-հոտը-ժենգյալով-հացը-Կծուն-թթուն-Երևանի-սրտում/368125
91. 2020.12.01a, «Արցախի գույներ» ձեռագործ իրերի տոնավաճառը կգործի մինչև դեկտեմբերի 5-ը, journalist.am/archives/22020
92. 2020.12.01b, Բարեգործական տոնավաճառ/ Charity Fair Facebook event by SOS Children's Villages Armenia, facebook.com/events/2787555234892650/

93. 2020.12.02, Arsen Sarkisyan՝ Կապան համայնք Facebook Public group, facebook.com/groups/www.syunik.am/permalink/3837218596312703/
94. 2020.12.06, Արցախի ժենգյալով հացի համն ու հոտը Արսլան փողոցում, facebook.com/Արցախի-ժենգյալով-հացի-համն-ու-հոտը-Արսլան-փողոցում-104777754829829/
95. 2020.12.07, Anna Isakhanyan, I am Arm Vegetarian~, facebook.com/groups/30366041024/permalink/10158019615026025/
96. 2020.12.09, Արցախի բարիքներ, facebook.com/artsaxibariqner/posts/452384942834359
97. 2020.12.10, Ոստան ռեստորան, facebook.com/vostan.mbg/posts/1266557270389764
98. 2020.12.19, Բարեգործական տոնավաճառում Արցախի բարիքներն են, Վահե Դավթյան, 1lurer.am/hy/2020/12/19/Բարեգործական-տոնավաճառում-Արցախի-բարիքներն-են/381736
99. 2020.12.27, Արցախյան ժենգյալով հացի փոքրիկ կրպակն արդեն վերածվել է հարմարավետ սրճարանի, Լիլիթ Դանիելյան, Լուրեր, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, 1lurer.am/hy/2020/12/27/Արցախյան ժենգյալով հացի փոքրիկ կրպակն արդեն վերածվել է հարմարավետ սրճարանի/386371
100. 2020.12.29, Taste of Artsakh, facebook.com/TasteofArtsakh/posts/110537600932513
101. 2020.12.31, Ժենգյալով հացի բույրը. Ստեփանակերտի շուկան նախկինի պես առատ է բերք ու բարիքով, բայց մարդիկ նախկինը չեն. Մեկը որդի է կորցրել, մյուսը՝ տուն ու տեղ. Առավոտ – Լուրեր Հայաստանից, Լուսինե Բուդաղյան, aravot.am/2020/12/31/1162854/
102. 2021.01.02a, «Ես իմ ձեռով էի քաղում կանաչին. հիմա էլ ո՞նց գնամ՝ էդ տարածքները տվին թուրքին». 63-ամյա կնոջ տնային բիզնեսն է վտանգված, Արմեն Դավթյան, Առավոտ – Լուրեր Հայաստանից, aravot.am/2021/01/02/1162998/
103. 2021.01.02b, Ուրիշ ժենգյալ/Oureesh zhengyal, facebook.com/oureesh/photos/a.106112364671212/117343190214796/
104. 2021.01.07, Ժենգյալով հաց, facebook.com/jengyal/
105. 2021.01.20, Taste of Artsakh, facebook.com/TasteofArtsakh/videos/452876342391541
106. 2021.01.30, Taste of Artsakh, facebook.com/TasteofArtsakh/posts/123951622924444
107. 2021.02.01, Mother's Farm (Գորիս), facebook.com/Gorisfarm/posts/1100416703752772

«ԺԵՆԳՅԱԼՈՎ ՀԱՅԸ» 2020 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Ռուզաննա Ծատուրյան, Ռոման Հովսեփյան

Ամփոփում

Արցախում 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի և հետագա օրերին Հայաստանի Հանրապետությունում Արցախին ու տեղահանված արցախահայությանը սատարելու նպատակով բազմազան նախաձեռնություններ էին իրականացվում: Դրանք միտված էին ոչ միայն Արցախի և արցախցիների աջակցությանը, այլև արցախյան մշակույթի, արտադրության և ինքնության տարատեսակ հարցերը բարձրաձայնելուն, ընդգծելուն, ներկայացնելուն և հանրայնացնելուն: Պատերազմական շրջանի աջակցության այս նախաձեռնությունները հաճախ իրականացվում էին Արցախյան խոհանոցի,

մասնավորապես՝ հայտնի և ճանաչված կերակրատեսակների (ժենգյալով հաց, փախլավա, կուրկուտ, մեղր, գինի, վայրի համեմունքային և բուրումնավետ բույսեր և այլն) հանրայնացման և ապրանքայնացման միջոցով: Պատերազմի օրերին վերոհիշյալ կերակրատեսակներից ընտրվեց ժենգյալով հացը՝ կանաչիներով կարկանդակը, որի շուրջ, հանրայնություն վայելելով, ձևավորվեցին մի շարք սոցիալական ձեռնարկատիրական նախաձեռնություններ:

Բանալի բառեր՝ ժենգյալով հաց, Արցախ, պատերազմ, ինքնություն, սոցիալական ձեռնարկատիրություն, խորհրդանիշ, ազգային խոհանոց:

«ЖЕНГЯЛОВ ХАЦ» В ДНИ АРЦАХСКОЙ ВОЙНЫ 2020 ГОДА

Рузанна Цатурян, Роман Овсепян

Резюме

Различные инициативы, посвященные Арцаху и переселенному армянству Арцаха, были претворены в жизнь в РА как в процессе войны, начавшейся в Арцахе 27 сентября 2020 г., так и в поствоенное время. Эти мероприятия призваны были поддержать Арцах и арцахцев, представить и популяризировать культуру Арцаха. Поддерживающие инициативы военного периода часто осуществлялись посредством популяризации и коммерциализации арцахской кухни, в частности, хорошо известных блюд («женгялов хац» – лепешка с зеленью, куркут), кондидерских изделий – пахлава, таких продуктов, как мед, вино, а также пряные дикорастущие травы. В эпицентре популярных социальных предпринимательских инициатив оказался именно «женгялов хац».

Ключевые слова – «женгялов хац», Арцах, война, идентичность, социальное предпринимательство, символ, этническая кухня.

"JENGALOV HATS" IN THE 2020 ARTSAKH WARTIME

Ruzanna Tsaturyan, Roman Hovsepyan

Abstract

Various initiatives dedicated to Artsakh and the displaced Artsakhi Armenians were implemented in the Republic of Armenia during the war that began in

Artsakh on September 27 of 2020 and in the following days. These events were dedicated to the support of Artsakh and the people of Artsakh, to raising, emphasizing, presenting and publicizing various issues of Artsakh culture, production, identity. These wartime period support initiatives were often carried out through the popularization and commercialization of Artsakh cuisine, particularly well-known dishes (jengyalov hats, baklava, kurkut, honey, wine, wild flavorings and aromatic plants, etc.). Jengyalov hats (bread with herbs) was selected from the above-mentioned and a series of social entrepreneurial initiatives having popularity were formed around it during the war.

Key words – jengyalov bread, Artsakh, war, identity, social enterprise, symbol, ethnic cuisine.

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԹԱՍԵՐԻ ՁԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Արմինե Գաբրիելյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ arminegabriel.iae@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 14.03.2021, գրախոսվել է 18.03.2021,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-327

Ներածություն

Տիգրանակերտի մ.թ.ա. I - մ.թ. III դարերով թվագրվող անտիկ խեցեղենն աչքի է ընկնում ձևակազմական և գործառության բազմազանությամբ, որի մեջ ուրույն տեղ են զբաղեցնում իբրև սպասք օգտագործվող անոթները: Սույն հոդվածը նվիրված է անտիկ խեցեղենի սպասքի ամենահաճախ հանդիպող մի տեսակին՝ թասերին, որոնք ամբողջական և բեկորային նմուշներով հայտնաբերվում են Տիգրանակերտի Ամրացված և քաղաքային թաղամասերի անտիկ շերտերից:

Տիգրանակերտյան թասերը հարթ նստուկով, հատակից դեպի վեր լայնացող կողերով բաց անոթներ են, որոնք, բազմաքանակությամբ հանդերձ, ներկայանում են ձևակազմական կայունությամբ՝ հիմնականում տարբերվելով պսակի ձևով: Ըստ պսակի ձևի՝ դրանք կարելի է բաժանել չորս տիպի, ըստ ընդհանուր ձևակազմության՝ ևս երկու տիպի՝

1. Դուրս ձգված շուրթով
2. Ներս հակված շուրթով
3. Սուր շրթերիզով
4. Հարթ կտրած շուրթով
5. Հարակից
6. Ծորակավոր

1. Դուրս ձգված շուրթով թասեր

Այս տիպի հարթ նստուկով թասերի՝ դուրս ձգված, փոքր-ինչ թմբիկավոր շուրթերը միանում են անոթի կողին կամ ուղիղ կամ մատնաչափ ներճկումով, սահուն կամ սուր եզրով՝ առաջացնելով մի քանի տարբերակ

(բարձրությունը՝ 6-10 սմ, շուրթի տրամագիծը՝ 13-18 սմ, հատակինը՝ 5-9 սմ): Դրանք միմյանցից տարբերվում են հիմնականում պսակի ներճկվածության աստիճանով (աղ. 1):

Թասերը մեծավ մասամբ պատրաստված են որակյալ և լավ հունցած կավից, արագ պտտվող դուրզի վրա, հավասարաչափ են թրծված, սակայն երբեմն թրծումն ուժեղ և տևական կրակով չի իրականացվել, որի հետևանքով խեցու կտրվածքում թույն միջնաշերտ է առաջացել: Թասերն արտաքուստ և ներքուստ պատված են դեղնադարչնագույնից կարմրավարդագույն շփոթով և մանրակրկիտ փայլեցված են: Շուրթերը հարդարված են բաց հիմնաներկի վրա կարմիրի տարբեր երանգների շեղ գծիկներով: Դրանց մի մասի ներքին մակերեսը երբեմն զարդարված է նույն ներկով արված մի քանի զուգահեռ, համակենտրոն շրջանագծերով (աղ. 3/4, 5), որոնք խիստ նախընտրելի են տիգրանակերտյան ինչպես թասերի, այնպես էլ գավաթների և ըմպանակների ներքին մակերեսի հարդարանքում: Երկու և ավելի համակենտրոն գունազարդ գծերը զարդարում են վերոնշյալ բաց անոթների հատակամերձ, երբեմն էլ իրանի վերին հատվածները: Տվյալ զարդագոտին թասերի հարդարանքում հանդիպում է նաև բազմագույն կատարմամբ (աղ. 3/1-3): Ընդ որում, այս խմբի թասերն առատորեն հայտնաբերվում են Անտիկ քաղաքային թաղամասի ուշ հելլենիստական և ուշ անտիկ շերտերի ողջ հզորությունից (0,50-0,60 մ), որը խոսում է դրանց տեղական, զանգվածային արտադրության մասին: Դրանց լավագույն օրինակներն են **S 12, ԱԹ/13**, 37, 52, 56, 61, 74, 87, 104, 113, 128; **S 13, ԱԹ/12**, 27, 33, 41, 45 (աղ. 1/10, 14, 16, 17, 19, աղ. 3/1, 5):


Տիգրանակերտյան՝ դեպի դուրս ձգված շուրթով թասերի ձևակազմական և գեղարվեստական հարդարանքով նույնական օրինակներ հայտնի են հուշարձանից մոտ 40 կմ արևելք գտնվող ներկայիս Ադրբեջանի Աղջաբեդի շրջանի (պատմական Ուտիք) Գարակոբար բնակավայրից և Կարա-Թեփե բնակավայրի II շինարարական հորիզոնի նյութերից¹:


2. Ներս հակված շուրթով թասեր

Հարթ նստուկով, դրանցից աստիճանաբար լայնացող կողերով այս տիպի թասերը տարբերվում են շուրթի ձևով՝ ներկայացնելով մի քանի տարբերակ (աղ. 2):


¹ Османов 2006, 76-77, табл. 24/7-9, Исмизаде 1965, 216, рис.18/1, 3, 4.


Աղյուսակ 1





Աղյուսակ 3





2.1. Կլորափուն շուրթով, երբեմն թույլ, երբեմն ավելի խորը ներս հակված շուրթով թասերն ամենահաճախ հանդիպող տարբերակն են (բարձրությունը՝ 6,5-10 սմ, շուրթի տրամագիծը՝ 12-20 սմ, նստուկինը՝ 7-11 սմ):

Նախորդ տիպի նման սրանք ևս պատրաստված են մանրահատ, լավ հունցած կավից, ունեն բաց կարմրավարդագույն կամ օխրայի գույն, ընտիր փայլեցրած են և գունազարդված: Զարդարումը հիմնականում արված է շուրթերին, համաչափ կրկնվող կարմիր կամ մուգ դարչնագույն շեղ գծիկների տեսքով (աղ. 2/3, 5, 6, 9, 11, 12, 13, 15): Սակայն հանդիպում են նաև ներսից 1-3 զուգահեռ համակենտրոն գոտիներով հարդարված օրինակներ (աղ. 2/1, 7): Հոծ ներկած համակենտրոն գծերը կարծես տիգրանակերտյան վարպետների սիրելի և նախընտրելի զարդամոտիվը լինեն և ինչ-որ չափով նույնիսկ բրենդային՝ տվյալ ժամանակաշրջանի խեցեգործության համար:

Այս թասերից հայտնաբերվել են Հայաստանի և Արցախի վերը նշված անտիկ դամբարանային հուշարձաններից, իսկ տիգրանակերտյան թասերի նույնական օրինակները՝ Գարակոբարի դամբարանադաշտից², կարծես հուշելով դրանց պարտադիր լինելը թաղումներում:

Պեղումների ժամանակ գտնվել են նաև այս թասերի հորիզոնական ամրացված օղակաձև կանթերով օրինակներ՝ պատրաստված թրծումից բաց և մոխրավուն գույն ստացած կավերից (S12, ԱԹ/40, S14, ԱԹ/51, աղ. 2/20):

2.2. Դեպի ներս հակված՝ թեք կտրած շուրթով թասերի ներսում շուրթը ձևավորված է մի քանի նուրբ ակոսագծերից կազմված գոտիով (աղ. 2/18, 19): Այս օրինակները ներկայանում են ինչպես կարմրավարդագույն, այնպես էլ սևափայլ խեցի ունեցող տարբերակներով (բարձրությունը՝ 6-9 սմ, շուրթի տրամագիծը՝ 13-14 սմ, նստուկինը՝ 10-12 սմ):

2.3. Դեպի ներս հակված՝ սուր շրթերիզով սևափայլ թասերը ևս ունեն հարթ նստուկ, քիչ կլորավուն իրան, որը, պսակի հիմքում ընդգծված անցում առաջացնելով, շեշտակի բեկվում է ներս (բարձրությունը՝ 6-8 սմ, շուրթի տրամագիծը՝ 15-18 սմ, նստուկինը՝ 10-12 սմ): Դրանք, որպես կանոն, պատրաստված են լավ հունցած, մանրահատ կավից, ունեն հավասարաչափ թրծում, լավ փայլեցված սև կամ մոխրագույն խեցի (աղ. 2/16, 17, 22-

² Османов 2006, 77, табл. 24/6.

24), ավելի հազվադեպ՝ բաց դեղնավարդագույն մակերես և գունազարդ պսակ (աղ. 2/2): Զուգահեռները հանդիպում են Վանի խեցեղեն նյութերում³:

Տիգրանակերտից հայտնաբերված՝ դեպի դուրս և դեպի ներս հակված շուրթերով ու պսակների տարբեր լուծումներով, ներսույթում օղակաձև, գունազարդ գոտիներով զարդարված թասերի ամենամոտ զուգահեռները թերևս գտնում ենք Կուրի աջափնյակում տեղակայված Շոռ-Թեփե, Գալա-Թեփե և Գարաքոբար բնակավայրերի և դամբարանադաշտերի նյութերում: Ընդ որում, տիգրանակերտյան շքեղ դեկորատիվ հարդարանք կրող գունազարդ ծորակավոր սափորներն ու կաթսայատիպ անոթները ևս նույնական են Գալա-Թեփեի և Գարաքոբար հուշարձանի միևնույն տեսակի խեցեղենի հետ⁴, որը կարող է խոսել անտիկ ժամանակաշրջանում այս բնակավայրերի միջև սերտ առևտրատնտեսական և մշակութային կապերի մասին: Չենք բացառում նաև, որ խեցեղենի այդ տեսակները Տիգրանակերտի արտադրանք են եղել:

3. Սուր շուրթով, խորը ներճկված պսակով թասեր

Թեկուզ բեկորային, բայց հնարավոր է եղել առանձնացնել նաև սուր շրթերիզով, խորը ներճկումով անոթի իրանին միացող կողով թասերը, որոնք ձևավորվել են ուրարտական ժամանակաշրջանում, յուրացվել և ժառանգվել են վաղ հայկական-աքեմենյան խեցեգործության կողմից և փոխանցվել են հելլենիստականին: Այս թասերից են առաջացել փիալա՝ ըմպանակները⁵:

4. Հարթ կտրած շուրթով թասեր

Հարթ նստուկով, հորիզոնական կտրված շուրթով թասերը (բարձրությունը՝ 5-10 սմ, շուրթի տրամագիծը՝ 15-18 սմ, նստուկինը՝ 6-9 սմ, աղ. 2/21) հիմնականում պատրաստված են լավ հունցած, համասեռ կավից: Բացի մի քանի օրինակներից, որոնց միջուկը գորշավուն է արագ և ոչ տևական կրակով թրծելու հետևանքով, մնացածներն ունեն հավասար թրծում, միագույն խեցի: Թասերից մեկի մակերեսը կարմրավուն է և լավ փայլեցված, իսկ շուրթը հարդարված է կարմիր ներկով արված շեղ գծիկ-

³ Matiasvili 2000, 159-175, Abb.16

⁴ Алиев, Бабаев, Гусейнова 2011, 179-185, Алиев, Бабаев, Гусейнова, Алиева, Аббасов, Алиев 2012, 226-234.

⁵ Тирацян 1968, 19, рис. 1а, Чаршачетյան 2003, 39, աղ. 25/2-6:

ներով (Տիգր. 2015, ՀսՊ/10): Հարթ կտրած շուրթով, ներքուստ ճառագայթաձև գունազարդված թասեր առատորեն հայտնաբերվել են Արմավիրից: Ի. Կարապետյանը դրանք համարում է ուրարտական խեցեղենից սերած և թվագրվում են մ.թ.ա. V-III դարերով⁶: Շուրթի նման լուծումով թասեր գտնվել են նաև Արտաշատի մ.թ.ա. II-I դարերով թվագրվող շերտերից: Ժ. Խաչատրյանը, չբացատրելով այդօրինակ թասերի կապը ուրարտական և փոյուզական խեցեղեն ձևերի հետ, ակնհայտ նմանություններ է տեսնում դրանց և սկահակների միջև⁷:

Թասերի վերոնշյալ տիպերն ու տարբերակներն առատ զուգահեռներ ունեն Հայաստանի անտիկ դարաշրջանի այլ հուշարձանների խեցեղենի մեջ⁸: Հիմնականում օգտագործվելով իբրև սպասք՝ երբեմն դրանք կիրառվել են նաև իբրև կափարիչներ: Պեղածո նյութում կափարիչների խիստ սահմանափակ քանակը հուշում է, որ կերակրի պատրաստման համար օգտագործված կավե անոթները ծածկվել են բաց ամաններով՝ թասերով և քրեղաններով: Սրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ արտաքին կողմում կրակի ակնհայտ հետքեր ունեցող թասերի մի մասի ներքին մակերեսը, առանձնապես հատակի մասում, խիստ քայքայված է, որը կարող էր գոլորշու երկարատև ազդեցության հետևանք լինել⁹:

Թասերի օգտագործումը որպես խուփեր հաստատվում է Բենիամինի անտիկ դամբարանադաշտում թաղման կարասների բերանները ծածկող, հակառակ դիրքով դրված թասերի կամ քրեղանների առկայությամբ: Նույն կիրառական նշանակությունն են ունեցել նաև նույն դամբարանադաշտի հիմնահողային և սալարկղային թաղումներին ուղեկցող միջին և փոքր պուլիկները ծածկող թասերն ու ափսեները¹⁰: Օգտագործման այս երևույթը փաստագրվել է նաև Մինգեչաուրի կարասային թաղումների պեղումների ժամանակ, որտեղ գրեթե բոլոր մեծ ծորակավոր անոթները ծածկված են եղել թասերով¹¹: Բերված օրինակները փաստում են կեն-

⁶ Կարապետյան 1971, 276-280:

⁷ Խաչատրյան 1981, 102:

⁸ Аракелян 1969, таб. I/1, 2, таб. III/1, рис. 12/2, Խաչատրյան, Կանեցյան 1974, տախ. I/4, 6, տախ. II/24, Կարապետյան 1979, աղ. I/8, 9, Тирацян 1988, 118, рис. 25/6, 7, 8, 10, 12, Քոչարյան 1991, տախ. XIV/1-4, XIX/2-4, 6, XXI/8, Демирханян 2010, табл. 48, 51, 52, 53, 54, 55, 75, 76, 79:

⁹ Խաչատրյան 2002, 104:

¹⁰ Եզանյան 2010, 105:

¹¹ Казиев 1960, 21.

ցաղում բաց ամանները՝ որպես խուփ օգտագործելու բավական հաստատուն սովորույթը, որը ինքնաբերաբար արտահայտվել է նաև տվյալ ժամանակաշրջանի թաղման ծեսում: Այս սովորույթի արմատները տեսնում ենք ուրարտական թաղման ծեսում¹²:

5. Հարակից թասեր

Իր տեսակի մեջ առայժմ բացառիկ է 2017 թ. **հարակից թասերով անոթի** հայտնաբերումը, որն առաջին անգամ է հանդիպում Տիգրանակերտում (Տիգր. 2017, ՀսՊ 27 աղ. 4/2): Այն երեք թասերի միացումից կազմված գունազարդ անոթ է: Թասերն ունեն հարթ կտրած, դեպի դուրս և ներս ձգված, փոքր-ինչ թմբիկավոր, 14 սմ տրամագծով շուրթեր: Ընդ որում՝ թասերն առանձին-առանձին պատրաստվել են դուրգի վրա, այնուհետև միմյանց միացվել, որից հետո դրսից միևնույն կավի մածուցիկ շերտով պատվել, հարթեցվել և փայլեցվել են: Անոթի կտրվածքում հստակ երևում է կանոնավոր պատրաստված թասերից մեկի պրոֆիլը և դրա վրա դրված միևնույն կավի խորդուբորդ, անհարթ շերտը: Թասերի միացման հատվածում՝ հարակից անոթի կենտրոնում, ամենայն հավանականությամբ բռնակ է եղել, որը, ցավոք, չի պահպանվել: Երևում է միայն դրա եռանկյունաձև հիմքը: Հարակից թասերով անոթը պատրաստված է լավորակ, մանրահատ, համասեռ կավից, ունի կարմրավարդագույն խեցի և հավասարաչափ թրծում: Թասերի շուրթերը և ներքին մակերեսը գունազարդված են բաց կարմրավարդագույն ներկով անկանոն տարված գծերի միջոցով:

Երկուսից երեք անոթների միացությամբ անոթները հինարևելյան ծագում ունեն և հայտնի են դեռևս վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանի, ուրարտական և հետուրարտական շրջանի հուշարձաններից¹³: Հարակից թասերի գյուտերը համեմատաբար քիչ են: Երկու թասերի միացությամբ անոթներ պատմական Հայաստանի տարածքից հայտնաբերվել են Իգդիրի մոտ գտնվող ուրարտական դամբարանադաշտից (կոլումբարիից), Կերենի թիվ 64 դամբարանից և Արտաշատի արևելյան դամբարանադաշտից¹⁴: Դրանք, ինչպես նաև պատահական գտնված այլ հարակից թասերը, իրենց զուգահեռներն ունեն Անդրկովկասում (Մինգեչաուր) և իրանական, սիրիական ու միջերկրածովյան նյութերում (Կար-

¹² Куфтин 1944, 8, 69, рис. 5, 7, 9, Կարապետյան, Ենգիբարյան 2002, 218:

¹³ Пиотровский 1950, 35, Mellink 1968, 559-573, Կարապետյան 2003, 38:

¹⁴ Куфтин 1944, 20, рис. 17, Գնունի 2014, 155, Խաչատրյան 1981, 120, նկ. 5:

քեմիշ, Մարլիկ, Հասանլու, Սիալի B, Ամլաշ)¹⁵: Ընդ որում՝ հարակից թասերը լինում են ինչպես հարթ նստուկներով (Կերեն, Դինկա Թեփե), այնպես էլ ոտքերի վրա (Հասանլու): Ցավոք, տիգրանակերտյան եզակի օրինակի ստորին հատվածը չի պահպանվել, և մենք չենք կարող ասել, թե հարակից թասերի վերոնշյալ որ խմբին է այն հարում: Ընդհանուր ձևակազմական հատկանիշներով մեր օրինակն ավելի մոտ է Հասանլուից հայտնաբերվածին: Սակայն փոխառելով անոթների ձևակազմությունը՝ տիգրանակերտյան վարպետներն ուրույն մոտեցում են ցուցաբերել թասերի գունազարդման մեջ՝ հավատարիմ մնալով անոթների ձևավորման արդեն մշակված, տեղական, տիգրանակերտյան ոճին:

6. Ծորակավոր թաս-քրեղաններ

Այս անոթների լավագույն ամբողջական օրինակը հայտնաբերվել է Անտիկ քաղաքային առաջին թաղամասի 2014 թ. պեղումների ժամանակ (Տիգր. 2014, ԱԹ/61, աղ. 4/1): Անոթի հարթ նստուկից դեպի վեր լայնացող իրանը ներճկված կողով միանում է դուրս հակված թմբիկավոր շուրթին (բարձրությունը՝ 11,5 սմ, շուրթի տրամագիծը՝ 27,5 սմ, հատակի տրամագիծը՝ 12,5 սմ): Փոքր-ինչ վեր ձգված, կարճ, խողովակաձև ծորակը տեղադրված է շուրթից 2,5 սմ ցած: Ծորակի հակադիր կողմում՝ անմիջապես շրթեզրին, ամրացված է հորիզոնական կանթը: Ծորակավոր թասը պատրաստված է կարմրավարդագույն, լավ հունցած, մանրահատ, միասեռ խիտ կավից և ունի հավասարաչափ թրծում: Անոթը լավ կոկված, փայլեցված և պատված է վարդագույն շփոթով, շուրթը և բռնակը զարդարված են վառ կարմիրով արված միմյանց հաջորդող, համաչափ կրկնվող շեղ գծիկներով:

Ծորակավոր թաս-քրեղանները հայտնի են ինչպես Հայաստանի անտիկ դարաշրջանի հուշարձաններից՝ Արմավիրից, Դվինից, Երվանդաշատից, Շամիրամից, Բենիամինից, Կարճաղբյուրից¹⁶, այնպես էլ հարևան երկրների բնակավայրային հուշարձաններից՝ Կարա-Թեփեից, Միդասի քաղաքից, Մինգչաուրի կարասային թաղումներից¹⁷:

¹⁵ Սիմոնյան, Սանամյան, Գնունի 2007, 32, իր 52-53:

¹⁶ Տիրացյան 1974, 175, Կարապետյան 1979, 268-278, աղ. II/4, Օհանյան 1989, 213, աղ. IV/2, 16, Քոչարյան 1991, աղ. XX/4, Կարապետյան 2003, աղ. 25/7, Եգանյան 2010, 60, տախտ. X/6, XI/1, Պարսամյան 2015, 98, 109:

¹⁷ Կարապետյան 2003, 40, Казиев 1960, табл. XXVIII/9.

Ըստ Ա. Դեմիրխանյանի՝ այս անոթները կիրառվել են իբրև կաթնամաններ¹⁸: Նման կարծիք է արտահայտել նաև Յանիս Չերետակիսը՝ ներկայացնելով Աթենքի ագորայից և Կերամեյկոս թաղամասից, Կիպրոսից և Մակեդոնիայից հայտնաբերված հելլենիստական ժամանակաշրջանի ծորակավոր անոթները¹⁹: Հաշվի առնելով այն, որ դրանք գտնվում են նաև սրբավայրերից (ի մասնավորի Մակեդոնիայի օրինակը), որոշ հետազոտողներ չեն բացառում ծորակավոր անոթների ծիսական նշանակությունը²⁰:

Եզրակացություններ

Ամփոփելով կարող ենք ասել, որ Արցախի Տիգրանակերտի մեծաքանակ անտիկ խեցեղենի մեջ ուրույն տեղ են զբաղեցնում իբրև սպասք օգտագործվող թասերը: Դրանք հարթ նստուկով, հատակից դեպի վեր լայնացող կողերով բաց անոթներ են, որոնք, բազմաքանակությամբ հանդերձ, ներկայանում են ձևակազմական կայունությամբ՝ հիմնականում տարբերվելով պսակի ձևով: Իբրև սպասք կիրառվող թասերն ունեն հավասարաչափ թրծում, լավ կոկված, փայլեցված և, որպես կանոն, գունազարդ մակերես, թեև ավելի հազվադեպ հանդիպում են նաև սևափայլ կամ գորշավուն, փայլեցված մակերեսով օրինակներ:

Տիգրանակերտից հայտնաբերված սպասքի այս տեսակի ձևակազմական հատկանիշների և դեկորատիվ հարդարանքի քննությունը լրացուցիչ փաստարկներ ընձեռեցին հաստատելու, որ մ.թ.ա. I - մ.թ. III դարերում այստեղ ապրել են քաղաքային կենցաղ վարող բնակիչներ, որոնք ունեցել են աշխույժ առևտրական և մշակութային հարաբերություններ թե՛ Հայաստանի և հարևան երկրների անտիկ քաղաքների, թե՛ իրանական կենտրոնների հետ:

Գրականություն

Գնունի Ա. 2014, Կերենը քաղաքակրթությունների խաչմերուկում մ.թ.ա. հազարամյակի երկրորդ քառորդում, «Հայագիտության հարցեր», գլխ. խմբ.՝ Ա. Սիմոնյան, թ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 149-167:

¹⁸ Демирханян 2010, 22.

¹⁹ Chairetakis 2018, 6.

²⁰ Chairetakis 2018, 6.

- Եգանյան Լ. 2010, Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, N 1, Երևան-Գյումրի, «Գիտություն», 224 էջ:
- Խաչատրյան Ժ. 1981, Արտաշատ II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 200 էջ+XXXII աղ.
- Խաչատրյան Ժ., Կանեցյան Ա. 1974, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների N 9, Երևան, էջ 76-91:
- Խաչատրյան Հ. 2002, Անտիկ շրջանի խոհանոցային խեցեղենի գործառական որոշ խնդիրների շուրջ, ԳԱԱ ՀՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, հ. V, էջ 104:
- Կարապետյան Ի. 1971, Մ.թ.ա. VI-III դարերի վաղ հայկական թասերի մի խումբ, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 276-280:
- Կարապետյան Ի. 1979, Կարճաղբյուրի պեղումները 1975-78 թթ., Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 276-280:
- Կարապետյան Ի. 2003, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., հ. 19, Երևան, «Գիտություն», 110 էջ+55 աղ.:
- Կարապետյան Ի., Ենգիբարյան Ն. 2002, Քրմի կնիքով թաղում Արգիշտիխինիլից, Բանբեր Երևանի Համալսարանի, N 2 (107), Երևան, էջ 218-225:
- Պարսամյան Ա. 2015, Երվանդաշատի խեցեղենը ըստ 2007 թ. պեղումների նյութերի, «Անտառ ծննդոց» հոդվածների ժողովածու, խմբագրական կազմ է. Մինասյան, Հ. Պետրոսյան և այլք, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 91-116:
- Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա. 2007, Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, ցուցահանդեսի ցանկ, Երևան, «Հուշարձան», 44 էջ:
- Տիրացյան Գ. 1974, Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, նախնական հաղորդում, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 175:
- Քոչարյան Գ. 1991, Դվինը Անտիկ դարաշրջանում, Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 22, Երևան, ՀԳԱ հրատ., 114 էջ+XXIX աղյուսակ:
- Օհանյան Հ. 1989, Շամիրամի անտիկ ժամանակաշրջանի բնակավայրի խեցեղենը (1981-1987 թթ. պեղումներ), Բանբեր Երևանի Համալսարանի, N 2, Երևան, էջ 208-221:
- Алиев Т., Бабаев Ф., Гусейнова Т. 2011, Об исследованиях на городище Галатепе, Археологические исследования в Азербайджане, 2010, ИАЭ НАН А, Баку, с. 179-185 (на азерб. языке, резюме на рус.).
- Алиев Т., Бабаев Ф., Гусейнова Т., Алиева Г., Аббасов В., Алиев В. 2012, Исследования в античном албанском городище и некрополе Галатепе, Археологические исследования в Азербайджане, 2011, ИАЭ НАН А, Баку, с. 226-234 (на азерб. языке, резюме на рус.).

- Аракелян Б. 1969, Результаты изучения древнего Армавира, Историко-филологический журнал АН Армянской ССР, N 4, с. 157-174.
- Демирханян А. 2010, Северо-восток Еревана (II в. до н.э – I в. н.э), Ереван, «Гитутюн», 140 с.
- Исмизаде О. 1965, Раскопки холма Кара-Тепе в Мильской степи (1954-1958 гг.), Материалы и исследования по археологии СССР, N 125, Москва-Ленинград, «Наука», с. 195-228.
- Казиев С. 1960, Археологические раскопки Мингечаура. Альбом кувшинных погребений, Баку, изд. АН Азерб. ССР, 27 с.+44 таблицы.
- Куфтин Б. 1944, Урартский «колумбарий» у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, Вестник Гос. музея Грузии, Тбилиси, т. XIII-B, с. 1-172.
- Османов Ф. 2006, История и культура Кавказской Албании, IV в. до н.э. – III в. н.э. (на основании археологических материалов), Баку, «Тахсил», 210 с.
- Пиотровский Б. 1950, Кармир Блур I, Результаты раскопок 1939-1949, Археологические раскопки в Армении, АН Арм. ССР, N 1, Ереван, 40 с.+16 таблиц.
- Тирацян Г. 1968, Урарту и Армения: к вопросу преемственности материальной культуры, Вестник общественных наук Ереван, N 2, с. 17-30.
- Тирацян Г. 1988, Культура древней Армении, VI в до н.э.-III н.э., Ереван, АН Арм. ССР, 204 с.
- Chairetakis Y. 2018, Notes on a Hellenistic Milk Pail, Journal of Hellenistic Pottery and Material Culture, Archaeopress, Berlin, vol. 3, p. 3-8.
- Matiasvili N. 2000, Die kultische Architektur in der Kolchis in hellenistischer Zeit, Archaeologische Mitteilungen aus Iran und Turan 2000, Bd. 32, S. 159-175.
- Mellink M. 1968, Archaeology in Asia Minor, American Journal of Archaeology, vol. 72, no. 2, p. 125-147.

ԱՐՅԱՆԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԹԱՍԵՐԻ ՁԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Արմինե Գաբրիելյան

Ամփոփում

Տիգրանակերտի մ.թ.ա. I - մ.թ. III դարերով թվագրվող անտիկ խեցեղենն աչքի է ընկնում ձևակազմական և գործառնության բազմազանությամբ, որի մեջ ուրույն տեղ են զբաղեցնում իբրև սպասք օգտագործվող անոթները: Անտիկ խեցեղենի սպասքի ամենահաճախ հանդիպող մի տեսակ՝ թասերը,

ամբողջական և բեկորային նմուշներով հայտնաբերվում են Տիգրանակերտի Ամրացված և քաղաքային թաղամասերի անտիկ շերտերից: Դրանք հարթ նստուկով, հատակից դեպի վեր լայնացող կողերով բաց անոթներ են, որոնք, բազմաքանակությամբ հանդերձ, ներկայանում են ձևակազմական կայունությամբ՝ հիմնականում տարբերվելով պսակի ձևով: Տիգրանակերտից հայտնաբերված թասերի ձևակազմական հատկանիշների և դեկորատիվ հարդարանքի քննությունը լրացուցիչ փաստարկներ ընձեռեցին հաստատելու, որ անտիկ շրջանում այստեղ ապրել են քաղաքային կենցաղ վարող բնակիչներ, որոնք ունեցել են աշխույժ առևտրական և մշակութային հարաբերություններ թե՛ Հայաստանի և հարևան երկրների անտիկ քաղաքների, թե՛ իրանական կենտրոնների հետ:

Բանալի բառեր՝ Արցախի Տիգրանակերտ, Ուտիք, Կուրի աջափնյակ, անտիկ խեցեղեն, սպասք, թասեր, ծորակավոր անոթ:

МОРФОЛОГО-ТИПОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ МИСОК ИЗ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА

Армине Габриелян

Резюме

Античная керамика из Тигранакерта, датируемая I в. до н.э. – III в. н.э., отличается многообразием форм и функциональностью. В ней особое место занимает столовая посуда. Наиболее часто встречающейся ее разновидностью являются миски, которые были найдены как в цитадели, так и в жилых кварталах античного Тигранакерта. Эта посуда открытого типа имеет плоское днище с расширяющимися кверху стенками. Представленные большим количеством миски Тигранакерта имеют морфологическое постоянство, меняется лишь один элемент – форма венчика. Тщательный анализ морфологических особенностей и художественного оформления мисок позволяет заключить, что население Тигранакерта I в. до н.э. – III в. н.э. было представлено городскими жителями, которые поддерживали активные торговые и культурные отношения как с другими античными городами Армении и соседних областей, так и с иранскими центрами.

Ключевые слова – Арцахский Тигранакерт, Утик, правобережье Куры, античная керамика, столовая посуда, миски, сосуд со сливом.

**MORPHOLOGICAL AND TYPOLOGICAL ANALYSIS OF THE BOWLS FROM
TIGRANAKERT OF ARTSAKH**

Armine Gabrielyan

Abstract

The ceramics of the Classical period revealed from Tigranakert of Artsakh dating back to the I century BC – III century AD is presented in this article in wide morphological and functional variability. In the ceramic complex of Tigranakert there is a separate group of pottery that was used as tableware. In this paper we revise one of the most common types of this cookware – the bowls. The bowls were discovered within the layers of the Classical period both in the citadel area, and in the living quarters. This kind of ware has flat bottom and widening upwards body. The bowls of Tigranakert presented by a rich collection are morphologically similar and slightly differ only in their rim shapes. According to the studies of morphological peculiarities and aesthetic treatment of the bowls revealed from Tigranakert of Artsakh, we can venture a hypothesis that in the I century BC – III century AD its population was presented by urban-dwellers who had cultural relations and led an active trade not only with other cities of Armenia and neighboring countries of the Greco-Roman world, but also with Iranian centers.

Key words – Tigranakert of Artsakh, Utik, the right bank of the Kura river, pottery of the Classical period, tableware, bowls, spouted vessel.

ՆՈՐԱՀԱՅՏ ՈՒՇՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԹԵՂՈՒՏՈՒՄ (2010 թ. պեղումների արդյունքները)

Աստղիկ Բաբաջանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ babajanyanastghik@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 25.10.2020, գրախոսվել է 05.11.2020,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-343

Ներածություն

2010 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկ.՝ պ.գ.թ. Ս.Գ. Հոբոսյան) «Թեղուտի հանքավայրի իրացման գոտում հայտնված պատմամշակութային հուշարձանների հնագիտական ուսումնասիրություն և պեղումներ» իրականացնելու ծրագրի շրջանակներում պեղումներ կատարեց «Ղարաքոթուկի հողեր» (այժմ՝ *Լորուրի հողեր*) կոչված հնավայրում¹: Ներկայացնենք վերոնշյալ հնավայրի տարածքում բացված եկեղեցու ճարտարապետությունը և հայտնաբերված հնագիտական նյութը, ներառյալ նորահայտ խաչքարերը՝ հայերեն վիմագրերով, և տապանաքարերը՝ վրացերեն արձանագրություններով:

Հնավայրի պատմաաշխարհագրական միջավայրը

Հնավայրը տեղակայված է ՀՀ Լոռու մարզի Շնող գյուղից 2 կմ հարավ՝ Շնող գետի և նրա ձախակողմյան վտակ Խառատանոցի ջրի խառնման վայրից հարավ-արևմուտք գտնվող բարձրադիր հրվանդանի վրա: Հնավայրի հյուսիսարևմտյան մասում գտնվում է միջնադարյան գերեզմանոցը՝ ավերված եկեղեցու հետքերով² (նկ. 1-3): Եկեղեցուց մոտ 200 մ

¹ Հոբոսյան 2011, 203, նկ. 4, Բաբաջանյան 2012, 109-110:

² «Ղարաքոթուկ» եկեղեցին ընդգրկված է ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Լոռու մարզի Թեղուտ գյուղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում: Տե՛ս Թեղուտի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (25.10.2020):

հարավ՝ ճանապարհի եզրին, 2009 թ. բացվել էր նաև միջնադարյան հնձանային համալիր (XIII-XIV դդ.)՝ յոթ կարաններով, տաքարով և թոնիրով³:

XIX դարի վերջին Ղարաքոթուկը՝ որպես տեղանուն, նշում է Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը՝ տեղակայելով պատմական Արցախ նահանգի Զավե գավառում⁴ (XX դարի սկզբին՝ Ղազախ): Նա նշում է. «Ալեդ-ցու դաշ, Ղարաքեթիկ, Թեղուտ և Ձորագեղ կոչուած տեղերում ևս կան ատերակ գիւղեր, եկեղեցիներ և հանգստարաններ»⁵:

Եկեղեցին, գտնվելով հրվանդանի ամենաբարձր մասում, գերիշխող դիրք ունի շրջապատի նկատմամբ: Նրա շուրջը մոտ 2 հա տարածությամբ սփռված է գերեզմանոցը՝ XIII-XVII դդ. բնորոշ տարատեսակ տապանաքարերով (երկլանջ, օրորոցաձև և հարթ ուղղանկյուն) և խաչքարերի պատվանդաններով:

Եկեղեցու պեղումները և ճարտարապետական հորինվածքը

Եկեղեցին ամբողջությամբ ծածկված էր փարթամ խոտածածկով և ծառերի արմատներով: Արտաքուստ երևում էին միայն արևմտյան պատի հիմքերը և սրբավայրի վերածված հյուսիսարևելյան կցակառույցի հետքերը: Հարկ է նշել, որ հնավայրի տարածքում աճում են բոնչի կամ փոշնի (լատ.՝ *Celtis caucasica*) տեսակի ծառերը, որոնք հայտնի են մարդկանց և կենդանիներին չար աչքից պաշտպանելու և հիվանդությունները (մասնավորապես՝ աչքի) բուժելու մոգական զորությամբ⁶: Ինչպես սուրբ համարվող ամբողջական բոնչի ծառը, այնպես էլ դրա փայտի կտորը կամ դրանից պատրաստված փորագիր հմայիլները, որոնք իր անունով կոչվել են նաև փոշնի (բոշնի), հմայական պահպանակի գործառույթ են ունեցել⁷:

Պեղումներով բացվեց եկեղեցու հատակագիծը՝ մինչև 1 մ բարձրությամբ պատերով և դեղնավուն հողաշաղախ հատակով: Այն կառուցված էր ավելի վաղ թվագրվող գերեզմանոցի վրա, քանի եկեղեցու արևելյան և հարավային պատերի անկյուն կազմող հատվածները շարված են տապանաքարերի վրա (տե՛ս նկ. 1, 3): 0.8-0.9 մ հաստությամբ պատերը շարված են տեղական անմշակ գրանիտով և գետաքարերով՝ հողային միջ-

³ Հմմտ. Հոբոսյան 2011, 201:

⁴ Բարխուտարեանց 1895, 23:

⁵ Բարխուտարեանց 1895, 389:

⁶ Հմմտ. Իսրայելյան 2006, 73-75. Սիմոնյան 2017, 224-228:

⁷ Հմմտ. Իսրայելյան 1988, 47:

նալիցքով: Պատերի շարվածքում առկա են նաև խաչքարերի պատվանդաններ և քանդակազարդ բեկորներ: Պեղումներից պարզվեց, որ եկեղեցու հատակագծային հորինվածքը զգալիորեն աղավաղվել է բազմաթիվ ու անփույթ նորոգման աշխատանքների հետևանքով: Հատակագծային շեղումները հիմնականում պայմանավորված են արևելյան պատի արհեստական լայնացմամբ (9.7 մ):

Եկեղեցին հատակագծում գրեթե քառակուսի է (8.7x7.7 մ ներքին չափերով)⁸ հիմնական ծավալից դուրս եկող ներքուստ և արտաքուստ ընդգծված ուղղանկյուն խորանով, որը հազվագյուտ երևույթ է հայկական պաշտամունքային ճարտարապետության մեջ (նկ. 2): Հյուսիսարևելյան կողմում բացվեց նաև կիսակլոր աբսիդով ավանդատունը, որը հարավային և արևմտյան կողմից ժամանակակից պատով փակված էր՝ վերածվելով սրբավայրի:


Հայկական ճարտարապետության մեջ հիմնական ծավալից դուրս եկող աբսիդներով (հիմնականում կիսաշրջանաձև կամ բազմանիստ) եկեղեցիները հայտնի են դեռևս վաղ միջնադարից (հմմտ.՝ Լուսակերտ, Փարպի, Ջրվեժ, Ջարջառիս ևն)⁹: Մ. Հասրաթյանը նշում է. «Կառուցվածքի ուղղանկյուն պատերի մեջ չպարփակված, դեպի դուրս եկող աբսիդով հորինվածքը բնորոշ է հայկական միայն վաղմիջնադարյան հուշարձաններին: Ընդ որում, ներսից շրջանաձև կամ պայտաձև, իսկ դրսից ուղղանկյուն, բայց ընդհանուր ծավալից անջատված աբսիդները նույնպես հատուկ են IV-V դդ. հայ ճարտարապետությանը: Վաղ միջնադարից հետո դրանք բոլորն էլ ունեն պատերի ուղղանկյուն եզրագծի մեջ ամփոփված աբսիդ, լինեն դրանք առանձին կանգնած, թե վանական համալիրների կազմում»⁹:

Ներքուստ ուղղանկյուն խորաններ հայտնի են զարգացած և ուշ միջնադարում, բայց դեռևս չեն հանդիպել այնպիսիք, որտեղ ուղղանկյուն հորինվածքը շեշտվի նաև արտաքուստ: Ուղղանկյուն խորանով, սակայն ներգծված ուղղանկյուն ծավալի մեջ, հայտնի օրինակներից է Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցին (X դ.)¹⁰: Ուղղանկյուն խորանով եկեղեցիները հանդիպում են հատկապես Նախիջևանում (տե՛ս Ագուլիսի Ս. Հակոբ Հայրապետ, XI-XII դդ., վերանորոգված՝ XVII դ., 1901 թ., Շամենի Ս. Խաչ,

⁸ Հատակագծերը տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն 2002, 106:

⁹ Հայկական ճարտարապետության պատմություն 2002, 115-116:

¹⁰ Հարությունյան 1992, 243:



Նկ. 1. Ղարաքթրուկի եկեղեցու հատակագիծը (չափագրությունը՝ Լ. Տեր-Մինասյանի)




Նկ. 2. Ղարաքթրուկի եկեղեցի. տեսքը՝ հյուսիս-արևելքից (լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)




Նկ. 3. Ղարաքթրուկի եկեղեցի. տեսքը՝ հարավից (լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)



Նկ. 4. Խաչքարեր և քանդակազարդ բեկորներ (XIV-XVII դդ.)
(լուսանկարները՝ Ա. Բաբաջանյանի)



Նկ. 5. Վրացերեն արձանագրությամբ տապանաքարեր (XIV-XV դդ.)
(լուսանկարները՝ Ա. Բաբաջանյանի)



Նկ. 6. Մետաղե և խեցեղեն գտածոներ (XV-XVII դդ.)
(լուսանկարները՝ Ա. Բաբաջանյանի)

XI-XII դդ., վերանորոգված՝ XV դ., XVII դ., XIX դ., Ջուղայի Ս. Գևորգ, Նախիջևանի Ս. Գևորգ, 1869 թ.)¹¹:

Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում ներքուստ և արտաքուստ ընդգծված խորանով եկեղեցիներ նույնպես հայտնի չեն: Ներքուստ և արտաքուստ ուղղանկյուն և ընդհանուր ծավալից դուրս եկող խորանով Ղարաքոթուկի եկեղեցին այդ առումով ոչ դասական պաշտամունքային ճարտարապետության եզակի օրինակ է:

Ուշագրավ է, որ մինչև 1 մ բարձրությամբ պահպանված պատեր ունեցող եկեղեցու մուտքը չի հայտնաբերվել: Արևմտյան կողմում մուտք ունենալը բացառվում է, քանի որ կառույցն անմիջականորեն հարում էր լանջի գաղիթափին: Տեղանքի առանձնահատկություններից ելնելով՝ հնարավոր մուտքը կարող է լինել հյուսիսային կամ հարավային կողմերում: Հյուսիսային ճակատը գրեթե կենտրոնում բեկված է, որտեղ կարող էր տեղադրված լինել ենթադրյալ մուտքը (նկ. 1):

¹¹ Հմմտ. Այվազյան 1990, 135, 189, 215, 246:

Գտածոները

Խաչքարեր: Պեղումներով հայտնաբերվել են երկու ամբողջական և տասնյակ բեկորային խաչքարեր, որոնք բնորոշ են XIV-XVII դդ. (նկ. 4): Դրանցից երկուսը թվակիր են՝ 1513 թ. և 1604 թ.:


1513 թվակիր ամբողջական խաչքարը (1.08x0.55x0.17 մ) պարզ հորինվածք ունի. կենտրոնում հիմնախաչն է՝ խաչատակից դուրս եկող արմավազարդով (գծ. 1, նկ. 4/1): Թվականը զետեղված է հորիզոնական խաչաթևերի տակ:



ԹՎ(ԻՆ) ԶԿԲ. (1513)

Գծ. 1. 1513 թվակիր խաչքար (գրչանկարը՝ Ս. Աղայանի)

Վերին խաչաթևի երկու կողմում առկա են բարձրաքանդակ գնդեր, որոնք երկնային լուսատուների՝ արեգակի և լուսնի խորհրդանիշներն են: Հորինվածքն առնված է հյուսածո զարդագոտիով շրջանակի մեջ: Քիվը հարդարված է խորաքանդակ կետազարդերով: Խաչքարը մեջտեղից կտրտված էր: Նախքան պեղումները սկսելը գյուղացիների ջանքերով այն կանգնեցվել էր եկեղեցու խորանի հարավարևելյան անկյունում՝ պատվանդանի վրա, հակառակ ուղղությամբ:



ԹՎ(ԻՆ) ՌԾԳ. (1604)

Գծ. 2. 1604 թվակիր խաչքար (գրչանկարը՝ Ս. Աղայանի)

Երկրորդ թվակիր խաչքարից (լայնքը՝ 0.43 մ) հայտնաբերվել է միայն վերնամասը (զծ. 2, նկ. 4/3): Խաչաթևերն ավարտվում են եռաբողբոջ վերջավորություններով: Թվականը փորագրված է վերին խաչաթևի ձախ և աջ կողմերում:

Վերին աջ և ձախ անկյուններում պատկերված է մարդկային երկու քանդակ, որոնց միջև խաչքարի շրջանակի եզրային հյուսածո զարդն է: Մարդկային պատկերները կանգնած են դիմահայաց, նրանց հագին երկար զգեստներ են՝ ընդգծված ոլորագարդ գոտիով: Ձախակողմյան պատկերաքանդակի դեմքը շատ արտահայտիչ է: Կանգնած է ամբողջ հասակով, ձեռնաբարձ դիրքով, ունի ընդգծված նշածն աչքեր և մորուք: Մյուսի դեմքը խաթարված է, բայց ընդհանուր դիմագծերով նմանվում է առաջինին: Նա ձեռքերը պահել է խնդրառուի դիրքով: Կրում է նույնատիպ զգեստ, հագուստի տակից երևում է նաև մի կոշիկը:

Հայտնաբերված մեկ այլ խաչքարի բեկորի վրա առկա է երկտող արձանագրության մի հատված՝ փորագրված խաչքարի շրջանակի վրա (զծ. 3, նկ. 4/6): Այն գրված է XVI-XVII դդ. բնորոշ գրով, անվարժ գրչի ձեռքով, տառերի և տողերի համաչափությունները պահպանված չեն:

..... (սբ. խա)չս ա(ւ)գ(նա)կ(ա)ն սա
.....ն փաշին¹²:



Գծ. 3. Խաչքարի բեկոր՝ երկտող արձանագրությամբ (գրչանկարը՝ Ս. Աղայանի)


Հաջորդը վարդագույն ֆելզիտից կերտված ամբողջական խաչքար է (0.73x0.46x0.11 մ)՝ զույգ խաչաքանդակներով (նկ. 4/5): Նման խաչքարերը լայն տարածում են ստանում սկսած XIII դարից, որոնք «...բացի դեկո-

¹² Արձանագրությունը վերծանելու համար շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետ, պ.գ.թ. Արսեն Հարությունյանին (<< ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

րադիվ բնույթից, կարող են խորհրդանշել առանձին անհատի, նրա խնդիրը, հիշատակը կամ փրկությունը: Նման մի շարք խաչքարերի արձանագրություններ վկայում են, որ դրանք, որպես կանոն, կանգնեցվել են երկու անձի (սովորաբար ամուսինների կամ հարազատների) համար¹³:

Տապանաքարեր: Եկեղեցու պեղման-մաքման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվեցին երկու տասնյակից ավել տապանաքարեր՝ հիմնականում խմբված եկեղեցու հարավային և հարավարևելյան հատվածում: Դրանք մեծավ մասամբ հարթ ուղղանկյուն անմշակ սալեր են, որոնց մեջ հանդիպում են նաև մշակված, եզրային ակոսագոտիով ընդգծված և մարդկային գրաֆիկ պատկերով օրինակներ: Տապանաքարերի մեջ առանձնանում են երկուսը, որոնց վրա առկա են վրացերեն արձանագրություններ¹⁴:

Արձանագիր առաջին տապանաքարը (1.7x0.7x0.25 մ) բացվեց խորանի առջև, որը մեկ այլ սալաքարի հետ ձևավորում է բեմառէջքը: Երկտող արձանագրությունը ներառված է եզրային զույգ ակոսազարդով շրջանակի մեջ (գծ. 4, նկ. 5/1): Տապանաքարի միջնամասով զույգ ակոսազծերով բաժանարար է ստեղծվել տողերի միջև, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է կամարածև վերջավորությամբ: Դրանց միջև փորագրված է եռատերև հյուսածո զարդ: Սալաքարի հարավարևելյան անկյան կտրտվածքը քողարկելու նպատակով փորագրող վարպետն այն կլորացրել է և միացրել եզրագծերին: Ըստ երկմաս տապանաքարի արձանագրության՝ ննջեցյալներն ամուսիններ են, որոնք, ամենայն հավանականությամբ, մահացել են միաժամանակ, ինչ-որ դիպվածի հետևանքով:



Գծ. 4. Տապանաքար 1 (գրչանկարը՝ Ս. Աղայանի)

¹³ Պետրոսյան 2008, 181-182:

¹⁴ Վրացերեն արձանագրությունների վերձանման և մեկնաբանությունների համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում Թեմո Զոքուային (Իլյա պետական համալսարան, ղոցենս):

Առաջին տող՝

ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՂՈՒԻՆԱՅԻՆ.

1. † Rns Sdvnes RmerTn

„†. լ{շ}ն{ս} թ{շ}ն{դ}ն{դ}ն լմերտ{մ}ն“.


Երկրորդ տող՝

ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԽՈՒԱՐԱՅԻՆ՝ ՂՎԻՆԱՅԻ ԱՄՈՒՄՆՈՒՆ.

2. † xras Rns moRIs Sodvns Rm/erTmn

„†. Խ{շ}ն{ս} լ{շ}ն{ս} թ{շ}ն{դ}ն{դ}ն լմերտ{մ}ն“.¹⁵

Վրացերեն արձանագրությամբ երկրորդ տապանաքարը (1.47 x 0.58 մ) հայտնաբերվեց խորանի և ավանդատան պատերի արտաքին անկյուն կազմող հատվածում հետևյալ բովանդակությամբ (գծ. 5, նկ. 5/2).



Գծ. 5. Տապանաքար 2 (գրչանկարը՝ Ս. Աղայան)

ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԴԵՄԵՏՐԵԻՆ (?)

† dme(?)t(?)sSodvns RmerTmn

„†. լ{շ}ն{դ}ն{դ}ն (?)թ{շ}ն{դ}ն{դ}ն լմերտ{մ}ն“.

Դատելով վիմագրերի հնագրական առանձնահատկություններից՝ դրանք թվագրվում են XIV-XV դդ.: Գրված են հին վրացերեն *ասոմթավրուլի* գրով, որն օգտագործվել է կրոնական գրությունների համար: Փորագրիչ վարպետը, ըստ երևույթին, լավ չտիրապետելով վրացերենին՝ որոշ

¹⁵ Արձանագրությունները ներկայացված են առաջին տողում *ասոմթավրուլի* գրով, երկրորդ տողով՝ ժամանակակից վրացերենի *մխերդուլի* գրով:

տառեր փորագրել է հայելային շրջված դիրքով¹⁶։ Ինչ վերաբերում է հիշատակված անուններին, ապա տղամարդու Դեմետրե և Ղուինա անունները լայնորեն տարածված էին միջնադարյան Վրաստանում։ Վերջինս հանդիպում է *Ղուինա/Ղվինա* կամ *Ղուինիա/Ղվինիա* ձևով և ծագում է վրացերեն ღვინო (*ղվինո*) թարգմանաբար՝ գինի բառից։

Խուարա/Խվարա կանացի անունը հավանաբար ծագել է պարսկերեն *xurram* (թարգմ.՝ ուրախ) բառից։ Այն հազվադեպ է հանդիպում միջնադարյան Վրաստանում և առավել տարածված է այդ անունից ծագող *Խուարամզե/Խվարամզե*, *Խուարաշան/Խվարաշան* տարբերակներով։ Մեր մեջ գործածվել է որպես արական անուն *Խոռամշահ/Խուռամշա* տարբերակով XIV դարում։ Որպես իգական անուն՝ հիշատակված է մեկ անգամ 1611 թ. գրված ձեռագրում (Ագուլիս-Արրտ. 1911, 222) *Խաւրամզին* (սեռ. Հոյով) ձևով, որը պետք է կարդալ *Խորամշին*¹⁷։

Մեդաղե գրածոներ։ Եկեղեցու հարավարևելյան անկյունում՝ արևելյան պատի և նրա առջև կանգնեցված սալաքարի միջև, գտնվեց երկաթե իրերի թաքցված մի հավաքածու՝ բաղկացած մարդակերպ արձանիկներից, ջրուր և եզան պայտերից, քերիչից, դռան փականից (նկ. 6/1-4)։ Երկաթե կենցաղային առարկաները կամ աշխատանքային գործիքները սրբատեղիներ տանելու սովորույթը հայտնի է դեռ վաղ ժամանակներից ու տարածված է այլ ժողովուրդների շրջանում ևս¹⁸։ Դրանք կոչված էին հայցելու սրբի գթասրտությունը, պաշտպանելու չար աչքից կամ բուժելու հիվանդությունները։ Պայտերն օգտագործվում էին նաև հուղարկավորության ծեսի ժամանակ¹⁹։ Հավաքածուում ուշագրավ են մարդկային ուրվապատկերով երկաթե *սրբի գրավները*, որոնք մինչև XX դարի 50-ական թթ. տարածված էին Հայաստանի տարբեր շրջաններում և հայաբնակ վայրերում։ Տղամարդու և կնոջ կերպարներով կամ մարդու մարմնի մասերը խորհրդանշող արձանիկները հատուկ պատրաստվում էին սրբավայրերում, ուխտավայրերում, այդ թվում՝ խաչքարերի պատվանդաններին դնելու համար՝ հուսալով, որ հիվանդությունները կփոխանցվեն դրանց²⁰ (նկ. 6/1, 2)։

¹⁶ Հայելային դարձգրով տառերն ընդգծված են։

¹⁷ Աճառյան 1944, 528-529։

¹⁸ Իսրայելյան 2006, 108-111։

¹⁹ Իսրայելյան 2006, 111։

²⁰ Իսրայելյան 2006, 108-109, Պետրոսյան 2008, 264։

Խեցեղեն գրածոներ: Խեցեղեն հավաքածուն խիստ բեկորային է (նկ. 6/5-22): Գտածոներում գերակշռում են անջնարակ խեցանոթների բեկորները, որոնք պատրաստված են դարչնագույն կավով՝ ավազի և կրի որոշակի խառնուրդով, դուրգի վրա և (կամ) ձեռածեփ: Թրծումը երբեմն անհամաչափ է: Մեծամասնություն են կազմում կճուճների բեկորները: Առկա են նաև կարասների և թասերի շրթնամասեր, կժերի կանթեր, խփեր, որոնք թվագրվում են XV-XVII դդ.: Առկա նյութում ուշագրավ է սափորի խողովակաձև թռչնակերպ վիզը, որին երկու կողմից ագուցված են վերադիր՝ կենտրոնում փոսիկով կլորակներ՝ ձևավորելով թռչնի աչքերը (նկ. 6/10): Խեցեղեն հավաքածուում առկա են ջնարակապատ անոթների երկու բեկորներ: Դրանցից մեկը հարդարված է կաթնագույն հետնախորքի վրա սևով և կոբալտով ենթաջնարակային նկարազարդմամբ (նկ. 6/21), մյուսը պատված է միագույն փիրուզագույն ջնարակով (նկ. 6/22): Տեխնոլոգիական հատկանիշներից ելնելով՝ թվագրվում են XV-XVI դդ.:

Եզրակացություններ

Այսպիսով, պեղումներով ի հայտ եկավ ուշմիջնադարյան եկեղեցի՝ ներքուստ և արտաքուստ ընդգծված ուղղանկյուն խորանով, որն իր հատակագծային հորինվածքով եզակի է հայկական ճարտարապետության մեջ: Հայտնաբերված քանդակային և խաչքարային բեկորները, այդ թվում թվագրություն ունեցող խաչքարերը (1513 և 1604), վրացերեն արձանագրությամբ տապանաքարերը, խեցեղեն ու մետաղե հավաքածուները, ինչպես նաև եկեղեցու հատակագծային հորինվածքը թույլ են տալիս այն թվագրել XVI-XVII դդ.: Այն հետազայում ևս բազում փոփոխություններ է կրել, որոնց արդյունքում հատակագծում ձեռք է բերել զգալի շեղումներ:

Դատելով հուշարձանի միջավայրի, հատակագծային հորինվածքի և գտածոների բնույթից՝ այն, ըստ ամենայնի, գերեզմանական եկեղեցի է եղել, որպիսիք հայտնի են Սանահինի, Կեչառիսի և այլ վանական համալիրներից ու բնակավայրերից: Սրանք սովորաբար կոչվել են Ս. Հարություն՝ ի նշան այդտեղ հանգչող ննջեցյալների²¹: Հուշարձանը, բացի գերեզմանական եկեղեցի լինելուց, ծառայել է իբրև ուխտատեղի, որի մասին վկայում են հնավայրի տարածքում աճող սուրբ համարվող բոնչի ծառերը

²¹ Արսեն Հարությունյան, բանավոր հաղորդում, 30.09.2020:

և սրբի գթասրտությունը հայցելու համար հատուկ ուխտավայրեր բերվող երկաթե իրերը:

Գրականություն

Աճառյան Հ. 1944, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, Պետական համալսարանի հրատ., 682 էջ:

Այվազյան Ա. 1990, Նախիջևան: Գիրք հուշարձանաց, Երևան, «Անահիտ», 368 էջ:

Բաբաջանյան Ա. 2012, Նորահայտ հոգևոր կառույց Թեղուտում, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան-Ստեփանակերտ, ԵՊՀ հրատ., էջ 109-110:

Բարխուտարեանց Մ. 1895, Արցախ, Բագու, Տպարան «Արօր», 460 էջ:

Իսրայելյան Ա. 1988, Հայաստանի պատմության պետական թանգարանի փայտե պահպանակների հավաքածուն, Կուլտուր-լուսավորական աշխատանք, N 7-8, էջ 45-54:

Իսրայելյան Ա. 2006, Հմայական պահպանակները հայոց հավատալիքների համակարգում, Ատենախոսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 174 էջ:

Հայկական ճարտարապետության պատմություն 2002, հ. 2 (պատ. խմբ.՝ Մ.Մ. Հասրաթյան), Երևան, «Գիտություն», 352 էջ:

Հարությունյան Վ. 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս», 540 էջ:

Հոբոսյան Ս. 2011, Թեղուտի 2009-2010 թթ. հնագիտական պեղումների նախնական արդյունքները, Պատմաբանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 199-211:

Պետրոսյան Հ. 2008, Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո», 406 էջ:

Սիմոնյան Լ. 2017, Ծառ-Ծաղկաքաղիկ, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 360 էջ:

ՆՈՐԱՀԱՅՏ ՈՒՇՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԹԵՂՈՒՏՈՒՄ (2010 թ. պեղումների արդյունքները)

Աստղիկ Բաբաջանյան

Ամփոփում

Թեղուտի «Ղարաքոթուկի հողեր» կոչվող հնավայրում 2010 թ. իրականացված պեղումների շնորհիվ հայտնաբերվեց գերեզմանական բնույթի եկե-

ղեցի: Այն հատակագծում գրեթե քառակուսի է՝ հայկական ճարտարապետության մեջ ոչ տարածված ներքուստ և արտաքուստ ընդգծված ուղղանկյուն խորանով: Եկեղեցու հատակագծային հորինվածքը զգալիորեն աղավաղվել է հետագա բազմաթիվ ու անփույթ վերանորոգությունների հետևանքով: Հայտնաբերվել են նաև XIV-XVII դդ. թվագրվող բազմաթիվ տապանաքարեր (երկուսը վրացերեն արձանագրությամբ), երկու ամբողջական և մոտ երկու տասնյակ բեկորային խաչքարեր (երկուսը թվագրված՝ 1513 և 1604), խեցեղեն և մետաղե առարկաներ: Հայտնաբերված նյութի վերլուծությամբ և հատակագծային հորինվածքով եկեղեցին թվագրվում է XVI-XVII դդ.: Հնավայրի տարածքում աճող սուրբ համարվող բռնչի ծառերը և հատուկ սրբավայրեր բերվող երկաթե առարկաները (մարդակերպ արձանիկներ, պայտ, կողպեք և այլն), որոնց վերագրվել է չար աչքից պաշտպանելու, հիվանդությունները բուժելու զորություն, վկայում են, որ եկեղեցին եղել է նաև ուխտատեղի:

Բանալի բառեր՝ Հյուսիսարևելյան Հայաստան, ուշ միջնադար, եկեղեցի, տապանաքար, խաչքար, հայերեն և վրացերեն արձանագրություններ, սրբի գրավներ:

НОВОВЫЯВЛЕННАЯ ПОЗДНЕСРЕДНЕВЕКОВАЯ ЦЕРКОВЬ В ТЕХУТЕ (результаты раскопок 2010 г.)

Астхик Бабаджанян

Резюме

В результате археологических раскопок на территории «Земли Харакотука» в Техуте в 2010 году была выявлена позднесредневековая кладбищенская церковь. По планировке церковь почти квадратная (8.7x7.7 м²), с выраженной наружной и внутренней прямоугольной апсидой. План церкви был искажен в результате множественных и порой неверных реконструкций. В результате раскопок были обнаружены также надгробные камни XIV-XVII вв., в том числе и с грузинскими надписями (расшифровка и комментарии – Темо Джоджуа), два цельных и около двух десятков фрагментарных *хачкаров* (два из них датируются 1513 и 1604 г.), керамические и металлические артефакты. На основе выявленных материалов и конструктивных особенностей церковь можно датировать XVI-XVII вв. Исходя из наличия священных деревьев (*каркас кавказский*), растущих на террито-

рии церкви и кладбища, а также из коллекции умышленно спрятанных металлических предметов (человеческие фигурки, подковы, замок и т.д.), имевших значение оберегов от сглаза и разных болезней, церковь служила еще и местом для паломничества.

Ключевые слова – Северо-восточная Армения, позднее средневековье, церковь, надгробные камни, *хачкары*, армянские и грузинские надписи, обереги.

THE NEWFOUND CHAPEL OF THE LATE MEDIEVAL PERIOD IN TEGHUT (The Results of the Excavations in 2010)

Astghik Babajanyan


Abstract

In 2010 in the results of the excavations carried out at the site of "Lands of Gharakotuk" in Teghut a cemetery chapel with almost a square floorplan (8.7x7.7 m²) was uncovered. The chapel has a rectangular apse highlighted from both inside and outside which is not common in Armenian architecture. The architectural plan of the chapel was distorted in the result of multiple and often incorrect reconstructions. The excavations revealed a variety of tombstones of the 14th-17th centuries, including two grave markers with Georgian inscriptions (deciphering and commentaries by Temo Jojua), two complete and two dozen fragmentary *khachkars* (two of them dated 1513 and 1604), ceramic and metal artifacts. Based on the analysis of the found materials and the architectural structure, the chapel dates to the 16th-17th centuries. According to the environment – sacred trees (*Celtis caucasica*) growing around the chapel and the cemetery, as well as a collection of specially hidden metal objects (human figurines, animal shoes, lock etc.) which had protective significance from the evil eye or various diseases, the chapel served also as a place for pilgrimage.

Key words – North-Eastern Armenia, late Middle Ages, chapel, gravestones, *khachkars*, Armenian and Georgian inscriptions, amulets.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում (կազմողներ՝ Ռ. Զարյան, Ա. Բեքարյան), Երևան, «Գիտություն» հրատ., 2020, 656 էջ:



«1889 թվականի ամռանը մեզ մոտ (Սիմֆերոպոլում – Ա.Ա.) հյուրախաղերով հանդես եկավ նշանավոր ողբերգակ Ադամյանը: Տպավորություն նա թողեց հսկայական՝ իր տեմպերամենտով, կրքով, արտիստիկ նյարդայնությամբ և այն ազնվությամբ ու չափի զգացումով լի խաղով, որը հատուկ է միայն գեղարվեստական մեծ անհատականություններին: Դա վիթխարի տաղանդ էր: Շատ տարիներ են անցել, բայց նրա խաղի ազդեցությունը դեռևս կենդանի է իմ հիշողության մեջ, և ականա ծագում էր համեմատությունը Ադամյանի հետ, երբ տեսնում էի մեծ ողբերգակների, ինչպիսիք էին Ռոսսին, Սալվինին, Պոսարտը և այլք: Այդ համե-

մատությունից Ադամյանը չէր տուժում: Նա մեր ժողովրդի ծնած խոշորագույն տաղանդներից էր»¹: Այսպես է գրել իր «Ինքնակենսագրության» մեջ հայ մեծ դերասանի խաղով հիացած՝ համաշխարհային բեմահարթակ բարձրացած հայ առաջին խոշոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանը:

Ճիշտ 130 տարի առաջ՝ 1891 թ. հունիսի 4-ին, ուժերի ծաղկման շրջանում՝ 42 տարեկանում կյանքից հեռացած հայ բեմի վաղամեռիկ հանճարը՝ Պետրոս Ադամյանը (1849-1891), իր 300 դերերով անջնջելի հետք թողեց հայ մշակույթի պատմության մեջ: Ադամյանի արվեստն օրգանապես ներհյուսվեց հայ թատրոնի պատմությանը: Հատկապես ծանրակշիռ էր նրա ներդրումը շեքսպիրյան թատրոնի պատմության մեջ. շեքսպիրականի լավագույն էջերն

¹ ԳԱԹ, Հովհաննես Նալբանդյանի ֆոնդ, N 1 (ա), Ինքնակենսագրություն, 1913 թ. էջ 5:

էին Ադամյան-Օթելլոն ու Ադամյան-Լիրը, իսկ Ադամյան-Համլետը գլուխգործոցն էր, որով հանդես է եկել 40 անգամ: Ավելորդ չենք համարում հիշատակել, որ 1887-ին Թիֆլիսում լույս է տեսել Պ. Ադամյանի «Շեքսպիր և յուր Համլետը ողբերգության աղբյուրն ու քննադատությունները» աշխատությունը:

Ադամյանը նաև բանաստեղծ էր, զբաղվել է գեղանկարչությամբ ու գրաֆիկայով՝ հիմնականում հանդես եկել որպես դիմանկարիչ: Նա վրձնել է եպիսկոպոս Մամբրե Մարկոսյանի (Ադամյանի պորտրետային լավագույն գործերից է), մշակութային գործիչներ Հովհաննես Այվազովսկու, Գևորգ Չմշկյանի, Գրիգոր Արծրունու և այլոց կենդանագրերը, ինչպես նաև շեքսպիրյան հերոսներին բեմական ռոմանտիկ կերպարանքով ներկայացնող պատկերներ («Ինքնանկար Համլետի դերում», «Օֆելիա» ևն): Նա ստեղծել է փոքրաչափ նատյուրմորտներ, իսկ Այվազովսկու ազդեցությամբ վրձնել է մի քանի ծովանկար: «Պ. Ադամյանի գրաֆիկական մեծաքանակ ժառանգության մեջ հանդիպում են նաև գեղարվեստական որոշակի արժանիքներով օժտված, ստեղծագործական ուրույն մտահղացմամբ տասնյակ մատիտանկարներ և առանձին օֆորտներ»², - նկատել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը: Դերասանի նկարչական արվեստի ուսումնասիրությանն է նվիրված նաև Բ. Հովակիմյանի «Պետրոս Ադամյանի Շեքսպիրյան նկարները» աշխատությունը (1998):

Ասում են, թե իր գրական ու նկարչական գործունեությամբ արտիստը «կոճում էր մոռացման դեմ» (էջ 228): Հարցին, թե՛ «Ի՞նչ կարիք ունիս նկարչի անուն վաստակելու, քանի որ իբրեւ բեմական արտիստ անզուգական ես», նա դառը թախիծով պատասխանել է. «Ո՞վ կարող է իմ մասին պատմել ապագայ սերունդին, եթե ոչ ծերունիների թառամած յիշողությւնը: Ես փափաքում եմ ունենալ մի վկայագիր ապագայի համար, - ավելացնում էր նա՝ ձեռով զարկելով իր ձեռագիր վիպակների եւ ոտանավորների տետրին կամ իւր նկարներին» (էջ 214):

Դեռևս Պ. Ադամյանի կյանքի օրոք հրատարակվեցին նրա մասին երկու՝ Պ. Տոնապետյանի «Քսան և հնգամյա բեմական գործունեության Պ. Հ. Ադամյանի» (Կ. Պոլիս, 1888) և Արամ Վրույրի «Պետրոս Հ. Ադամյան» (Թիֆլիս, 1891) գրքերը:

Պ. Ադամյանի կյանքի ու արվեստի ուսումնասիրությունը հարատև եղել է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի թատերագետների գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Ադամյանագիտության մեջ հատկապես

² Աղասյան Ա. 2009, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-X Մի դարերում, Երևան, էջ 35:

նշանակալի է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախկին տնօրեն, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ռուբեն Զարյանի վաստակը, որը հեղինակել է «Ադամյան: Արվեստը» (1960) և «Ադամյան: Կյանքը» (1961) սովորաճավալ աշխատությունները: Ի մի բերելով պարբերական մամուլի էջերում սփռված քննախոսականները, հիշողությունները, արխիվային փաստաթղթերը, գրած և ստացված նամակները՝ Ռ.Զարյանը լույս աշխարհ է բերել դրանք և դրանց հիման վրա ներկայացրել համաշխարհային խոշորագույն ողբերգակներից մեկի կյանքի պատմությունը, կատարել նրա բեմական արվեստի քննությունը: Շեքսպիրյան կերպարների ադամյանական մեկնաբանությունների քննությանն են նվիրված Ռ. Զարյանի «Шекспир Адамына» (1964) և «Ադամյանի Շեքսպիրը» (1965) ուսումնասիրությունները:

Պ. Ադամյանի կյանքին ու գործունեությանն է անդրադարձել ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի թատրոնի, ապա՝ սփյուռքահայ արվեստի բաժինների վարիչ Գառնիկ Ստեփանյանն իր «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» հիմնարար ուսումնասիրության 1-ին (1962) և 2-րդ (1969) հատորներում: Իսկ մինչ այդ նա հրատարակել էր «Պետրոս Ադամյան. Կենսագրական ակնարկ» (1941), «Պետրոս Ադամյան» (1944) և «Петрос Адамян» (1956) մենագրությունները:

Պ. Ադամյանի կյանքին ու գործունեությանն է անդրադարձել նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանն իր «Հայ թատրոնի պատմություն. XIX դար» (1996, 2010) սովորաճավալ աշխատության մեջ:

Եվ ահավասիկ 1980-ական թվականների կեսերին Ռուբեն Զարյանը որոշում է կազմել «Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում» խորագրով ժողովածուն և ինստիտուտի՝ իր իսկ հիմնադրած շեքսպիրագիտության բաժնի աշխատակից, երիտասարդ հետազոտող Անահիտ Բեքարյանին առաջարկում է ուսումնասիրել հայ և ռուսական մամուլում Պ. Ադամյանի մասին տպագրված նյութերը՝ նախապես նրան հանձնելով մի քանի հուշ-հոդվածներ և հանձնարարելով կազմել դրանց համար ծանոթագրություններ, ինչպես նաև որոնել նոր հուշագրություններ անվանի դերասանի մասին: Մոտ երկու տարվա համատեղ աշխատանքի շնորհիվ հավաքվում և համակարգվում է բավական հարուստ նյութ, և կազմվում է ժողովածուի նախնական տարբերակը՝ մոտավորապես 200 մեքենագիր էջ: Սակայն 1980-ականների վերջերին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները վիժեցնում են այդ հույժ կարևոր ծրագրի իրականացումը:

Տասնամյակներ անց՝ 2017 թվականին, մեր խնդրանքով, արդեն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի

բաժին ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանը ձեռնամուխ եղավ Արվեստի ինստիտուտի՝ Ռուբեն Զարյանի անվան շեքսպիրյան գրադարանի վերաբերյալ հետազոտությանը: Այդ ընթացքում նա պատահաբար հայտնաբերում է «Ադամյանի թղթապանակը»: Ինստիտուտի տնօրինությունը որոշեց ընթացք տալ «մոռացված գործին»: Սրանով իսկ Ա. Բեքարյանը պիտի իր համեստ նվերը մատուցեր «սիրված արվեստագետի՝ Պետրոս Ադամյանի պայծառ հիշատակին», - կարդում ենք գրախոսվող ժողովածուի «Երկու խոսքում», որը հեղինակել է Ա. Բեքարյանը:

Հընթացս պարզ դարձավ, որ «մոռացված գործը» դեռևս ավարտուն աշխատանք չէ, պահանջվում է նոր մոտեցում, ցանկություն, եռանդ ու ժամանակ. անելիքները շատ էին: Եվ այդ բժախնդիր ու մանրակրկիտ ծավալուն աշխատանքը՝ ճշգրտել աղբյուրները, թարգմանությունները, ծանոթագրությունները, կատարել լրացումներ, ավելացնել հավելվածներ և այլն, բարեխղճորեն կատարեց հենց Անահիտ Բեքարյանը: Ստացվեց ծավալով նախկինից ավելի քան երեք անգամ մեծ աշխատություն, որտեղ ի մի բերվեց գրեթե այն ամենը, ինչ Պետրոս Ադամյանի մասին հրատարակել են նրա ժամանակակիցները հայ և ռուսական մամուլում, ընդ որում ժողովածուում զետեղվել են նաև նրա մասին բացասաբար արտահայտված հեղինակների հոդվածները: «Ադամեանը մինչև մահ չազատեց հայկական նախանձի և չկամութեան խայթոցներից: Ճշմարիտ է, նա բարեկամներ և պաշտպաններ շատ ուներ, բայց պակաս չէր թիւը և՛ այն զագրելի լրագրական տղրուկների, որոնց համար ոչ մի բարձրութիւն կամ սրբութիւն չկայ: Ադամեան զգաւնքով և արհամարհանքով էր վերաբերում դէպի իր այդ գաճաճ «հակառակորդները», - նկատել է Ալ. Շիրվանզադեն, - նա շատ լաւ գիտէր, որ հայը ինչ ասպարէզում ևս գործէ և որքան ևս գնահատւէ օտարներից, այնուամենայնիւ իր հայրենակիցների մի մասի աչքի փուշն է մնալու: Գիտէր, որ այլասերած ազգի մեջ միշտ եղել են, կան և պիտի լինեն քսու չարամտութեան հերոսներ, որոնց համար իրանց այս կամ այն հայրենակցի բարձրանալը դժոխային տանջանք է, որ այդ անձերի, անշնորհք, անխելք, անզգայ, անխիղճ ու սև անձանց միակ հոգեկան հաճոյքն է մութ անկիւններից քարեր արձակել այն մարդկանց վրայ, որոնց կօշիկների կրունկներին չարժեն իրանք...» (էջ 221-222):

Եվ ահա 2020 թվականին ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց «Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում» շատ սպասված ժողովածուն, որը կազմել են Ռուբեն Զարյանը և Անահիտ Բեքարյանը: Ժողովածուի գիտական խմբագիրն է Հենրիկ Հովհաննիսյանը: Ժողովածուն առաջին անգամ ամփոփ ներկա-

յացնում է ժամանակակիցների հուշերը հայ մեծ դերասան Պետրոս Ադամյանի մասին: Ներառված են հայ և ռուսական պարբերական մամուլում ու ժողովածուներում Պետրոս Ադամյանի մասին տեղ գտած հուշագրությունները՝ համապատասխան ծանոթագրություններով:

Սակայն մինչ ժողովածուի արժևորմանն անցնելը ուզում եմ հատկապես ընդգծել մի կարևոր հանգամանք: Ժողովածուն լույս աշխարհ է եկել շնորհիվ ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի աջակցության, որի համար իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում կոմիտեի նախագահ Սարգիս Հայրցյանին և գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող, գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ Ռուզան Ասատրյանին:

Այժմ՝ ըստ էության:

Դժվար է գերազնահատել ժամանակի մամուլի արձագանքների ու ժամանակակիցների հուշագրությունների դերը դերասանների արվեստի հետազա ուսումնասիրողների համար: «Դերասանի արվեստը հեռացող ու հուշի վերածվող արվեստ է, - իրավացիորեն նկատում է ժողովածուի «Խմբագրի կողմից» բաժնում Հենրիկ Հովհաննիսյանը, - ամեն ինչ ստեղծում է իր ժամանակին և իր ժամանակի համար: Այս արվեստի թողած հետքը լրագրային թատերախոսությունն է կամ ժամանակակցի հուշը: Հետագայի ուսումնասիրողը դիմում է այդ նյութին ու գունաթափված լուսանկարներին և փորձում պատկերացում ստեղծել ժամանակի ամենակույզ գիրկն անցած գեղարվեստական երևույթի շուրջ» (էջ 5):

Եվ իսկապես՝ արտիստի փառքը շատ կարճատև է: Մարդկանց հիշողության մեջ նրանք՝ դերասաններն ու երաժիշտ-կատարողները, տեղ ունեն այնքան ժամանակ, որքան նրանք հանդես են գալիս բեմում: Այս տեսակետից դերասանական ու կատարողական արվեստի ուսումնասիրությամբ զբաղվող թատերագետի ու երաժշտագետի համար նմանատիպ ժողովածուները խիստ կարևոր նշանակություն ունեն, «և ներկա ժողովածուն այդ խնդրին է ծանայում» (էջ 5):

Ուշագրավ է ժողովածուի կառուցվածքը: Որպես առաջաբան՝ Ա. Բեքարյանն ընտրել է մեծ ողբերգակի ժամանակակից, հայ ականավոր վիպասան և դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեի «Պետրոս Ադամյան» հոդվածը՝ դերասանի մահախոսականը, որը տպագրվել է թիֆլիսյան «Արձագանք» շաբաթաթերթի 1891 թ. հունիսի 9-ի համարում, «բեմական հսկայի» մահից 5 օր անց: Շիրվանզադեն նկատել է. «Չը կայ այլ ևս Ադամյանը: Ահա մի ողբալի լուր, որ չար մորիկի պես անցնելով երկրից երկիր՝ պետք է ցաւ պատճառէ առանց ազգի խորութեան այն ամենքին, որ գէթ մի անգամ տեսել են բեմական հանճարին բեմի վրայ» (էջ 9): Ի դեպ, այս ընտրությունը խիստ

հիմնավոր է և հասկանալի, քանի որ Շիրվանզադեն հայ գրողներից միակն է, որ չորս տարի շարունակ (մինչև Ադամյանի՝ Կովկասից հեռանալը) վայելել է մեծ արտիստի բարեկամությունը: Ավելին՝ «Թիֆլիս կամ Բագու գտնված ժամանակ գրեթե օր չէ եղել, որ մենք չը հանդիպեինք», - խոստովանել է Շիրվանզադեն (էջ 223):

Գրախոսվող ժողովածուն զգալի հարուստ նյութ է մատուցում ընթերցողին Պ. Ադամյանի կյանքի, գործունեության, մարդկային հատկանիշների, գաղափարների, ստեղծագործական մտահղացումների և մտահոգությունների մասին՝ հնարավորություն ընձեռելով ստեղծելու արտիստի ամբողջական դիմանկարը:

Ադամյանի մասին ժամանակակիցների հուշերը գրվել և հիմնականում առաջին անգամ տպագրվել են 1885-1916 թթ. ընթացքում: Ժողովածուում ընդգրկվել են հայ գրողներ Ալեքսանդր Շիրվանզադեի, Հովհաննես Թումանյանի, Ռաֆայել Պատկանյանի, Արշակ Չոպանյանի, Լեոյի, նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանի, Տիգրան Եսայանի, բեմադրիչ Գևորգ Չմշկյանի, դերասաններ Սիրանույշի, Ազնիվ Հրաչյայի, Արմեն Արմենյանի, Ամիրան Մանդինյանի և էլի շատ շատերի հուշերը:

Որպես գրախոսվող ժողովածուի վերջաբան՝ Ա. Բեքարյանն ընտրել է հայ երգիծաբան, խմբագիր և դերասան Երվանդ Թոլայանի «Պետրոս Հ. Ադամեան. Ողբերգու անգուգական» հոդվածը, որը տպագրվել է Կ.Պոլսում հրատարակվող «Ծաղիկ» օրաթերթի 1899 թ. դեկտեմբերի 30-ի համարում:

Հոդվածն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Ո՛ղջ է, կենդանի՛ է ան ամեն հայու համար. Շիշլիի գերեզմանոցը իր ուրուականը կը պարունակէ: Ա՛, իրա՛ւ, Ադամեան մը կրնայ ա՛լ չընչել, սիրտ մը կրնայ ալ չբաբախել, մարդ մը կրնայ այս աշխարհէն մեկնած ըլլալ, բա՛յց Օթէլլօ, Համլէթ, Արքայ Լիր, Քին, Ուրիել Ակոսթա, չէ՛, չեն՝ կրնար երբեք մեռնիլ: Ասոնք ստեղծագործութիւններ են: Հայը չպիտի մոռնայ քեզ, Ադամեա՛ն, եւ մանաւանդ զանոնք: Անոնց անմոռանալի յիշատակն ես իմ զաւկիս պիտի կրկնեմ, զաւակս զայն իր թոռա՛ն պիտի կտակէ... Ողբերգո՛ւդ անգուգական, հանգի՛ստ ննջէ՛ Անմահութեան ու Յաւիտենականութեան գիրկը» (էջ 443):

Հատկապես արժեքավոր են ժողովածուի հավելվածները: Հավելված I-ում ընդգրկված են ականատեսների վկայություններից գրի առնված հուշերը, Հավելված II-ում՝ Պ. Ադամյանին նվիրված բանաստեղծությունները, որոնց հեղինակների թվում են Հովհաննես Թումանյանն ու Եղիշե Չարենցը:

Պ. Ադամյանի ստեղծագործական ամբողջական կերպարի լիարժեք բացահայտման է միտված նրա մարմնավորած կերպարների ցանկը (Հավելված III, էջ 463-480):

Ժողովածուն եզրափակում են Ադամյանի մասին գրված ռուսերեն հոդվածների բնագրերը (Հավելված IV, էջ 481-517), որոնց հեղինակներն են բեմադրիչներ Վլադիմիր Նեմիրովիչ - Դանչենկոն, գրաքննադատ Ալեքսեյ Վեսելովսկին, դերասաններ Իվան Պերեստիանին, Դմիտրի Գարին-Վինդինգը, Նադեժդա Տիրասպոլսկայան և ուրիշներ:

Ժողովածուն կազմելիս նույնությամբ պահպանվել է բնագրի տեքստը (ուղղվել են միայն կոպիտ սխալները և ակնհայտ վրիպակները): Բոլոր նյութերը բերված են ժամանակագրական կարգով և արտատպված են սկզբնաղբյուրներից: Եթե որևէ հեղինակ ունի մեկից ավելի հոդված, ապա հաշվի է առնվել նրա առաջին հոդվածի հրատարակման տարեթիվը: Ծանոթագրությունները բերված են ըստ առանձին հոդվածների: Ժողովածուում երկու և ավելի անգամ կրկնվող ծանոթագրությունները համախմբվել են «ընդհանուր ծանոթագրություններ (ըծ)» անվանման տակ և առանձին հոդվածի այդպիսի ծանոթագրության դեպքում հղում է կատարվում ԸԾ-ին (օրինակ՝ ԸԾ-15, պետք է նայել ԸԾ-ի 15-րդ կետը):


Անշուշտ, գրախոսվող արժեքավոր ժողովածուն, որը ևս մեկ անգամ փաստում է, թե հայ մեծ դերասանին ինչքան բարձր են գնահատել օտար, տվյալ դեպքում՝ ռուս գործիչները, ծանրակշիռ ներդրում է հայ թատերագիտության մեջ:

Վստահ ենք, որ այն խթան կդառնա հայ բեմի (և ոչ միայն) մյուս վարպետների վերաբերյալ նմանատիպ ժողովածուների ստեղծման համար:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր

ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՍՏՈՄԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ, 1921 թ. Փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, «Լուսակն» հրատ., 2021, 172 էջ:



Խ. Ստեփանյանի մենագրությունը նվիրված է հայոց պատմության կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ Հայաստանի խորհրդայնացմամբ առաջ եկած հուժկու ժողովրդական բռնկմանը՝ 1921 թ. Փետրվարյան ապստամբության խորքային պատճառների և հետևանքների վերհանմանը: Առավել ևս այն կարևորվում է, քանի որ խորհրդային երկրում 70 տարի շարունակ ըստ էության խեղաթյուրված և միակողմանի է ներկայացվել պատմական այդ կարևոր իրադարձությունը: Հեղինակը, կարևորելով խորհրդային կարգերի հաստատմամբ երկրում տեղի ունեցած վարչակարգի և հա-

սարակական-քաղաքական համակարգի շրջադարձային փոփոխությունը, արտաքին-քաղաքական առաջնահերթություններով պայմանավորված նոր իրավիճակը, եզրահանգում է, որ այն ոչ միայն հանգեցրեց փաստացի անկախության կորստին, այլև չարդարացրեց ժողովրդի սպասելիքները, որի հետևանքով բոլշևիկյան էլիտայի ծայրահեղական մոտեցումները առաջացրին ժողովրդի արդար վրդովմունքը, հանգեցնելով 1921 թ. Փետրվարյան ապստամբությանը, որից, կարծում ենք, հատկապես օգտվեցին քեմալականները և նրանց հետ գործակցած մոսկովյան բոլշևիկները: Նրանք, օգտվելով իրավիճակով ընձեռնված հնարավորությունից, հայ ժողովրդի թիկունքում կնքեցին ամոթալի գործարք. դրա արտացոլանքն են 1921 թ. Մոսկվայի և Կարսի հայադատյաց պայմանագրերը:

Պատմաբան Խ. Ստեփանյանը, նորովի մոտեցում ցուցաբերելով, կարողացել է հավասարակշռված և հնարավորինս անկողմնակալ պատմաքննության ենթարկել հիմնախնդրի արժևորումներում առկա ծայրահեղական և ոչ տեղին մոտեցումները:

Իր հերթին, այդ հիմնահարցին անդրադարձել են նաև Սփյուռքի պատմագիր-հուշագիր հեղինակները, մամուլը, հասարակական-քաղաքական լայն

շրջանակները, որոնց հրապարակումներում տրված մեկնաբանություններն ու գնահատականները՝ կախված կուսակցական, գաղափարական, հատվածական մոտեցումներից ու նախասիրություններից, եղել են բազմաշերտ և ոչ միանշանակ: Ըստ էության, սփյուռքահայ հեղինակների՝ խորհրդային իշխանության հաստատման հիմնահարցին, անկախության գաղափարին և մասնավորապես 1921 թ. Փետրվարյան ապստամբությանը տված մեկնաբանություններն ու գնահատականները համեմատական առումով ավելի ընդունելի են, քան խորհրդային հեղինակներինը, որովհետև վերջիններս գրվել են կոմունիստական գաղափարական պարտադրանքով: Դա վերհանված է տաղանդաշատ գիտնականի աշխատանքում՝ հերքելով ապստամբությանը տված գնահատականները՝ որպես դաշնակցական արկածախնդրություն, հակաժողովրդականության ծայրահեղ դրսևորում կամ այլ կերպ: Ահա նման բազմաբարդ ու բազմատարր խնդրի գիտական-վերլուծական քննությանն է նվիրված պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանի ուսումնասիրությունը, որի իրագործման համար վերջինս գիտական շրջանառության մեջ է դրել նորահայտ արխիվային փաստաթղթեր և այլ վավերագրեր: Հասկապես կարևորվում է, որ Խ. Ստեփանյանը իր աշխատանքում նորարարական մոտեցում է ցուցաբերել:

Աշխատությունն ունի կոռ կառուցվածք, գրագետ և սահուն լեզվաոճական շարադրանք: Հեղինակը հիմնավոր մակարդակով տալիս է այս կամ այն հիմնահարցի փաստառատ շարադրանքը՝ զուգահեռաբար ներկայացնելով խորհրդային ու հետխորհրդային շրջանի պատմագիտության և Սփյուռքի հասարակական-քաղաքական տարբեր շրջանակների՝ գործիչների, պատմագիրների, հուշագիրների: Հեղինակն իր տեսակետներն ու մոտեցումները հիմնավորելու նպատակով հարկ եղած դեպքում մանրագնիման հրապարակել է մամուլում, խորհրդային և հետխորհրդային հեղինակների աշխատություններում տրված մեկնաբանություններին ու գնահատականներին՝ ըստ արժանվույն գնահատելով դրանք:

Անդրադառնալով խորհրդային իշխանության հաստատման հիմնահարցին և այդ հոդի վրա 1921 թ. ճայթած Փետրվարյան ինքնաբուխ ապստամբությանը և այդ խնդիրների վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի արտահայտած տեսակետներին ու դիրքորոշումներին՝ Խ. Ստեփանյանը քննական մոտեցմամբ լավագույնս բացահայտում է վերջիններիս շրջանում առկա գաղափարական տարածայնությունների պատճառները, խոսում բոլոր այն հանգամանքների մասին, որոնց միջավայրում Սփյուռքի կազմակերպությունները հանդես են եկել միանման կամ հակադիր դիրքորոշումներով: Յուրաքանչյուր խնդրի ներկայացնելիս, դրա քննարկման ու վերլուծության ավարտին հեղինակը ներկայացնում է եզրակացություններ,

որոնցում ինչպես քննադատվում, այնպես էլ արժևորվում են հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների և անհատների դիրքորոշումները: Քանի որ մենագրությունը քննական-համադրական, վերլուծական ու կարծես թե բանավիճային է, դրա համար հեղինակը, որպես ատաղձ, մեծապես հենվել է Սփյուռքի շատ հարուստ մամուլի՝ թերթերի ու հանդեսների, խորհրդային և հետխորհրդային շրջանի պատմագիտական աշխատությունների, փաստաթղթերի ժողովածուների վրա: Իր առջև դրված խնդիրները համակարգված ներկայացնելու նպատակով Խ. Ստեփանյանին հաջողվել է Սփյուռքի և խորհրդահայ ու հետխորհրդային ժամանակաշրջանի բազմահարուստ հրապարակումները, մենագրությունները, տարաբնույթ աշխատասիրությունները, մամուլի նորովի և առաջին անգամ շրջանառված նյութերը խմբավորել, դասակարգել ու կանոնակարգել որոշակի գիտական պարբերականացման սկզբունքով՝ է՛լ ավելի բարձրացնելով աշխատանքի գիտահետազոտական արժեքը:

Խ. Ստեփանյանը կարողացել է լիարժեքորեն ներկայացնել Սփյուռքի կուսակցությունների և հասարակական-մտավորական շրջանների, խորհրդային և հետխորհրդային շրջանի պատմաբանների, տարբեր պետական գործիչների հասարակական-քաղաքական դիրքորոշումներն ու գնահատականները 1921 թ. փետրվարյան համաժողովրդական իրադարձությունների հարցում՝ դրանք դիտարկելով կոմունիստական-բոլշևիկյան ծայրահեղության և անկողմնակալության ու անաչառ գիտականության համադրման տիրույթում: Կարմիր թելի պես անցնում է այն տեսլականը, որ դոսաշխարհի հասարակական-քաղաքական բոլոր հատվածներն ու շրջանակները, այդ թվում՝ ՀՅԴ-ն, չընդունելով հանդերձ խորհրդային բոլշևիկյան վարչակարգը, լինելով գաղափարական հակառակորդ, սակայն, ընդհանուր առմամբ, բարյացակամ են եղել Խորհրդային Հայաստանի նկատմամբ, փորձել են հնարավորության չափ օգնել ու օժանդակել հայրենիքի վերաշինությանը և զարգացմանը:

Ըստ էության, Խ. Ստեփանյանը կարևորել է 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատճառները և հետևանքները մի ամբողջության և միասնության մեջ պատմաքննության ենթարկելը: Անդրադառնալով ապստամբության պատճառներին՝ հեղինակը եկել է տրամաբանական եզրահանգման, որ համաժողովրդական ցասման պատճառ են հանդիսացել ինչպես խորհրդային իշխանության գործադրած անհիմն և ոչ տեղին բռնությունները, որին կողմնակից չի եղել հայ բոլշևիկ ղեկավարների սակավաթիվ, սակայն անհամեմատ ավելի չափավորական-հավասարակշռված մասը, այնպես էլ Երևանի համաձայնագրից առաջ եկած հիասթափությամբ ծնված զանգվածային բռնությունները և մտավորական խավի աչքի ընկնող ներկայացուցիչների և հայ

զինվորականության հիմնազուրկ ձերբակալությունները և դրան հաջորդող ֆիզիկական հաշվեհարդարները: Անշուշտ, Խ. Ստեփանյանի աչքից չի վրիպել նաև Հայաստանի պայմաններին անհարիր և անընդունելի ռազմական կոմունիզմի քաղաքականության դիտարկումը, որի ժամանակ իրագործված այսպես կոչված ռեկվիզիցիաների կամ բռնագրավումների քաղաքականությունը հեղինակն արդարացիորեն համարում է ապստամբության ծնունդ հանդիսացող ամենագլխավոր պատճառներից մեկը, այն էլ սովի ճիրաններում գտնվող Հայաստանում: Ապստամբությանը նպաստած գործոնների մեջ Խ. Ստեփանյանը կարևորում է նաև բոլշևիկների կողմից անկախության գաղափարի և տարածքային հարցերի նսեմացումն ու անտեսումը:

Ոչ պակաս դիտարժան են Խ. Ստեփանյանի հանրագումարային եզրահանգումները 1921 թ. Փետրվարյան ապստամբության հետևանքների վերաբերյալ: <Եղինակի կարծիքով՝ այն հնարավոր դարձրեց փրկել հայ մտավորականության և զինվորականության մի մասին, խորհրդային իշխանություններին հարկադրեց գնալ որոշակի զիջումների, փոխել քաղաքականությունը և պարտադրեց վարել անհամեմատ ավելի կշռադատված և մեղմ քաղաքականություն: Շատ կարևոր է Խ. Ստեփանյանի նաև այն եզրահանգումը, ըստ որի բացահայտվում է, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել իշխանությունների անխոհեմ և հակաժողովրդական քաղաքականությունը վարկաբեկելով խորհրդային իշխանության գաղափարը, որի ռաիվիրաները ռուսական բոլշևիկներն էին, և դրանով իսկ կասկած և հիասթափություն սերմանելով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ընտրանքում, որն արդիական հնչեղություն ունի և այսօր:

Խ. Ստեփանյանի այս արժեքավոր աշխատությունը ունի պատմագիտական էական արժեք, քանզի ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ Սփյուռքում Հայաստանի խորհրդայնացման հետ շաղկապված այնպիսի մի շրջադարձային իրադարձություն, որն է 1921 թ. Փետրվարյան ապստամբության հիմնահարցը՝ իր բոլոր դրսևորումներով, դեռևս լիարժեքորեն և անկողմնակալ չի հետազոտվել, և այս ուսումնասիրությունը գալիս է լրացնելու հայ պատմագրության մեջ առկա այդ բացը: Աշխատությունը գրված է փաստական հարուստ նյութերի հիման վրա, հարցադրումները և դրանց պատասխանները քննական-վերլուծական են, փաստարկված ու միանգամայն համոզիչ:

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ԲԱՍԿԵՐԻ ԵՐԳԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

«Երբ թերթերում կարդում եմ, թե ինչպես արյունարբու գեներալ Ֆրանկոն և վայրագ մոլան, միջնադարյան այս խավարակուտ հոգիները, գերմանական և իտալական գազազած ֆաշիստների հետ խեղդեցին քաջարի բասկերի նորանվաճ ինքնավարությունը, ռումբերի հրեղեն հեղեղի տակ կործանեցին, աճյուն դարձրին բասկերի հոյակապ մայրաքաղաքը՝ Բիլբաոն և այս առեղծվածային ժողովրդի մշակույթի վայրը՝ նվիրական Գերնիկան - խորին ցավով և սրտի մորմոքով վերհիշում եմ Փարիզի իմ բասկ բարեկամներին... Ո՞վ գիտե՝ ինչ եղան նրանք, այս արյունոտ փոթորկի մեջ արդյոք ի՞նչ էր ճակատագրված նրանց համար...»¹, - այսպիսի մտորումներով էր տոգորված Ավ. Իսահակյանի մեծ սիրտը, որը սրբորեն հավատում էր բասկ հայրենասերների պայքարին հանուն ժողովրդի ազատության՝ ստեղծելով ինքնակենսագրական «Գերնիկայի նվիրական կաղնին» պատմվածքը:

1935 թ. Լամանշի ծովափին Իսահակյանը ծանոթանում է բասկ-երաժըշտագետ Թեոդորի հետ: Նրանց միջև հաստատվում են բարի, մտերիմ հարաբերություններ: Բանաստեղծի համար առանձնապես հուզիչ էր, երբ «մշտապես տրամադրված մաեստրո Թեոդորը երգում էր բասկերի ժողովրդական տաղերից, որոնք խոսում էին իմ սրտից. այնքան նման էին մեր մելոսին» (էջ 264-265): Գուցե դա ինչ-որ հոգևոր ազդակ էր, որ դրդեց Իսահակյանին ծանոթանալ բասկերի պատմությանը, նույնիսկ մի կարճ շրջան ուսումնասիրել բասկերի լեզուն...

Նա գերագույն ակնածանքով է մտորում այդ ազգի մասին. «Անհիշատակ ժամանակներից եկած և մինչև օրս հարատևած այս մի ավի ժողովուրդը գիտության համար մնացել է տակավին անլուծելի առեղծված: Նրանց ծագումը անհայտ է, նրանք չեն պատկանում մեզ հայտնի ոչ մի ցեղային խմբավորման: Նրանց լեզուն անկախ դիրք ունի և չի հարաբերվում հին ու նոր ոչ մի լեզվի հետ» (էջ 265)²: Փարիզում մաեստրո Թեոդորը Իսահակյանին ծանո-

¹ Իսահակյան Ավ. 1959, Երկեր, հ. III, Երևան, էջ 263: Այսուհետ բոլոր բնագրային մեջբերումները կլինեն նույն հրատարակությունից՝ մեջբերման ավարտին նշելով միայն համապատասխան էջահամարները:

² Նկատի ունենանք, որ հետագայում՝ 1994-1998 թթ., Երևանում հրատարակվել է «Արաքս» հայ-բասկական միջազգային գիտական հանդեսը (խմբագիր՝ Վահան Սարգսյան (1954-2011)): Տե՛ս նաև նույն հեղինակի Բասկերի ծագման առեղծվածը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 2000, ինչպես նաև Հայ-բասկական լեզվական առնչություն-

թացնում է բասկ երիտասարդների հետ, որոնք Ֆրանսիայում ապաստան գտած փախստականներ էին: Այս կրակոտ, անմիջական հայրենասերների զրույցները՝ բասկերի դարավոր պայքարի մասին հանուն իրենց երկրի ազատության, ինքնավարության, մեծ տպավորություն են թողել բանաստեղծի վրա: Բասկերը պատմում են իրենց ազգի սրբատեղի Գերնիկայի մասին. «Գերնիկան բասկերի սիրտն է: Այնտեղ անհիշատակ ժամանակներից կանգուն է նվիրական կաղնին: Դարերի մշուշից է բուսել նա... Ինչքա՞ն կայծակներ են, դարերի մեջ, պայթել նրա կատարին, ինչքա՞ն փոթորիկներ կոտրել են նրա ճյուղերը, բայց միշտ դալար է նա, այդ հսկան, միշտ կանգուն է մնացել, միշտ հաղթական: Նա մեր կայունության, կյանքի, ազատության խորհրդանիշն է» (էջ 269):

Բոլոր բախտախնդիր վիճակները բասկերը լուծել են այդ սրբազան կաղնու տակ, «երդվել են իրենց արյունը թափել՝ ջախջախելու ֆաշիզմը» (էջ 270), երգել են իրենց հին երգը՝ Գերնիկայի սրբազան կաղնուն նվիրված: Իսահակյանը ստեղծում է այդ երգը՝ մի ոգեշունչ բանաստեղծություն՝ գեղեցիկ դիթամիկ ներդաշնակությամբ, որն արտացոլում է խիզախ բասկերի պատրաստակամությունը՝ պաշտպանելու իրենց ազատությունը: Ավ. Իսահակյանի «բասկերի երգը», օգտագործելով կերպարային յուրահատուկ համակարգ, այնքան համոզիչ էր արտացոլում ժողովրդի ազգային գծերը, որ դրոշմ մեզ «բասկերի հետքերի» որոնումներին:

«Աղբյուր» ամսագրում մենք հայտնաբերեցինք ազգությամբ բասկ իսպանացի գրող Արտուրո Կամպիոնի (1854-1937) «Բասկական լեգենդա» պատմվածքին՝ թարգմանված ռուսերենից³: Այս գործն առանձին գրքույկով հրատարակվել է 1890 թ. Թիֆլիսում:

Առասպելները, պատումները, լեգենդները Պիրենեյան թերակղզու փոքրաթիվ ազգերի՝ բասկերի, կատալոնացիների և գալիսիացիների գրականության մասն էին իրենց պայքարում՝ հանուն ազատ, ինքնուրույն գոյատևման: Զ.Ի. Պլավսկինը «Իսպանիայի բազմազգ գրականությունը» հոդվածում նշում է. ««Փոքր» ժողովուրդների մշակութային գործիչների առաջ դրված էր այդ մշակույթների ինքնուրույն գոյատևելու իրավունքը պաշտպանելու խնդիրը: Պատահական չէ, որ այդ ժողովուրդների գրականությունում այդպիսի երևացող տեղ է գրավում իրենց հերոսական անցյալի պատմական և լե-

ների հարցը լեզվաբանության մեջ, Երևան, 2002: Իր աշխատություններում Վահան Սարգսյանը բազմաթիվ առնչություններ է տեսնում հայերենի և բասկերենի միջև:

³ Աղբյուր, Թիֆլիս, 1890, N 8-9: Ռուսերեն բնագիրը տե՛ս «Газета А. Гаттыка», Москва, 1890, N 2:

գենդար թեման»⁴։ Ա. Կամպիոնի լեգենդը լիովին համապատասխանում է այդ չափանիշներին. հնադարյան բասկերը ներկայացված են որպես ազգի նվիրյալներ, խիզախ հերոսներ, որոնց համար առաջնային նպատակը ժողովրդի անկախությունն է։ Նրանք վոնդում են Հռոմի դեսպանին՝ հրաժարվելով կատարել ազգը նսեմացնող պահանջները։ Հավաքվելով իրենց փառապանծ, նվիրական կաղնու տակ՝ բասկերը երդվում են մոռանալ թշնամանքը, բոլոր անձնական վեճերը և միավորվել հանուն հայրենիքի լուսավոր ապագայի։ Այդ պահին ժայռի գագաթին հայտնվում է մի գեղեցիկ աղջիկ, որը երգում է ազգային հնադարյան երգը, իսկ ամբոխը ծնկաչոք լսում է նրան։ Հեղինակը ներկայացնում է բասկերի երգի արձակ շարադրանքը։ Ավ. Իսահակյանի ստեղծած բասկերի երգի և Ա. Կամպիոնի երգի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս մեզ համոզվել այդ տեքստերի հարազատության մեջ։ Մենք ենթադրում ենք, որ Կամպիոնի՝ բասկերի երգի արձակ օրինակը որպես տողացի է ծառայել Իսահակյանի չափածոյի ստեղծման համար։ Ստորև ներկայացնում ենք Ավ. Իսահակյանի երգը և Ա. Կամպիոնի արձակ երգի համապատասխան հատվածների զուգադրումը⁵։

Զետեղելով բասկերին նվիրված երգը պատմվածքի կենտրոնում՝ Իսահակյանը, մեր կարծիքով, առանձնակի ուշադրություն է դարձրել այս գործին։ Անթերի, անչափ մանրակրկիտ, խնամքով է մոտեցել բանաստեղծը Կամպիոնի բնագրին՝ պահպանելով բասկերի հարազատ նկարագիրը, կերպարային կուռ համակարգը, որը վառ արտահայտվել է նրանց մշակույթին բնորոշ ազգային կերպարանքի համոզիչ վերարտադրումով՝ «ջխոնարիվող վեհ կաղնի», «քաջ հովիվներ», «գեղեցիկ պատանիներ», «լուսեղեն աղջիկներ», «երկաթե լեռներ», «ազատության աստղ» և այլն։

«Գերնիկայի նվիրական կաղնին» Վարպետը ստեղծել է 1937 թ. հոկտեմբերին՝ Գերնիկայի ոչնչացումից հետո։ Իր բասկական երգով Իսահակյանը հիշեցրեց այդ ազգի փառապանծ անցյալը և հավերժություն մաղթեց Գերնիկայի նվիրական կաղնուն և բասկ ժողովրդին։

⁴ Расы и народы, Ежегодник, Москва, 1980, N 10, с. 219:

⁵ Բոլոր տողացիների տեքստը տե՛ս Աղբիւր, նշված հրատարակությունը, էջ 337, ինչպես նաև Արտուրո Կամպիոն, Բասկական լեգենդա, Թիֆլիս, 1890, էջ 13-14: Մեջբերումներում պահպանել ենք հրատարակության ուղղագրությունը:

Իսահակյան Կամպիոն

Մեր դաշտերում թափառում են Քաղցած գայլեր ոռնալով: Ու ակնդետ մեր հոտերին՝ Որս են ուզում ոռնալով:	Անտառներում հավաքվում են գայլերը: Նրանք քաղցած են, որս են փնտռում և շրջակայքը թնդացնում են իրանց օռնոցով:
Քաջ հովիվներ, արթո՛ւն կացեք, Մոտ են նրանք մեզ արդեն, Քաջ հովիվներ, ոտքի՛ ելեք, Մեր հոտերը չճնջվեն:	Արթո՛ւն կացեք, հովիվներ՛ր, եթե՛ դուք քնեք, կը ոչնչացվին ձեր հոտերը. արթուն կացեք և սրեցեք ձեր տապարները ու տէգերը, որ կարողանաք կոտորել գայլերին:
Այս ոսոխներն սպառնալից՝ Հագել են գեղեցիկ ու զրահ, Ի՞նչ են ուզում մեր սուրբ հողից, Որ խուժում են մեր վրա:	-Ի՞նչ են ցանկանում այլազգիք մեր լեռներում... Հոմայեցոց մարմինը պատած է երկաթով, իսկ մենք մերկ ենք...
Մեր պատիվն ու ազատություն Մեզնից խլել են ուզում. Իրենց պետի չար բերանից Ի՞նչ խոսքեր են մեզ ասում:	Նրանք կամենում են ոչնչացնել մեր պատիւն ու ազատութիւնը:
Պատանիներ՝ մեր գեղեցիկ, Մեր լուսեղեն աղջիկներ՛ր, Նրանց ծառա պիտի լինիք, Նրանց կանանց՝ նաժիշտներ:	Նրանք ասում են, թե՛ մեր մատաղահաս աղջիկեքը սիրում ու գեղեցիկ են, մեր երիտասարդները քաջ և ուժեղ են, և ուզում են տանել նրանց աշխարհի իշխանի ծառայութեան համար:
Մեր հայրենի ազատության Կաղնին չուզեց խոնարհվել, Վայրագ ոխով կուզեն հիմա Մեր վեհ կաղնին խորտակել:	Էսկալիայի ազատութեան ծառը ասում է աշխարհին. «դու շատ վախկոտ ես», և այս պատճառով ուզում են կտրել, ոչնչացնել նրան:
Դո՛ւրս մեր երկրից, դո՛ւրս, գազաններ, Մեր հին հողը մի՛ պղծեք, Կորչելու չէ մեր հայրենիք, Քանի կռվել մենք գիտենք:	Դո՛ւրս, հոմեացիք, դո՛ւրս այստեղից: Մենք քիչ ենք թուվ, բայց մենք չենք վախենում ձեզնից, որովհետև մենք բոլորս դարձյալ եղբայրներ ենք:
Ապառաժներ մենք կպոկենք Մեր երկաթե լեռներից, Ու ձեր գլխին վար կթափենք, Ձեզ կվանենք մեր տնից:	Բայց մենք կը բարձրանանք մեր լեռների գլուխը, կըջարդենք ժայռերը ու կթափենք թշնամու գլխին: Երբ թշնամին կըսկսի փախչիլ, մենք վեր կը գանք լեռներից, կը հալածենք նրանց մեր կարճ տէգերով:
Տեսե՛ք մեր մուր երկնում ծագեց Ազատության աստղն ահա. Մեր հին կաղնին նորից ծաղկեց Եվ ծփում է մեր վրա:	Նայեցեք, բասկեր, կապոյտ երկնքի վրա լուսին է փայլում և ուղարկում է դէպի երկիրը իր արծաթափայլ լոյսը: Աղօթենք Աստծուն, որ նա ոյժ տա մեր դաշնակցութեանը ու փրկի Էսկալ-Էդիան...

ԱԼՎԻՆԱ ԱՐԱՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ. ՀՈՒՄԱՆԻՏՏ-ՓԻԼԻՍՈՓԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱԶՆԻՎ ՈՒ ՆՎԻՐՅԱԼ ԳՈՐԾԻՉԸ



Հայ հասարակայնությունը, գիտական հանրությունն ու բարձրագույն դպրոցը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին: 2021 թ. ապրիլի 27-ին COVID-19-ի պատճառով կյանքից անժամանակ հեռացավ պետական-քաղաքական ականավոր գործիչ, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, Հյուսիսային համալսարանի գիտական կենտրոնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գրիգոր Եգորի Ասատրյանը:

Գ. Ասատրյանը ծնվել է 1935 թ. օգոստոսի 31-ին Էջմիածնի շրջանի Խզնավուզ (ներկայումս՝ Արագած) գյուղում:

Գերազանց գնահատականներով ավարտելով նախ հայրենի Արագած գյուղի յոթնամյա, ապա հարևան Աղավնատուն գյուղի միջնակարգ դպրոցը, նա ուսումնառությունը շարունակում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում՝ 1958 թ. ավարտելով գերազանցության դիպլոմով: Ուսումնառության երկրորդ տարվա սկզբին տեղի է ունենում «ճակատագրական հանդիպումը» փիլիսոփայության հետ: Դեպի փիլիսոփայություն պատանու «շրջադարձի» հարցում բացառիկ էր փիլիսոփայության դասախոսներ, փիլիսոփայական գիտության երախտավորներ, փիլիսոփայական գիտությունների թեկնածուներ Աշոտ Բաբախանյանի ու Մեհենդակ Մելիք-

յանի և հատկապես փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Կարապետյանի դերը: Հենց նրանց դասախոսություններն ու նրանց հետ անմիջական շփումներն են նրա մեջ սեր ու նվիրում ձևավորում դեպի տեսական-փիլիսոփայական գիտելիքը:

Համալսարանում սովորելու տարիներին Գ. Ասատրյանն ակտիվորեն մասնակցում է տնտեսագիտական ֆակուլտետի և համալսարանի հասարակական-ուսանողական կյանքին: Նա գործուն մասնակցություն է ցուցաբերում հատկապես համալսարանի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, այդ ընկերության կողմից անցկացվող ամենատարբեր միջոցառումներին: Երկրորդ կուրսից սկսած մինչև ուսումնառության ավարտը նա ղեկավարում է համալսարանի ուսանողական գիտական ընկերության տնտեսագիտական բաժանմունքը: Համալսարանում փիլիսոփայության բաժնի բացակայության պայմաններում տնտեսագիտական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Գ. Ասատրյանի նախաձեռնությամբ համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմում առաջին անգամ հիմնադրվում է փիլիսոփայական բաժանմունքը, որի անփոփոխ նախագահն է դառնում նա՝ համալսարանում ուսանելու հետագա բոլոր տարիներին: 3-րդ կուրսից սկսած մինչև ուսումնառության ավարտը նա կատարում է նաև համալսարանի ուսանողական գիտական ընկերության պատասխանատու քարտուղարի պարտականությունները: Գ. Ասատրյանը գործուն մասնակցություն է ցուցաբերում համալսարանի ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպվող ուսանողական գիտական ամենամյա կոնֆերանսներին, իսկ փիլիսոփայական տարբեր թեմաներին նվիրված նրա զեկուցումներն արժանանում են բարձր գնահատականի: Համալսարանի ՈՒԳԸ-ի 1956 թ. գարնանային տարեկան նստաշրջանում նրա ներկայացրած «Գեղեցիկի փիլիսոփայական ըմբռնումը» զեկուցումը՝ նվիրված գեղեցիկի տեսական-փիլիսոփայական վերլուծությանը, գեղագիտականի բնույթի ու առանձնահատկությունների պարզաբանմանը, որպես ուսանող-հետազոտողի ինքնուրույն աշխատանք բարձր է գնահատվում ու շահում առաջին կարգի մրցանակ: Առաջին կարգի մրցանակի են արժանանում նաև համալսարանի ՈՒԳԸ-ի հաջորդ տարիների գիտաժողովներում նրա կարդացած մյուս զեկուցումները՝ «Դեմոկրիտ Աբդերացու փիլիսոփայությունը» և «Մարքսիստական փիլիսոփայությունը ճշմարտության մասին», որոնք, ի դեպ, վկայում են դրանց հեղինակի փիլիսոփայական հետաքրքրությունների լայն շրջանակի մասին: Ընդ որում, վերջին զեկուցումը՝ «Մարքսիստական փիլիսոփայությունը ճշմարտության մասին», համալսարանի հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ 1958 թ. տպագրվում է համալսարանի ուսանողական գիտական աշխատանքների անդրանիկ ժողովածուում:

1957 թ. գարնանը համալսարանի փիլիսոփայության ամբիոնի երաշխավորությամբ բուհի ռեկտորատի կողմից նա գործուղվում է Էստոնիա և Լատվիա, որտեղ փիլիսոփայական թեմաներով զեկուցումներով հանդես է գալիս Տարտուի և Լատվիայի պետական համալսարանի (ք. Ռիգա) ուսանողական գիտական ընկերությունների կոնֆերանսներում:

3-րդ կուրսի սկզբին Գ. Ասատրյանն արժանանում է Խորհրդային Հայաստանի կառավարության՝ Երևանի պետական համալսարանում առաջին անգամ սահմանաժ Միքայել Նալբանդյանի անվան կրթաթոշակին, որն անփոփոխ պահպանում է ընդհուպ մինչև համալսարանում ուսումնառության ավարտը:

Գ. Ասատրյանը փայլուն է հանձնում պետական քննությունը՝ իր պատասխաններով զարմանք պատճառելով պետական քննական հանձնաժողովին: Պետական քննության գնահատականները հրապարակելիս պետական քննական հանձնաժողովի նախագահ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Թումանյանը Գ. Ասատրյանի պետական քննության արդյունքը ներկայացնում է որպես «գերազանցների գերազանց» և մի պահ ընդհատելով քննության արդյունքների հրապարակումն ու հայացքն ուղղելով քննական դահլիճում ներկա շուրջ հարյուր շրջանավարտներին, ասում՝ «Հիմա նա կարող է ձեզ բոլորիդ դաս տալ»:

Համալսարանն ավարտելուն պես 1958 թ. հունիսին Գ. Ասատրյանը պետական գործուղումով աշխատանքի է անցել Սովետական Հայաստանի Մինիստրների սովետի սովետական վերահսկողության հանձնաժողովում (1962-ից՝ Սովետական Հայաստանի պետական վերահսկողության կոմիտե, այնուհետև՝ ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի կուսակցական-պետական վերահսկողության կոմիտե, ՀԽՍՀ ժողովրդական վերահսկողության կոմիտե): Տարիներ շարունակ նա եղել է այդ հիմնարկի կուսակցական կազմակերպության բյուրոյի քարտուղարը, ընտրվել Հայաստանի կոմկուսի Երևան քաղաքի Սպանդարյանի շրջկոմի անդամ, Սպանդարյանի շրջանային խորհրդի դեպուտատ:

Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո, առանց այդ տարիներին ասպիրանտուրա ընդունվելու համար պարտադիր համարվող առնվազն երկու տարվա արտադրական ստաժի, համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի և բուհի գիտական խորհրդի երաշխավորությունների հիման վրա Հայաստանի գիտությունների ակադեմիայում նրան բացառության կարգով թույլատրում են մասնակցելու 1958 թ. սեպտեմբերին Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորում (հետագայում՝ Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ) փիլիսոփայության գծով առկա ուսուց-

ման ասպիրանտական տեղի համար անցկացվող մրցույթին:

Փայլուն հանձնելով ասպիրանտուրայի ընդունելության քննությունները՝ նա շատ առաջ է անցնում իր մյուս 8 մրցակիցներից: Ընդ որում՝ ասպիրանտուրայում ընդունելության 7 քննությունների առկայության պայմաններում մրցույթի բախտը փաստորեն որոշվում է հենց առաջին առարկայի՝ փիլիսոփայության քննության ժամանակ, երբ քննող հանձնաժողովի նախագահ, Հայաստանի ԳԱ թղթակից անդամ Վազգեն Չալոյանը քննական տոմսի և լրացուցիչ բազմաթիվ հարցերին Գ. Ասատրյանի պատասխանների տպավորության ներքո քննությունն ավարտում է «ընդունել՝ սրան» առարկություն չընդունող որոշմամբ:

Սովետական Հայաստանի պետական վերահսկողության բարձրագույն կառույցում՝ Մինիստրների սովետի Սովետական վերահսկողության հանձնաժողովում, իր աշխատանքային կարիերան նոր սկսած երիտասարդ մասնագետի խնդրանքով՝ առկա (արտադրությունից կտրված) ուսուցման ասպիրանտական տեղը փոխարինվում է արտադրությունից չկտրված տեղով: Ասպիրանտի գիտական ղեկավարությունն ստանձնում է Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ Հայկազ Ասլանյանը:

Ի դեպ, «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. Հասարակական գիտություններ» գիտական պարբերականում Գ. Ասատրյանի առաջին հոդվածը տպագրվել է 1965 թ. 12-րդ համարում, որը սկսվում է (էջ 3-16) գիտության մեջ առաջին քայլերը կատարող երիտասարդ փիլիսոփայի «Նախամարքսյան հումանիզմի պատմությունից» հոդվածով:

1969 թ. դեկտեմբերին ԵՊՀ-ում գործող փիլիսոփայական գիտությունների գծով գիտական աստիճաններ շնորհող միացյալ խորհրդում (խորհրդի նախագահ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրի Գաբրիելյան) նա փայլուն պաշտպանում է «Հումանիզմի մարքսիստական ըմբռնումը» թեմայով թեկնածուական թեզը և ստանում փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ շատ տարիներ անց՝ 2015-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի ղեկավարությամբ գործող ՀՀ ԲՈՒՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում պաշտպանում դոկտորական ատենախոսություն «Հումանիզմը արդի դարաշրջանի հիմնախնդիրների համատեքստում» (Թ.00.01 - «Տեսական փիլիսոփայություն, տրամաբանություն, գիտության փիլիսոփայություն») թեմայով, և խորհուրդը փակ (գաղտնի) քվեարկությամբ միաձայն նրան

շնորհում է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2015-ից Գ. Ասատրյանն այդ մասնագիտական խորհրդի անդամ էր:

Գ. Ասատրյանը 1970 թ. փետրվարին առաջ է քաշվում և ընտրվում ՀԿԿ Երևան քաղաքի Սպանդարյանի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1977 թ.: 1977-78 թթ. նա զբաղեցնում է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի պրոպագանդայի բաժնի վարիչի պաշտոնը:

Գ. Ասատրյանը 1978 թ. առաջ է քաշվում ղեկավար աշխատանքի՝ ընտրվում է ՀԿԿ Երևան քաղաքի Սպանդարյանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար, որտեղ աշխատում է մինչև 1983 թվականը: Այդ ընթացքում՝ 1980-1981 թթ., նա Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի որոշմամբ, պահպանելով Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, աշխատանքի է գործուղվում Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետություն, որտեղ աշխատում է որպես Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի խորհրդական՝ Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության Կենտկոմում:

Աֆղանական հոդում Գ. Ասատրյանի անձնվեր աշխատանքը չի վրիպել ինչպես Աֆղանստանի, այնպես էլ ԽՍՀՄ ղեկավար մարմինների ուշադրությունից: Աֆղանստանում ծառայությունն ավարտելուց հետո նա արժանանում է այդ երկրի կառավարական պարգևների, Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության պրեզիդենտի հրամանագրով պարգևատրվում բարձր պարգևով՝ «Երախտապարտ աֆղանական ժողովրդից» շքանշանով: Աֆղանստանից վերադառնալուց հետո՝ 1981 թ., նա պարգևատրվում է Խորհրդային Միության «Պատվո նշան» երկրորդ շքանշանով: Իսկ արդեն տարիներ անց՝ 1988 թ. դեկտեմբերին, նա Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվում է «Ինտերնացիոնալիստ մարտիկին» շքանշանով և «Աֆղանստանի Հանրապետությունում ինտերնացիոնալ պարտքը կատարելիս ցուցաբերած արիության և ռազմական սխրագործության համար» պատվոգրով: Գտնվելով Աֆղանստանում երկարատև գործուղման մեջ՝ 1980 թ. դեկտեմբերին Գ. Ասատրյանը ՀԿԿ Սպանդարյանի շրջանային կազմակերպության հերթական հաշվետու-ընտրական կոնֆերանսում շուրջ 500 պատվիրակների կողմից փակ (զաղտնի) քվեարկությամբ միաձայն վերընտրվում է Սպանդարյանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար: Իսկ շուրջ 1,5 ամիս անց ՀԿԿ հերթական համագումարում նա, իր բացակայությամբ, ընտրվում է ՀԿԿ Կենտկոմի կազմում:

1983 թ. Գ. Ասատրյանն աշխատանքի է տեղափոխվում ՀԿԿ Կենտկոմ և նշանակվում Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ: 1989 թ. հունվա-

րին ՀԿԿ Կենտկոմի հումանիտար պրոֆիլի բոլոր 4 բաժինների միավորման կապակցությամբ Գ. Ասատրյանը նշանակվում է Կենտկոմի նորաստեղծ միացյալ ստորաբաժանման՝ գաղափարախոսական բաժնի վարիչ:

1989 թ. մայիսին Գ. Ասատրյանն ընտրվել է Հայաստանի կոմկուսի Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար, որտեղ աշխատել է մինչև 1990 թ. օգոստոսը:

Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին՝ 1988-1990 թթ., աշխատելով ՀԿԿ Կենտկոմում, այնուհետև կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեում՝ նա եղել է այդ շարժման հետ կապված ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա շուրջ ծավալվող բուռն իրադարձությունների հորձանուտում:

ՀԿԿ Կենտկոմի քաղաքական ղեկավարության հետ միասնական երկրի՝ Խորհրդային Միության պայմաններում նա հաստատական ջանքեր է գործադրում, այդ թվում՝ զանգվածային պրոպագանդայի, մամուլի, հեռուստատեսության ու ռադիոյի միջոցով, այդ շարժումը կառուցողական ու հայանպաստ հունով տանելու, Լեռնային Ղարաբաղի հայության ազգային ինքնորոշման, սեփական հողում ազատ ապրելու նրա իրավունքի համընդհանուր ճանաչման հասնելու համար: Անվերապահորեն պաշտպանելով իր հիմքում խորապես արդարացի ու հայրենասիրական այդ շարժումը՝ նա նաև սկզբունքային ու անհաշտ դիրքորոշում է դրսևորում և հանդես գալիս երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնականոն կյանքը չարամտորեն ապակայունացնող այն օտարամոլ ուժերի դեմ, որոնք հայրենասիրության քողի տակ ամեն կերպ ձգտում էին հայ ժողովրդի լայն շրջանների մեջ սերմանել հակախորհրդային ու հակառուսական տրամադրություններ, Ղարաբաղյան շարժումը փոխադրել ուրիշ հուն՝ այն ծառայեցնելով սոցիալիզմի տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների վարկաբեկմանը, երկրի սոցիալ-տնտեսական ու հոգևոր ներուժի խաբխմանը, ժողովրդի բնականոն կյանքի ապակայունացմանը, երկրում գործող պետական կարգի տապալմանը: Նա հայ ժողովրդի ու նրա ղարաբաղյան հատվածի արմատական շահերի, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի հետևողական պաշտպանությամբ է հանդես գալիս տարբեր մակարդակների պաշտոնական հանդիպումներում ու բանակցություններում: Սկզբունքային ու հայանպաստ դիրքորոշում է հանդես բերում մասնավորապես հայ-ադրբեջանական սահմանամերձ գոտու Իջևանի շրջանի տարածքում գտնվող ընդունելությունների տանը 1989 թ. ապրիլին տեղի ունեցած հայ-ադրբեջանական բարձր մակարդակի եռյակ կազմով հանդիպմանը, որին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը, Կենտկոմի երկրորդ քարտուղար Օլեգ Լոբովը և Կենտկոմի գաղափարախոսական բաժնի վարիչ Գրիգոր Ասատրյանը, իսկ ադրբե-

ջանական կողմից համապատասխանաբար՝ Աբդուռախման Վեզիրովը, Վիկտոր Պոլյանիչկոն և Աֆրանդ Դաշդամիրովը: Հանդիպման ժամանակ ծավալվել է սուր ու անզիջում քաղաքական-գաղափարական բանավեճ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի քաղաքական կարգավորման, արդարացի ու սկզբունքային հիմքի վրա երկու հարևան հանրապետությունների ու ժողովուրդների միջև հարաբերությունների կանոնակարգման հարցերի շուրջ:

Նա փաստարկված, պատմական նյութերի ու արխիվային փաստաթղթերի վրա խարսխված հարցադրումներով և Արցախի հիմնահարցում սկզբունքային ու հայանպաստ դիրքորոշմամբ, մեր ժողովրդի արմատական շահերի հետևողական պաշտպանությամբ է հանդես գալիս նաև Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոյի 1989 թ. օգոստոսի 31-ին Մոսկվայում կայացած 12-ժամ տևողությամբ ընդլայնված նիստում՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամների և Ադրբեյջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամների մասնակցությամբ:

Քաղբյուրոյի նիստը նվիրված էր Լեռնային Ղարաբաղի ու նրա շուրջ ստեղծված սուր ու բարդ իրավիճակի քննությանը, ազգամիջյան կոնֆլիկտի հետևանքով ծագած բազմաբնույթ պրոբլեմների վերլուծությանը, Ղարաբաղի հարցի քաղաքական կարգավորման ուղիների որոնմանը, տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատմանը, հարևան երկու հանրապետությունների ու ժողովուրդների միջև բնականոն փոխհարաբերությունների վերականգնմանը: Այդ եզակի ու անսովոր միջոցառման՝ ԽՄԿԿ Քաղբյուրոյի նիստում Հայաստանի ու Ադրբեյջանի կոմկուսների Կենտկոմների անդամների հանդիպման արդյունքների մասին նա ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անունից հանգամանալի հաղորդումով հանդես է գալիս հաջորդ օրը՝ սեպտեմբերի 1-ին, Երևանի օպերային թատրոնի հրապարակում ՀՀԾ-ի կողմից նախօրոք հայտարարված համահանրապետական բազմաժողովի միտինգում:

1990 թվականից Հայաստանում նոր սրություն ստացած քաղաքական հախուռն իրադարձություններն ընդհատեցին Գ. Ասատրյանի՝ որպես հեռանկարային քաղաքական ու պետական գործչի առաջընթացի ուղին: Ստեղծված մղձավանջում, հասարակական-քաղաքական ու բարոյահոգեբանական հեղձուցիչ մթնոլորտում նա, չգտնելով իր փորձի ու գիտելիքների կիրառման արժանի ասպարեզ, ստիպված էր հեռանալ ակտիվ հասարակական-քաղաքական կյանքից: Այդ դաժան ու դրամատիզմով լի տարիներին նա ժողովրդի հետ կիսեց բոլոր կորուստներն ու զրկանքները, ցուրտն ու խավարը: Ծանր պայմաններում էլ նա չդավաճանեց իր դավանած գաղափարներին ու սկզբունքներին, իր կենսական հավատամքին: Որպես սոցիալիզմի գործի նվիրյալ՝ նա ակտիվ ջանքեր գործադրեց ձախ ուժերի միավորման, «Համա-

հայկական սոցիալիստական կոնգրես» հասարակական-քաղաքական կազմակերպության ծրագրային ու կանոնադրական փաստաթղթերի մշակման ուղղությամբ, կազմակերպություն, որը ժամանակ անց՝ 1995 թ., գրանցվեց որպես «Կախա» հայկական կոնգրես հասարակական-քաղաքական կազմակերպություն (ներկայումս՝ «Հայկական սոցիալիստական կոնգրես» կուսակցություն), և որի հիմքում դրվեցին այն ժամանակներում ժողովրդականություն չվայելող և հասարակական գիտակցության կողմից մերժված երկու հիմնարար գաղափարներ՝ սոցիալիզմը, զարգացման սոցիալիստական ուղին, ու հայ և ռուս ժողովուրդների, Հայաստանի և Ռուսաստանի բարեկամությունն ու համագործակցությունը:

1997 թվականին Հայաստանի «Գիտելիք» ընկերության վարչության նախագահ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, երջանկահիշատակ Լորիս Քալաշյանի և Գ. Ասատրյանի անձնական ջանքերով ստեղծվել ու մինչ օրս գործում է մի ինքնատիպ գիտահետազոտական հաստատություն՝ Հումանիզմի պրոբլեմների ակադեմիան, որտեղ ուշագրավ աշխատանքներ են տարվում ինչպես հումանիզմի տեսության ու պատմության, այնպես էլ արդի հումանիզմի տարբեր ասպեկտների ուսումնասիրության, նոր հազարամյակի հումանիստական պարադիգմայի մշակման ուղղությամբ: Գ. Ասատրյանն այդ Ակադեմիայի նախագահն էր 2002 թվականից, նաև Ակադեմիայում իրականացվող գիտական հետազոտությունների առաջատարը: Հումանիզմի հիմնահարցի տարբեր տեսանկյունների վերաբերյալ նրա մի քանի տասնյակ հոդվածներն ու զեկուցումները տպագրվել են ինչպես Հայաստանի հեղինակավոր գիտական պարբերականներում, այնպես էլ Ռուսաստանի (Սանկտ Պետերբուրգ և այլ քաղաքներ), Ավստրիայի (Վիեննա) և Գերմանիայի (Մյունխեն) մի շարք պարբերականներում ու միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում:

Գ. Ասատրյանը մենագրությունների հեղինակ է: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության 2014 թվականին լույս ընծայած նրա «Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում» ստվարածավալ ու հիմնարար աշխատությունը, արծարծվող հարցերի արդիականությամբ, մասշտաբայնությամբ ու վերլուծությունների խորությամբ աննախադեպ լինելով հայ իրականության մեջ, կարևոր ներդրում է արդի հումանիզմի ամբողջական հետազոտության ասպարեզում, ուշագրավ ու արժեքավոր ուսումնասիրություն՝ միջազգային չափանիշներով: Կյանքի վերջին օրերին Գ. Ասատրյանն աշխատում էր «Հեգելը արվեստի մասին» մենագրության վրա, ինչպես նաև Միջազգային փիլիսոփայական հանդեսի (International Journal of Philosophy) խմբագրի խնդրանքով առաջիկա համարում հրատարակության պատրաս-

տում «Մարդկային կապիտալը հումանիստական աշխարհընկալման համատեքստում» վերնագրով հոդվածը (անգլերեն):

1970-ից սկսած՝ ղեկավար աշխատանքին զուգընթաց, Գ. Ասատրյանը զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ՝ տարիներ շարունակ դասախոսական աշխատանք կատարելով հանրապետության բուհերում, ինչպես նաև «Գիտելիք» ընկերության համակարգում:

Հետխորհրդային շրջանում Գ. Ասատրյանն աշխատել է ոչ պետական կազմակերպություններում, վարել Հայաստանի շախմատի ֆեդերացիայի առաջին փոխպրեզիդենտի և գործադիր տնօրենի պաշտոնները: Վերջին շուրջ 25 տարիներին Գ. Ասատրյանն աշխատել է Հայաստանի Հանրապետության ոչ պետական բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում և անմնացորդ նվիրվել բարձրագույն կրթության կազմակերպմանը, գիտամանկավարժական գործունեությանը, աճող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը:

1996-ից նա աշխատել է Հայկական բաց համալսարանում՝ սկզբում որպես մենեջմենտի ֆակուլտետի ղեկան, ապա՝ պրոռեկտոր, առաջին պրոռեկտոր՝ միաժամանակ որպես փիլիսոփայության ամբիոնի վարիչ և դասախոս:

2001-ին Գ. Ասատրյանը տեղափոխվել է Երևանի Հյուսիսային համալսարան, որտեղ աշխատել է որպես պրոռեկտոր, ապա՝ համալսարանի նորաստեղծ գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար: Հյուսիսային համալսարանում աշխատելու տարիներին Գ. Ասատրյանն իրեն դրսևորել է որպես բուհական գործի հմուտ կազմակերպիչ, խորագիտակ հետազոտող ու բարձրակարգ դասախոս: Տարիներ շարունակ նա բարեխղճորեն ու պատասխանատվության բարձր զգացումով է վերաբերվել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի իր պարտականությունների կատարմանը:

Գ. Ասատրյանը Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի իսկական անդամ է, «Աշխարհի գեներալները հանուն խաղաղության» միջազգային ասոցիացիայի անդամ: Գ. Ասատրյանի ակտիվ ու անբասիր աշխատանքը բարձր է գնահատվել: Նա մի շարք անգամներ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի, Խորհրդային Հայաստանի 10-րդ և 11-րդ գումարումների Գերագույն խորհրդի ղեկուտատ, 1989-1990 թթ. եղել է Գերագույն խորհրդի մանդատային հանձնաժողովի նախագահը: Նա բազմիցս ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի անդամ, Կենտկոմի անդամության թեկնածու, Կենտկոմի անդամ: 1989-1990 թթ. եղել է ՀԿԿ

Կենտրոնի բյուրոյի անդամ: 1990-ին որպես պատվիրակ մասնակցել է Խորհրդային Միության կոմկուսի 28-րդ համագումարին, ընտրվել համագումարի ղեկավար մարմինների կազմում: Նրա ծառայությունները նշվել են բազմաթիվ պետական պարգևներով. պարգևատրվել է «Պատվո նշան» երկու շքանշաններով (1976, 1981), Խորհրդային Միության, Ռուսաստանի Դաշնության և Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության մի շարք մեդալներով, Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով, կառավարական այլ պարգևներով: Նա պարգևատրվել է Խորհրդային Միության «Գիտելիք» ընկերության բարձրագույն պարգևով՝ ակադեմիկոս Ս.Ի. Վավիլովի անվան ոսկե մեդալով:

2015 թ. մայիսին ֆաշիզմի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի հորելյանի կապակցությամբ նրան Ռուսաստանի Դաշնության կոմկուսի Կենտրոնի նախագահ, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավոր Գ.Ա. Ջյուզանովը պարգևատրել է Ռուսաստանի Դաշնության կոմկուսի Կենտրոնի «Մեծ հաղթանակի 70 տարին» հուշամեդալով:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2015 թ. սեպտեմբերի 16-ի հրամանագրով Գ. Ասատրյանը Անկախության տոնի առթիվ երկարամյա պետական-հասարակական գործունեության համար պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, իսկ նույն թվականի հոկտեմբերի 11-ին «Էրեբունի-Երևանի» 2797-րդ տարեդարձի և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի որոշմամբ արժանացել Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալին:

Իր հայրենանվեր աշխատանքով ու ազգանպաստ գործերով Գ. Ասատրյանը մեծ ներդրում ունեցավ ժամանակակից Հայաստանի պատմության մեջ: Նա ոչ միայն մի ամբողջ դարաշրջանի լավագույն ավանդույթների կրողն էր, հանրագիտարանային գիտելիքների տեր մտավորական, այլև ապագայի մարդ ու գիտնական, քանի որ փիլիսոփայական իմաստնությամբ միշտ առաջ էր նայում՝ երբեք չբավարարվելով ձեռք բերածով...

Մեծ հումանիստի ու գիտնականի, պետական ազնիվ ու հայրենասեր գործչի, տաղանդավոր կազմակերպչի և պայծառ մարդու հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահություն

Հյուսիսային համալսարան

ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ԼԵԶՎԱԲԱՆԸ ԵՎ ՀՄՈՒՑ ՀԱՅԵՐԵՆԱԳԵՏԸ



2021 թ. ապրիլի 17-ին՝ կյանքի 80-րդ տարում, վախճանվեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Լիանա Սամվելի Հովսեփյանը:

Անհատի երկրային կյանքի ավարտը, երբ նա մեզ հետ չէ այլևս և չի կարող ներկայությամբ ազդել իր մասին ասվող խոսքի վրա, ճանաչողներին որոշակի ազատություն է տալիս կարծիքն արտահայտելու հարցում: Իհարկե, հետմահու հնչող առանձին գնահատականները ևս կարող են զերծ չլինել սուբյեկտիվ երանգավորումներից, բայց այդպիսի մի քանի գնահատականները կուրվագծեն այն կերպարը, որն անպայմանորեն կլինի անաչառության տիրույթում: Այս գիտակցությամբ պիտի փորձենք տալ մեր ավագ գործընկերոջ՝ Լ. Հովսեփյանի գիտական գործունեության գնահատականը:

Լ. Հովսեփյանը հեղինակել է 4 մենագրություն [իմմտ. «Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում» (1982), «Գրաբարի բառակազմությունը» (1987), «ԺԳ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» (1997), «Գրաբարի բառակազմական վերլուծական տիպը» (2016)]: Նշվածներից «Գրաբարի բառակազմական վերլուծական տիպը» (2016)]: Նշվածներից «Գրաբարի բառակազմությունը», որի համար հեղինակին շնորհվել է բան. գիտ. դոկտ. գիտական աստիճան, արժեքավոր ներդրում է հին գրական հայերենի բառակազմության ուսումնասիրության ոլորտում և, եթե չենք սխալվում, առայժմ այդպիսի միակ ուսումնասիրությունը: Նա եռալեզու՝ «Գերմաներեն-հայերեն-ռուսերեն զրուցագրքի» (2003) և «Հայոց լեզու. Գրականություն» (2006) գրքի համահեղինակ էր: Անվանի լեզվաբանը հրապարակել է նաև շուրջ 80 գիտական հոդված, այդ թվում՝ հանրագիտարանային բառահոդվածներ և գրա-

խոսություններ, որոնցում քննության նյութ են դարձել ինչպես գրական հայերենի զարգացման երեք փուլերի (գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար) տարբեր հիմնախնդիրներ, այնպես էլ ի մի են բերվել և արժևորվել հայ լեզվաբանության արդի շրջանի գիտական ձեռքբերումները, տրվել է լեզվաբանական մտքի (այդ թվում՝ դասական հայերենագիտության) առանձին նշանավոր ներկայացուցիչների կյանքի և գործի համառոտ բնութագիրը (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Ֆ. Ֆորտունատով):

Կա գրավոր խոսքի մի ոլորտ, որից շատերը հաճախ խուսափում են: Դա ժամանակակցի մասին գնահատանքի խոսքն է հոբեյանական ադիթներով և մահախոսականը՝ գործընկերոջ մասին: Ընդ որում, խուսափում են հատկապես այն պատճառով, որ նման դեպքերում ոչ միշտ է հաջողվում մնալ հավասարակշռված խոսքի սահմաններում: Աչքի անցկացնելով Լ. Հովսեփյանի հրապարակված աշխատությունների ցանկը՝ տեսնում ենք, որ նա չի խուսափել նաև այդօրինակ խոսքից՝ կարողանալով և՛ պատշաճը հատուցել հոբեյարին կամ հանգուցյալին, և՛ խուսափել ծայրահեղություններից (հմմտ. «Վաստակաշատ լեզվաբանը (Վ. Քոսյան)» // Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1997, «Գևորգ Զահուկյան (ծննդյան 80-ամյակի առթիվ)» // ԲԵՀ, 3, 2000, «Հարատևող ներկայություն (Գևորգ Զահուկյանի ծննդյան 90-ամյակին)» // ԲԵՀ. Բանասիրություն, 2 (131), 2010, էջ 75-77): Նրա սիրած արտահայտություններից էր՝ նախընտրել «պարզին վսեմագույնը», որովհետև իրավացիորեն կարծում էր, որ բարդ ու խճողված ձևակերպումներով խոսքը դեռևս խորքային լինելու նշան չէ:

Պրոֆ. Լ. Հովսեփյանի՝ գերմաներենից կատարված թարգմանությամբ առաջին անգամ հայերենով լույս է տեսել գերմանացի նշանավոր հայագետ Հայնրիխ Հյուբշմանի «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» մեծարժեք ուսումնասիրությունը (Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 4, էջ 27-54), որը, դնելով հայերենի՝ որպես հնդեվրոպական լեզվաընտանիքում ինքնուրույն լեզվաճյուղի տեսության սկիզբը, նոր դարագլուխ բացեց հայերենագիտության զարգացման մեջ (ի դեպ, թարգմանիչը նշված չէ):

Լ. Հովսեփյանը միաժամանակ գիտական նորարարության կիրառման ջատագով էր. նա զբաղվում էր հայերենի ձևայնացված նկարագրության կաղապարի մշակման հարցերով, իսկ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասավանդման առարկայացանկում նրա առաջարկությամբ վերջին տարիներին մտցվեց *համակարգչային լեզվաբանություն* դասընթացը, որի առաջին դասավանդողը, բնականաբար, ինքն էր:

Հայերենի և հայերենագիտության հիմնահարցերին նվիրված՝ Լ. Հովսեփյանի մի շարք հոդվածներ լույս են տեսել արտերկրի գիտական հանդեսներում և պարբերականներում [հմմտ. Developmant of Armenian Language Module of UNL // Convergenes'03, Alexandria, Egypt, 2003 (համահեղ.՝ Վ. Ավետիսյան), Армянский язык и диалекты // Армяне / серия Народы и культуры, М., 2012, с. 75-81, Восточноармянский литературный язык (общий обзор) // «Языки мира, Реликтовые и.-е. языки Передней и Центральной Азии», М., 2013, с. 242-291 և այլն]: Թեպետ Լ. Հովսեփյանի գիտական ժառանգությունը ինչպես քանակական, այնպես էլ ծավալային առումով չի կարող համեմատվել մեր մեծ երախտավորների, այդ թվում՝ իր ուսուցիչների, օր.՝ Է. Աղայանի, Գ. Զահուկյանի և Հ. Բարսեղյանի թողած գիտական ժառանգության հետ, բայց նրա հրապարակումներին բնորոշ թեմատիկ լայն ընդգրկումը և հարցադրումների գիտական խորությունը հիմք են տալիս ասելու, որ գործ ունենք լայն մտահորիզոնով և համակարգային մտածողությամբ օժտված գիտնականի հետ:

Պրոֆ. Լ. Հովսեփյանի գիտական ներուժը գնահատել են գործընկերները և գիտակրթական ոլորտի ղեկավարությունը, ինչպես որ սովորաբար գնահատում են գիտության գործչի վաստակն ու կարողությունները: Տասնամյակներ ի վեր նա եղել է ԲՈՀ/(ԲՈԿ)-ի՝ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտին կից գործող լեզվաբանության գծով գիտական աստիճանաշնորհող խորհրդի, ինչպես նաև հանրապետության տարբեր գիտական հանդեսների խորհուրդների անդամ: Իր գիտամանկավարժական արդյունավետ գործունեության համար նա արժանացել է մի շարք գովեստագրերի և պարգևների, այդ թվում՝ ԵՊՀ ոսկե մեդալի (2014) և «Մովսես Խորենացի» մեդալի (2014): Լ. Հովսեփյանի գիտական կենսագրության մեջ ուրույն տեղ ունեն 2010-2019 թթ., երբ նա «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» պրակի պատասխանատու խմբագիրն էր: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի տրոհումը մասնագիտական ուղղվածության պրակների եթե մի կողմից՝ մեծացրեց ոլորտի մասնագետների հրապարակվելու հնարավորությունները, մյուս կողմից, սակայն, պրակները որակյալ հոդվածներով ապահովելու որոշակի դժվարություններ առաջացրին: Ոչ հազվադեպ ականատես ենք եղել, թե Լ. Հովսեփյանը որքան ջանքեր էր գործադրում միջակ նյութերից հրապարակման համար պիտանի հոդվածներ պատրաստելու համար: Հաճախ էլ այդ ջանքերը ոչ այնքան ուղղված էին հանդեսի հերթական համարի պատշաճ մակարդակով թողարկմանը, որքան գիտության փշոտ ճանապարհին առաջին քայլերը կատարող վաղվա գիտնականի առջև ուղի հարթելուն: Բայց չէ՞ որ դա

ժամանակի և էներգիայի շռայլում էր, որն ուղղակիորեն չէր մտնում նրա՝ իբրև խմբագրի պարտականությունների մեջ: Եվ չէ՞ որ այդ ժամանակն ու էներգիան կարող էին ծառայել սեփական գիտական արտադրանքի ստեղծմանը: Նա հայոց լեզվի պատմության մերօրյա հմուտ տեսաբաններից էր և, ինչպես երբեմն ինքն էր դառնությամբ խոստովանում, պարտավոր էր այդպիսի մենագրություն գրել, բայց այդպես էլ այդ աշխատությունը չգրվեց:

Լ. Հովսեփյանը նաև գիտական կյանքի կազմակերպիչ էր: 1997-2013 թթ. նա պաշտոնավարել է ԵՊՀ-ում՝ որպես *ընդհանուր լեզվաբանության* ամբիոնի վարիչ: Իբրև ամբիոնի վարիչ՝ նրա պաշտոնավարման տարիների ամենից մեծ ձեռքբերումը, մեր կարծիքով, այն էր, որ, օգտվելով տարեցտարի ավելացող ժամաքանակի ընձեռած հնարավորություններից, նա ամբիոնի գիտամանկավարժական կյանքի մեջ ներգրավեց մի շարք հմուտ մասնագետների և հեռանկարային երիտասարդ կադրերի՝ լեզվաբանների և դասական լեզուների գիտականների, որոնց համախմբումը էապես մեծացրեց ամբիոնի գիտական ներուժը: Լ. Հովսեփյանի ղեկավարությամբ պաշտպանվել է շուրջ 1 տասնյակի հասնող թեկնածուական ատենախոսություն:

Թերևս քչերին է հայտնի, որ լեզվաբանական հետաքրքրություններից բացի, Լիանա Հովսեփյանն ուներ, այսպես ասած, նաև գեղարվեստական հետաքրքրություններ. նա թարգմանություններ էր կատարում ռուս դասական պոեզիայից: Թարգմանությունների այդպիսի մի փունջ՝ կատարված ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի ստեղծագործություններից, 2019 թ. ամռանը տպագրվեց «Գրական թերթի» էջերում՝ մեծ բանաստեղծի ծննդյան 220-ամյակի առիթով (այդ թարգմանությունները թյուրիմացաբար հրապարակվել են **Լիա Հովհաննիսյան** անուն-ազգանունով):

Պրոֆ. Լ. Հովսեփյանի գիտական կենսագրությունը սկսվեց ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայից (1967) և ավարտվեց նույն հաստատությունում՝ մասնագիտական գործունեության 54 տարիների ընթացքում կրտսեր գիտաշխատողից հասնելով մինչև տնօրենի տեղակալի: Նա գիտական այն սերնդի ներկայացուցիչներից էր, որոնք որպես հայերենագետ-լեզվաբաններ կայացան ակադեմիկոս Գ. Զահուկյանի կողքին՝ վերջինիս ներկայությամբ իսկ թելադրվող գիտական բարձր նշանոցների պայմաններում: Աներկբա կարելի է ասել, որ պրոֆ. Լ. Հովսեփյանը «ջահուկյանական գվարդիայի» վառ ներկայացուցիչներից էր:

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1101
Ստորագրված է տպագրության 22.06.2021 թ.
Տպագրական 24.25 մամուլ: Տպաքանակը՝ 200
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 22.06.2021 г.
24.25 печ. л. Тираж – 200. Типография НАН РА
Ереван, пр. Маршала Баграмяна 24
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 22.06.2021
24.25 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press
Yerevan, Marshal Baghramyan av. 24
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am